

ԱՖԵՏԱՐԱՆԻ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ
Բ - ՅԻՄՈՒՄ ԱՌԱԿԱՆԵՐԸ



ԱՒԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Բ

ՅԻՍՈՒՄԻ ԱՌԱԿԱՆԵՐԸ

ՎԱՀԷ ՍՎԱԾԵԱՆ



ԹՈՐՈՆԹՕ
ՍԺԸ
- 2018 -

Ստանալու Համար դիմել՝

Հեղինակին

Vahe Sivacian
sivacian@sympatico.ca

**Ազատ զգացեք ձեր շրջանակին դրկելու,
բազմացնելու, տպելու ու բաժնելու ձրիաբար:
Գրովթինը որեւէ փոփոխութեան ենթարկել կամ
տպագրուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիլուած է:**

Տպագրուած - Printed



THE RELIABLE PRINTER
PRINT ASSURED

15 – 2200 Markham Rd. Scarborough ON M1B2W4
Tel : 416-292-9394

STORE HOURS

MONDAY • FRIDAY: 9 AM – 5 PM

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՆԱԽՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լոյս 'ի Լուսոյ (Ա) 2013

**Լոյս 'ի Լուսոյ «Բ»
Զարթօնք 2015**

**Լոյս 'ի Լուսոյ «Գ»
Տիեզերական Օրէնքները 2017**

**Կենցաղալոյս
Ոտանաւորներու հաւաքածոյ 2014**

Խոկում 2017

ՆԵՐԿԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

**Աւետարանի խողհուրդները - հատոր Ա.
Յիսուսի կեանքէն դրուազներ 2018**

**Աւետարանի խողհուրդները - հատոր Բ.
Յիսուսի առակները 2018**

ԱՊԱԳԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

**Աւետարանի խողհուրդները - հատոր Գ.
Յիսուս Քրիստոսի Խօսքերը 2019**

Խորհրդածուլթիւններ 2019



ՇՆՈՐՀԱԿԱՒՈՒԹԻՒՆ

Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս նաեւ երախտագիտութեան զգացումները կը յայտնեմ այս աշխատանքի պատրաստութեան ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով եւ թելադրութիւններով գործս դիւրացնող կարգ մը բարեկամներու:

Աղօթարար եմ, որ Աստուած իրենց պարգեւէ առողջութիւն եւ արեւշատութիւն:

Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ բոլոր անոնց, որոնք գիրքիս մէջ գործածուած լուսանկարները Հայթայթած են:

Աղօթարար եմ, որ Աստուծոյ օրհնութիւնները անոնց վրայէն անպակաս ըլլայ:



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Աստուածաշունչէն գրաբար, աշխարհաբար,
նաեւ եկեղեցական ժամերգութիւններէ
մէջբերումները առնուած են
Հետեւեալ աղբիւրներէն.

ԱՍՏՈՒՎՈՒՇՈՒՆՆԵՐ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ

ԸՍՏ

ՃՇԳԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԵԱՅ ՄԵՐՈՑ Դ ՀԱՅԵՆԱԿԱՆ
ՀԱՄԱՏԱՐՄԱՌՅՆ ԲԱՊԻԷ Դ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԱՌ
1805 Դ ՎԵՆԵՏԻԿ ՈՒՄԾԴ
Դ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԵՐՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ



ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԱՍՏՈՒՎՈՒՇՈՒՆՆԵՐ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅՆԵՐԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ



ԱՂՕԹԱՐԱՄՏԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆ-Ե
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ-Ե
ՇԱՐԱԿԱՆ-Ե

ԱՂՕԹ-Ե

ՏԱՂ-Ե

ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ՓԱՆԿԱՇԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1929

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Էջ
4- Շտրհակալութիւն
5- Ծանօթութիւն
6- Բովանդակութիւն
9- Կենսագրական
10- Ծնողացս
11- Զօն Այտային

12- -Նախաբան

14- - Հաւատքը - Ոտանաւոր

15- - Յառաջաբան

41- Ա - Յիսուսի առակները - Հայր Աստուած
44- - Անառակ որդիին առակը
55- - Անպտուղ թզենիին առակը
57- - Կորստւած դրամին առակը
61- - Կորստւած ոչխարին առակը
65- Բ - Յիսուսի առակները - Որդին Աստուած
68- - Հովիւին առակը
75- - Թզենիին դասը
78- - Հրագը անօթին տակ
82- - Պաշտօնի գանձին առակը
85- - Մարգարիտին առակը
87- - Մանանէիսին առակը
89- - Սերմնացանին առակը
93- - Աճող սերմին առակը
95- - Խմորին առակը
97- Գ - Յիսուսի առակները - Հոգին Աստուած
100- - Երկու տուն շինողներուն առակը
103- - Որումին առակը

- 110- - Ուռկանին առակը
112- - Չներող ծառային առակը
116- - Այգիին բանուորներուն առակը
120- - Երկու որդիներուն առակը
123- - Այգիին մշակներուն առակը
126- - Հարսանեկան կոչոնքի առակը
130- - Տասը կոյսերուն առակը
134- - Երեք ծառաներուն առակը
139- - Ամիստ Հարուստին առակը
142- - Հաւատարիմ կամ անհաւատարիմ ծառան
148- - Խորամանկ սնտեսին առակը
154- - Աղքատ Ղազարոսին առակը
159- - Այրիին եւ դատաւորին առակը
162- - Փարիսեցիին եւ մաքսաւորին առակը
165- - Բարի Սամարացիին առակը

169- - Վերջաբան եւ Խորհրդածութիւններ

177- Դ - Յաւերժածական
179- - Աստուծ սէր է
185- - Իմաստալից խօսքեր -Ա-
188- - Իմաստալից խօսքեր -Բ-
189- - Մէլկանային եօթը յորդորները
191- - Այն ինչ որ սորվեցայ ...
193- - Սէրը եւ նախանձը
197- - Թի/թեռնիկը եւ մարդը
201- - Ամէն ինչ զօրութիւն է
205- - Աւպերթ Էյնշտէյնի նամակը
207- - Պուտ մը Ժպիտ





Ռաւանութեամբ Հաւաքոյն՝

Լսիրաւ ի մարդ Հանգչի

Էւ մէկ յԼսիրաւ յարեմէ:


Ս. Գրիգոր Տաթեւացի

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է տեղոյն Արամեան-Ունճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն Ժօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ընտանեօք գաղթած են Թորոնթօ, Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**-ին վկայուած է որպէս պսակաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի Համալսարանէն: Ապա Հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն Ժօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Դասախօսած է թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: Յօդուածներ հրատարակած է՝ արդիւնք իր Հետազօտութիւններուն եւ **2007**-ին ալ դասագիրք մը՝ սիրտը քննելու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:

Դպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թադաւոր Եկեղեցւոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ: Ուրար կրեւր իրաւունք ստացած է Սիօն Արքեպիսկոպոսէն **1960**-ներու վերջերը: Սարկաւազ ձեռնադրուած է Սէնթ Գաթրինգի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցւոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ, Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մին ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննախնդիր բնութիւնը զինք մղած է Հետազօտութեան ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գեանի վրայ:





1911-1985



1904-1994



ՍԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
ԺԻՐԱՅԻ ԵՒ ԻՍԿՈՒՀԻ
ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՍԷՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ



«Դուք աղեղն եղաք, ուրիշ Ձեր շահագները իբրև աղբուրդ նետեր
դուքս արձակուրդե՛լան:

Աղեղնախորը անշուքի ճամբորդ իր թիրախը ԿԵ ՏԵՍԱԷ ԵՒ Աղեղն
Ձորախոր ԿԵՐՊՈՒԿ ԿԵ ԿՐԿԷ, ուրիշա՛յի իր նետը արագ ԵՒ ՀԵՊՈՒՆ
ԵՐԹԱՅ:

Աղեղնախորի Ձեռքին՝ Ձեր ԿՐԿՈՒՄԸ ուրախութեամբ եղա՛
Որքան ուր Ան սլաճուրդ նետը ԿԵ ՍԻՐԷ, նոյնքան ալ ՀԱՍՏԱՏ Աղեղն»:

(յարասուած - Խալիլ Ճիպրան-ի «Մարգարէն» գիրքէն)



1955-2010



**ՍՈՅՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԿԸ ԶՈՒՆԱ
ՎԱՂԱՄԵՌԻԿ ԿՈՂԱԿԻՅԻՄ՝
ԱՅՏԱ ՍՎԱՃԵԱՆ-Ի
ԱՆԹԱՂԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ:**



ՆԱԽԱԲԱՆ

Իմ խորին շնորհակալությունները կը
յայտնեմ Վերապատուելի Փրոֆ.
Դոկտ. Սողոմոն Նիկոսեանի, գիրքիս
անտիպ օրինակը կարդալու բարեհա-
ճովմեան եւ կամեցողութեան, ինչպէս
նաեւ յաջորդ էջին մէջ տեղադրուած
իր նախաբանին համար:

Վ. Ս.



Մեծ հաճոյքով ձեզ կը ներկայացնեմ բժշ. Վահէ Սվաճեանի «Աւետարանի խորհուրդները» խորագրեալ երեք հատորներէ բաղկացեալ այս երկասիրութիւնը: Աւետարանները (Յունարէնով՝ էվանկելիոն, ինչ որ «բարի լուր» կը նշանակէ) կը յուշարկեն Յիսուսի հեղինակաւոր անձնաւորութիւնը, Անոր համայն մարդկութեան նկատմամբ խոր շահագրգռութիւնը եւ արգահատանքը, բժշկելու համբաւը, ազդեցիկ խօսքերը եւ առակներու ըմբռնողական օգտագործումը: Եթէ կը խորհիք, թէ Աւետարանները կարդալ ձանձրացուցիչ է, բացէ՛ք այս հատորները եւ յետոյ որոշեցէ՛ք: Ընդհակառակը, շատ հաճելի անակնկալի պիտի հանդիպիք, որովհետեւ այս հրատարակութիւնը կարող է ձեզի հմտութիւն տալ եւ թէ՛ ձեր միտքերը եւ թէ՛ ձեր հոգիները հարստացնել:

Բժշ. Սվաճեանի թէ՛ գիտութեան եւ թէ՛ կրօնքի հմտութիւնը, ինչպէս առաջուց, հիմայ եւս երկու ուղիները, որ կը թուին անջատ ըլլալ, տրամաբանական եւ միահիւսլիութեան մը վերածած է: Իր գրութիւնները Յիսուսի առաքելութեան եւ առակներուն յստակ, հակիրճ եւ լրիւ դիւրամերձ բացատրութիւններն են: Անոր այս նպաստաւոր հրատարակութիւնը կարգացողը, անտարակոյս պիտի առաջնորդուի, դէպի նոր հասկացողութեան մը՝ նկատմամբ հոգեւոր կեանքին: Նոյնիսկ անոնք, որոնք տարբեր մեկնաբանութիւնները կը նախընտրեն, պիտի ոգեւորուին ու պիտի խորհրդածեն ճարտարօրէն ներկայացուած հիմնական նիւթին վրայ: Յուսալից եմ որ բժշ. Սվաճեանի հմայիչ վերլուծումները կարգացողը ինձ նման, ոգեւորիչ եւ խորաթափանց կը գտնէ:

Նկատի առէք Ս. Գիրքին հետեւեալ գեղեցիկ նախադասութիւնը. «Երանի՛ այն մարդուն՝ որ իմաստութիւն կը գրտնէ, եւ այն մարդուն՝ որ հանճար կը ստանայ»: (Առակաց Գ:13)

Վերապատուելի Դոկտ. Սողոմոն Նիկոսեան
Աստուածաբանութեան Դոկտոր
Թորոնթոյի Համալսարան



ՀԱՒԱՏՔԸ

Հաւատքը արդիւնքն է սիրոյ
Ու յոյսի Համար ալ պիտոյ:
Ան կ'ապաւինի Համբերութեան
Ինչպէս նաեւ յարատեւութեան:

Հետեւանքն է Հաւատարմութեան
Ու նաեւ յարգանքի մը անվարան:
Ան կը յայտնուի ծառայութեամբ
Անձին մէջ ինքնազոհողութեամբ:

Հաւատքը տարբերական չէ.
Չայն աստիճանաւորել կարելի չէ,
Որով Հաւատքը կամ կայ, կամ չկայ.
Իսկ եթէ կայ, երջանկութիւն կուտայ:

Երկու Հոգիներու միջեւ եղած կապը
Որուն կորիզը կը կազմէ Հաւատքը
Սերտ վստահութեամբ մը անթարշամ՝
Այդ միութիւնը կ'ըլլայ անթառամ:

Դժուար է վստահութիւն մը շահիլ
Ու «Հաւատքի» արժանի ապրիլ:
Հաւատքը Հայելին է մեր կենցաղին
Կենցաղն ալ Հայելին մեր Հաւատքին:

Վ. Ս

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա

Այս գիրքին պարունակութիւնը Յիսուսի ըսած առակներուն ներկայացումը եւ անոնց մեկնաբանութիւնն է, յարմար նկատեցի այս յառաջաբանին մէջ ալ տեղադրել Աւետարաններէն առնուած հետեւեալ մի քանի մէջըբերումները, որոնք տեղադրուած էին նաեւ առաջին հատորին յառաջաբանին մէջ:

«Եւ մարդացեալ աշակերտքէն ասէն ցնաւ .
Ընդէ՞ր առակօ՞ք խօսիս ընդ նոսա: Նա
պարասխանի երբ եւ ասէ՛ ցնոսաւ . Քանզի
յէտ րոտեալ է Գիցել զխորհուրդս
արէայոթեանն երկնից, եւ նոցա շէ՛
րոտեալ: Զի ոյր Գոցէ՛ րացի՛ նմա եւ
յաւելցի, եւ ոյր ոշն Գոցէ՛ եւ զոր
ոնիցին Բարձրի՛ն նմանէ: Վասն ա՛յնորիկ
առակօք խօսիմ ընդ նոսա . զի րեանեն՝ եւ
ո՛շ րեանեն, եւ լսեն՝ եւ ո՛շ լսեն, եւ
ո՛շ առնուն ՚ի միտ: Եւ կարարի առ նոսա
մարգարետիւնն Եսայայ՝ որ ասէ . Լսելով
լսեալի՛ եւ մի՛ իմաստելի, եւ րեանելով
րեալի՛ եւ մի՛ րեալի: Զի Թանճրացաւ
սիրդ ժողովրդեանս այսորիկ, եւ ակռնջօ՞ք
իւրեանց Ժանո՛ւնս լսան . եւ զաս

Իրեանց կաճողին, զի մի՛ երբեք չի տեսնուի
աշտ՝ եւ անանջօրն լուսին՝ եւ արդիւն
իմաստին, եւ դարձան՝ եւ թշուառի
չնոսա: Բայց յեր երանի՛ է աշտոյ՝ զի
դեռանէն, անընջաց յերոյ՝ զի լսեն: Ամէն
ասե՛մ զի Թադոմ մարգարէի՛ եւ արդարեւ
ցանկացան դեռանել զոր դեռանելոյ՝ եւ ո՛չ
դեռին, եւ լսել զոր լսելոյ՝ եւ ո՛չ
լուսն» : (Մարգէն ԺԳ: 10-17)

«Աշակերտները մօտենալով՝ ըսին իրեն. «Ինչո՞ւ
առականքով կը խօսիս անոնց»: Ինք ալ պատասխանեց
անոնց. «Քանի որ ձեզի՛ տրուած է գիտնալ երկինքի
թագաւորութեան խորհուրդները, բայց անոնց տրուած
չէ: Որովհետեւ ո՛վ որ ունի անոր պիտի տրուի ու առա-
տութեան մէջ պիտի ըլլայ. իսկ ո՛վ որ չունի, ունեցածն
ալ անկէ պիտի առնուի: Ուստի առականքով կը խօսիմ
անոնց, քանի որ տեսնելով՝ չեն տեսներ, ու լսելով՝ չեն
լսեր, ո՛չ ալ կը հասկնան: Անոնց վրայ պիտի
իրազերծուի Եսայիի մարգարէութիւնը՝ որ կ'ըսէ. Շատ
պիտի լսէք բայց պիտի չհասկնաք. շատ պիտի տեսնէք՝
բայց պիտի չըմբռնէք: Որովհետեւ այս ժողովուրդին
սիրտը թանձրացաւ, եւ իրենց ականջներով ծանր լսեցին
ու գոցեցին իրենց աչքերը, որպէսզի աչքերով չտեսնեն,
ականջներով չլսեն, սիրտով չհասկնան, եւ դարձի
չգան, ու ես չըմբռնեմ զանոնք: Բայց երանի՛ ձեր
աչքերուն՝ որ կը տեսնեն, եւ ձեր ականջներուն՝ որ կը
լսեն: Որովհետեւ ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի
թէ շատ մարգարէներ եւ արդարներ ցանկացին տեսնել
ձեր տեսածները՝ ու չտեսան, եւ լսել ձեր լսածները՝ ու
չլսեցին»:

«Եւ իբրեւ եղեւ առանձինն, Հարցին ցնա-
որ զնոյնն ինն աշակերտօրն Հանդերձ՝
չառանկան: Եւ ասէ ցնոսա. Ձեզ դուրսէլ է

Գիտե՛լ զխորհուրդս արխայութեան
Լսորոշոյ: Բայց նոցա որ արհաժինձն էն՝
ամենայն ինչ առանձն լինի: Չի գիտանելով
դէպքին՝ էւ մի՛ դէպքին, էւ լսելով
լուսինն՝ էւ մի՛ իմաստին. զի մի՛ երթէ՛
դարձցին՝ էւ թողցին նոցա»: (Մարկոս Դ: 10-12)

«Երբ առանձին էր, իր շուրջը եղողները՝ տասներկուքին
հետ հարցուցին իրեն այս առակին մասին: Եւ ըստ
անոնց. «Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ
Թագաւորութեան խորհուրդը, բայց անոնց որ դուրսն
են՝ ամէն ինչ առեղծուած կ'ըլլայ. որպէսզի չստ
տեսնեն՝ բայց չըմբռնեն, չստ լսեն՝ բայց չհասկնան, ու
դարձի չգան եւ իրենց մեղքերը չներուին»:

«Հարցանէին զնա աշակերտին՝ թէ զի՞նչ
իցէ առանձն: Եւ նա՛ ասէ. Չէ՛զ ցոտեա՛լ
է զխորհուրդս արխայութեան Լսորոշոյ,
Բայց այլոցն առանձն՝ զի դէպքին՝ էւ մի՛
դէպքին, էւ լուսինն՝ էւ մի՛ իմաստին:»

(Ղուկաս Ը: 9-10)

«Իր աշակերտները հարցուցին իրեն. «Ի՞նչ է իմաստը
այս առակին»: Ան ալ ըստ. «Ձեզի՛ տրուած է հասկնալ
Աստուծոյ Թագաւորութեան խորհուրդները, բայց
ուրիշներուն՝ առակներով կը խօսիմ. որպէսզի նայելով՝
չտեսնեն, ու լսելով՝ չհասկնան»:

*Ըստ այս համարներուն, բացայայտօրէն յայտնի է,
թէ Յիսուս Աստուծոյ Թագաւորութեան խորհուրդին
(mystery) թաքուն՝ գաղտնի գիտութիւնը կը սորվեցնէր
իր աշակերտներուն, որպէսզի անոնք եւս կարենային
Աստուծոյ Թագաւորութեան փորձառութիւնը ունենալ:
Յիսուս բացայայտօրէն կը շեշտէ, թէ հասարակութեան
միայն առակներով կը խօսէր, որպէսզի բոլոր անոնք,*

որոնք այդ թագուն գիտութիւնը ստանալու պատրաստ չէին, հետեւաբար արժանի չէին, ճշմարտութիւնը լսելով հանդերձ զայն չհասկնան: Յիսուս իր աշակերտները կը զգուշացնէ, որպէսզի անոնք ալ անխոհեմութեամբ այդ գիտութիւնը հանրութեան չպարզեն եւ միայն արժանի անձերու փոխանցեն:

«Այ՛ր Կայէ Կարթոթիւն՝ շանց, եւ մի՛
արհանելի պարգարի՛ր յիշեր առաջի խոսաց,
յի մի՛ առ ո՛րն Լոխիցէն պնաս, եւ դարձ-
եալ Երթիթո-ցանիցէ՛ն պէս» : (Մարքէոս Է:6)
«Սուրբ Բանը մի՛ տաք շուներուն՝ ու ձեր
մարգարիտները մի՛ նետէք խոզերուն առջեւ, որպէսզի
չկոխկրտեն զանոնք իրենց ոտքերուն տակ, եւ
դառնալով չբզքտեն ձեզ»:

Երբ կը տեսնենք աշխարհի ներկայ վիճակը եւ
ընդհանուր քրիստոնէութեան՝ քրիստոնեաներուն բռն-
նած ընթացքը՝ կենցաղը, կը թուի, թէ Յիսուսի սորվե-
ցուցած այդ թագուն գիտութիւնը ամբողջովին կոր-
սուած ըլլայ: Բայց, ըստ Աւետարանի հետեւեալ համա-
րին, իրողութիւնը այն է, թէ այդ ճշմարտութեան, այդ
թագուն գիտութեան տեղեակ անձերու թիւը այն
աստիճան պիտի նուազի, որ պիտի կարծուի թէ այդ
գիտութիւնը կը կորսուի, բայց պիտի չկորսուի եւ օր
մը դարձեալ պիտի ընդհանրանայ:

«Զեղէ՞մն ջախջախե՛ալ ո՛չ փշրեսցե եւ
պապարոյնն առկայծեալ ո՛չ շիջոսցե մին-
չեւ Ըանցե ՚ի յաղթոթիւն պապապաանն» :
(Մարքէոս ԺԲ:20)

«Պիտի չփշրէ ջախջախուած եղէգը ու պիտի չմարէ
պլպլացող պատրոյգը, մինչեւ որ իրաւունքը հասցնէ
յաղթութեան»:

Արդեօք ժամանակը եկա՞ծ է, որ այդ գիտութիւնը

դարձեալ յայտնուի եւ ընդհանրանայ: Պէտք է մոռնանք, թէ «Զկներ»-ի շրջանին վերջաւորութիւնն է որ կ'ապրինք եւ յաջորդ շրջանը «Ջրկիր/Ջրհոս»-ի շրջանն է: Եւ ըստ Յիսուսի սորվեցուցածին, այս շրջանին է, որ մարդ պիտի հաղորդուի Քրիստոսի հետ: (Տես «Աւետարանի Խորհուրդները Ա.- Յիսուսի կեանքէն դրուազներ» խորագրեալ առաջին հատորին մէջ «Յիսուս կ'ուտէ զատիկը Իր աշակերտներուն հետ» գլուխը: Էջեր 101-104 եւ 114-125)

Այս գիրքին նպատակին՝ առականերու մեկնաբանութեան չանցած, յարմար կը նկատեմ հոս ներկայացնել այդ թագուն գիտութեան նկատմամբ իմ այսօրուայ տեսակէտը: Այս ուղղութեամբ դարձեալ յարմար է կարդալ Աւետարանէն հետեւեալ մէջբերումը.

«Եւ ահա՝ յարեաւ ոմն օրինական՝ Գորշէր
յնաւ եւ ասէր. Վարդապետ՝ զի՞նչ Գորշե-
ցից՝ զի զկէանսն յաւիտեանական ժառանգե-
ցից: Եւ նա՝ ասէ ցնա. Յօրէնս զի՞նչ Գոր-
շեալ է, ո՞րպէս ընթեռնոս: Նա պարասխա-
նի եր՝ եւ ասէ. Սիրեացեա զՏէր Աստուած
է՞ր յամենայն օրդէ ինձմէ, եւ յամենայն
անշնէ ինձմէ, եւ յամենայն զօրոթեմէ
ինձմէ, եւ յամենայն միայ ինց. եւ զըն-
կեր ին իբրեւ զանշն ին: Եւ ասէ ցնա.
Ողբ'դ երոսր զպարասխանիդ, զա՛յդ արա՛՝
եւ կեցցէ՛ս: (Դուհա Ժ:25-28)

«Ահա՛ օրինական մը կանգնեցաւ, ու փորձելով զայն՝
ըսաւ. «Վարդապետ, ի՞նչ ընեմ՝ որ ժառանգեմ
յաւիտեական կեանքը»: Ան ալ ըսաւ անոր. «Ի՞նչ
գրուած է Օրէնքին մէջ, ի՞նչպէս կը կարդաս»: Ան ալ
պատասխանեց. «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ

սիրտովդ, ամբողջ անձովդ, ամբողջ գորովթեամբդ եւ ամբողջ միտքովդ, ու ընկերդ՝ քու անձիդ պէս»։ Ինք պլ ըսաւ անոր. «Շիտա՛կ պատասխանեցիր, ըրէ՛ ատիկա՝ ու պիտի ապրիս»։

Վերեւի համարներով Յիսուս կը ստուգէ ճշգրտութիւնը յաւիտենական կեանքը ժառանգելու համար Մովսիսական կրօնքի գիրքերուն մէջ գրուած պատշաճ ընթացքը։ Աս ալ փաստ մըն է, թէ բոլոր կրօնքները նոյն իմաստասիրութիւնը կը քարոզեն, բայց մարդիկ իրենց խաւարամտութեան հետեւանք եւ հետեւաբար մակերեսային հասկացողութեամբ, զանոնք ամբողջովին փոխած են եւ յարմարցուցած իրենց վատ կենցաղին։ Ուրեմն ի՞նչ է այս համարներուն սորվեցուցածը։

Առաջին յորդորը «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ» է։ Այսօր որու որ հարցնենք, թէ զԱստուած կը սիրէ՞, վստահաբար, ի բաձառեալ անոնցմէ, որոնք Աստուծոյ չեն հաւատար, կամ Զինք կ'ուրանան, բոլորն ալ պիտի ըսեն, թէ Աստուած կը սիրեն։ Բայց, արդեօք գիտե՞ն, թէ ինչ կը նշանակէ Աստուած սիրել։ Այս նիւթին շուրջ ստորեւ յաւելեալ տեղեկութիւն պիտի տրուի։ Մէջբերումին երկրորդ մասն ալ կը յորդորէ ինչպէս Աստուած սիրել. «... ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ, ամբողջ գորովթեամբդ եւ ամբողջ միտքովդ»։ Պէտք է, որ այս վերջինը շփոթենք «ի՞նչ է Աստուած սիրել»-ուն հետ։ Բայց երբ վերլուծենք Աստուած սիրելու զանազան կերպերը, այն ատեն Աստուած սիրելուն ինչ ըլլալն ալ բացայայտ պիտի ըլլայ։ Հետեւաբար վերլուծենք, թէ ինչպէս պէտք է սիրենք Աստուած։

Գրուած է. «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ ամբողջ սիրտովդ», որով նախ պէտք է Աստուած սիրենք մեր սրտով եւ աս տրուած է իբր սիրելու նկատմամբ եղած յորդորներուն առաջինը։ Ի՞նչ է «սիրտով սիրել»-ուն իմաստը։ Սիրտը, փոխաբերական իմաստով, զգացումներու կեդրոնն է եւ սէրն ալ զգացումներուն ամենա-

կարեւոր եւ ամենագորաւորներէն մին է: Երբ զգացական գետնի վրայ սէրը գոյութիւն չունենայ, միւս յաջորդող սիրոյ միջոցառումներուն մէջն ալ սէրը չի կրնար գոյութիւն ունենալ: Երբ երկու երիտասարդ կը սիրահարուին, միշտ իրարու հետ ըլլալ եւ իրարու հետ ժամանակ անցնել կը տենչան: Աս իրենց համար բացառիկ երջանկութեան առիթը կու տայ: Ահա աս է սրտանց սիրելը եւ սիրոյ արտայայտութիւնը, ինչպէս նաեւ անոր տուած երջանկութիւնը: Երբ կ'ըսենք թէ Աստուած կը սիրենք, արդեօք իրեն միանալու մեր տենչանքին քանակը կը համապատասխանէ՞ երկու երիտասարդներուն իրարու հետ ըլլալու համար ունեցած տենչանքին: Եթէ երկուքն ալ իրարու համապատասխան են, ինչո՞ւ այդ ուղղութեամբ՝ Աստուծոյ հետ միանալու օրինակ չենք թափեր: Ճշմարտութիւնը այն է, թէ սիրահարուած երկու երիտասարդներուն իրար միանալու տենչանքը մեր մէջ գտնուող տենչանքի կարողութեան միայն 10%-ն է: Իսկ Աստուծոյ միանալու տենչանքին որակն ալ պէտք է բազմիցս գերազանցէ սիրահարներու այդ ճղճիմ տենչանքը եւ պէտք է յայտնուի որպէս մեր տենչանքի կարողութեան 100%-ը: Երբ իրար կը միանան երիտասարդներուն զգացած երջանկութիւնն ալ ճղճիմ երջանկութիւն մըն է, որ կը համապատասխանէ անձին ունեցած տենչաքին ճղճիմութեան: Զարմանալին այն է, թէ մարդ արարած կը գոհանայ իր ապրած կեանքին՝ կենցաղին տուած այդ ճղճիմ երջանկութիւններով, երբ ինք Աստուծոյ հետ միանալու երանութիւնը վայելելու կարողութիւնը ունի: Բայց եթէ մարդ Աստուծոյ միանալու այդ բարձր որակով տենչանքը չունի, իրեն համար ալ անկարելի կ'ըլլայ այդ Աստուածային երանութիւնը վայելել: Ահա՛, աս է բոլոր սրտով Աստուած սիրել եւ ոչ թէ աջ ու ձախ . «Ես Աստուած կը սիրեմ եւ կը պաշտեմ» ըսելը:

Ուրեմն, երբ մարդ «Աստուած կը սիրե՞ս» հարցումին դրական պատասխան կու տայ, ինք սուտ չէ որ կը խօսի, այլ իր խաւարամտութեան հետեւանք չի գիտեր, թէ ինչ է իսկական, բարձր որակով սէրը, որովհետեւ բնաւ անոր փորձառութիւնը չէ ունեցած եւ իր ենթագիտակցութեան մէջ այդ տեղեկութիւնը եւ անոր տուած երանութիւնը գոյութիւն չունին: Ան նաեւ չի գիտեր, թէ ինք նման կարողութեան տէր է եւ Աստուած այդ կարողութիւնը իրեն տուած է: Ահա՛, աս էր, որ Յիսուս կը ջանար մեզի սորվեցնել: Սէրը զգացական է, սակայն բարձր որակով սէրը մարդու մօտ զգացական գետնի վրայ կը թուի գոյութիւն չունենալ: Հետեւաբար, արդեօք կը խորհի՞նք, թէ վերեւի համարներուն մէջ ներկայացուած մնացեալ միւս սիրոյ միջոցառումները կարող կ'ըլլանք պատշաճ կերպով գործադրել:

Աստուած սիրելու երկրորդ յորդորը հետեւեալն է. «Սիրէ՛ Տերը՝ քու Աստուածդ ... ամբողջ անձովդ...»: Ի՞նչ կը նշանակէ ամբողջ անձով Աստուած սիրել: Մարդուն «անձ»-ը իր անհատականութիւնն է եւ այդ անհատականութիւնն ալ ունի ազատ կամք եւ կը գործէ մարմնի միջոցով: (Տես «Աւետարանի Խորհուրդները Ա.- Յիսուսի կեանքէն դրուագներ» խորագրեալ առաջին հատորին «Յիսուս կ'ուտէ զատիկը Իր աշակերտներուն հետ» գլուխը: Էջեր 108-114) Հոն նկարագրուած է, թէ ինչպէս մարդու անհատականութիւնը երկու բեւեռներ ունի եւ մարդը կը գործէ ըստ իր բնոյթին: Բայց, ան ազատ կամք ունի զատելու իր անհատականութեան ժխտական բեւեռ՝ իր «Ես»-ը եւ ըստ այնմ գործել, այսինքն ըստ իր «Ես»-ին յառաջ բերած բնոյթին, կամ զատել իր անհատականութեան դրական բեւեռը եւ գործել ըստ Քրիստոսի յառաջացուցած բնոյթին: Ուրեմն բոլոր անձով Աստուած սիրելն ալ կը համապատասխանէ անձին իր ազատ կամքով իր անհատականութեան դրական բեւեռը զատել եւ

այդ բնոյթին համաձայն ալ գործել: Յիսուս ըսած է.

Ո՛չ ո՛վ կարէ երկո՛ց տէրանց ծառայել: Վի եթէ
զմե՛ն՝ աղիցէ, եւ զմեւո՛ւն ախրէ՛. կամ զմե՛ն՝
մեծարիցէ, եւ զմեւո՛ւն արհամարի- ցէ՛: Ո՛չ
կարէ՛լ Լադոն-ժո՛յ ծառայել եւ մամոնայի՛»:
(Ղուկաս ԺԶ:13)

«Ո՛չ մէկ ծառայ կրնայ ծառայել երկու տիրոջ.
որովհետեւ կա՛մ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կա՛մ
մէկուն պիտի յարի ու միւսը արհամարէ: Չէք կրնար
ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

Բայց մարդ իր խորամանկութեամբ կը ջանայ երկու
բեւեռներուն միջեւ ճօճիլ, անգիտակից թէ այդ կարելի
չէ, եթէ մեր «ամբողջ անձով» Աստուած պէտք է
սիրենք: Մարդ նաեւ կը գործէ իր մարմինով, որ
Աստուծոյ տաճարն է:

«Ո՛չ գիտէ՛լ եթէ Կաճար է՛լ Լադոն-ժոյ, եւ
Լոգի Լադոն-ժոյ բնակեալ է 'ի յեզ» (Լ.
Կորնթացիս Գ:16)

«Չէ՞ք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ
Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»:

Հետեւաբար Աստուած սիրել կը նշանակէ իր տաճարին
լաւ հոգ տանիլ: Աս կը համապատասխանէ մեր մարմին-
ներուն նկատմամբ բացարձակ ուշադրութեամբ վար-
ուիլ եւ զանոնք լաւագոյն կերպով խնամել, առանց
զանոնք չարաչար գործածելու եւ առանց զանոնք
պղծելու՝ այսինքն առանց որկրամոլութեան, առանց
ծխախոտ ծխելու, առանց խմիչքներով արբենալու,
առանց թմրեցուցիչ դեղերով մտային աշակերպման
եւ մոլորութեան: Նաեւ պարտ ենք պատշաճ կերպով,
այսինքն արողջապահական պայմաններու համաձայն,
մարմինը կերակրել: Իսկ մենք, մեր «Ես»-ին յառաջ
բերած ցանկութիւններով, կարճ ճղճիմ հաճոյքներու
համար, համեղ ուտելիքներ եւ ըմպելիներ կը փնտր-

ռենք եւ Աստուծոյ տաճարը՝ մեր մարմինները յաճախ
կը պղծենք: Ասոր պատիժն ալ ապագային կը կրենք՝
հիւանդանալով: Միթէ որկրամոլութիւնը մահացող
մեղքերէն մին չէ՞: Անհատը նաեւ կը գործէ իր մարմնի
միջոցով: Ուստի մեր բոլոր արարքներն ալ պէտք են
ըլլալ ըստ Աստուծոյ՝ մեր ներքին Քրիստոսի կամքին,
քան թէ մեր «Ես»-ին: Մարդկութեան ջախջախիչ մեծա-
մասնութիւնը կը գործէ եաստիրութեամբ: Երբ ինք շահ
չ'ակնկալեր, ընդհանրապէս չի գործեր: Սակայն եւ
այնպէս միշտ կան մանր-մունր բազմաթիւ այլասիրա-
կան գործունէութիւններ: Ինչպէս Աստուած՝ Քրիստոս
ամէն անհատի մէջ ներկայ է, նմանապէս Աստուած
բոլոր ստեղծագործութեան մէջ ալ ներկայ է: Հետեւա-
բար մեր բոլոր արարքներն ալ պարտ են նման հայեաց-
քով ըլլալ: Ուրեմն պէտք չէ որեւէ բոյսի, անասունի
վնաս հասցնել, այլ զանոնք լաւագոյն կերպով խնամել:
Մեր բոլոր արարքները պէտք են բոլորին՝ ընդհանուր
հանրութեան՝ ընկերութեան եւ բնութեան օգտին համար
ըլլալ: Նոյնիսկ եթէ օգտակար չենք, գոնէ պէտք չէ
որեւէ վնաս հասցնենք: Ահա՛, աս է «մեր բոլոր անձով
Աստուած սիրել»-ուն իմաստը:

Աստուած սիրելու երրորդ յորդորը. «Սիրէ՛ Տէրը՝
քու Աստուածդ՝ ... ամբողջ զօրութեամբդ ...» է: Վերլու-
ծենք թէ ի՞նչ է զօրութեամբ Աստուած սիրելուն իմաս-
տը: Այսօր բնագիտութիւնը փաստած է, թէ բոլոր տիե-
զերքը, ներառեալ աշխարհը եւ մենք, զօրութեամբ կազ-
մուած է: Նիւթն ալ զօրութենէ յառաջ եկած է: Բայց
որովհետեւ բնագէտները տակաւին այդ զօրութեան
բնոյթը չեն հասկցած, զայն «մութ զօրութիւն» կը
կոչեն: Բայց Յիսուս այդ զօրութիւնը, մեզի ծանօթա-
ցուց Զայն Ս. Հոգի կոչելով, որովհետեւ Ան Աստուծմէ
բղխած է: Ուրեմն ամէն ինչ Աստուծոյ զօրութեամբ՝ Ս.
Հոգիով յառաջ եկած է: Հետեւաբար բոլորս ալ՝

անասուն կամ անհատ, Ս. Հոգիի զօրութեան մէկական ծրարներ ենք: Յիսուս նաեւ կը յանձնարարէ սիրել մեր «ընկերը» մեր անձին պէս, որովհետեւ ամէն անհատ նոյն զօրութեան մէկ արտայայտութիւնն է, հետեւաբար այդ սէրը Աստուծոյ զօրութիւնը՝ Ս. Հոգին սիրելն է: Ամէն անհատ զօրութեան «մարմին» մը ունի: Ամէն զօրութիւն իր ուրոյն թրթռացումը ունի: Ամէն մի անհատի զօրութեան մարմինն թրթռացումն ալ անհատը ինք կը կերտէ եւ կը համապատասխանէ իր կենցաղին: Ամէն թրթռացում իր փոփոխական յաճախականութեամբ իր մէջ տեղեկութիւն կը պարունակէ: Մեր զօրութեան մարմնի թրթռացումին մէջի տեղեկութիւններն ալ մենք մեր խորհուրդ, խօսք ու արարքներով հոն տեղաւորած ենք: Այդ տեղեկութիւններն են, որ կը կազմեն եւ կ'որոշեն մեր ճակատագիրը: Եթէ իսկապէս Աստուած կը սիրենք եւ այդ խօսքը չենք գործածեր իբր բերնի ծամոց, իրեն միանալու տենչանքն ալ, որ սրտով սիրելուն հետեւանքն է, մեզ պէտք է մղէ մեր զօրութեան մարմինն յաճախականութիւնը բարձրացնելու այնպիսի մակարդակի մը, որ տեսանելի ըլլայ հանրութեան, ինչպէս Յիսուսի եղաւ իր այլակերպութեան ատեն: Զօրութեան յաճախականութիւնը բարձրացնելն ալ կարելի կ'ըլլայ մեր ամբողջ անձով Աստուած սիրելով: Բղջախորհութիւնը մահացու մեղքերէն մին է, որովհետեւ սեռային յարաբերութիւնները բարձր որակով զօրութիւն կը վատնեն: Հետեւաբար նպատակը պէտք է ըլլայ ծննդաբերութիւն եւ ոչ թէ հաճոյք, որպէսզի զօրութիւնը վատնուած չըլլայ: Երբ զօրութիւնը կը նուազի հիւանդութիւնները եւ վատ պատահարներն ալ կը թուին յաճախ մեզ գտնել: Պարտ ենք ընդունիլ կեանքի բոլոր վատ պատահարները եւ չգանգատիլ, որովհետեւ անոնք բոլորն ալ մեր կերտած ճակատագրին հետեւանքներն են: Եթէ ընդունինք եւ

փոխանակ գանգատելու մեր պատշաճ դասը սորվինք եւ այնուհետեւ նման արարքներով զօրութեան յաճախականութիւնը չապականենք, կը կարողանանք կամաց կամաց յաճախականութիւնը բարելաւել: Միանգամայն վատ պատահարներն ալ կը դադրին կրկնուելէ: Ահա՛, աս է ամբողջ զօրութեամբ Աստուած սիրելուն իմաստը: Եթէ մահացու մեղքերը, որովհետեւ բոլորն ալ Ս. Հոգիի կենսատու զօրութեան անձէն ներս հոսքը կը կաշկանդեն, կամ ներգործած զօրութիւնը կը վատեն, անձը հոգեպէս կը մեռցնեն, նոյնիսկ ժամանակի ընթացքին Ֆիզիքսպէս ալ: Այն աստիճանի պէտք է սիրել զԱստուած, որ մեր բոլոր ջանքը ընենք, որպէսզի մեր զօրութեան որակը նմանի Իրենինին: Իսկ մենք նոյնիսկ լուր անգամ չունինք, թէ զօրութեան մարմին մը ունինք եւ մեր «Ես»-ին փարած, մեր բռնած ընթացքով կը կերտենք զօրութեան որակ մը, ինչ որ մեզ աւելի կը հեռացնէ Աստուծմէ եւ պատճառ կ'ըլլայ մեր կեանքի բոլոր անբաղձալի պատահարներուն: Կ'ըսենք, թէ Աստուած կը սիրենք մեր ամբողջ զօրութեամբ, բայց իսկական սէրը խօսքով չէ, այլ միայն գործքով յայտնի կ'ըլլայ: Կան յարանուանութիւններ, որոնց անհատները կը կարծեն, թէ քարոզիչին իրենց ճակտին դպչելով Ս. Հոգիի զօրութիւն ստացած կ'ըլլան եւ այդ զօրութեան արդիւնք ալ վար կ'իյնան: Ասոնք բոլորն ալ զգացական գետնի վրայ ինքնախաբէութիւններ են: Քրիստոս իր աշակերտներուն ըսաւ. «Ձեզի Ս. Հոգին պիտի ղրկեմ»: Ս. Հոգին ալ Պենտեկոստէի օրը «կրակէ լեզուի» ձեւով աշակերտներուն տեսիլքով երեւցաւ: Կրակը զօրութեան նշան է, հետեւաբար Ս. Հոգիի զօրութիւնը բարձր որակով հոսեցաւ իրենց մէջ, փոխելով անոնց զօրութեան մարմնին յաճախականութիւնը: Իրենց բոլոր էութիւնը ցնցուեցաւ, որովհետեւ բարձր գիտակցութեան մակարդակի յափշտակուեցան

եւ զանազան գիտութիւններու տէր եղան: Ս. Հոգիի այդ զօրութիւնը իրենց եկաւ Քրիստոսէն՝ իրենց ճշմարիտ էութենէն: Միթէ Քրիստոս չէ՞ր ըսած. «Ձեզի Ս. Հոգին պիտի դրկեմ»: Ս. Հոգիի ֆիզիքական գետնի վրայ ներկայութիւնը Քրիստոսն է, որ ամէն անձի ճշմարիտ էութիւնն է: Հետեւաբար զօրութեան մարմինը Ս. Հոգիի զօրութիւնն է եւ մեր ամբողջ զօրութեամբ Աստուած սիրելն ալ այդ զօրութեան որակը բարձրացնելն է, որպէսզի գիտակցութեան (consciousness) աւելի բարձր մակարդակի մը յափշտակուինք:

Աստուած սիրելու յորրորդ յորդորը հետեւեալն է. «Սիրէ՛ Տերը՝ քու Աստուածդ՝ ... ամբողջ միտքովդ ...»: Ի՞նչպէս Աստուած սիրել միտքով: Մարդուն միտքը երբ կը գործէ սրտի միջոցաւ տեղի կու տայ զգացումներու: Ասոր մասին, վերեւ առաջին յորդորին՝ «բոլոր սրտով Աստուած սիրել»-ուն մէջ, անդրադարձանք: Այս յորդորին նպատակը մտքին ուղեղին միջոցաւ ունեցած գործառնութեան համար է: Միտքը խորհուրդներու եւ իմացականութեան միջոցն է: Դժբախտաբար մարդ արարած իր իմացականութիւնը պատշաճ կերպով չի գործածեր որպէսզի անկէ օգտուի: Մարդուն միտքը, բազմազան եւ ընդհանուր առմամբ անպէտ եւ անօգուտ խորհուրդներու ողողումով մը զբաղ, կարող չէ յայտնաբերել մտքին ունեցած կարողութիւնները եւ իր իմացականութիւնն ալ դրականօրէն գործածել: Պէտք չէ մոռնանք, թէ մարդ ինչ որ կը խօսի եւ ինչ որ կը գործէ նախ ծնունդ կ'առնեն իբր խորհուրդներ իր մտքին մէջ: Հետեւաբար իր մտքին որակը շատ կարեւոր է, ոչ միայն իր ամբողջ մտքով Աստուած սիրելուն, այլ նաեւ կարեւոր է նախորդ միւս երեք Աստուած սիրելու միջոցառումներուն համար ալ: Միթէ Յիսուս չըսա՞ւ.

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրբիւն, զի

նո՛ւա պէտքո՛ւս յիւսցեն:» (Մարգէնի Ե:8)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք
պիտի տեսնեն Աստուած»:

Ինչպէս նախկին գիրքերու մէջ բազմիցս կրկնած եմ,
«սուրբ սիրտ»-ը խորհուրդներէ սրբուած եւ մաքրուած
միտքն է: Հետեւաբար այն անձը, որ իր ամբողջ մտքով
Աստուած կը սիրէ, պարտ է իր մտքին ղեկը ինք իր
ձեռքը առնել եւ զգացումները զսպել եւ բոլոր խոր-
հուրդները դադրեցնել եւ միտքը կեդրոնացնել Աստու-
ծոյ՝ Քրիստոսի՝ իր ճշմարիտ էութեան վրայ: Միթէ հին
յուդական ասացուածքն ալ չ'ըսեր. «Ծանիր զքեզ»: Աս
ալ կարելի է խոկումով՝ աղօթքին ամենավեհ ձեւովը:
Ահա՛, աս է ամբողջ մտքով Աստուած սիրելը:

Յիսուսի առականերուն մեծամասնութեան, չըսելու
համար բոլորին, նպատակը յայտնաբերել է Աստուծոյ
Թագաւորութեան Թագուն գաղտնիքները, որով պարտ
ենք զանոնք մեկնաբանել վերոյիշեալ տուեալներու
լոյսին տակ: Որովհետեւ վերեւ տեղադրուած համար-
ները կ'ամփոփեն Աստուծոյ Թագաւորութեան հասնելու
կամ յաւիտեանականութիւնը ժառանգելու միջոցը, հոն
նշուած են չորս հրամայականներ: Անոնք են Աստուած
սիրելու չորս «եղանակները»: Ինչո՞ւ չորս: Որովհետեւ
մարդ ունի անհատականութիւն մը, որ կը գործէ
մարմինն միջոցաւ եւ մտքին միջոցաւ, որ ենթակայ է
թէ խորհուրդներու եւ թէ զգացումներու՝ յուզում-
ներու: Մարդ նաեւ է եւ ունի գօրութեան մարմին մը,
որ պատճառն է միւս երեքին: Հետեւաբար Յիսուսի
յորդորն ալ այն է, թէ մարդ փրկութեան համար պարտ
է սիրել Աստուած իր ամբողջական էութեամբը՝ իր
կեանքին չորս միջոցառումներովը:

Ուրեմն ի՞նչ է այդ Թագուն գիտութիւնը, զորս
Յիսուս բացայայտ կերպով չսորվեցուց, այլ առակ-
ներով խօսեցաւ եւ ինչո՞ւ Յիսուս չուզեց այդ գաղտ-
նիքը հանրութեան պարզել: Անոնք գօրութեան օրէնք-
ներուն գիտակցելու միջոցառումներն են: Մեր ունե-

ցած փորձառութենէն գիտենք, թէ ամէն տեսակի զօրութիւն իր ուրոյն օրէնքները ունի եւ եթէ մարդ այդ օրէնքները սորվի, կը կարողանայ այդ զօրութիւնները պատշաճօրէն գործածել:

Աշխարհի վրայ կան զանազան զօրութիւններ: Կայ Ֆիզիքական զօրութիւն եւ մարդ, ինչպէս նաեւ անասունները կարող են զայն յայտնաբերել օգտուելով իրենց մկանային ուժէն: Բնութիւնն ալ ունի Ֆիզիքական զօրութիւն, ինչպէս հովերուն փոթորիկները, որոնք կարող են աւերներ գործել: Կայ նաեւ հոսող կամ շարժուն ջուրին զօրութիւնը, ինչպէս նաեւ երկրաշարժը, հրաբուխը եւայլն: Մարդ արարած որոշ չափով կարող է այդ զօրութիւններէն օգտուիլ, որովհետեւ սորված է զանոնք կառավարող մի քանի օրէնքները: Մարդ կարող եղած է հողմաղացով (windmill) օդին ուժէն օգտուիլ: Վերջին մի քանի տարիներուն սկսած են հովին զօրութիւնը օգտագործել նաեւ ելեկտրականութիւն հայթայթելու համար: Մարդիկ նաեւ սորված են ջուրի զօրութեան մի քանի օրէնքները եւ դարերով զայն օգտագործած են ջաղացքի միջոցաւ: Այսօր տակաւին ջուրի ուժով յառաջ եկած ելեկտրականութիւն կը գործածենք: Բայց որովհետեւ մարդ տակաւին այդ զօրութիւնները կառավարող բոլոր օրէնքները չի գիտեր, կարող չէ զանոնք ամբողջովին զսպել եւ անոնց գործած աւերներուն առաջքը առնել: Տակաւին նոր-նոր կը ջանան որոշ վայրեր ամպերը «սերմանելով» անձրեւ տեղացնել: Որովհետեւ իրենց գիտութիւնը նախնական է, որով իրենք զանոնք կառավարող բոլոր օրէնքներուն տեղեակ չեն, ուստի կարող չեն հասկնալ իրենց ըրածներուն հետեւանքը որով կը խանգարեն ընդհանուր աշխարհի օգերեւութաբանական ներդաշնակութիւնը: Յիսուս տեղեակ ըլլալով այդ զօրութիւնները կառավարող օրէնքներուն, դիւրութեամբ դադրեցուց թէ՛ հովի

եւ թէ՛ ծովի փոթորիկները:

Մարդ նաեւ տեղեակ է քիմիական տարրական կապերու (chemical bonds) միջեւ գոյութիւն ունեցող զօրութեան եւ որոշ չափով զանոնք կառավարող օրէնքները սորված, կարող է զանոնք գործածել եւ անոնցմէ օգտուիլ: Նախ միայն փայտ, յետոյ ածուխ եւ աւելի վերջ ալ քարիւղ կամ օդային կազ վառելով, անոնց քիմիական բաղադրութիւնները թթուածինի (oxygen) յաւելումով եւ տարրական կապերուն փոխուելովն ալ արձակուած զօրութենէն կարողացած է օգտուիլ: Այս արարքով անոնք ապականած են օդը եւ աշխարհի ընդհանուր ջերմութեան բարձրացման պատճառ եղած ու խանգարած են բնութեան ներդաշնակութիւնը:

Տակաւին միայն հարիւր տարի առաջ մարդ գիտակցեցաւ նաեւ հիւլէական զօրութեան, բայց որովհետեւ բոլոր օրէնքներուն լրիւ տեղեակ չէ, միշտ վտանգ կայ որ արկածի մը հետեւանք, ցոլարձակ (radio-active) ապականութեամբ, երկիրը անբնակելի դառնայ: Պէտք չէ մոռնանք մի քանի տասնեակ տարի առաջուան «Չէրնօպիլ»-ի աղէտը: Մօտաւորապէս հարիւր յիսուն տարի առաջ ալ մարդ սորվեցաւ ելեկտրոններու հոսքին որոշ օրէնքները եւ սկսաւ շատ մը մարզերու մէջ ալ ելեկտրականութիւնը օգտագործել:

Մարդ վերջին հարիւր տարուայ ընթացքին ելեկտրամագնիսական զօրութիւնը կառավարող որոշ օրէնքները սորվեցաւ եւ զանոնք գործածեց զանազան մարզերու մէջ, ինչպէս ձայնասփիւռի եւ հեռատեսիլի իրականացումը, մանրալիքային (microwave) ճառագայթներով կերակուր եփելը եւ այլ կերպերով օգտուելը, «Ք» ճառագայթներով (X rays) բժշկութեան մէջ մարդկային մամնին ներքին մասերը նկարելը: Տակաւին վերջին մի քանի տասնեակ տարիներու ընթացքին է, որ մարդ նաեւ սկսած է արեւի լոյսին զօրութիւնը օգ-

տագործել ելեկտրականութիւն հայթայթելու համար: Հայու մը՝ Ռ. Վ. Տամատեանի ըրած գիւտով այսօր նաեւ կարող ենք մարմնի ներքին նկարը հանել մագնիսական զօրութիւնը օգտագործելով (magnetic resonance imaging), իսկ Միքայէլ Տէր-Պողոսեանի գիւտով ալ «PET scan»-ով:

Այս վերոյիշեալ զանազան զօրութիւններու նկատմամբ կը թուի թէ մարդ երբ զօրութիւնները կառավարող օրէնքներուն կը գիտակցի, կը ջանայ զանոնք օգտագործել ընդհանուրի օգտին համար: Բայց մարդ, որովհետեւ ընդհանուր առմամբ անձնասէր է եւ հետեւաբար խաւարամիտ, տակաւին բաւարար իմաստութիւն չունի եւ զանոնք կ'օգտագործէ իր անձնական շահին համար: Թէսլա (Tesla) առանց թելերու հանրութեան ելեկտրականութիւն բաշխելու գիւտը ըրած էր, բայց ներգրուածի բաժնետէրերը հասկցան թէ պիտի չկարենան դրամի փոխարէն բաշխել ու շահ ընել, որով ռմբակոծեցին անոր շինած աշտարակը եւ չարտօնեցին որ ան իր գիւտը գործադրութեան դնէ:

Մարդ իր ըրած գիւտերուն եւ իր սորված զանազան զօրութեան օրէնքներուն վերոյիշեալ օգտակար նպատակներու գործածութենէն զատ, ան, իր խաւարամբրտութեան եւ եսասիրութեան հետեւանք, զանոնք գործածած է նաեւ վատ նպատակներու համար՝ աւերներ գործելով: Մարդու գիտակցութեան մէջ զօրութեան ամենէն պարզը եւ նախնականը Ֆիզիքական զօրութիւնն է: Շատ վաղուց մարդ սկսաւ իր Ֆիզիքական զօրութիւնը վատ նպատակի համար գործածել՝ կայէն իր եղբայրը՝ Աբելը սպաննեց: Մարդ նաեւ աղեղ եւ նետը չինեց եւ սկսաւ պատերազմիլ: Երբ ան քիմիական տարրական կապի ուժը գտաւ, զայն գործածեց նաեւ վատ նպատակներու համար. նախ թնդանօթի համար, յետոյ ալ ռումբի, զանոնք պայթեցնելով հազարներ մեռցուց: Պատերազմները շատ աւելի սաստկա-

ցուց: Իսկ հիւլէական զօրութեամբ ալ պատերազմներու սաստկութիւնը իր գագաթնակէտին հասցուց, որով մէկ ռումբով հարիւր հազարաւոր մարդիկ մահացան: Ան ելեկտրականութիւնն ալ գործածած է մարդ տանջելու, ինչպէս նաեւ մահապատիժներու կիրարկման համար: Մարդը լոյսի զօրութիւնովն ալ՝ «laser»-ի միջոցաւ, օդանաւեր վար առած է, մարդ կուրցուցած, ինչպէս նաեւ մեռցուցած է:

Այս բոլոր տեղեկութիւններէն յայտնի կ'ըլլայ, թէ երբ մարդ սորված է որեւէ զօրութիւն մը կառավարող օրէնքները, ան, այդ զօրութիւնները օգտակար նպատակներու գործածելով հանդերձ, զանոնք զուգահեռաբար գործածած է վատ նպատակներու համար ալ: Յիսուս գիտնալով մարդուն խաւարամտութեան մակարդակը եւ իր բոլոր գիտելիքները անձնասիրաբար վատ նպատակներու գործածելու միտումը, չփափաքեցաւ որ կարողութիւնը ունենայ հսկայական աւերներ գործելու, նոյնիսկ կործանելու աշխարհ, հետեւաբար բացայայտօրէն հանրութեան չտուաւ Ս. Հոգիի՝ տիեզերական զօրութեան թագուն օրէնքները: Յիսուս անոնց խօսեցաւ առականերով, որպէսզի իմանալով չհասկնան: Յիսուս նոյնիսկ իր առականերուն մէջ Զօրութեան այդ թագուն օրէնքները չէ յայտնած: Ան, առականերով, միայն բարձր գիտակցութիւն կերտելու գիտութիւնը տուած է: Իսկ այն անձը, որ կը հասկնայ առականերուն մէջ թագուն գիտութիւնը եւ կը յաջողի բարձր գիտակցութեան տիրանալ, նաեւ տէր կ'ըլլայ բոլոր թագուն օրէնքներուն, որոնք կը կառավարեն Զօրութիւնը: Յիսուս իբր մարդ հասնելով այդ բարձր գիտակցութեան մակարդակին եւ յայտնաբերելով Քրիստոս իր անձին մէջ, տեղեակ էր Զօրութիւնը կառավարող բոլոր օրէնքներուն, հետեւաբար կարող էր ընել այն բոլորը, զորս մենք հրաշք կը համարենք: Միթէ Յիսուս չըսա՞ւ,

Թէ Իր ըրածներէն աւելի մեծ գործեր կրնանք ընել:

«... Ամէն ամէն ասէ՛մ թէ որ Հասարակն յիս
սգործս սոր ես գործեմ, եւ նա՛ գործեսցե եւ
մեծամեծս է՛ս ինն սնոյնս գործեսցե ... » :
(Յովհաննոս ԺԴ:12)

«Ճամարտապէս, ճամարտապէս կը յայտարարեմ ձեզի-
Ան որ կը հաւատայ ինծի, ինք ալ պիտի ընէ այն
գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր
պիտի ընէ, ...»:

**Ուրեմն այս հիման վրայ պէտք է կարգանք եւ
մեկնաբանենք Յիսուսին առակաները, սորվինք հոն
ներկայացուած թագուն գիտութիւնները, որպէսզի
կարողանանք բարձրացնել մեր գիտակցութեան մա-
կարդակը եւ Իրեն նման կատարեալ ըլլանք:**

«Երբ եղերո՛ւի դո՛ւի կատարեա՛լի, որպէս եւ
Հայրն յեր երկնսոր կատարեա՛լ է» : (Մատթէոս Ե:48)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր
Հայրը կատարեալ է»:

«Ո՛չ եւ աշակերդ լա՛ւ ինն սնոյնս կատարեալս
եղիցի իբրեւ սնոյնս կատարեալս» : (Ղուկաս Գ:4)

«Աշակերտը իր վարդապետէն գերիւկեր չէ. բայց ամէն
կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի
ըլլայ»:

**Յիսուսին նպատակը մեզի սորվեցնել էր կատարե-
լութեան ուղին: Ան Իր կեանքի օրինակով եւ Իր խօս-
քերով, նամանաւանդ առականերով, մեզի սորվեցուց այդ
ուղին: Եթէ Իրեն չհաւատանք եւ չսորվինք, մեր բռնած
ընթացքով միշտ Ս. Հոգիին՝ Աստուծոյ զօրութեան դէմ
կը մեղանչենք, հետեւաբար կ'ենթարկուինք այդ մեղքե-
րուն յառաջ բերած անբաղձալի հետեւանքներուն: Եթէ
հասկնանք եւ սորվինք առականերուն մէջի թագուն
գիտութիւնները, բայց չգործադրենք զանոնք, մեր մեղ-**

քը կը թուի բազմապատկուիլ՝ ըստ հետեւեալ համարին.

Եւ Ձառա՛յ որ Գիտիցէ պէտքս Կեանքն իւրոյ՛ Եւ
որ Կարաստիցի ըստ Կամայ նորա, արքիւ Գան
Բազում: Եւ որ որ Գիտիցէ՛ Եւ արժանի Գանի
ինչ Գործիցէ, արքիւ Գան սակա՛ւ: Ամենա՛յն
որո՛ւմ շար Կոտա, շա՛ր Խնդրեացի ՚ի նմանէ.
Եւ որո՛ւմ Բազում աւանդեցաւ, առաւել՛ էւս
Կաշանջեցէն ՚ի նմանէ»: (Ղոսէաս ԺԲ: 47-48)

Այն ծառան՝ որ գիտէ իր տիրոջ կամքը եւ չի պատ-
րաստուիր, ո՛չ ալ կը գործէ անոր կամքին համաձայն,
չա՛տ պիտի ծեծուի: Բայց ա՛ն որ չի գիտեր ու ծեծի
արժանի բաներ ընէ, քիչ պիտի ծեծուի: Որո՛ւն որ շատ
տրուեցաւ՝ շատ պիտի պահանջուի անկէ, եւ որո՛ւն որ
աւելի յանձնուեցաւ՝ ա՛լ աւելի պիտի ուզուի անկէ»:

Եթէ Յիսուսի սորվեցուցածները գիտնալով հանդերձ
չենք գործադրեր, կը նշանակէ թէ Իրեն չենք հաւատար:
Յիսուսի հաւատալ կը նշանակէ Իր բոլոր սորվեցուցած-
ները լիովին գործադրել: Բայց մենք, իր ըսած եւ սոր-
վեցուցածները չենք գործադրեր, այլ պարզապէս կ՛ը-
սենք. «Ես Յիսուսի կը հաւատամ թէ ան Աստուծոյ որ-
դին է եւ իմ մեղքերուս համար մեռաւ. հետեւաբար
փրկուած եմ»: Այս տեսակէտը խեղաթիւրել՝ ոչնչա-
ցընել է Յիսուսի սորվեցուցածները եւ կը համապատաս-
խանէ յաջորդ համարներուն մէջի գրուածներուն:

«Թո՛ղ Կոտէ պնաս. Կո՛յրէ Են՛ Կոտաց
առաջնորդէ: Այս Կոտի յորժամ առաջնորդէ՛
սխալէ՛, Եւ Երկո՛ղին ՚ի Խարխոսար անկանին»:
(Մարիէոս ԺԵ: 14)

«Թողուցէ՛ք զանոնք. իրենք կոյր են, ու կոյրերու
առաջնորդ: Եթէ կոյրը առաջնորդէ կոյրը՝ երկուքն ալ
փոքր պիտի լինան»:

«... Միշէ Կարեցէ՞ Կոյր Կոտի՛ առաջնորդէ,

«Շ ապա՛ւեն երկո՛ւնն 'ի խորխորաց անկանիցին» :
«... Կոյրը կրնա՞յ առաջնորդել կոյրը. միթէ երկո՛ւքն
ալ փոսը պիտի չլինա՞ն» : (Ղաւկա 9 : 39)

*Յիսուս նաեւ առականերով խօսեցաւ որպէսզի
իրագործուի մարգարէներուն ըսածը, թէ Ինք առակ-
ներով պիտի սորվեցնէր :*

«Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս ասակո՛ւ
ընդ ժողովո՛ւրդան. եւ ասանց ասակե՛ր ո՛չինչ
խօսէր ընդ նոսա : Զի լոյցի ասացեալն 'ի
մարգարէի. Բայց ասակո՛ւ զլէրան իմ,
Թղթեցի՛ց ցածաժկեալան 'ի սկզբանէ աշխարհի» :
(Մաթթէոս ԺԳ : 34-35)

«Յիսուս առականերով խօսեցաւ բազմութեան այս բոլոր
բաները : Առանց առակի չէր խօսեր անոնց՝ որպէսզի
իրագործուի մարգարէին միջոցով ըսուած խօսքը .
«Առականերով պիտի բանամ բերանս՝ եւ պիտի
արտայայտեմ աշխարհի Հիմնադրութենէն ի վեր
ծածկուած բաները» :

*Ինչպէս Հին Կտակարանի մէջ ներկայացուած
Մովսիսական կրօնքին մարգարէներն ալ նման թագուն
գիտութիւնները բացայայտ չեն քարոզած, Յիսուս ալ,
անոնց նման, որեւէ թագուն գիտութիւն բացայայտ
չտուաւ : Յիսուս հետեւեալ համարներուն նման խօսքեր
յաճախ գործածած է չեչտելու համար, թէ իր ըսած-
ներուն մէջ, անոնց բառացի իմաստներէն զատ, վերա-
ցական հասկնալիք մը եւս կար :*

«... Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցե՛լ» :
(Մաթթէոս ԺԳ : 9, 43) (Մաթթէոս ԺԷ : 15)

(Մարկոս Դ : 9, 16) (Ղաւկա Ը : 8) (Ղաւկա ԺԴ : 35)
«... Ան որ ականջ ունի լսելու՝ թող լսէ» :

«Եթէ ո՛վ ունիցի ականջս լսելոյ, լուիցե՛լ» :
(Մարկոս Դ : 23)

«Եթէ մէկը ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

«Ըշէ Գ՛ն՝ է- յ՛ գեօանէ՛, ականջէ՛ էն՝
է- յ՛ լսէ՛ է- յ՛ իմանայ՛ ցահա-ի՛ն» :
(Մարկոս Ը:18)

«Աչքեր ունիք եւ չէ՞ք տեսներ՝ ականջներ ունիք ու չէ՞ք լսեր՝ եւ չէ՞ք յիշեր»:

«Ե- դարձեալ ասանձի՛նն աս- աշակէ՛ր ցահն՝
ասէ. Երանի՛ աշայ՝ որ ցեօանիցէն զոր
ցեօանիցէ՛ր» : (Ղուկաս Ժ:23)

«Աշակերտներուն դառնալով՝ առանձին ըսաւ. «Երանի՛ր
այն աչքերուն՝ որ կը տեսնեն ձեր տեսածները»»:

Վստահաբար, Զինք մտիկ ընողներ խուլ չէին:
Յիսուսի ըսել ուզածը այն էր, թէ անոնք, որոնք
հասկնալու կարողութիւնը ունին, թող հասկնան: Հին
Կտակարանի մարգարէներն ալ յաճախ նման արտայայ-
տութիւններ ունեցած են:

«... Եւ Լանի զԺողովորդն Կոյր: Է-
թէպէտ է- աշէ էն. սակայն նոյնպէս
Կո-րացեալ էն, է- խցեալ էն ականջէ՛
ի-րեանց» : (Եսայայ ԽԳ:8)

«Դո՛ւքս հանցեք աչք ունեցող կոյր ժողովուրդը, եւ
ականջ ունեցող խուլերը»:

«Լո-արու-ի զայս ժողովորդ-ի յիմար է-
անմիտ, որոց աշէ էն է- ոչ ցեօանէն, է-
ականջէ՛ է- ոչ լսէն» : (Երեմեայ Ե:21)

«Հիմա սա՛ մտիկ ըրէք՝ ո՛վ անմիտ եւ անխելք
ժողովուրդ, որ աչքեր ունիք՝ բայց չէք տեսներ,
Ականջներ ունիք՝ բայց չէք լսեր»:

«Եր- ընդ ո՛ւմ խօսեցայց, է- ո՛ւմ էդից
վկայութիւն՝ է- ընդ, ամա-արիկ անիշը-

ժամ Եւն ականջի նոցա, Եւ ոչ կարեն լսել:
Ահա Բան Տեառն Եղէ նոցա՝ ի նախարինս,
Եւ ոչ Եւս ախորժեսցեն զնա» : (Երեմիայ 9:10)
«Որո՞ւ խօսիմ, ո՞վ վկայ կանչեմ, որ լսեն. Ահա՛ անոնց
ականջները անթլփատ են, ու չեն կրնար ուշադիր
լլլալ: Ահա՛ Տէրոջ խօսքը անոնց առջեւ նախատուեցաւ.
Անկէ չեն ախորժիր»:

«Եւ Եղէ Բան Տեառն առ իս՝ Եւ առէ:
Որդի մարդոյ՝ ի մէջ անօրէնոթեանց
նոցա Բնակեալ Եւ դոս. որ աշս ունին
դեսանելոյ՝ Եւ ոչ դեսանեն. Եւ ականջս
լսելոյ՝ Եւ ոչ լսեն. զի դոսն դառնացողաց
են» : (Եզեկէլ ԺԲ:2)

«Տէրը խօսեցաւ ինծի՝ ըսելով. «Մարդո՛ւ որդի, դուն
ըմբոստներու տան մէջ կը բնակիս: Անոնք աչքեր
ունին՝ տեսնելու համար, բայց չեն տեսներ. ականջներ
ունին՝ լսելու համար, սակայն չեն լսեր. որովհետեւ,
անոնք ըմբոստներու տուն են»:

Նմանապէս ալ Մարդու Որդին՝ Քրիստոս մեր մէջ
կը բնակի, բայց որովհետեւ մեր տուները՝ անհատակա-
նութիւնը ըմբոստ է, Իր յորդորները չենք լսեր եւ կա-
տարելութեան ուղին չենք տեսներ: Պարտ ենք Դաւիթի
նման ըլլալ: Դաւիթ ալ իր Սաղմոսներուն մէջ մարգա-
րէներուն նման արտայայտութիւններ ունեցած է, բայց
ինք չարախօսէն՝ իր «Շս»-էն եկած յորդորներուն եւ
հրահանգներուն նկատմամբ կոյր, խուլ եւ համր եղած է:

«Եյլ Ես որպէս խուլ զի ոչ լսեմ, որպէս
Համր որ ոչ Բանայ զԲերան իւր: Եղէ Ես
որպէս մարդ որ ոչ լսեմ, Եւ ոչ Գոն խօսի
՝ ի Բերան նորս» : (Սաղմոս 115:14-15)

«Սակայն ես խուլի պէս չեմ լսեր, համբի պէս բերանս
չեմ բանար: Այնպիսի մարդու մը պէս եմ՝ որ չի լսեր,
ու պատասխան չկայ իր բերանը: (Սաղմոս ԼԸ:14-15)

Մենք ալ Դաւիթի նման պարտ ենք մեր «Ես»-էն
եկած յորդորներուն նկատմամբ կոյր եւ խուլ ըլլալ:
Սակայն, բանալ մեր աչքերը եւ ականջները ու հետեւիլ
մեր ներքին Քրիստոսի լուռ ձայնին: Բայց ճշմարտու-
թիւնը այն է, թէ մենք ճիշդ հակառակը կ'ընենք՝
կ'անտեսենք ներքին լուռ ձայնը եւ կը հետեւինք
«Ես»-էն եկած հրահանգներուն: Երբ նոյնիսկ կը փափա-
քինք կատարելութեան ուղիէն ընթանալ եւ այս
ուղղութեամբ կը կարդանք եւ կ'ուսումնասիրենք Ս.
Գիրքը, չենք հասկնար հոն գրուածներուն բուն իմաստը
եւ չենք կրնար ըմբռնել հոն ներկայացուած ինչպէս
նաեւ Յիսուսի սորվեցուցած իմաստասիրութիւնը:

*

* *

Այս գիրքը բաժնուած է երեք գլուխներու: «Հայր
Աստուծոյ նպատակը մարդուն համար» խորագրեալ
առաջին գլուխին մէջ ներկայացուած են այն առակնե-
րը, որոնք կը յայտնեն ստեղծագործութեան մէջ Աստու-
ծոյ նպատակը՝ փափաքը: Անոնք հետեւեալներն են.

- Անառակ որդիին առակը
- Անպտուղ թզենիին առակը
- Կորսուած դրամին առակը
- Կորսուած ոչխարին առակը

Իսկ «Մարդը եւ Քրիստոսի յայտնութիւնը» խորա-
գրեալ երկրորդ գլուխին մէջ ներկայացուած են այն
առակները, որոնք կու տան տեղեկութիւններ անձին
մէջ Աստուածայայտնութեան մասին: Անոնք հետեւե-
ալներն են.

- Հովիւին առակը
- Թզենիին դասը
- Ճրագը անօթին տակ

- Պահուած գանձին առակը
- Մարգարիտին առակը
- Մանանեխին առակը
- Սերմնացանին առակը
- Աճող սերմին առակը
- Խմորին առակը

Երրորդ գլուխը՝ «Մարդուն կենցաղը եւ Ս. Հոգու հատուցում» խորագրով, կը պարունակէ մնացեալ առակները, որոնք մարդուն կը սորվեցնեն կատարելութեան ուղին, որպէսզի կարողանան իրականացնել երկրորդ գլուխին մէջ ներկայացուած Քրիստոսի յայտնութիւնը իրենց մէջ եւ հետեւաբար կատարուի առաջին գլուխին մէջ ներկայացուած Աստուծոյ փափաքը: Երրորդ գլուխին մէջ նկատի առնուած են հետեւեալ առակները.

- Երկու տուն շինողներուն առակը
- Որոմին առակը
- Ուռկանին առակը
- Չներող ծառային առակը
- Այգիին բանուորներուն առակը
- Երկու որդիներուն առակը
- Այգիին մշակներուն առակը
- Հարսանեկան կոչունքի առակը
- Տասը կոյսերուն առակը
- Երեք ծառաներուն առակը
- Անմիտ հարուստին առակը
- Հաւատարիմ կամ անհաւատարիմ ծառան
- Խորամանկ տնտեսին առակը
- Աղքատ Ղազարոսին առակը
- Այրիին եւ դատաւորին առակը
- Փարիսեցիին եւ մաքսաւորին առակը
- Բարի Սամարացիին առակը

*

*Իմաստութիւն Հօր Յիսուս, տո՛ւ Կո ինձ իմաստութիւն՝
զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն
Ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ ցիս.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:*

* * *

Բ

Այս գիրքիս բովանդակութիւնը կը ներկայացնէ
իմ այսօրուայ խորհելակերպը, մտածելակերպը:
Նկատի ունենալով որ ամէն ինչ հիմնուած է օրուայ
փորձառութիւններու վրայ, կարելի է որ յառաջիկային
տարբեր ձեւով ալ արտայայտուիմ:


Այսքան էջերուն մէջ եթէ կան ուշադրութենէ
վրիպած սխալներ, ընթերցողին ներողամտութեան
կ'ապաւինիմ:

* * *

Գ

Գլուխ Ը – «Յաւելուածական» բաժնի մէջ տեղադ-
րուած գրութիւնները համացանցէն առնուած եւ իմ
կողմէ հայերէնի թարգմանուած են: Անոնց մէկ մասին
հեղինակները յայտնի չեն:

* * *





-Ա-

ՅԻՍՈՒՄԻ ԱՌԱԿՆԵՐԸ ՀԱՅՐ ԱՍՏԻՇՅՆ ՆՊԱՏԱԿԸ ՄԱՐԴՈՒՄԻ ՀԱՄԱՐ



ՀԱՅԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՆՊԱՏԱԿԸ ՄԱՐԴՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Այս գլուխին մէջ պիտի ներկայացուին Յիսուսի այն առակները, որոնք համայն մարդկութեան համար Աստուծոյ նպատակը կը ներկայացնեն: Մարդ արարած Աստուծոյ ստեղծագործութիւնն է, հետեւաբար Աստուծոյ մէկեւոր է եւ Աստուծոյ մէկ մասնիկն է: Միթէ չե՞նք ըսեր. «Միակ ճշմարտութիւնը Աստուած է»: Բայց որովհետեւ Աստուած մարդուն տուաւ ազատ կամք, մարդն ալ իր ազատ կամքով եւ իր կերտած խաւարամտութեամբ զատեց պատրանքը, կարծելով, թէ ան ճշմարտութիւնն է: Մոռցաւ զԱստուած եւ իր ստեղծուած ըլլալուն պատճառը: Այդ պատճառը, պատշաճ գիտակցութիւն մը կերտելով, ճշմարտութիւնը հասկընալ եւ Աստուծոյ ետ վերադառնալ ու դարձեալ իրեն միանալն է, ուրկէ որ ինք եկած էր: Աստուած անհամբեր կը սպասէ մեր ետ վերադարձը: Յիսուս իր առակներուն մէջ յաճախ հարսանիքի կամ խնճոյքի օրինակներ գործածած է: Խնճոյքը Աստուծոյ թագաւորութիւնը կամ յաւիտենական կեանքը կը ներկայացնէ: Ան որ խնճոյքին կը մասնակցի կը նշանակէ թէ փրկուած է: Իրողութիւնը այն է թէ համայն մարդկութիւնը, աւելի ճիշդ է ըսել, բոլոր ստեղծագործութիւնը, արդէն Աստուծոյ հետ է, բայց անգիտակցաբար: Իսկ Աստուծոյ վերադարձը կը նշանակէ արդէն Աստուծոյ հետ եղած ըլլալու գիտակցութիւնը ունենալ եւ Աստուած ճանչնալ փորձառութեամբ, քան թէ միայն իմացականօրէն: Նմանապէս, հարսանիքն ալ կը ներկայացընէ մարդկութիւնը, որ «հարսը» կը ներկայացնէ, փեսային, որ Քրիստոս՝ Աստուած կը ներկայացնէ, միանալըն է եւ միականութիւն ըլլալն է: Միթէ մեր մարդկային կեանքի մէջ ալ հարսը եւ փեսան պսակի խորհուրդով իրար չե՞ն միանար եւ մէկ ընտանիք չե՞ն կազմեր: Այս հիման վրայ մեկնաբանենք Յիսուսի առակները:

ԱՆԱՊԱԿ ՈՐԴԻՒՆ ԱՊԱԿԸ



«Եւ ասէ՛. Ման միռջ էին Երկո՛ւ որդիքի՛. Ասէ
Կրդտերն 'ի նոցանէ ցԼայրն. Ըս'յր՝ Կո՛ւր ինչ
Բաթին որ անկանի յընշիցդ: Եւ նա՛ Բաթանեա՛ց
նոցա պէկեա՛նան: Եւ յեցո՛ւ ըջ Բապո՛մ առաքց՝
Ժողովեալ պամեանայն Կրդտերոյն՝ Գնաց յաշխարհ
Ըեա՛ի. Եւ անդ վարանեա՛ց պինշա իւր, պի կեա՛յր
անառակո՛ւ. Եւեամբ: Եւ իբրեւ աղառեա՛ց
պամեանայն, Եղեւ ա՛ղ ասարիկ յաշխարհին
յայնմիկ. Եւ յղեա՛ց պնա յաԳարա՛կ իւր՝ արաթէ՛լ
խոյս: Եւ ցանկա՛յր լնուլ պորովայն իւր
յեղջերէն պոր խո՛ւշն ուրբէին, Եւ ո՛չ ոք Կայր
նմա: Եւ Եկեալ 'ի մի՛րա իւր՝ ասէ. 'Քանի՞
վարջ- կանի իցեն 'ի Կան Ըո՛ր իմոյ Ըացալիցի,

Եւ ես ասոյ՝ սովորած կորնշիմ: Յարոցեալ
Գնացից աս ճայր իմ, եւ ասացից ցնա. ճայր
մեղայ յերկինս՝ եւ ասաջի խոյ, եւ ո՛չ ես եմ
արժանի կոշել որդի խո. արա՛ւս իբրեւ սմի՛ն
վարչկանայ խոյ. Եւ յարոցեալ է՛կն աս ճայր
իւր: Եւ մինչ զիս ճեւագո՛յն եր, երբե՛ս սնա
ճայրն՝ եւ Գրացայ. յարեաւ եւ ընթացայ
ընդաւ- ուսջ, անկայ- ստարանոցան նորա, եւ
ճամ- Բորեայց սնա: Եւ ասե ցնա որդին.
ճայր՝ մեղայ յերկինս՝ եւ ասաջի խոյ, եւ ո՛չ
եւ եմ արժանի կոշել որդի խո: Եւս ճայրն
ցժառայան իւր. Սաղազակի ճանէ՛վ ստար-
մո-ճանն ասաջին, եւ աԳոցէ՛վ նմա, եւ քո՛ւ-
սմարանին՝ ի յէ՛ւն նորա, եւ կոշի՛կս յո՛րա
նորա. եւ աժէ՛վ սէ՛սն տարարակ, սէնէ՛վ
կերիցո՛ւ-վ եւ ուրա՛խ լիցո՛ւ-վ. սի այս որդի ին
մեւեա՛լ եր՝ եւ եկեա՛ց, կորոսեալ եր՝ եւ
Գրայ. եւ սկսան ուրա՛խ լինել: Եւ է՛ր երե՛ց
որդի նորա յա- Գարակի. եւ մինչդեռ Գայր՝
եւ մէ՛րջ եղեւ ՚ի քոսն, լոս- սն սնայն երԳո՛ց
եւ ստարոց. եւ կոշեալ աս ինչն սմի՛ն
ժառայիցն՝ ճարցաներ Բե սի՛նչ իցե այն: Եւ
նա՛ւ ասե ցնա. Զի եղբայր խո եկեալ ե, եւ
եսէ՛ն ճայր խո սէ՛սն տարարակ, սի ողջա՛մբ
ընկալաւ սնա: Բարկացայ՝ եւ ո՛չ կամեր
մարանել: Եւ ճայրն ելեալ արդատա՛ւ աղաշէ՛ր

սնա: Պապասխանի՛ ետ՝ եւ ասէ ցՀայրն. Այս
վանի ամէ՛ եւն՝ սի ծառայեմ վեւ, եւ երթե՛վ
ստորոտիւրանա՛ւ վոյ ո՛չ անցի. ո՛ւ մի երթե՛վ
ո՛չ ետոր ինչ՝ սի որա՛խ եղեց ընդ Բարեկամս
իմ: Յորժամ եկն որդի՛դ վո այդ, որ եկե՛ր
սկեանս վո ընդ պոռնիկս, սկե՛ր դմա սկե՛սն
պարա- բակ: Եւ ասէ ցնա. Ո՛րդեակ, դո-
Հանա- պա՛ս ընդ իս ես: Եւ ամենայն որ ի՛մ է՝
վո այլ որա՛խ լինել եւ խնդալ պա՛րս եր, սի
եղբայր վո այս՝ մեւեա՛լ եր, եւ եկեա՛ց.
Կորոտեալ եւ Գրաւ»: (Ղուկաս ԺԵ:Յ-32)

«Ապա ըսաւ. «Մարդ մը ունիւր երկու որդի: Անոնցմէ
կրտսերը ըսաւ Հօրը. Հայր, տո՛ւր ինծի քու ունեցածիդ
ինծի վիճակուելիք բաժինը: Ան ալ բաժնեց անոնց իր
ունեցածը: Շատ օրեր չանցած՝ կրտսեր որդին ժողովեց
բոլոր բաները, մեկնեցաւ Հեռաւոր երկիր մը, ու Հոն
փճացուց իր ունեցածը՝ անառակութեամբ ապրելով: Երբ
ծախսեց ամէնը՝ սաստիկ սով մը եղաւ այդ երկրին մէջ,
եւ ինք սկսաւ կարօտութեան մէջ ըլլալ: Ուստի գնաց՝
այդ երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտաւ. ան ալ
իր արտը դրկեց զայն՝ խոզ արածելու Համար: Կը
ցանկար խոզերուն կերած եղջիւրէն իր փորը լեցնել,
բայց ո՛չ մէկը կու տար անոր: Եւ ինքնիրեն գալով՝
ըսաւ. Քանի՛ վարձկաններ կան Հօրս տունը՝ Հացով
լիացած, ու ես Հոս սովամահ կը կորսուիմ: Կանգնիմ,
երթամ Հօրս քով եւ ըսեմ անոր. «Հայր, մեղանչեցի
երկիրքի դէմ ու քու առջեւդ, եւ ա՛լ արժանի չեմ քու
որդիդ կոչուելու. ըրէ՛ զիս վարձկաններէդ մէկուն
պէս»: Ուստի կանգնեցաւ ու գնաց իր Հօր քով: Մինչ
ինք դեռ չատ Հեռու էր՝ Հայրը տեսաւ զայն եւ գլխաց-
վազելով՝ անոր վիզին վրայ ինկաւ ու Համբուրեց
զայն: Որդին ալ ըսաւ անոր. Հայր, մեղանչեցի երկիրքի
դէմ ու քու առջեւդ, եւ ա՛լ արժանի չեմ քու որդիդ
կոչուելու: Բայց Հայրը ըսաւ իր ծառաներուն. Հանեցէ՛ք
առաջին պարեգօտը եւ Հագցուցէ՛ք անոր, մատանի՛ դրէ՛ք
անոր ձեռքը ու կօշիկներ՝ անոր ոտքերը: Եւ բերէ՛ք

պարարտ գուարակը, մորթեցէ՛ք, ուտե՛նք ու գուարճանայնք. որովհետեւ այս որդիս մեռած էր՝ եւ վերապրեցաւ՝ կորսուած էր՝ ու գտնուեցաւ: Եւ սկսան գուարճանալ: Անոր երէց որդին արտն էր. երբ եկաւ ու մօտեցաւ տան, լսեց նուագարաններու եւ պարերու ձայնը, ու իրեն կանչելով ծառաներէն մէկը՝ Հարցափորձեց թէ ի՛նչ էր այդ: Ան ալ ըսաւ անոր. Եղբայրդ եկաւ, ու Հայրդ մորթեց պարարտ գուարակը, որովհետեւ ողջ առողջ վերստացաւ զայն: Իսկ ինք բարկացաւ եւ չէր ուզեր ներս մտնել. ուստի իր Հայրը դուրս ելլելով՝ կ'աղաչէր անոր: Ան ալ պատասխանեց իր Հօր. Ահա՛ ա՛սչափ տարի է՝ որ կը ծառայեմ քեզի, ու բնա՛ւ քու պատուիրանդ զանց չըրի. սակայն երբե՛ք ուլ մը չտուիր ինծի՝ որ գուարճանայի բարեկամներուս Հետ: Բայց երբ եկաւ այդ որդիդ՝ որ լսեց քու ունեցածդ պոռնիկներու Հետ, մորթեցիւ անոր պարարտ գուարակը: Ան ալ ըսաւ անոր. Որդեա՛կ, դուն միշտ ինծի Հետ ես, ու ամբողջ ունեցածս քո՛ւկդ է: Սակայն պէտք էր գուարճանալ եւ ուրախանալ, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ու վերապրեցաւ, կորսուած էր՝ եւ գտնուեցաւ»:

Յամայն մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը իր բռնած ընթացքով եւ իր կենցաղով կը ներկայացնէ անառակ որդին: Մեր Եկեղեցւոյ մեծ պահքի շրջանն ալ մեզի կը սորվեցնէ մեր կեանքին նպատակը՝ վերադարձը մեր ստեղծիչին, այսինքն անառակ որդիին վերադարձը իր Հօր: Ճիշդ այս պատճառով ալ մեծ պահքի Կիրակիներէն մին նուիրուած է «Անառակ Որդիի» առակին:

Անառակ որդին իրեն ինկած ժառանգը հօրմէն պահանջեց եւ զայն առնելով տունէն մեկնեցաւ: Հայրը երկու եղբայրներուն տուաւ այն ինչ որ անոնց բաժին կ'իյնար իր ստացուածքէն: Ի՞նչ է Աստուծոյ ստացուածքը: Աստուած կեանք է, որով Իր ստացուածքն ալ «կեանք»-ն է: Հետեւաբար Աստուծմէ մեզի ինկած ժառանգն ալ մեր կեանքն է: Անառակ որդիին առած ժառանգը կը ներկայացնէ մարդու կեանքը: Մենք ալ մեր ապրած կեանքը՝ մեր ստացած «ժառանգ»-ը, կը

վայելենք ըստ մեր փափաքին եւ զայն կը վատնենք, քան թէ զայն օգտագործենք մեր երկնային Հօր նպատակին: Ինչպէս անառակ որդին իր ապրած կեանքին հետեւանք, վատնեց իր բոլոր ունեցածը եւ թշուառ կացութեան մէջ մնաց՝ անօթի եւ մահուան սեմին, մենք ալ մեր ապրած կեանքին հետեւանք շատ անգամ կ'ենթարկուինք անբաղձալի պատահարներու՝ հիւանդութիւններու եւայլն: Այս առակէն մեր առաջին սորվելիք դասը այն է, թէ անառակ որդիին նման մենք ալ անդրադառնանք մեր գործած սխալին եւ յիշենք թէ մեր երկնային Հօր մօտ երանութեան կեանք մը գոյութիւն ունի եւ որոշենք հոն ետ վերադառնալ՝ ուրկէ որ եկած ենք: Վերադարձը պարզապէս փափաքելով չ'ըլլար: Անառակ որդին իր ջանքերով մինչեւ հօրը տունը գնաց: Հետեւաբար մենք ալ այդ ուղղութեամբ պէտք է մեր պատշաճ ջանքը ընենք: Պէտք է որեւէ ջանք խնայել մինչեւ որ նպատակին հասնինք: Իսկ երբ այդ նպատակին հասնինք, պիտի տեսնենք որ մեր երկնային Հայրը իր բազուկները բաց մեզի կը սպասէ, մեզ կը դիմաւորէ: Երբ անառակ որդին իր Հայրը տեսաւ, անոր ոտքերուն իյնալով ընդունեց իր գործած բոլոր սխալները եւ իրմէ խնդրեց պարզապէս իր ծառան ըլլալ: Ասալ կը համապատասխանէ այն անհրաժեշտ եւ ճշմարիտ ապաշխարութեան, որ հիմնականօրէն կը փոխէ մեր ապրելակերպը եւ կենցաղը: Բայց հայրը, ընդհակառակը, ուրախութեան խնձոյք սարքեց եւ փոխան զինք իբր ծառայ ընդունելու, մատը մատանի դնել տուաւ եւ լաւագոյն պատմութեանը հազուեցուց: Ինչպէս այս գլխուն սկիզբը գրուած է, խնձոյքը յաւիտենական կեանքը կը ներկայացնէ: Հետեւաբար ճշմարիտ ապաշխարութեան վարձատրութիւնը յաւիտենական կեանքն է: Մինչեւ հոս առակին իմաստը կը թուի բացայայտ ըլլալ: Բայց այս առակին ամենակարեւոր կէտերէն

առաջինը հետեւեալն է: Երբ հօրը բարի տղան իմացաւ, թէ իր եղբայրը վերադարձած է եւ հայրն ալ անոր սիրոյն խնճոյք կը սարքէ, նեղուեցաւ: Հակառակ հօրը աղաչանքներուն եւ պաղատանքներուն խնճոյքին չմասնակցեցաւ: Հայրը իրեն ըսաւ, թէ իր բոլոր ունեցածը արդէն իրն է: Ի՞նչ է ասոր իմաստը: Փոխաբերական իմաստով ի՞նչ է «Հօրը ունեցածը»: Բոլոր ստեղծագործութիւնը մեր երկնային Հօր կը պատկանի: Հայրը ուզեց ըսել, թէ բարի տղան, որ իր բոլոր կեանքի ընթացքին իր հօր հնազանդած էր, այսինքն Աստուածահաճոյ կենցաղ մը կերտած էր, կը վայելէր կեանքին՝ աշխարհին տուած բոլոր բարիքները՝ առողջութիւն երջանկութիւն եւայլն: Բայց կարեւորը ան է, թէ տղան չմասնակցեցաւ խնճոյքին, այսինքն արժանի չեղաւ յաւիտենական կեանքին: Կարելի է այս տեսակէտը շատերուն զարմանք պատճառէ: Եւ ահա աս է մեր այս առակէն սորվելիք երկրորդ կարեւոր դասը: Ինչո՞ւ անառակ որդին խնճոյքի՝ յաւիտենական կեանքի արժանացաւ եւ ոչ իր բարի եղբայրը: Հայրը մեզի միշտ յաւիտենական կեանքին կը կանչէ: Միթէ իր զաւկին չաղաչե՞ց եւ չպաղատեցա՞ւ, բայց մեզմէ կախեալ է մենք զմեզ արժանի ընել այդ կեանքին: Անառակ որդին իր մէջ իր «Ես»-ը մեռցուցած էր, հետեւաբար հօրը ըսաւ, թէ արժանի չէր իր որդին կոչուելու եւ իրմէ խնդրեց զինք ընդունիլ որպէս ծառայ: Իսկ իր «բարի» եղբայրը նախանձեցաւ եւ բարկացաւ, որովհետեւ հպարտ էր իր հօրը հնազանդութեամբ: Այս բոլոր զգացումները «Ես»-էն կը ծագին, հետեւաբար «Ես»-ը իր մէջ տակաւին շատ գործօն էր: Յիսուս ուրիշ առիթով ալ մեզի ըսած է, թէ չենք կրնար երկու տիրոջ ծառայել:

Ո՛չ ո՛վ կարէ երկո՛ւց տէրանց Ժառանգել. զի եթէ
յմին՝ ապրիցէ, եւ զմեւսն՝ սիրէ՛. կամ զմին՝

մեծարիցէ, եւ զմեռն արհամարի- ցէ՛ : Ո՛չ
կարէ՛լ Լադո-ժո՛յ թառայել եւ մամոնայի» :
(Ղուկաս Ժ:9:13)

«Ո՛չ մէկ ծառայ կրնայ ծառայել երկու տիրոջ.
որովհետեւ կա՛մ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կա՛մ
մէկուն պիտի յարի ու միւսը արհամարէ: Չէք կրնար
ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

Մեր բոլոր բարի գործերուն համար, նման բարի
տղուն, աշխարհի վրայ կը վարձատրուինք, եւ մեր չար
արարքներուն համար ալ, նման անառակ որդիին, կը
«պատժուինք», այսինքն մեր ճակատագրին յառաջ բե-
րած վատ պատահարներուն կ'ենթարկուինք: Բայց յա-
ւիտենական կեանքի արժանանալու համար միայն բա-
րի ըլլալ բաւ չէ: Պարտ ենք Յիսուսի նման մեր «Ես»-ը
խաչին վրայ դամել: Միթէ Յիսուս անապատին մէջ իր
«Ես»-ը ամբողջովին չանտեսե՞ց: Աւետարանին մէջ զբը-
ռած է. «եւ չարախօսը ժամանակ մը Անկէ հեռացաւ»: Անապատին
մէջ Յիսուս իր «Ես»-ը անտեսեց, բայց ան
չէր մեռած: Երբ Յիսուս խաչին վրայ «Աստուած իմ
զիս ինչո՞ւ թողուցիր» ըսաւ, այդ պահը Յիսուսի ամե-
նախոցելի վայրկեանն էր: Իր Աստուածային բնոյթը
զինք թողած ըլլալով իր անհատականութիւնը դէմ առ
դէմ մնացած էր իր «Ես»-ին հետ: «Ես»-ը առիթը գտաւ
դարձեալ իր գլուխը բարձրացնելու եւ իր քով խաչ-
ուած չարագործին բեռնով առաջարկել, որպէս Աստու-
ծոյ որդի, խաչէն վար իջնել եւ թէ՛ ինքզինք, թէ՛ ալ
զիրենք ազատել: Յիսուս նախընտրեց մահը, քան թէ
հնազանդիլ՝ երկրպագել իր «Ես»-ին՝ սատանային: Յի-
սուսի մարմնին հետ ալ իր «Ես»-ը խաչին վրայ մեռաւ:
Յիսուս Քրիստոս ալ յարութիւն առաւ, որ կը ներկայա-
ցնէ յաւիտենական կեանքը: Միթէ Յիսուս չէ՞ ըսած.

«Եւ որ ո՛չ անոն զիս ի-ր՝ եւ Գայ զինի
իմ, չէ՛ ինչ արթանի»: (Մաթթէոս Ժ:38)

«Ա՛ն որ իր խաչը չ՛առնեն ու իմ ետեւէս չի գար, ինծի արժանի չէ»:

«... Եթէ ո՛վ կամիցի պէնի իմ Գալ՝ ուրաացի՛ պանչն, էւ ասցէ պիտա իւր՝ էւ եկեացէ պէնի իմ»: (Մարկոս Ժ.9:24)

«... Եթէ մէկը ուզէ գալ իմ ետեւէս, թող ուրանայ ինքզինք, վերցնէ իր խաչը, ու հետեւի ինծի»:

«... Եթէ ո՛վ կամի Գալ պէնի իմ, ուրաացի՛ պանչն իւր, էւ Բարձրէ պիտա իւր՝ էւ եկեացէ՛ պէնի իմ»: (Մարկոս Ը:34)

«... Ո՛վ որ ուզէ գալ իմ ետեւէս, թող ուրանայ ինքզինք, վերցնէ իր խաչը, ու հետեւի ինծի»:

«... Մի ինչ պակա՛ս է ՚ի Վէն, եթէ կամիս կարարեալ լինել, է՛րթ պր ինչ ունիս վաճառեալ՝ էւ ցո՛ւր աղէկարաց, էւ ունիցիս Գանցս յերկինս, էւ ա՛ս պիտա լէ՛ւ է՛կ պէնի իմ»: (Մարկոս Ժ:21)

«... Մէկ բան կը պակսի քեզի. գնա՛, ծախէ՛ ունեցածդ, տո՛ւր աղքատներուն, ու գանձ պիտի ունենաս երկինքը. ապա վերցո՛ւր խաչը ու հետեւէ՛ ինծի»:

«... Եթէ ո՛վ կամի պէնի իմ Գալ, ուրաացի պանչն, էւ ասցէ պիտա իւր Հանապապ, էւ եկեացէ պէնի իմ»: (Ղուկաս Թ:23)

«... Եթէ մէկը ուզէ գալ իմ ետեւէս՝ թող ուրանայ ինքզինք, ամէն օր վերցնէ իր խաչը ու հետեւի ինծի»:

«Զի որ ո՛չ Բառնայ պիտա իւր՝ էւ Գայ պէնի իմ, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել»:

(Ղուկաս ԺԴ:27)

«Ո՛վ որ չի կրեր իր խաչը եւ չի գար իմ ետեւէս, չի կրնար իմ աշակերտս ըլլալ»:

Հոս յարմար է նաեւ վերյիշել երեք տեսակ մեղքերը, որոնք մարդ արարած կարող է գործել: Անառակ որդիին առակը նաեւ ցոյց կու տայ այդ երեք

մեղքերը: Երբ կրտսեր որդին իր հօրմէն իրեն ինկած ժառանգի բաժինը ստացաւ եւ հօրը տունը լքեց, ինք այսպէսով հօրը դէմ մեղանչեց: Բայց Հօր դէմ եղած մեղքը ներելի է: Երբ որդին տուն վերադարձաւ, հայրը թեւերը բաց զինք ետ ընդունեց: Անոնք, որոնք Աստուած չկայ կ'ըսեն կամ Աստուծոյ կը հայհոյեն եւ Իրեն չեն հաւատար, կը նմանին հօրը տունը լքող որդիին եւ Հայր Աստուծոյ դէմ մեղանչած կ'ըլլան: Բայց այն վայրկեանին որ իրենց սխալին կ'անդրադառնան եւ կ'ապաշխարեն, արդէն իսկ ներուած կ'ըլլան: Անառակ որդիին եղբայրը հօրը դէմ չմեղանչեց: Երբ անառակ որդին հեռու երկիր մը գնաց, ինք հոն վատ կեանք մը ապրեցաւ եւ հօրմէն ստացած ժառանգը վատնեց: Ասոր իմաստը այն է թէ իրեն պարգեւուած կեանքը վատնեց՝ տեղի տալով իր զանազան ցանկութիւններուն: Մարդուն կեանքը կը ներկայացնէ կենսատու զօրութիւնը, որ իրեն ունեցած բոլոր կարողութիւնները կու տայ: Այդ կենսատու զօրութիւնը Ս. Հոգիի զօրութիւնն է: Եսասիրութեամբ վատնուած նման կեանք մըն ալ կը ներկայացնէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքը: Այս մեղքը աններելի է, հետեւաբար անոր յառաջ բերած բոլոր «պարտք»-երը պէտք է «վճարուին»: Անառակ որդիին թշուառ վիճակը եւ քաշած չարչարանքները այդ մեղքերուն հետեւանքներն էին, որ ինք պարտ էր անոնց հանդուրժելով իր «պարտք»-երը վճարել: Նոյնիսկ Յիսուս, որ Ինք անմեղ էր, Իր ողորմածութեամբ, ուրիշներուն մեղքերը Իր վրայ առնելով, անոնց «պարտք»-երը Ինք վճարեց: Անառակ որդիին եղբայրը նման մեղք մը չէր գործած: Իր բոլոր կեանքի ընթացքին հօրը խօսքին հնազանդ մնացած էր եւ ըստ հօրը կամքին ապրած: Ասոր իմաստը այն է, թէ մեր կեանքին նպատակը պէտք է ըլլայ մեր երկնաւոր Հօր կամքը կատարել եւ Աստուածահաճոյ կեանք մը ապրիլ: Այն ատեն վճարելիք

որեւէ «պարտք» չենք ունենար եւ միայն վարձատրութիւն կը ստանանք: Ասոնք ալ կ'ըլլան կեանքի բոլոր հաճելի պատահարները եւ բնաւ վատ պատահարներու եւ դժուարութիւններու չենք ենթարկուիր: Իսկ երրորդ տեսակի մեղքը, որ մարդ կարող է գործել, Որդւոյն դէմ եղած մեղքն է: Այս մեղքն ալ ներելի է: Ի՞նչ է Որդւոյն դէմ եղած մեղքը: Մարդ ազատ կամք ունի եւ ինք կ'որոշէ իր բնոյթը: Ինք կը կերտէ բնոյթ մը որ կը համապատասխանէ իր «Ես»-ին, կամ բնոյթ մը, որ կը համապատասխանէ իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի: Բազմիցս անգամ Յիսուս ըսած է.

Որ ո՛րքն զանչն իւր՝ արշակէ զնա. էւ որ
ապեայ զանչն իւր յաշխարհիս յայամիկ, 'ի
կեանսն յափեռնականս պահեացէ զնա»:
(Յովհաննոս ԺԲ:25)

«Ան որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն՝ եւ ա՛ն որ կ'ստէ իր անձը այս աշխարհի մէջ՝ յաւիտեանական կեանքին համար պիտի պահէ զայն»:

«Ոչ ո՛վ կարէ երկուց ցերանց Ժառանգել.
կամ զմին աքիցէ էւ զմեանս օրրիցէ, կամ
զմին մեծարիցէ՝ էւ զմեանս արհամարիցէ.
ոչ կարէ՛լ Լսորոջոյ Ժառանգել էւ
մամոնայի»: (Մատթէոսի .9:24)

«Ոչ մէկը կրնայ ծառայել երկու տիրոջ. որովհետեւ կամ պիտի ստէ մէկը եւ սիրէ միւսը. կամ պիտի յարի մէկուն ու արհամարէ միւսը: Չէք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

Անառակ որդին նախ իր «Ես»-ին հնազանդ, անկէ ծագած բոլոր ցանկութիւններուն տեղի տուած էր: Բայց երբ ինք այդ ցանկութիւններուն յառաջ բերած «պատիժ»-ները ապրեցաւ, անդրադարձաւ իր գործած

սխալին եւ փոխեց իր բնոյթը: Ասոր փաստը այն է, որ ինք բացարձակ հեզ եւ խոնարհ իր հօրը մօտեցաւ: Ինք այլեւս իր «Ես»-էն ծագում առնող ցանկութիւններուն տեղի չէր տար եւ հօրը զաւակը ըլլալով հանդերձ, հօրմէն խնդրեց, որ զինք միայն իր ծառաներէն մին ընէ: Ինք իր մէջ իր «Ես»-ը ազդեցիկօրէն «մեռցուցած» էր, եթէ ոչ վերջնականապէս: Բայց իր «բարի» եղբայրը, տակաւին իր «Ես»-ին ազդեցութեան տակ, տեղի տուաւ թէ՛ բարկութեան, թէ՛ նախանձի եւ թէ՛ հպարտութեան: Աս ցոյց կու տայ թէ ինք տակաւին իր «Ես»-ին ենթակայ էր, հետեւաբար երբ առիթը ներկայացաւ իր «Ես»-ն ալ իր գլուխը բարձրացուց: Որովհետեւ Որդւոյն դէմ եղած մեղքը ներելի է, հայրը իրեն աղաչեց եւ պաղատեցաւ, որ իր «Ես»-ը մոռնայ՝ անտեսէ եւ խնճոյքին մասնակցի: Բայց որդին չկարողացաւ զայն ընել եւ Որդւոյն դէմ իր գործած մեղքին համար խնճոյքէն, այսինքն յաւիտենական կեանքէն զրկուեցաւ: Նմանապէս երբ մենք ալ մեր կեանքի ընթացքին չենք կարողանար մեր բնոյթը փոխել, որպէսզի մեր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքները ըլլան ըստ մեր ներքին Քրիստոսի կամքին, քան թէ մեր «Ես»-ին կամքին, արժանի չենք կրնար ըլլալ յաւիտենական կեանքին: Յիսուսի խաչելութիւնը երկու նպատակ ունէր. մին վերեւ յիշուած ուրիշներու Ս. Հոգիի դէմ գործած մեղքերուն պարտքերը վճարելն էր, իսկ միւսն ալ խաչին վրայ Իր «Ես»-ին վերջնական մահը: Եւ «Ես»-ին մահովը Քրիստոս յարութիւն առաւ: Յիսուս նախընտրեց խաչին վրայ մեռնիլ, քան թէ Իր «Ես»-ին հնազանդիլ՝ անոր երկրպագել: Մարդ միշտ կը ջանայ իր ներքին Քրիստոսի եւ իր «Ես»-ին միջեւ ճոճիլ: Աս կարելի չէ երբ անհատը յաւիտենական կեանքին կը ցանկայ: Միթէ Յիսուս չըսա՞ւ, թէ երկու տիրոջ չենք կրնար ծառայել:

ԱՄՏՈՒԻ ԹՉԵՆԻՆ ԱՌԱԿՐ



«Ըսածս եւ զսառսկս զայս: Թշեանի՛ մը էր
որոտմն ցընկեալ յայդոջ իրոտմ. եւ եկն
խնդրել պրո՛ղ ՚ի նմանէ՛ եւ ո՛չ եգիփ:
Ըսէ ցայգեգործն. Ըսա՛ երեկ ասկէ են՝
յորմէ հեցե գամ խնդրել պրո՛ղ ՚ի
Թշեանոջո՛ւ եւ ո՛չ գրանեմ. արդ՝ կորեւ
զդա, ընդէ՛ր եւ զերկիրդ խափանէ: Սա՛
պապասխանի եր՝ եւ աս. Տէ՛ր, Թո՛ղ
զդա՛ աս ամ եւս, մինչեւ շո՛ւրջ զդուս-
թրեցից՝ եւ արկից աղէ. Թերեւս արասցէ՛
պրո՛ղ. ապա Թէ ո՛չ յամէ՛ եւս Հափցե՛ս
զդա » : (Դուսա ԺԳ:6-9)

«Սա՛ առական ալ ըսաւ. «Մէկը իր այգիին մէջ ունէր տնկուած թզենի մը. եկաւ պտուղ փնտռելու անոր վրայ, բայց չգտաւ: Ուստի ըսաւ այգեպանին. Ահա՛ երեք տարի է, որ կու գամ՝ պտուղ կը փնտռեմ այդ թզենիին վրայ, ու չեմ գտներ. ա՛լ կտրէ՛ գայն, ինչո՞ւ խափանէ գետինը: Ան ալ պատասխանեց անոր. Տէ՛ր, ա՛յս տարի ալ ձգէ գայն, մինչեւ որ բրեմ անոր շուրջը ու թրիք դնեմ: Եթէ պտուղ տայ՝ լա՛ւ. այլապէս՝ յետագայի՛ն կտրէ գայն»»:

Այս առակով Յիսուս դարձեալ մեզի ցոյց կու տայ Աստուծոյ ողորմածութիւնը եւ նպատակը՝ փափաքը: Աստուած անհուն համբերութիւն ունի եւ մարդուն բազմաթիւ առիթներ կու տայ, որ ան ապաշխարէ եւ յաւիտենական կեանքի արժանանայ: Թզենիի ծառը կը ներկայացնէ մարդը: Ինչպէս առակին մէջ այգիին տէրը ծառէն պտուղ կը սպասէր, նմանապէս Աստուած ալ, տրեղերքի՝ ստեղծագործութեան Տէրը, կը սպասէ, որ մենք ալ հոգեպէս պտղաբեր ըլլանք, ապաշխարենք եւ ինքզինքնիս բոլոր մեղքերէն ձերբազատենք որպէսզի մահուան տեղ յաւիտենական կեանքի արժանանաք: Ըստ առակին, պատշաճ ժամանակէ մը վերջ, երբ ծառը տակաւին պտղաբեր չ'ըլլար, կտրուելու կը դատապարտուի: Բայց այգեպանը տարի մը եւս յետաձգել կու տայ ծառին կտրուիլը: Այգեպանը Որդին՝ Քրիստոսն է, որ մարդուն իր ճշմարիտ էութիւնն է: Քրիստոս իր ողորմածութեամբ միշտ առիթը կու տայ որպէսզի անձը ապաշխարէ: Ան միշտ անհատը կը յորդորէ եւ այդ յորդորը անձին իր ներքին լուռ ձայնն է: Մարդ արարած յաճախ այդ լուռ ձայնը կ'անտեսէ եւ իր խաւար տրամաբանութեամբ անոր տուած յորդորներուն կը հակասէ: Քրիստոսի այս յորդորներն ալ առակին մէջ կը համապատասխանեն ծառին շուրջը բրելուն եւ թրիք դնելուն: Հետեւաբար Աստուած մարդուն բազմիցս առիթներ կու տայ, որպէսզի ան յաւիտենական կեանքին արժանանայ:

ԿՈՐՍՈՒԱԾ ԴՐԱՄԻՆ ԱՌԱՎՈՐ



«Կամ ո՞վ իցե կին, որոյ եցեն զբաժնի
դասն. եւ եթէ կորոսանիցե զբաժնի մի, ո՞չ
լուսանե ճրագ, եւ աշխիցե աւելի ՚ի դասն,
եւ խնդրիցէ՝ սրէա՝ մինչեւ գորանիցէ: Եւ
իբրեւ գորանե, կոչէ՝ զբարեկամս եւ զդրա-
ցիս՝ եւ ասէ. Ուրախ լերուի ընդ իս, զի
գորի՝ զդրամն իմ զոր կորոսի: Եւ յնպէս՝
ասեմ յեւ, որախոթիւն եղիցի ասացի
Հրեշտակաց Լսորոշոյ՝ ՚ի վերայ միոյ մե-
ղաորի որ ապաշխարիցէ»: (Դաւան ԺԵ: 8-10)

«Կամ՝ ո՞վ է այն կինը, որ եթէ տասը դրամ ունենայ ու
դրամ մը կորսնցնէ, ճրագ չի վառեր, տունը չ'աւելեր եւ
ուշադրութեամբ փնտռեր, մինչեւ որ գտնէ: Ու երբ
գտնէ, կը Հրաւիրէ բարեկամներն ու դրացիները, եւ
կ'ըսէ. Ուրախացէ՛ք ինծի Հետ, որովհետեւ գտայ
կորսնցուցած դրամս: Այդպէս ալ, կը յայտարարեմ
ձեզի, ուրախութիւն կ'ըլլայ Աստուծոյ Հրեշտակներուն
առջեւ մէկ մեղաւորի համար՝ որ կ'ապաշխարէ»:

Այս առակին իմաստը շատ պարզ ըլլալ կը թուի: Այս առակը կարելի է երկու տեսանկիւնէ դիտել եւ մեկնաբանել: Առաջին մեկնաբանութիւնը այն է, թէ Աստուած իր կորսուած «դրամը», որ փոխաբերական իմաստով մարդը կը ներկայացնէ, միշտ կը փնտռէ, եւ երբ մարդն ալ ապաշխարէ, Աստուծոյ կողմէ գտնուած կ'ըլլայ: Դարձեալ երկինքի մէջ մեծ ուրախութիւնն ալ կը ներկայացնէ մարդուն յաւիտենական կեանքի արժանանալը: Այս մեկնաբանութեան մէջ կորսուածը փնտրողը Աստուած է: Փոխաբերական իմաստով փեսան է, որ հարսը կը փնտռէ:

Այս առակը կարելի է նաեւ մարդու անկիւնէն դիտել եւ ըստ այնմ մեկնաբանել: Այս անգամ, դրամը կորսնցնող եւ փնտռողին կին մը ըլլալը շատ աւելի յատկանշական կ'ըլլայ: Որովհետեւ համայն մարդկութիւնը՝ արու կամ էգ, ներկայացուած են իբր Քրիստոսի հարսը, ուրեմն պատշաճ է կորսուածը, որ անձին իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոսն է, փնտռողին կին մը ըլլալը: Առակին մէջ կինը տասը դրամ ունի եւ անոնցմէ մէկը կը կորսնցնէ: Մարդն ալ շատ մը բաներ ունի, ինչպէս իր մարմինը, իր միտքը, իր իմացականութիւնը, իր զգացումները, իր խորհուրդները, իր «Ես»-ը, իր ցանկութիւնները, իր կիրքերը, իր ստացուածքները, իր առողջութիւնը կամ հիւանդութիւնը, իր ընտանիքը ..., եւ ինքը այս բոլորին գիտակից է: Բայց ինք բան մը եւս ունի, որուն ինք գիտակից չէ, այդ ալ Քրիստոսի իր մէջ ներկայութիւնն է: Մարդ այս գիտակցութիւնը կորսնցուցած է: Նոյնիսկ եթէ ինք իմացականօրէն կ'ըսէ, թէ Քրիստոս իր ճշմարիտ էութիւնն է, ինք անոր փորձառական գիտակցութիւնը չունի: Ահա աս է կորսուած դրամին փոխաբերական իմաստը: Առակին սորվեցուցածը այն է, թէ ինչպէս կինը որեւէ ջանք չի խնայեր մինչեւ որ դրամը գտնէ,

մենք ալ պէտք չէ որեւէ ջանք խնայենք մինչեւ որ Աստուած՝ Քրիստոս գտնենք: Աստուած գտնելն ալ, գիտակցութեան մակարդակի բարձրացումով, մեր մէջ Քրիստոսի յայտնութեան փորձառութիւնը ունենալն է: Երբ առակին մէջ Յիսուս կ'ըսէ. «ճրագ չի՞ վառեր», ակնարկ մըն է մարդուն իր մէջ Քրիստոսի լոյսին յայտնութեան: Իսկ «տունը չ'ա՞լլեր»-ն ալ ակնարկ մըն է կենցաղի փոփոխութեան: Տունը կը ներկայացնէ մարդը եւ աւելին ալ տունը մաքրելու գործողութիւնն է, այսինքն փոխաբերական իմաստով անհատը «դրամը»՝ Քրիստոս գտնելէ առաջ պէտք է իր «տունը»՝ անձը մաքրէ, այսինքն բոլոր մահացու մեղքերէ ինչպէս նաեւ եաստիրութենէ ինքզինք ձերբազատէ: Իսկ «ուշադրութեամբ չի՞ փնտռեր»-ն ալ ակնարկ մըն է միտքի կեդրոնացման Քրիստոսի վրայ, որ կը ներկայացնէ աղօթքին ամենավեհ ձեւը՝ խոկումը: Մարդ խոկալով է որ կը կարողանայ իր միտքը կեդրոնացնել: Դարձեալ առակին մէջ Յիսուս կ'ըսէ, թէ երբ կինը դրամը կը գտնէ, բոլոր բարեկամները կը կանչէ եւ ուրախութիւն կը սարքէ: Ինչպէս նախապէս գրուած է ուրախութիւն, հարսանիք, խնճոյք, խրախճանք բոլորն ալ իրենց փոխաբերական իմաստով կը ներկայացնեն յաւիտենական կեանքը:

Յիսուս այս առակին մէջ ինչո՞ւ դրամը իբր օրինակ գործածեց, քան թէ որեւէ ուրիշ բան: Մարդկութեան մեծամասնութեան համար դրամը անհրաժեշտ է օրուայ ապրուստը ապահովելու՝ ուտեստեղէն գնելու համար եւայլն, հետեւաբար աշխարհիկ՝ ֆիզիքական կեանքի համար անհրաժեշտ ըլլալ կը թուի: Նմանապէս յաւիտենական կեանքի համար ալ անձին ներքին Քրիստոսը անհրաժեշտ է: Ուրեմն պէտք չէ որեւէ ջանք խնայենք մինչեւ որ Զինք գտնենք:


Յիսուս ուրիշ առիթով ալ այս նոյն դասը մեզի

սորվեցուցած էր: Երբ Գալիլեայի ծովուն վրայ աշակերտները նաւարկելու ընթացքին փոթորիկի բռնուած, ընկղմելու վտանգին ենթակայ էին, Քրիստոս նաւուն մէջ կը քնանար: Երբ աշակերտները Ձինք արթնցուցին, Ինք ալ թէ՛ ջուրերուն եւ թէ՛ հովերուն փոթորիկները հանդարտեցուց: Զուրը կեանքը կը ներկայացնէ, հովերը՝ խորհուրդներուն փոթորիկները եւ ալիքներն ալ՝ զգացումներուն: Այս երկուքէն տարուած «նաւ»-ը՝ անհատը կը թուի «ընկղմելու վտանգ»-ի մէջ ըլլալ: Անձին մէջ Քրիստոսի արթննալը փոթորիկները կը հանդարտեցնէ եւ անձն ալ իր անդորրութիւնը կը գտնէ: Երբ Քրիստոսի լոյսը վառ է անձին մէջ, իր կեանքն ալ կ'ըլլայ երանութեան կեանք մը:

Եթէ այս առակէն մեր դասը սորված ենք, մեզի կը մնայ երկու բան: Առաջինը, մեր «տունը աւելե՛լ»՝ մաքրել եւ զմեզ Քրիստոսը գտնելու պատրաստելն է: Աս կը համապատասխանէ մեր յառաջացումը կատարելութեան ուղիին մէջ: Երկրորդն ալ ճրագը վառելն է: Այս նպատակին համար պէտք է որեւէ ջանք խնայել մինչեւ որ փորձառութեամբ գիտակցինք Քրիստոսի ներկայութեան մեր մէջ: Եթէ չենք յաջողած առաջինին մէջ, անկարելի կ'ըլլայ յաջողիլ երկրորդին մէջ, հոգ չէ թէ այդ ուղղութեամբ որքան ջանք թափենք: Իսկ եթէ յաջողինք, մեր անձին մէջ Քրիստոսի յայտնութեան կ'արժանանանք: Ահա՛ աս է մարդու կեանքին նպատակը, որովհետեւ Աստուածայայտնութիւնը կարելի է մարդու միջոցաւ: Եթէ յաջողինք, մեր վարձատրութիւնը կ'ըլլայ «ուրախութիւնը»՝ յաւիտենական կեանքը եւ անոր պարգեւած երանութիւնը, իսկ եթէ չյաջողինք մեր «վարձատրութիւնն» ալ կ'ըլլայ մահը:

Աստուած մարդկութեան համար նպատակ մը, փափաք մը ունի. այդ ալ մեր մէջ Աստուածայայտնութեան իրականացումն է:

Կորսուած Ոշխարհն Առաւ



«Ես ա՛յ առ նոսա պառա՛կս պայս: Ո՞վ ո՛վ
իցէ 'ի յէնջ մարտ՝ որոյ իցէ Հարեւր
ոշխար, եւ կորոսանիցէ մի 'ի նոցանէ. ո՞չ
Թողոսցոս պիննա՛ն եւ պինն յանապարի,
եւ երթիցէ զՀէր կորոսելոյն՝ մինչեւ Գրա-

նիցէ պնաս: Եւ իբրեւ Գրասնէ՝ դնէ՛ պնա ՚ի վերայ ոսոց իւրոց խնդաւով, եւ երբնայ ՚ի ցոռն. Կոչէ պարեկամս եւ պարացիս՝ եւ ասէ ցնոռս. Ուրա՛խ եղերո՛ւի ընդ իս, պի Գրի՛ պոչխա՛րս իմ պէտրոսեալ: Ըսէ՛մ պի այսպէս է ուրախութիւն յերկնս Վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ, իսն Վասն իննսո՛ւն եւ ինն արդարոյ՝ որոց շիցէ՛ պիցոյ ապաշխարութիւն» : (Ղուկաս ԺԵ : 3-7)

«Ան ալ սա՛ առակը խօսեցաւ անոնց. «Ձեզմէ ո՞վ է այն մարդը, որ թի՛ն ունենայ Հարիւր ոչխար ու կորսնցնէ մէկը, չի ձգեր իննսունինը անապատին մէջ եւ երթար այդ կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն: Ու երբ գտնէ, ուրախանալով կը դնէ զայն իր ուսերուն վրայ, եւ տուն գալով՝ կը հրաւիրէ բարեկամսերն ու զբայրները, եւ կ'ըսէ անոնց. Ուրախացէ՛ք ինծի Հետ, որովհետեւ գտայ կորսուած ոչխարս: Կը յայտարարեմ ձեզի թէ ա՛յսպէս ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի Համար՝ որ կ'ապաշխարէ՝ քան իննսունինը արդարներու Համար՝ որոնց ապաշխարութիւն պէտք չէ»»:

Տէս նաեւ Մատթէոս ԺԸ : 12-14

Յիսուս այս առակը խօսեցաւ երբ փարիսեցիները եւ դպիրները կը գանգատէին, թէ Ան մաքսաւորներուն եւ մեղաւորներուն հետ կը ճաչէր: Դարձեալ այս առակն ալ կարելի է մեկնաբանել երկու տարբեր անկիւններէ: Առաջինը այն է, թէ Յիսուս բարի հովիւն է եւ եկած է մեղաւորները փրկելու համար: Ինք մեղաւորներուն կը քարոզէր, հետեւաբար յաճախ անոնց հետ էր: Յիսուս իր ժամանակը չէր վատներ անոնց հետ, որ կը կարծէին թէ արդար եւ անմեղ են, ինչպէս փարիսեցիները եւ դպիրները: Կորսուած

ոչխարը մեղաւոր մարդն է եւ Աստուած զայն պիտի փնտրէ մինչեւ որ գտնէ: Ըսել է թէ Աստուած մեզ պիտի փնտրէ մինչեւ որ գտնէ, այսինքն օր մը յամայն մարդկութիւնը պիտի փրկուի՝ Աստուծոյ միանայ: Միթէ հովիւն ալ երբ կորսուած ոչխարը գտաւ զայն իր ուսերուն վրայ չկրէ՞ց: Յիսուս իր առակը կը սկսի հետեւեալ բառերով. «Ձեզմէ ո՞վ է այն մարդը ...»: Յիսուս հոս ըսել կ'ուզէ, թէ երբ մարդը ոչխարին համար ջանք չի խնայեր, մինչեւ որ զայն գտնէ, որքան աւելի Աստուած կը ցանկայ գտնել կորսուած՝ մեղաւոր մարդը եւ ջանք չի խնայեր, որպէսզի ան ապաշխարէ: Այս տեսակէտին մէջ մարդը փոխաբերաբար կը ներկայացնէ Քրիստոս եւ ոչխարն ալ մեղաւոր մարդը:

Մեկնաբանութեան երկրորդ տարբերակը կարելի է հետեւցնել դարձեալ Յիսուսի նոյն խօսքէն. «Ձեզմէ ո՞վ է այն մարդը ...»: Այս մեկնաբանութեան մէջ մարդը փոխաբերական իմաստ մը չունի, այլ կը ներկայացնէ մարդը ինքը՝ մեղաւորը: Իսկ հարիւր ոչխարներն ալ կը ներկայացնեն մարդուն ունեցած հարազատները՝ կողակից, ծնողք ու զաւակներ, իր բոլոր ինչքերը՝ ստացուածք, ինչպէս նաեւ իր մարմինը, միտքը, իմացականութիւնը, իր անհատականութիւնը եւ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս: Մարդ իր բոլոր ունեցածներէն գիտակից է (իննսունինին), բայց ինք գիտակից չէ հարիւրերորդին: Այդ կորսուած ոչխարը իր ներքին Քրիստոսն է: Միթէ Յիսուս Քրիստոսի համար չէ՞ ըսուած. «Աստուծոյ գառնուկը»: Բայց ոչ թէ Քրիստոս կորսուած է, այլ մարդ Անոր իր մէջ գոյութեան փորձառական գիտակցութիւնն է որ կորսնցուցած է: Ըստ Յիսուսի առակին, պէտք չէ՞ որ մարդ որեւէ ջանք չխնայէ մինչեւ որ այդ գիտակցութեան հասնի, իսկ երբ հասնի, Քրիստոս ալ իր մէջ կը յայտնուի եւ ինք ալ կ'արժանանայ յաւիտենական կեանքին: Այս վերջինն ալ

առակին մէջի ուրախութիւնն է, որ ինք կ'ունենայ իր բարեկամներուն հետ: Ինչպէս այս գիրքին մէջ նախապէս գրուած էր՝ ինճոյք, ուրախութիւն, հարսանեկան խրախճանք եւայլն, բոլորն ալ կը ներկայացնեն յաւիտենական կեանքը: Յիսուս այս առակին մէջ կ'ըսէ, թէ մարդը իննսունինը ոչխարները անապատին մէջ կը ձգէ եւ մէկ կորսուածին ետեւէն կ'երթայ: Ասոր իմաստն ալ բացայայտ կ'ըլլայ երբ կարգանք դարձեալ Ղուկասի Աւետարանէն հետեւեալ մէջբերումը.

«Եթէ ո՛վ Գա՛յ առ իս, եւ ո՛չ արեայ զԳայը
իւր եւ զԳայը, եւ զնո՛ն եւ զորդիս, եւ
զեղբա՛րս եւ զնոյրս, նա՛ եւ զանձն եւս իւր,
ո՛չ կարէ իմ աշակե՛րդ լինել. Զի որ ո՛չ
Բառնայ զնա՛չ իւր եւ Գայ զնոն իմ, ո՛չ կարէ
իմ աշակե՛րդ լինել»: (Լուկաս ԺԴ: 26-27)

«Եթէ մէկը ինծի գայ՝ բայց չառէ իր հայրն ու մայրը՝ կինը եւ զաւակները՝ եղբայրներն ու քոյրերը՝ նաեւ իր անձը՝ չի կրնար իմ աշակերտս ըլլալ: Ո՛վ որ չի կրնար իր խաչը եւ չի գար իմ ետեւէն՝ չի կրնար իմ աշակերտս ըլլալ»:

Այն բոլոր բաները, որ մեզի համար կը թուին բացարձակ կարեւորութիւն ունենալ, առակին մէջ ներկայացուած են իբր անապատին մէջ լքուած իննիսունինը ոչխարները: Նմանապէս, մենք ալ եթէ կը փափաքինք յաջողիլ՝ մեր գիտակցութեան մակարդակը բարձրացնելով, մեր ներքին Քրիստոսի փորձառութիւնը ունենալ, պարտ ենք ձերբազատուիլ աշխարհիկ բոլոր յարումներէ եւ ամէն տեսակի կապերէ: Միթէ Յիսուս չէ՞ ըսած. «Չեք կրնար երկու տիրոջ ծառայել»: Աս ըսել չէ՞ անտեսել մեր բոլոր պարտականութիւնները, այլ զանոնք կատարել ամենայն ուրախութեամբ եւ ամենալաւագոյն կերպով, որովհետեւ բոլորը պէտք է ընենք Քրիստոսի՝ Աստուծոյ համար:



-Բ-

ՅԻՍՈՒՄԻ ԱՌԱԿՆԵՐԸ

ՄԱՐԴԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՅՏԱՈՒԹՅՈՒՆ



ՄԱՐԴԵ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՅՏԱՈՒԹԻՒՆ

Այս գլխուն մէջ ներկայացուած են Յիսուսի այն առակները, որոնք փրկութեան համար Քրիստոսի յայտնութեան անհրաժեշտութիւնը ցոյց կու տան: Քրիստոս ամէն անհատի ճշմարիտ էութիւնն է, հոգին է: Մարդ իր ազատ կամքով կ'որոշէ իր բնութեան նկարագիրը: Ան կրնայ կերտել բնոյթ մը, որ կը համապատասխանէ իր «Ես»-էն բղխած ցանկութիւններուն եւ ըստ այնմ գործէ: Աս ծագում կ'առնէ խաւարամտութենէ: Խաւարամտութիւնը կը ստեղծէ երկուութիւն: Հետեւեալը այդ խաւարամտութեան հետեւանք մարդ տիեզերքի մէջ ամէն ինչ կը տեսնէ՝ կը նկատէ իրմէ զատ՝ տարբեր եւ կ'ըսէ «Ես» եւ «անոնք»: Ասկէ կը ծնի եսասիրութիւնը: Անձը իր խաւարամտութեան հետեւանք կը կարծէ, թէ իր «Ես»-ը իր ճշմարիտ էութիւնն է: Ինք անգիտակից է, թէ իրեն կեանք տուողը իր հոգին՝ Քրիստոսն է: Այս հիման վրայ կը կերտէ բնոյթ մը, որ կը հակի դէպի իր «Ես»-ին եւ կը յարի անոր: Այս առակներուն նպատակը ցոյց տալ է, թէ մարդ պէտք է փոխէ իր բնոյթը եւ հակի դէպի իր ներքին Քրիստոսին եւ յարի անոր: Այս պարագային իր բոլոր խորհուրդ, խօսք եւ արարքներն ալ կ'ըլլան ըստ Աստուծոյ կամքին: Ինք փորձառութիւնը կ'ունենայ բարձր գիտակցութեան մը եւ կը հասկնայ միականութիւնը այն բոլորին, որ ինք առաջուց զանոնք իրմէ անջատ կը նկատէր: Ան կը գիտակցի իր ճշմարիտ էութեան եւ փորձառութեամբ կը հասկնայ, թէ ինք ամէն ինչի հետ մէկ է: Իր մէջ սէրը, փոխանակ դէպի միայն իր «Ես»-ին ըլլալու, կը ժայթքի հանդէպ բոլորին, ամենուն հետ կը վարուի այնպէս ինչպէս ինք կ'ուզէ ուրիշներ վարուին իրեն հետ: Նման բնոյթ մը անձին մէջ կը բանայ Աստուածայայտնութեան ճամբան: Աս անձին մէջ Քրիստոսի ի յայտ գալն է եւ անհրաժեշտ է փրկութեան համար:

ՀՈՎԻԻՒ ԱՌԱՎԸ



«Ամէն ամէն ասէ՛մ որ ո՛չ մօրանէ ընդ
դռուն 'ի Գաւիթ ոշխարացն ալ ընդ ա՛յլ
ելանէ, նա՛ Գո՛ղ է եւ աւազա՛կ: Իսկ որ
մօրանէ ընդ դռուն, Հովի՛ւ է ոշխարաց:
Սմա դռնապանն թանայ, եւ ոշխարէն յայ-
նի նորա լսէ՛ն եւ զիւր ոշխարան կոշէ
յանդանէ, եւ Հանէ զնոսա: Եւ յորժամ
զիւրն զամէնայն Հանիցէ. առաջի նոցա եր-
թայ, եւ ոշխարէն զՀէ՛ր նորա երթան, զի
ճանաչէ՛ն զյայն նորա: Զօրարի զՀէր ո՛չ

Երթիցեն այլ իսկիցէ՛ն 'ի նմանէ, զի ո՛չ
ճանաչեն զձայն օրարաց: Զայս առանկ՝
ասաց նոցա՝ Յիսուս եւ նո՛ւա ո՛չ Գրիգորն՝
թէ զինչ էր որ խօսէրն ընդ նոսս»: (Յովհաննոս Ժ:1-6)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի-
Ա՛ն որ դունէն չի մտներ ոչխարներուն բակը՝ Հապա
ուրիշ տեղէ կը բարձրանայ, անիկա գող եւ աւազակ է:
Բայց ա՛ն որ դունէն կը մտնէ՝ ոչխարներուն հովիւն է:
Դունապանը կը բանայ անոր՝ եւ ոչխարները կը լսեն
անոր ձայնը. իր ոչխարները կը կանչէ իրենց անունով
ու դուրս կը հանէ զանոնք: Երբ հանէ իր ոչխարները՝
կ'երթայ անոնց առջեւէն, ու ոչխարները կը հետեւին
իրեն՝ որովհետեւ կը ճանչնան իր ձայնը: Սակայն չեն
հետեւիր օտարի մը՝ Հապա կը փախչին անկէ, որով-
հետեւ չեն ճանչնար օտարներու ձայնը»: Յիսուս ըստ
անոնց այս առակը, բայց անոնք չէին հասկնար թէ
ի՛նչ էր՝ որ կը խօսէր իրենց»:

«Դարձեալ՝ ասէ ցնոսա Յիսուս. Ըմէն ամէն
ասե՛մ զի ե՛ս եմ դուռն ոչխարաց: Ըմէնէ-
ւան որ յառաջ ինն զիս եկին Գողէ Էին
եւ առաջանկէ, այլ ո՛չ լուսն նոցա ոչխար-
իւն: Ես եմ դուռն. ընդ իս թէ ո՛ր միա-
նիցէ, կէցցէ՛. միցէ, եւ ելցէ, եւ ճարակ
Գրիգէ: Գող ո՛չ Գայ՝ եթէ ոչ զի Գողասցի՛
եւ աղանիցէ՛ եւ կորուսցէ. ես եկի զի
զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունի-
ցին: Ե՛ս եմ Հովիւն իմ, Հովիւ իմ զա՛նչն
եւր դնէ՛ 'ի վերայ ոչխարաց. Իսկ վարձկանն

որ ոչ է Ըոզիւ, որոյ ո՛չ իւր էն ոշխարէն,
իբրեւ Կէսանէ ԿԳայլն Կի Գայ, Թողո-
Կոշխարան է- Գայիւ, է- Գայլն ԵսիւշԿանէ՛
Կնոսս է- Կրուէ, ԷանԿի Վարձկան է, է-
Յէ՛ Գոյթ Զմա Վասն ոշխարացն: Ե՛ս էմ
Ըոզիւն Էաջ. է- Ճանաչեմ Կիման, է- Ճա-
նաչե՛մ Եիմոցն: Որոչէս Գիտէ Կիս Զայր,
Գիտէ՛մ է- էս ԿԸայրն. է- Կանչն իմ Դնէմ
'ի Վերայ ոշխարաց: Ես՝ է- ա՛յլ է-ս ոշխարէ
էն իմ, որ ո՛չ էն Եայսմ Գաւթէ, է-
Կա՛յնս է-ս Կա՛րոյ է ինչ աշէ՛լ այսր. է-
Յայնի իմոմ լո-իցեն, է- էղիցին մի Ըօր՝
է- մի Ըոզիւ: Վասն այնորիկ սիրէ Կիս
Ըայր իմ, Կի էս Դնէմ Կանչն իմ. Կի
մի-սանԳամ առ-ի՛ց Կնա: Ո՛չ ո՛վ Ըանէ Կնա
Եինէն. այլ է՛ս Դնէմ Կնա անՅամբ իմով:
Իշխանութիւն ունիմ Դնէ՛լ Կնա է- իշխա-
նութիւն ունիմ մի-սանԳամ առ-նու Կնա:
Չայս Կապուէր առ-ի՛ 'ի Ըօրէ իմմէ»: (Յովհաննու Ժ:7-18)

«Ուրեմն Յիսուս դարձեալ ըսաւ անոնց. «Ճշմարտապէս-
ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ե՛ս եմ
ոշխարներուն դուռը: Բոլոր անոնք՝ որ եկան ինձմէ
առաջ՝ գող եւ աւազակ կ'ին՝ բայց ոշխարները մօրիկ
չըրին անոնց: Ե՛ս եմ դուռը. եթէ մէկը ներս մտնէ
ինձմէ՝ պիտի վերկուի. պիտի մտնէ ու ելլէ՝ եւ առօր
գտնէ: Գողը ուրիշ բանի համար չի գար՝ բայց միայն՝

գողնալու՝ սպաննելու եւ կորանցնելու համար: Ես եկայ որ կեանք ունենան՝ եւ ճոխութեամբ ունենան: Ե՛ս եմ բարի հովիւը. բարի հովիւը կ'ընծայէ իր անձը ոչխարներուն համար: Բայց վարձկանը՝ որ հովիւ չէ եւ ոչխարները իր սեփականը չեն՝ երբ տեսնէ թէ գայլը կու գայ՝ կը թողու ոչխարները ու կը փախչի. եւ գայլը կը յախշտակէ ոչխարները ու կը ցրուէ գանոնք: Եւ վարձկանը կը փախչի՝ որովհետեւ ինք վարձկան է՝ ու չի հոգար ոչխարները: Ե՛ս եմ բարի հովիւը. կը ճանչնամ իմիններս ու կը ճանչցուիմ իմիններէս: Ինչպէս Հայրը կը ճանչնայ զիս՝ ես ալ կը ճանչնամ Հայրը՝ եւ իմ անցս կ'ընծայեմ ոչխարներուն համար: Ուրիշ ոչխարներ ալ ունիմ՝ որոնք այս բալէն չեն. գանոնք ալ պէտք է բերեմ. ու իմ ձայնս պիտի լսեն՝ եւ ըլլան մէկ հօտ ու մէկ հովիւ: Իմ Հայրս կը սիրէ զիս՝ քանի որ ես իմ անցս կ'ընծայեմ՝ որպէսզի դարձեալ առնեմ գայն: Ո՛չ մէկը կ'առնէ գայն ինձմէ՝ հապա ե՛ս ինձմէ կ'ընծայեմ գայն: Իշխանութիւն ունիմ ընծայելու գայն՝ եւ իշխանութիւն ունիմ դարձեալ առնելու գայն. այս պատուէրը ստացայ իմ Հօրմէս»:

Այս առակով Յիսուս մեզի շատ լուրջ դաս մըն է որ կու տայ: Վերեւ տեղադրուած մէջբերումներուն առաջին մասը կը ներկայացնէ առակը, իսկ երկրորդ մասն ալ որոշ չափով Յիսուս Քրիստոսի առակին մեկնաբանութիւնը: Հոս յարմար է ընթերցողին դարձեալ յիշեցնել, թէ Յիսուս Քրիստոս երկու բնոյթ ունէր՝ թէ՛ մարդկային եւ թէ՛ Աստուածային: Ան երբեմն կը խօսէր իբր մարդ՝ Յիսուս եւ երբեմն ալ իբր Աստուած՝ Քրիստոս: Հետեւաբար այս գրութեան մէջ ալ երբ գրուած ըլլայ. «Յիսուս ըսաւ», ըսել է թէ Յիսուս մարդը խօսած է: Իսկ եթէ գրուած է. «Քրիստոս ըսաւ», ըսել է, թէ Աստուած ըսած է: Այս առակը վերլուծելու համար նաեւ նկատի պէտք է առնենք երկրորդ մասը, ուր Յիսուս իր գործածած բառերուն վերացական իմաստներուն նկատմամբ տեղեկութիւն տուած է:

Ոչխարները կը ներկայացնեն բոլոր անոնք, որոնք գատած են կատարելութեան ուղին իբր իրենց կեանքի շառաւիղը: Յիսուս կ'ըսէ թէ Ինք է բարի հովիւը եւ երբ

ոչխարները իր ձայնը կը լսեն, իր ետեւէն կ'երթան: Միթէ Յիսուս մեր վարդապետը չէ՞: Մենք ալ պարտ ենք իր ձայնը լսել եւ իրեն հետեւիլ: Ի՞նչ կը նշանակէ իր ձայնը լսել: Իր ըսածները՝ սորվեցուցածները մտիկ ընել եւ մեր կեանքին մէջ զանոնք կիրարկել: Ինչ կը նշանակէ իրեն հետեւիլ: Նաեւ գրուած է, թէ հովիւը առջեւէն կ'երթայ եւ ոչխարները կը հետեւին: Յիսուս մեր առաջնորդն է: Նախ ինք անձնապէս քալեց կատարելութեան ուղիիէն եւ հասաւ այդ «ճամբուն» վերջաւորութեան: Այն ինչ որ ինք իր ապրած կեանքով մեզի ցոյց տուաւ, մենք ալ կը պարտինք նոյնը ընել մեր կեանքին մէջ: Յիսուս նաեւ ըսած է, թէ երբ հովիւը զայ դռնապանը դուռը կը բանայ եւ հովիւը դռնէն կը մտնէ եւ ան որ դռնէն չի մտներ գող եւ աւազակ է: Դարձեալ երկրորդ մէջբերումին մէջ Քրիստոս կ'ըսէ. «Ես եմ դուռը»: Դռնապանը ամէն անձի ներքին Քրիստոսն է եւ դուռը բանալն ալ անձին մէջ Քրիստոսի յայտնութիւնը: Երբ Քրիստոս կ'ըսէ. «Ես եմ դուռը», ըսել կ'ուզէ թէ ինք Յիսուսի մէջ լրիւ ի յայտ եկած է: «Ան, որ դռնէն չի մտներ գող եւ աւազակ է»-ն ալ կը ներկայացնէ բոլոր անոնք, որոնք իրենց մէջ Աստուածայայտնութեան փորձառութիւնը չեն ունեցած, հետեւաբար չեն կրնար «բարի հովիւը» ըլլալ: Ամէն անհատի «Ես»-ը կը ջանայ անձին ղեկը իր ձեռքը առնել եւ անձը ըստ իր կամքին կառավարել: «Ես»-ը դռնէն չէ մտած, հետեւաբար իր մէջ Քրիստոսի յայտնութիւն գոյութիւն չունի: Բոլոր այն քարոզիչներն ալ, որոնք իրենց «Ես»-էն տարուած խեղաթիւրուած Քրիստոնէութիւն մը կը քարոզեն, առակին այն գողերն են, որ մեզ դէպի «մահ» կ'առաջնորդեն: Երբ Յիսուս կ'ըսէ. «ոչխարները չեն հետեւիր օտարներու ձայնին», ըսել կ'ուզէ, թէ բոլոր անոնք, որոնք կատարելութեան ուղիին մէջ են, չեն հետեւիր իրենց «Ես»-էն յառաջ եկած

ցանկութիւններուն, խորհուրդներուն եւ զգացումներուն: Նաեւ չեն հետեւիր քարոզչութիւններու, որոնք չեն քար անձերէ, որոնք իրենց մէջ չեն ունեցած Քրիստոսի յայտնութեան փորձառութիւնը: Քրիստոս բացայայտ կ'ըսէ. «Ես եմ ոչխարներուն դուռը»: Ինք ըսել կ'ուզէ, որ փրկութեան միակ միջոցը Յիսուսի ապրած կեանքը ապրիլ եւ Քրիստոսի յայտնութիւնը մեր մէջ իրականացնելն է: Քրիստոսի յայտնութեամբ անհատը «կեանք կ'ունենայ եւ ճոխութեամբ կ'ունենայ»: Վարձկան «հովիւը» կը փախչի երբ գայլը գայ: Երբ կեանքի վատ պատահարները կու գան, «Ես»-ը անկարող է որեւէ կերպով անձին օգնելու: Իսկ Քրիստոս կը մեղմացնէ տառապանքը եւ համբերութիւն, կամք եւ ընդունակութիւն կու տայ: Քրիստոս նաեւ ըսած է. «կը ճանչնամ իմիներս ու կը ճանչցուիմ իմիներէս» եւ «Ինչպէս Հայրը կը ճանչնայ զիս ես ալ կը ճանչնամ Հայրը»: Քրիստոս Փիղիքական գետնի վրայ Աստուծոյ արտայայտութիւնն է: Հետեւաբար ամէն անհատի ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է, որ ամէն անձի մէջ Աստուծոյ գոյութիւնը կը ներկայացընէ: Մարդուն գիտակցութիւնը Աստուծոյ անհուն գիտակցութեան փոքր մէկ մասնիկն է: Որով այն բոլոր խորհուրդներուն, զգացումներուն եւ արարքներուն, որոնց գիտակից ենք, Աստուած ալ անոնց գիտակից է: Հետեւաբար Հայրը մեզ լրիւ կը ճանչնայ եւ մարդ կարող չէ նոյնիսկ նշոյլ մը Աստուծոյ պահել: Իսկ երբ անհատին մէջ Քրիստոս լրիւ ի յայտ գայ, այսինքն անձին գիտակցութեան մակարդակը կը բարձրանայ, Աստուածայայտնութիւնն ալ կ'իրականանայ եւ ինք ալ փորձառութիւնը կ'ունենայ միականութեան, թէ ամէն ինչ Աստուծոյ մէկ մէկ արտայայտութիւններն են եւ միայն մէկ ճշմարտութիւն գոյութիւն ունի եւ ան ալ Աստուած է: Աստուծոյ գաւառն այն բոլորը, որ մեր փոքր

գիտակցութեամբ, կամ աւելի ճիշդ է ըսել, մեր խաւարամտութեամբ, կը կարծենք թէ մեզմէ անջատ գոյութիւն ունին, բոլորն ալ միայն պատրանքային են եւ երազ մը: Յիսուս, որ Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացուցած էր, ճանչցաւ Հայրը, ինչպէս Հայրն ալ Ձինք կը ճանչնար:

Վերեւ տեղադրուած մէջբերումներուն երկրորդ մասին վերջի երկու համարներն ալ յատկանշական են: Յիսուս ինք յօժարաբար իր անձը ընծայեց եւ ոչ թէ հրեաները կամ հռովմայեցիները զինք սպաննեցին: Ինչպէս Յուդան, անոնք ալ միայն միջնորդներն էին, որոնց ձեռամբ կատարուեցաւ այն ինչ որ Յիսուս ինք փափաքեցաւ զոհել: Բայց, երբ Յիսուս կ'ըսէ. «Ես իմ անձս կ'ընծայեմ, որպէսզի դարձեալ առնեմ զայն», կ'ակնարկէ իր «Ես»-ին վերջնական մահուան եւ իր անհատականութեան յարութեան, միացած Քրիստոսի: Արդեօք պէտք չէ՞ որ մենք ալ հետեւինք մեր հովիւին: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «ոչխարները կը լսեն հովիւին ձայնը եւ կը հետեւին իրեն»:

Մեզի կը մնայ Յիսուսի ձայնը լսել, այսինքն իր սորվեցուցածները ճշգրտօրէն հասկնալ եւ իւրացնել եւ ըստ այնմ յառաջանալ կատարելութեան ուղիէն եւ չհետեւիլ խեղաթիւրուած ուսուցումներու: Մեր պարտականութիւնն է նաեւ Քրիստոսի «դռնէն մտնել», այսինքն Աստուածայայտնութիւնը՝ Քրիստոսի լրիւ արտայայտութիւնը մեր անձերուն մէջ իրականացնել: Այս վերջինը մաս կը կազմէ «ոչխարներուն հովիւին հետեւիլը»՝ իր քալած ճամբայէն քալել, քանի որ ինք իր առաջնորդութեամբ մեզի ցոյց տուաւ կատարելութեան ուղին: Մենք ալ իրեն նման պարտ ենք մեր «Ես»-ը ընծայել՝ զոհել, որպէսզի դարձեալ առնենք մեր անհատականութիւնը Քրիստոսի միացած: Ահա աս է Քրիստոսի հարսը ըլլալ:

ԹՉԵՆԻՒՆ ԴԱՍԸ



«Եւ ասայ ասակ մը նոցա. Տեասնիցէի
պիպենիոյ եւ պամենայն թառ. յորժամ
ցոյցանիցեն պոքոռոյ իրեանց, յիսանէի՝ եւ ՚ի
նոցանէ ճանաչէի երե մէրջ եւ ամառն: Նոյնպէս
եւ դռնի: յորժամ յիսանիցէի պայս ամենայն
եղեալ, Գիտասջիի թե մէրջ եւ արդայութիւն
Լսորոշոյ: Ըմէն ասեմ թե ո՛չ անցցե ապօս
այս, մինչեւ ամենայն այս լինիցի: Երկինի եւ
երկրի անցցեն եւ բանի իմ ո՛չ անցանիցեն»:
(Ղուկաս ԻԼ:29-33)

«Առակ մըն ալ ըսաւ անոնց. «Տեսէ՛ք թղենիւն ու բոլոր
ծառերը: Երբ արդէն բողբոջին, տեսնելով դուք ձեզմէ
կը գիտնաք թէ արդէն ամառը մօտ է: Նոյնպէս դուք՝
երբ եղած տեսնէք ասոնք, գիտցէ՛ք թէ Աստուծոյ
թաղաւորութիւնը մօտ է: Ճշմարտապէս կը յայտարարեմ
ձեզի. Այս սերունդը պիտի չանցնի, մինչեւ որ այս
բոլոր բաները ըլլան: Երկինքն ու երկիրը պիտի

անցնին, բայց իմ խօսքերս բնա՛լ պիտի չանցնին»:

ՏԷ՝ ՆԱԷ՝ ՄԱՐԿ՝ ԺԳ: 28-31 Է՝ ՄԱՐԿ՝ ԻԳ: 32-35

Յիսուս այս թզենիին առակը, Մարգուս ուղիին երկրորդ գալուստին մասին խօսելէն անմիջապէս յետոյ ըսաւ: (Տես Լոյս ի Լուսոյ (Ա) գիրքիս «Ի՞նչ է վերստին (երկրորդ) գալուստը» խորագրեալ Զ. գլուխը էջ 115) **Յիսուս** ուրիշ առիթով ալ ըսած է, թէ Աստուծոյ թագաւորութիւնը արդէն եկած է, բայց մենք զայն չենք գիտնար: Աստուծոյ թագաւորութիւնը ամէն անձի մէջ է, վասն զի մեր մարմինները Աստուծոյ տաճարներ են:

Թզենիին առակը կարելի է երկու տարբեր ձեւով մեկնաբանել: Երբ նկատի առնենք երկրորդ գալուստի նկատմամբ Յիսուսի ըսած նշանները (Ղուկաս ԻԱ:25-28), այն ատեն թզենիին առակը բացայայտ կ'ըլլայ: Ինչպէս երբ թզենիին բողբոջիլը տեսնենք, կը գիտնանք թէ գարունը մօտ է, նմանապէս ալ, երբ երկրի վրայ գուշակուած պատահարները եւ աստղերու նշանները տեսնենք, պէտք է հասկնանք թէ Աստուծոյ թագաւորութեան գալուստը մօտ է: Բայց եթէ Աստուծոյ թագաւորութիւնը արդէն եկած է, ի՞նչ է ասոր իմաստը: (Տես «Աւետարանի Խորհուրդները Ա.- Յիսուսի կեանքէն դուրս» խորագրեալ նախորդ Հատորին «Յիսուս կ'ուտէ գատիկը Իր աշակերտներուն հետ» գլուխը: էջեր 101-104) **Յիսուս** Իր վերջին ընթրիքով մեզի ըսել ուզեց թէ աստղագիտութեան կենդանակամարի (zodiac) համաստեղութիւններէն (constellation) «Ջրկիր»-ի (Aquarius) համաստեղութեան դարաշրջանին համայն մարդկութիւնը Քրիստոսի հետ պիտի հաղորդուի: Ուրեմն աստղերու նշանները կը ներկայացնեն «Ջրկիր»-ի դարաշրջանը, եւ այսօր 140 տարի մնացած է, որ «Ջրկիր»-ի յաջորդ շրջանը սկսի: Միթէ աշխարհի ջերմութեան բարձրացումը եւ տեղի ունեցող ջրային աղետներն ալ չեն սկսած աւելնալ: Մօտաւորապէս 25.000 տարի առաջ, «Ջրկիր»-ի անցեալ շրջանին, Նոյեան ջրհեղեղը պատահած էր: Հետեւաբար երբ մենք

ալ ահանատես կ'ըլլանք երկրի վրայի պատահածներուն եւ աստղերուն նշաններուն, պէտք է գիտնանք թէ մօտ է Աստուծոյ թագաւորութիւնը: Այս մեկնաբանութիւնը կը վերաբերի համայն մարդկութեան:

Երկրորդ մեկնաբանութիւնը կը վերաբերի անհատին եւ կը յենի այն իրողութեան վրայ, որ Աստուծոյ թագաւորութիւնը արդէն եկած է, բայց մենք անոր գիտակցութիւնը չունինք: Աստուծոյ թագաւորութիւնը ամէն անհատի ճշմարիտ էութիւնն է՝ Քրիստոսը: Բայց Քրիստոս տաճարին մէջ կը քնանայ, ինչպէս Յիսուս նաւուն մէջ կը քնանար: Պարտ ենք Ձինք արթնցնել: Այս անգամ, երկրորդ գալուստը կը ներկայացնէ անհատին մէջ Քրիստոսի յայտնութիւնը: Այսինքն անհատին փորձառականօրէն եւ ոչ միայն իմացականօրէն անդադառնալն է, թէ ինք Աստուծոյ մէկ արտայայտութիւնն է: Այս անգամ թզենիին առակը ցոյց կու տայ անհատին կենցաղի փոփոխութիւնը, այն միջոցին երբ ան կը յաջողի յառաջանալ կատարելութեան ուղիէն: Երբ մենք ալ տեսնենք անհատին բնոյթին դրական փոփոխութիւնները, կը հասկնանք թէ այդ անհատին մէջ Աստուածայայտնութիւնը աւելի մօտեցած է:

Իսկ պէտք չէ,⁶ որ մենք ալ ջանանք մեր բնոյթը դրական փոփոխութեան ենթարկել եւ չչեղիլ կատարելութեան ուղիէն, որպէսզի մենք ալ, Յիսուսի նման, կարողանանք մեր մէջ Քրիստոս ի յայտ բերել:

«Ո՛չ է աշակերտ լա՛ւ խննդարդապետ
իւր, ամենայն կարարեալն՝ եղիցի իբրեւ

պարդապետ իւր» : (Ղուկաս 9:4)

«Աշակերտը իր վարդապետէն գերիւր չէ. բայց ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:

ՃՐԱԳԸ ԱՆՕԹԻԱ ՏԱԿ



«Ո՛չ ո՛վ լուսանէ ճրագ՝ եւ թափուցանէ
ընդ կարասեաւ, կամ դնէ ընդ մահճաւ-
այլ 'ի վերայ աշտանակի՝ դնէ, զի որ
միտանէն՝ զլո՛յս ցեպէն»։ (Ղա-կա Ը:16)

«Ո՛չ մէկը՝ ճրագ մը վառելէ ետք՝ կը ծածկէ զայն
անօթով մը, կամ կը դնէ մահիճի մը ներքեւ. հապա
կը դնէ աշտանակի՝ մը վրայ, որպէսզի ներս
մտնողները տեսնեն լոյսը»։

«Ոչ ուրու-ի լուսեալ ճրագ՝ դնէ՝ 'ի թա-
փուցեան, այլ 'ի վերայ աշտանակի, զի որ
միտանէն՝ լոյս ցեպանիցէն։ Ճրագ մարմնոյ
ա՛կն յորժամ ա՛կն առա՛ջ է, ամենայն մար-
մինն լուսաւոր է իջիցի։ Եւ երբ ա՛կն շա՛ր
է, եւ մարմինն խաւարին է իջիցի։ Ըրդ՝
զգո՛յշ լիւր, Գո-ցէ՛ լո՛յսդ որ 'ի ի՛նչ է՝
խաւա՛ր իցէ։ Եթէ մարմինդ չո՞ւ ամենայն
լուսաւոր է, եւ չԳո-ցէ մա՛սն ինչ խաւա-
րին, իջիցի լուսաւոր ամենայն. որպէս յոր-

Ժամ ճրագին նշուիւմ լուսաորիցէ պէտք» :

(Ղուկաս ԺԷ : 33-36)

«Ո՛հ մէկը՝ ճրագ մը վառելէ ետք՝ կը դնէ ծածուկ տեղ մը, կամ ալ՝ գրուանի տակ, հասկա՝ աշտանակի՝ վրայ, որպէսզի ներս մտնողները տեսնեն փայլը: Մարմինին ճրագը աչքն է. ուրեմն երբ աչքը պարզ է՝ ամբողջ մարմինդ ալ լուսաւոր կ'ըլլայ, բայց երբ աչքդ չար է՝ մարմինդ ալ խաւարած կ'ըլլայ: Ուստի ուշադիւր եղիր, որ քու մէջդ եղած լոյսը խաւար չըլլայ: Ուրեմն եթէ ամբողջ մարմինդ լուսաւոր է ու մութ մաս մը չունի, ամբողջովին լուսաւոր կ'ըլլայ, ինչպէս երբ ճրագ մը կը լուսաւորէ քեզ իր փայլով»:

Տէս նաեւ Մարկոս Դ : 21-25

Երբ եկեղեցի կ'երթանք, մոմ կը վառենք: Ի՞նչ է ասոր իմաստը: Մոմ վառելու արարքը Ֆիզիքական արտայայտութիւնն է այն ձգտումին, զորս կը ջանանք մեր կեանքին մէջ իրականացնել: Այս ձգտումն ալ մեր անձերուն մէջ Քրիստոսի լոյսը վառելն է: Ինչպէս այլ ուր գրուած է, Քրիստոս ամէն անհատի ճշմարիտ հուրիւնն է: Բայց ինչպէս Յիսուս Գալիլեայի ծովուն վրայ նաւուն մէջ կը քնանար, Քրիստոս ալ մեր նաւուն՝ մարմնին մէջ կը քնանայ: Մենք ալ, նման աշակերտներուն, փոթորիկէն ընկղմելով մահուան վտանգի մէջ ենք: Մեր փոթորիկներն ալ մեր խորհուրդներուն եւ զգացումներուն յառաջ բերած հակազդեցութիւններուն վատ պատահարներն են: Եթէ կը փափաքինք որ մեր փոթորիկներն ալ հանդարտին, պարտ ենք մեր ներքին Քրիստոսը արթնցնել՝ մեր ճրագը վառել:

Յիսուս կ'ըսէ, թէ մարմնոյն ճրագը աչքն է: Աչքը տեսողութեան միջոցը, զգայարանն է: Բայց աչքը լոյսին ցոլացումը կը տեսնէ եւ ոչ թէ ճրագի նման լոյս կ'արձակէ: Հետեւաբար Յիսուս մեր Ֆիզիքական աչքերուն համար չի խօսիր այլ Ան միայն եգալի ըլլալով «աչքն է» կ'ըսէ: Այս աչքը, որուն Յիսուս կ'ականարկէ մեր հոգեկան աչքն է: Որոշ գրութիւններու մէջ ան

ներկայացուած է նաեւ իբր «երրորդ աչք»: Աւետարանին աշխարհաբար թարգմանութեան մէջ Յիսուսին ըսածը գրուած է որպէս «երբ աչքդ պարզ է»: Գրաբարին մէջ «պարզ»ին համար գործածուած բառը «առատ» բառն է: Յունարէնի մէջ այս բառը կարելի է «պարզ» իմաստով ալ թարգմանուի, բայց գրաբարի «առատ»ին իմաստը «անարատ եւ պայծառ» է: Երբ հոգեկան աչքը բացուի, մենք ալ ոչ միայն իմացականօրէն այլ նաեւ փորձառականօրէն կը գիտակցինք Քրիստոսի մեր մէջ ներկայութեան: Աս ալ կը համապատասխանէ Քրիստոսի մեր մէջ արթննալուն: Ինչպէս նաւուն մէջ աշակերտները քնացող Յիսուսը արթնցուցին, մենք ալ պէտք է Զինք արթնցնենք: Առանց յարատեւ ջանքի, համբերութեան եւ ուղղամտութեան անկարելի է Քրիստոս արթնցնել: Յիսուս նաեւ կ'ըսէ. «ամբողջ մարմինդ ալ լուսաւոր կ'ըլլայ»: Երբ աչքը բաց է, այսինքն պայծառ եւ անարատ, կը նշանակէ թէ Քրիստոս ալ արթուն է, որովհետեւ այդ պայծառութիւնը Քրիստոսի լոյսն է, որ բոլոր մարմինը կը լուսաւորէ: Քրիստոսի լոյսն ալ Ս. Հոգիի զօրութիւնն է, որ անձին մէջ առատ կը հոսի: Միթէ Իր ալակերպութեան ատեն այդ չէ՞ր որ Յիսուս Իր լուսաւոր մարմինը մեզի ցոյց տալ ուզեց: Երբ մարմինը լուսաւոր կ'ըլլայ, ան նաեւ առողջ կ'ըլլայ: Երբ Յիսուս «մարմինը» կ'ըսէ, միայն Ֆիզիքական մարմնոյն չէ որ կ'ականարկէ: Մարդ արարած ունի Ֆիզիքական մարմին մը, ինչպէս նաեւ մտային մարմին մը: Հետեւաբար Յիսուս նաեւ ըսել կ'ուզէ, թէ երբ աչքը «առատ» կ'ըլլայ, անձին իմացականութիւնն ալ կ'աւելնայ եւ ինք իմաստութեան տէր կ'ըլլայ, ինչպէս նաեւ շատ աւելի բարձր գիտակցութեան եւ հետեւաբար լուսապայծառ հասկացողութեան տէր: Իսկ եթէ հոգեկան աչքը չար է, այսինքն գոց է, մարմինն ալ խաւար կ'ըլլայ, ենթակայ հիւանդութիւններու, իսկ միտքին

որակն ալ կը համապատասխանէ խաւարամտութեան: Յիսուս նաեւ կը յորդորէ. «Ուստի ուշադիր եղի՛ր, որ քու մէջը եղած լոյսը խաւար չըլլայ»: Այս նախադասութիւնով Յիսուս մեզ կը զգուշացնէ, որ մեր ներքին Քրիստոսը քնացած չձգենք եւ Զինք արթնցնենք, որպէսզի մենք ալ խաւարի մէջ չմնանք: Իսկ եթէ այդ աչքը բաց է եւ մենք ալ թէ Փիզիքապէս եւ թէ մտայնօրէն լուսաւորուած ենք, պէտք է՝ այդ լոյսը միակ մեզի պահենք, այլ պարտ ենք զայն հանրութեան օգտին համար գործածել: Ահա՛, ճրագին գրուանի մը տակ չդնելու եւ աշտանակի մը վրայ դնելու իմաստն ալ աս է:

Համայն մարդկութիւնը իրեն լուսաւորութեան կամ խաւարամտութեան մակարդակին համաձայն որոշ հաւատալիքներ (beliefs) իր ենթագիտակցութեան մէջ կ'անբարէ եւ ըստ այնմ կը գործէ ու կը կերտէ իր կենցաղը: Շատեր կարծելով թէ իրենց հաւատացածը ճիշդն է, կը ջանան ուրիշներն ալ համոզել եւ նոյնիսկ մահաւան սպառնալիքով ստիպել, որ անոնք ալ իրենց պէս հաւատան: Բոլոր հաւատալիքները միշտ ենթակայ են փոփոխութեան, որովհետեւ անոնք անձնական փորձառութեամբ ձեռք ձգուած հաւատք (faith) չեն: Երբ անձին աչքը անարատ է եւ պայծառ, այսինքն Քրիստոս իր մէջ արթնցած՝ յարութիւն առած է, ինք փորձառական հաւատքն է որ ունի, որ անխախտելի է: Ինչպէս Քրիստոս, նման փորձառութեան տէր անհատն ալ, ամենեւին չի ստիպեր, որ ուրիշ մը իր հաւատքին բռնութեամբ հետեւի, այլ ինք պարզապէս իր կենցաղով, առանց խտրութեան, բոլորին օգնելով եւ կարեկից, իր շուրջ կը սփռէ այն Քրիստոսի լոյսը, որ իր մէջ ի յայտ եկած է: Միթէ Յիսուս ոեւէ մէկը ստիպե՞ց որ իրեն հետեւի: Ինք միայն իր կենցաղով, իր արարքներով, իր խօսքերով եւ իր ողորմածութեամբ փարոս մը եղաւ համայն մարդկութեան: Պէտք է՞ որ մենք ալ նոյնը ընենք:

ՊԱՇՏՈՒՄԸ ԳԱՆՁԻՆ ԱՌԱՎԸ



«Ռարջեալ՝ նմա՛ն է արշայո-թեան էրկնից
Գանձն՝ Զաշկելոյ յաԳարակի, զոր Գրեալ
մարդոյ՝ ըախո՛յց. է- ՚ի խնդո-թենէ անոր՝
էրթայ վաճառ-է զամենայն ինչ զոր ունի,
է- Գնէ՛ զաԳարակն զայն» : (Մարգէնս ԺԳ:44)

«Դարձեալ՝ Երկինքի թագաւորութիւնը նման է արտի
մէջ պահուած գանձին, որ մարդ մը՝ գտնելէ ետք՝ կը
ծածկէ, եւ ուրախութենէն կ'երթայ, կը ծախէ իր
ամբողջ ունեցածը, ու կը գնէ այդ արտը»:


**Յիսուսի այս առակին իմաստը չատ պարզ է, եթէ
ըստածնեւորուն փոխաբերական իմաստները հասկնանք:
Այն բառերը, որոնց փոխաբերական իմաստները պէտք
է նկատողութեան առնուին հետեւեալներն են. «մարդ
մը», «արտը», «գանձը», «ծածկելը», «ծախել ամբողջ
ունեցածը» եւ «գնել արտը»: «Մարդը» անձին անհատա-**

կանութիւնն է: Երբ անհատը արտին մէջ գանձի մը գոյութեան կ'անդրադառնայ, որպէսզի ինք այդ գանձին տիրանայ, իր ամբողջ ունեցածը կը ծախէ եւ արտը կը գնէ: «Արտը» անձին ֆիզիքական եւ մտային մարմինները կը ներկայացնէ, որոնց միջոցաւ ան կը խորհի, կը խօսի ու կը գործէ: Անձին անհատականութիւնը կ'անդրադառնայ գանձի մը ներկայութեան իր մէջ, ուր «Գանձը» մարդուն ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոսն է: Իմացականօրէն մարդ կ'անդրադառնայ, թէ Քրիստոս՝ Աստուած իր մէջ ներկայ է եւ ինք այդ գանձը իւրացնելու, այսինքն անոր հետ միանալու կարողութիւնը ունի: Բայց երբ «արտը» իրեն չի պատկանիր, ինք ալ կարող չէ այդ գանձին տիրանալ: Արտը որո՞ւ կը պատկանի: Անհատը կարելի է որ արտին մէջ աշխատի, բայց արտը իրը չէ: Խորհուրդով, խօսքով կամ գործքով մարդ արարած ընդհանուր առմամբ կը հետեւի իր «Ես»-էն յառաջ եկած ցանկութիւններուն եւ յորդորներուն: Հետեւաբար «արտին» տէրը անձին «Ես»-ն է: Անկարելի է որ ինք այդ գանձին տիրանայ, մինչեւ որ ինք նախ այդ արտին տիրանայ: Հետեւաբար ժամանակի մը համար գանձը կը ծածկէ: «Ծածկելը» կը համապատասխանէ իմացական գիտակցութեան: Իմացական գիտակցութիւնը փորձարական գիտակցութեան փոխելու համար անձը ժամանակի կը կարօտի, մինչ այդ գանձը ծածկուած կը մնայ: «Ծախել ամբողջ ունեցածն» ալ կը համապատասխանէ անձին իր մէջ կատարելիք փոփոխութեան: Երբ առարկայ մը կը ծախենք, այդ առարկայէն մենք մեզ ձերբազատած կ'ըլլանք: Հետեւաբար «իր բոլոր ունեցածները ծախելը» կը ներկայացնէ անձին ձերբազատուիլը իր բոլոր ցանկութիւններէն, իղձերէն, կիրքերէն, զգացումներէն, խորհուրդներէն, խօսքերէն եւ գործքերէն, որոնք ծագում կ'առնեն իր «Ես»-էն: «Արտը ծախու առնել»ն ալ, իր թէ՛ ֆիզիքա-

կան եւ թէ՛ մտային մարմիններուն վրայ բացարձակ իշխանութիւն կերտելն է: Երբ արտը իրեն կը պատկանի, արտին մէջ գտնուող ամէն ինչ ալ իրեն կը պատկանի: Պատկանիլը օգուտ չունի: Անձը պէտք է ուզէ նաեւ այդ գանձին տիրանալ եւ այդ ուղղութեամբ ալ պէտք եղած ջանքը թափել:

Այս առակով Յիսուս մեզի կը սորվեցնէ մեր կեանքին նպատակը: Նախ անդրադառնալ թէ մեր մէջ «գանձ» մը ունինք պահուած, որ Աստուծոյ ներկայութիւնը՝ Քրիստոսն է: Յետոյ այդ «գանձ»-ին տիրանալու տենչանքը ունենալ: Իսկ այդ տենչանքը իրականացնելու համար հետապնդել կատարելութեան ուղին: Կատարելութեան ուղիին հետապնդումն ալ կը համապատասխանէ «ամբողջ ունեցածը ծախելուն»: Անձը պարտ է իր բնոյթը փոխել: Մեր բնոյթը ընդհանրապէս կը յարի մեր անհատականութեան ժխտական բեւեռին, որ կը համապատասխանէ մեր «Ես»-ին: Պարտ ենք մեր բնոյթը փոխել դէպի մեր անհատականութեան դրական բեւեռը՝ Քրիստոս: Միայն այն ատեն մեր ճշմարիտ էութիւնը կը կարողանայ «արտին» տէր ըլլալ: Երբ մեր ներքին Քրիստոսն ալ մեր մտային եւ ֆիզիքական մարմիններուն տէրն է, մեր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան ըստ Աստուծոյ կամքին: Երբ մեր ներքին Քրիստոսը «արտին» տէրն է, ոչ մարմինը կը հիւանդանայ եւ ոչ ալ անձը վատ պատահարներու կ'ենթարկուի: Եթէ նոյնիսկ հոգիին նախկին կեանքերէն Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերէն մնացած պարտքեր կան եւ անոնց յառաջ բերած ճակատագրական վատ պատահարներու հանդիպինք, թէ Քրիստոս զանոնք կը մեղմացնէ եւ մենք ալ զանոնք ուրախութեամբ կ'ընդունինք: Պէտք չէ մոռնանք թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են: Քրիստոսի «արտին» տիրանալն ալ անձին մէջ Քրիստոսի յայտնութիւնն է:

ՄԱՐԳԱՐԻՏԻԱ ԱՌԱԿԸ



«Ռաբբեաւ՝ նմա՛ն է արեւայորեն երկնից
ա՛ռն վաճառականի, որ խնդրեցէ մարգա-
րի՛րս Գեղեցիկս: Եւ Գրեալ մի պատուա-
կան մարգարիո՛ր՝ երբաւ վաճառեա՛ց զամե-
նայն ինչ զոր ունէր՝ եւ Գնեա՛ց զայն
մարգարիո՛ր»: (Մաթթեոս ԺԳ:45-46)

«Դարձեալ՝ երկինքի թագաւորութիւնը նման է առեւտրականի մը, որ գեղեցիկ մարգարիտներ կը փնտրէ, եւ շատ պատուական մարգարիտ մը գտնելէ ետք՝ գնաց, ծախեց իր ամբողջ ունեցածը, ու գնեց զայն»:

Այս առակին մեկնաբանութիւնն ալ նախորդ առակին նմանն է: Հոս ալ «առեւտրականը», «գեղեցիկ մարգարիտներ փնտռելը», «պատուական մարգարիտը», «ամբողջ ունեցածը ծախելը» եւ «գնելը», բոլորն ալ ունին իրենց փոխաբերական իմաստները: Այս պարագային «առեւտրականը» կը ներկայացնէ մարդուն անհատականութիւնը: Անհատին «գեղեցիկ մարգարիտներ փնտրելն» ալ, անհատին իր կեանքին մէջ միշտ հաճելի պահեր եւ երջանկութիւն փնտռելուն կը համապատասխանէ: Իսկ «պատուական մարգարիտը» կը ներկայացնէ այն երանութիւնը, որուն մարդ կ'արժանանայ երբ Քրիստոս իր մէջ ի յայտ կու գայ: Այս երանութիւնը բազմիցս կը գերազանցէ աշխարհիկ ամէն տեսակի հաճոյքն ու երջանկութիւնը: «Պատուական մարգարիտը»՝ այդ երանութիւնը Քրիստոսի ներկայութիւնն է: Նման նախորդ առակին, հոս ալ, առեւտրականը իր ամբողջ ունեցածը կը ծախէ: Հետեւաբար «իր բոլոր ունեցածները ծախել»-ը կը ներկայացնէ ձերբազատուիլ իր անձին մէջի այն բոլոր ցանկութիւններէն, իղձերէն, կիրքերէն, զգացումներէն, խորհուրդներէն, խօսքերէն եւ գործքերէն, որոնք ծագում կ'առնեն իր «Ես»-էն: Այն ատեն է որ անձը կը կարողանայ «պատուական մարգարիտը» գնել: Առանց կենցաղի դրական փոփոխութեան կարելի չէ Աստուածային երանութեան արժանանալ: Իսկ երանութիւնն ալ անձին մէջ Քրիստոսի յայտնութեան նշանն է: Բոլոր ստեղծագործութեան մէջ ամենագեղեցիկ, ամենաարժեքաւոր միակ ճշմարտութիւնը Քրիստոսն է: Պէտք չէ⁶, որ մենք ալ՝ «առեւտրականներս», ամէն ինչ «ծախենք» եւ զայն «գնենք»:

ՄԱՆԱՆԵԽԻՆ ԱՌԱԿԸ



«Ե՛լ առաւ արեւ նոսա՝ եւ աւել. Նմա՛ն է արեւոյութիւնն երկնից Հասո՛ մանանխոյ. զոր առեալ մարդոյ՝ սերմանեա՛ց յագարանի իրո՞ւմ: Որ փո՛շր է փան զամենայն սերմանին. եւ յորժամ աճիցէ, մե՛ծ է փան զամենայն բանջարս. եւ լինի շատ՝ մինչեւ գաւ թոշնոց երկնից եւ Հանգչե՛լ յոսոս նորս»: (Մարգէնս ԺԳ:31-32)

«Ուրիշ առակ մըն ալ առաջարկեց անոնց եւ ըսաւ. «Երկինքի թագաւորութիւնը նման է մանանխի Հատիկի մը, որ մարդ մը առաւ ու ցանեց իր արտին մէջ: Արդարեւ ան բոլոր սերմերուն ամենէն պզտիկն է, բայց երբ աճի՝ տունկերուն մեծագոյնը կ'ըլլայ ու ծառ կը դառնայ, այնպէս որ երկինքի թռչունները կու գան եւ կը բնակին անոր ճիւղերուն վրայ»»:


Տէս նաեւ Մարկոս Դ:30-32 եւ Դոււկաս ԺԳ:18-19

Այս առակին մէջ Յիսուս անձին մէջ Քրիստոսի ներկայութիւնը կը նմանցնէ մանանխի փոքր սերմի մը, որ սերմերուն ամենէն պզտիկն է: Նմանապէս Քրիստոս ալ մեր մէջ է, բայց իբր «սերմ», որ չէ ծլած եւ այնքան փոքր, որ նոյնիսկ գիտակից չենք, թէ Ան հոն է: Բայց եթէ «ցանենք», ու առիթ տանք որ ծաղկի, այսինքն Քրիստոս ալ մեր մէջ «ծաղկի»՝ յայտնուի,

այն ատեն «տունկերուն մեծագոյնը» կ'ըլլայ:

Բոլոր ստեղծագործութիւնը եւ ստեղծագործութեան մէջ ամէն ինչ, ներառեալ մարդը, Աստուծոյ մէջ-մէկ արտայայտութիւններն են: Բոլոր ստեղծագործութեան նպատակը Աստուածայայտնութիւնն է եւ մարդն ալ այդ Աստուածայայտնութեան միակ միջոցն է: Այդ հոնտը մարդուն մէջ ցանուած է, մարդուն կը մնայ միայն զայն խնամել եւ ծաղկեցնել: Քրիստոսի անձին մէջ ներկայութիւնը, նոյնիսկ իբր «հոնտ», մեզի կը պարգեւէ կեանք եւ ամէն ինչ, որոնց գիտակից ենք: Մարդ կը պարծենայ իր ունեցած կարողութիւններով, իր ամբարած գիտութեամբ, իր ըրած գիտերով եւ յայտնաբերած արուեստաբանութիւններով: Ճիշդ է թէ հազարաւոր տարիներու ընթացքին մարդ մի քանի քայլ յառաջդիմած է եւ արուեստագիտութիւնն ալ օրէ օր աւելի արագ կ'ընթանայ: Բայց մարդ տակաւին չէ անդրադարձած, թէ եթէ ինք այս մակարդակին հասած է, երբ Քրիստոս իր մէջ տակաւին փոքր հոնտ մըն է, ինք կարողութիւնը ունի հսկայական «ծառ» մը ըլլալու եթէ Քրիստոս իր մէջ ծլի եւ աճի, այսինքն յայտնուի: Որովհետեւ մարդ իր փորձառութեան մէջ նման կարողութիւններ հոնի եւ չի գիտեր, կը կարծէ թէ անոնք գոյութիւն չեն կրնար ունենալ: Այս հայեացքը սխալ է: Մարդ իր ներկայ փոքր գիտակցութեամբ, որ Աստուծոյ անհուն գիտակցութեան փոքր մի մասնիկն է, հասած է որոշ մակարդակի մը: Գիտակցութիւնը (consciousness) անձին մէջ Աստուծոյ ներկայութիւնն է: Մեռած մարդուն դիակը գիտակցութենէ զուրկ է: Իսկ եթէ Քրիստոս իր մէջ յայտնուի՝ «հոնտը ծլի», իր գիտակցութեան մակարդակն ալ կ'ըլլայ անհուն՝ «տունկերուն մեծագոյնը»: Միայն այն ատեն մարդ կը հասկնայ ճշմարտութիւնը եւ կ'ըսէ. «Ես եւ Հայր իմ մի եմք»:

ՍԵՐԱՆՅԱՆԻ ԱՌԱՅԻ



«Ահա՛ ե՛լ սերմանաճան սերմանել. եւ ՚ի սերմանելն իւրում, եր որ անկաւ առ ճանադարճաւ, եւ եկն թռչուն երկնից՝ եւ եկե՛ր պնա: Եւ այլն անկաւ յադատաժի, որ ո՛չ գոյր ճո՛ղ ուսում, եւ զաղզաղակի՛ քոսաւ: Աւ ՚ի շգոյէ՛ Ըիւթոյ երկրին՝ ՚ի ծագել արեւուն քաղաքա՛ւ, եւ պի ո՛չ գոյին արմաթի՛ շորացաւ: Եւ այլն անկաւ ՚ի մեջ փշոց, եւ ելին փռա՛ն եւ Ըեղցոցին պնա: Եւ այլն անկաւ յերկի՛ր քարի, եւ քայր պրո՛ւղ. եր՝ որ Ըարիւրաւո՛ր, եւ եր՝ որ զաթանաւո՛ր, եւ եր՝ որ երեւնաւո՛ր: Որ ունիցի ականջս լսելոյ՝ լսեցէ՛ »: (Մարգէնոս ԺԳ: 4-9)

«Ահա՛ սերմնացան մը զնաց՝ որ սերմ ցանէ: Երբ կը ցանէր, քանի մը սերմեր ինկան ճամբային եզերքը, եւ թռչունները եկան ու լափեցին զանոնք: Ուրիշներ ինկան ժայռոտ տեղերու վրայ, ուր չառ հող չկար, եւ խկոյն բուսան՝ հողին խորունկութիւն չունենալուն համար. սակայն տօթակէզ եղան երբ արեւը ելաւ, ու

չորացան՝ քանի որ արմատ չունէին: Ուրիշներ ալ ինկան փուշերու մէջ. եւ փուշերը բարձրացան ու խեղդեցին զանոնք: Իսկ ուրիշներ ինկան լաւ Հողի մէջ, եւ պտուղ տուին՝ մէկը Հարիւր, միւսը՝ վաթսուն, միւսը՝ երեսուն: Ա՛ն որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

«Եւ արդ՝ լռարո՛ւի գո՛ւի պատանկ սերմացանին: Յամենայնէ՛ որ լսէ պէանն արեւոյտ-բեան եւ ո՛չ անոնո՛ր միտ, Գա՛յ չարն՝ եւ յափշտակէ՛ պերմանեալն ՚ի սիրտ նորա. ան ի՛ որ առ ճանապարհան սերմանեցա՛ւ: Եւ որ յապառաջին սերմանեցաւ՝ ան ի՛, որ իբրեւ լսէ պէանն, եւ զաղվաղակի խնդո՛ւթեամբ ընդունի պնա: Բայց ի՛նչպիսի ո՛չ ոնի արմատս յինիւսան, ալ առ ժամանակ մի ՚ի լինել նեղո՛ւթեան եւ Հալածանաց զսան թանին՝ զաղվաղակի՛ Գայթաթիին: Իսկ որ ՚ի մեջ փշոցն սերմանեցաւ, ան ի՛ որ իբրեւ լսէ պէանն, եւ Հոգի աշխարհի՛ս եւ պարտաւի մեծո՛ւթեան Հեղցոցանէն պէանն, եւ լինի անպարտ: Իսկ որ յերկրն թարի սերմանեցաւ, ան ի՛, որ իբրեւ լսէ պէանն՝ եւ ՚ի միտ անոնո՛ւ, եւ ցայ պարո՛ւղ, եւ՝ որ Հարե՛ւր, եւ եւ՝ որ զաբա՛ւն. եւ եւ՝ որ երեսո՛ւն: Որ ոնիցի ականջս լսելոյ՝ լռիցէ» : (Մարգե՛տս ԺԳ:18-23)

«Լսեցէ՛ք ուրեմն սերմացանին առակը: Ո՛վ որ կը լսէ թագաւորութեան խօսքը եւ չի Հասկնար, չարը կու գայ ու կը յափշտակէ անոր սիրտին մէջ ցանուածը: Ասիկա ա՛ն է՝ որ սերմ ստացաւ ճամբային եզերքը: Ժայռոտ տեղերու վրայ սերմ ստացողը ա՛ն է, որ կը լսէ խօսքը եւ իսկոյն կ'ընդունի գայն ուրախութեամբ: Բայց իր մէջ արմատ չունենալով՝ քիչ ժամանակ կը տեւէ, ու երբ տառապանք կամ Հալածանք ըլլայ խօսքին պատճառով՝ իսկոյն կը գայթակղի: Փռչերու մէջ սերմ ստացողը ա՛ն է, որ կը լսէ խօսքը, սակայն այս աշխարհի Հոգեւրն ու Հարստութեան խաբէութիւնը կը խեղդեն խօսքը, եւ անպտուղ կ'ըլլայ: Իսկ լաւ Հողի մէջ սերմ ստացողը ա՛ն է, որ խօսքը կը լսէ եւ կը Հասկնայ. նաեւ պտուղ կու տայ, եւ կը բերէ՝ մէկը Հարիւր, միւսը՝ վաթսուն, միւսը՝ երեսուն»:

Տէ՛ս Նաէ- Մարգո՛ս Դ:3-9,14-20 Է- Ղաւ- Լ:4-8,11-15

Այս առակին երկրորդ մասին մէջ Յիսուս առակին բացատրութիւնը կու տայ: Յիսուսի տուած բացատրութիւնն ալ կարելի է պարզապէս իր բառացի իմաստով ընդունիլ եւ վերագրել կրօնական քարոզչութեան այն ինչ որ կը լսենք մեր կղերականներէն կամ ձայնասփիւռի եւ հեռատեսիլի քարոզիչներէն: Ուրեմն սերմը կը ներկայացնէ քարոզչութիւնը՝ խօսքը: Մնացեալ մեկնաբանութիւնը ինքնայայտ է եւ յաւելեալ բացատրութեան չի կարօտիր: Գրաբարին մէջ գրուած է. «զբանն արքայութեան»: Յովհաննու Աւետարանին մէջ (Գլուխ Ա. Համար 1) գրուած է. «Ի սկզբանէ է՛ր բանն եւ բանն է՛ր առ Աստուած եւ Աստուած էր բանն»: Հետեւաբար Յիսուսի ըսած «բան»-ը պէտք չէ պարզապէս որպէս մեր իմացած քարոզչութիւնները ըլլալով ընդունիլ: Եթէ, ըստ Աւետարանին, «բան»-ը Աստուած կը ներկայացնէ եւ ոչ թէ Աստուծոյ նկատմամբ պարզ խօսակցութիւն, այն ատէն պարտ ենք տարբեր իմաստով ըմբռնել Յիսուսի տուած բացատրութիւնը:

Ուրեմն սերմնացանին ցանած սերմը անձին ան-հատականութեան ղրական բեւեռը՝ Քրիստոսի ներկա-


յուլթիւնն է «ցանուած»՝ տրուած ամէն անհատի: Անոնք, որոնք չեն հասկնար, թէ իրենց ճշմարիտ էութիւնը Քրիստոս ինքն է եւ թէ այդ «սերմ»-ը իրենց մէջ ներկայ է եւ իրենց անհատականութիւնը դրական բեւեռ մը ունի, կը նմանին ճամբուն եզերքին: Իրենց անհատականութիւնը կը յափշտակուի «չարին»՝ իրենց «Ես»-ին կողմէ, եւ իրենց մէջ Քրիստոսի սերմը ծլելու առիթը չ'ունենար: Իրենք կը կերտեն բնոյթ մը, որ կը գործէ ըստ «Ես»-ին կամքին:

Այն ժայռոտ տեղը, ուր սերմերը կ'իյնան, կը ներկայացնէ Քրիստոսի ներկայութիւնը այն անձերուն մէջ, որ գիտեն թէ Քրիստոս իրենց մէջ գոյութիւն ունի, սակայն, որովհետեւ Քրիստոսը իրենց մէջ լրիւ յայտնաբերելու փափաքը եւ տենչանքը շատ տկար է, չուտով կը յուսահատին եւ կը դադրին յարատեւելէ:

Փշոտ վայրը, ուր սերմերը կ'իյնան, կը ներկայացնէ այն անձերը, որոնք գիտակից են իրենց մէջ Քրիստոսի ներկայութեան, սակայն, եթէ նոյնիսկ Զայն յայտնաբերելու տենչանքը ունենան, աշխարհի շլացուցիչ մտացրութիւնները արգելք կը հանդիսանան որպէսզի իրենք չկարողանան իրենց միտքերը Քրիստոսի վրայ կեդրոնացնել:

Լաւ հողի մէջ սերմ ստացողն ալ ան է, որ թէ՛ գիտէ իր մէջ Քրիստոսի ներկայութեան մասին, թէ՛ գիտէ իր կեանքին նպատակը՝ Քրիստոս իր մէջ յայտնաբերելը, եւ թէ ալ այդ նպատակը իրականացընելու տենչանքը ունի: Ինք այդ տենչանքը իր կեանքին մէջ իրականացնելու համար, հաւատքով, համբերութեամբ եւ յարատեւութեամբ կ'ընթանայ կատարելութեան ուղիէն, մինչեւ որ իր նպատակին հասնի, այսինքն Քրիստոս իր մէջ յայտնուի: Երբ Քրիստոս ալ իր մէջ կը յայտնուի, իր կեանքն ալ բազմիցս աւելի արդիւնաբեր կ'ըլլայ:

ԱճՈՂ ՍԵՐՄԻՆ ԱՌԱԿԸ



«Եւ ասէր. Ըյապէս է արեւայտ-բիւն
Լադո-ժոյ. որպէսզի այր մի արեւանիցէ սեր-
մանին յերկրի. եւ ննջիցէ, եւ յառնիցէ
սոսնոյժ եւ սցերեկ. եւ սերմանիքն թոսանի-
ցին եւ ասիցեն. եւ նա ո՛չ գիտէ՝ թէ եր-
կիրն ինչնին թերէ սոսոսոյ. նախ՝ սոսոսոյն,
եւ ասոս՝ սոսոսն, եւ ասոս՝ սոսոսն ասոսոյ
՝ի Լաւանին: Ըյլ յորժամ դոսոյցէ սոսոսոյն,
սոսոսոսոսոսն ասոսոսն մանթադ. սոս Լաւան՝
էն Լաւանի»: (Մարկոս Դ:26-29)

«Նաեւ կ'ըսէր. «Աստուծոյ թաղաւորութիւնը այնպէս է,
որպէս թէ մարդ մը Լոլին մէջ Լուսնո ցանէ. քանայ
թէ արթննայ, գիշեր ու ցերեկ, Լուսնո կը ծաղկի եւ

կը մեծնայ, ու ինք չի գիտեր թէ ի՛նչպէս: Քանի որ Հողը ինքնիրմէ պտուղ կ'արտադրէ. նախ՝ խոտը, յետոյ՝ Հասկը, անկէ ետք՝ լեցուն ցորենը Հասկին մէջ: Երբ պտուղը Հասուննայ՝ իսկոյն մանգաղը կը ղրկէ, որովՀետեւ Հունձքի ատենը Հասած է»:

Այս առակին մէջ ալ Յիսուս դարձեալ Աստուծոյ թագաւորութիւնը, որ Քրիստոսի ներկայութիւնն է, կը նմանցնէ հունտի մը: Քրիստոս ալ ամէն անհատի մէջ իբր «Հունտ» ներկայ է: Երբ անձը կը զատէ կատարելութեան ուղին, կը նշանակէ թէ ինք հունտը հողին մէջ դրած է: «Հող»-ը իր կենցաղին համար իր ընտրած կատարելութեան ուղին է: Հունտն ալ հողին մէջ կը ծլի: «Քնանայ թէ արթննայ, գիշեր ու ցերեկն» ալ, ակնարկութիւն մըն է, թէ անձին մէջ Քրիստոսի յայտնութիւնը ժամանակի կը կարօտի, որովհետեւ անհատին իր բնոյթը փոխելն ալ ժամանակի կը կարօտի: Ծլած հունտին կամաց կամաց աճիլն ալ կը համապատասխանէ անհատին կամաց կամաց կատարելութեան ուղիին մէջ յառաջանալուն: «Ու ինք չի գիտեր թէ ի՛նչպէս»-ն ալ ակնարկութիւն մըն է այն իրողութեան, թէ մարդ չի կրնար իր մէջ Քրիստոսի յայտնութիւնը ինք ձեռք բերել: Ինք միայն կրնայ «հողը» պատրաստել եւ «հունտը» խնամել, այսինքն ինքզինք արժանի ընել: Իսկ անհատին մէջ Քրիստոսի յայտնուիլը Աստուծմէ է եւ Աստուծոյ պարգեւն է: Բոյսին կամաց կամաց աճիլը կը ներկայացնէ անձին գիտակցութեան մակարդակին կամաց կամաց բարձրացումը: Երբ անձը հաւատքով, յարատելութեամբ եւ համբերութեամբ ընթանայ կատարելութեան ուղիէն եւ լրիւ ձերբազատուի իր «Ես»-էն ու յաջողի նաեւ ձերբազատուիլ բոլոր աշխարհիկ ցանկութիւններէն, յարումներէն եւ մահացու մեղքերէն, կը հասնի ուղիին վերջաւորութեան: Աս ալ նկարագրուած է «լեցուն ցորենը հասկին մէջ»-ով: Իսկ հունձքն ալ անձին փրկութիւնն է:

ԽԱՌՈՐԻՆ ԱՊԱՎԵՐ



«Եյլ առաւ խօսեցաւ ընդ նոսա՝ էւ առէ-
Նմա՛ն է արեւոյտ-Երեւն էրկնից խմորոյ. զոր
առեալ կնոջ Բաղճոյց ՚ի Դրեաւ Երեւ ալեւ՝
մինչէւ ամենայն խմորեցաւ» : (Մատթէոս ԺԳ:33)
«Ուրիշ առակ մըն ալ ըսաւ անոնց. «Երկինքի
Թագաւորութիւնը նման է խմորին, որ կին մը առաւ ու
պահեց երեք գրիւ ալիւրի մէջ՝ մինչեւ որ ամբողջը
խմորուեցաւ»:

Տէ՛ս նաեւ՝ Դաւիթ ԺԳ:20-21

Այս առակին մէջ Յիսուս ալիւրը փոխաբերաբար
կը գործածէ ներկայացնելու համար անհատը, իսկ
խմորն ալ Քրիստոսի ներկայութիւնը անձին մէջ:
Խմորը եւ ալիւրը մէկ՝ նոյնն են, ինչպէս Աստուած եւ
ստեղծագործութիւնը, որուն մաս կը կազմէ նաեւ
մարդը, մէկ են: Ստեղծագործութիւնը Աստուծոյ մէջ է
եւ Աստուած ալ՝ ստեղծագործութեան: Միթէ չէ՞նք
ըսեր, թէ տիեզերքը Աստուծոյ մարմինը կը ներկայա-
ցընէ: Խմորը իր մէջ թթխմոր կը պարունակէ՝ անհա-
տին գիտակցութիւնը: Միթէ մեր գիտակցութիւնը
Աստուծոյ գիտակցութեան փոքր մի մասնիկը չէ՞:
Ինչպէս խմորին մէջի թթխմորը բոլոր ալիւրը

«Խմորի» կը վերածէ, նմանապէս մեր մէջ ալ, եթէ մեր ներկայ փոքր քանակով գիտակցութիւնը բարձրանայ եւ մեր բոլոր էութիւնը լուսաւորէ, մենք ալ կ'արժանանաք եւ փորձառութիւնը կ'ունենանք Աստուծոյ թագաւորութեան: Ինչպէս թթխմորը կամաց կամաց, ժամանակի ընթացքին, բոլոր ալիւրը «խմորի» կը վերածէ եւ ասոր յաջողութիւնն ալ կախեալ է այդ պահու պայմաններէն՝ մթնոլորտին տաքութեան աստիճանէն: Նմանապէս, անհատին մէջ ալ, իր գիտակցութեան մակարդակին Աստուծոյ թագաւորութեան փորձառութեան անհուն մակարդակին հասնելու համար ալ երկար ժամանակի կը կարօտի եւ կախեալ է անհատին մէջը գտնուած պայմաններէն: Այս պայմաններն ալ կը համապատասխանեն անհատին տենչանքին եւ ինքզինք այդ ուղղութեամբ պատրաստելու համար թափած ջանքին, որպէսզի կատարելութեան ուղիին մէջ ինք յաջողի հասնիլ այդ ուղիին վերջաւորութեան, այսինքն ինք ալ կատարեալ ըլլայ, ինչպէս իր երկնաւոր Հայրը կատարեալ է: Ահա՛, աս է Յիսուսի հաւատար, որպէսզի փրկուինք: Հաւատալը կը նշանակէ Իր ըսածները՝ սորվեցուցածները ընդունիլ եւ զանոնք կիրարկել: Միթէ Յիսուս չըսա՞ւ.

«Լըդ եղերո՛ւք գո՛ւ Կաթարեա՛լէ, որպէս եւ Հայ-

րըն յեր Երկնա-որ Կաթարեա՛լ է»: (Մաթթէոս Ե:48)

«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

«... Լմէն ամէն ասե՛մ թէ որ Հա-աթա՛յն յիս

սգորթ» սոր եւ Գործեմ, եւ նա՛ Գործեացե ե-

մեծամեծ» Է-ս իան սնոյն» Գործեացե . . . »:

(Յովհաննոս ԺԴ:12)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ կը Հաւատայ ինծի, ի՛նք ալ պիտի ընէ այն գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր պիտի ընէ, ...»



-Գ-

ՅԻՍՈՒՄԻ ԱՌԱԿՆԵՐԸ

Մարդո՛ւ ԿԵՆՅԱՂ ԵՒ Ս. Հոգո՛ւ ՀԱՏՈՒԹՈՒՄ



ՄԱՐԴՈՒ ԿԵՆՃԱՂ ԵՒ Ս. ՀՈԳԻ ՀԱՏՈՒՅՈՒՄ

Այս գլուխին մէջ ներկայացուած են բոլոր մնացեալ առակները, որոնք ընդհանուր առմամբ կը ներկայացնեն մարդուն իր կեանքին մէջ բռնած ընթացքը՝ իր կենցաղը: Առակներուն նպատակը, կատարելութեան ուղիին համապատասխան կենցաղ մը կերտելու անհրաժեշտութիւնը մատնանշել է: Առակներուն մէկ մասը ցոյց կու տան կատարելութեան ուղին: Ուրիշներն ալ մարդուն իր ազատ կամքով զատած եւ ապրած կենցաղին յառաջ բերած բաղձալի եւ անբաղձալի պատահարները կը նկարագրեն: Մարդ արարած այս լաւ ու վատ պատահարներուն կ'ենթարկուի, որովհետեւ անոնք իր բռնած ընթացքին հետեւանք Ս. Հոգիէն յառաջ եկած հատուցումներն են: Բոլոր ստեղծագործութիւնը Ս. Հոգիի զօրութեամբ յառաջ եկած է: Հետեւաբար մարդ իր կեանքի ընթացքին ինչ որ կ'ընէ, Ս. Հոգիին է որ կ'ընէ: Յիսուս ըսած է, թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքը աններելի է: Ասոր իմաստը այն է, որ մարդ իր ըրածին պատասխանատուն է եւ իր վատ կենցաղին պատիժը արդէն ինք սահմանած է: Ոչ թէ Աստուած մեզի կը պատժէ, այլ մենք մեր կենցաղով կը կերտենք մեր ճակատագիրը: Աստուած սէր է եւ ոեւէ մէկը չի պատժեր: Նոյնիսկ Յիսուս Քրիստոս իր ողորմածութեամբ ուրիշներու Ս. Հոգիի դէմ գործած մեղքերը ինք իր վրայ առաւ: Կենցաղ մը, որ կը հետապնդէ կատարելութեան ուղին, կը կերտէ ճակատագիր մը, որ անձը միշտ հաճելի եւ լաւ պատահարներու կ'ենթարկէ: Իսկ վատ կենցաղ մըն ալ կը կերտէ ճակատագիր մը, որ անհատին կեանքին մէջ միշտ վատ պատահարներու պատճառ կ'ըլլայ: Հետեւաբար պէտք չէ ոեւէ մէկը մեղադրել մեզի պատահած որեւէ վատ պատահարի համար: Որոշ առակներ ալ կը ներկայացնեն մահացու մեղքերը:

ԵՐԿՈՒ ՏՈՒՄ ՀԻՆՈՂՆԵՐՈՒՄ ԱՌԱԿԸ



«Ըմենայն որ լսէ պէանս իմ պայտօսիկ՝ եւ առնէ
պտօսս. նմանեացէ ա՛ռն իմաստնոյ, որ շինեաց
պրոտն իւր ՚ի վերայ վիմի: Իջին անցրեւի՝ եւ
խաղացին Գեդի, շնչեցին Հողմի՝ եւ Բախեցին
պրոտնն, եւ ո՛չ կոր- ծանեցաւ, քանչև ՚ի վերայ
վիմի՝ Հասարար- եալ էր: Եւ ամենայն որ լսէ
պէանս իմ պայտօսիկ՝ եւ ո՛չ առնէ պտօսս,
նմանեացէ ա՛ռն յիմարի, որ շինեաց պրոտն իւր
՚ի վերայ աւաղոյ: Իջին անցրեւի՝ յարեան
Գեդի, շնչեցին Հողմի՝ Հարին պրոտնն, եւ
անկա՛ւ, եւ էր կործանութիւն նորա մեծ յոյժ»:

(Մարիւն Է: 24-27)

«Ուրեմն ո՛վ որ կը լսէ այս խօսքերս եւ գործադրէ
գանոյք՝ պիտի նմանցնեմ գայն ուշիմ մարդու մը՝ որ
իր տունը կառուցանեց վիմի վրայ: Տեղատարափ
անձրեւ իջաւ՝ հեղեղները եկան՝ հովերը փչեցին ու
զարկին այդ տան՝ բայց չփլաւ՝ որովհետեւ հիմնուած
էր վիմի վրայ: Իսկ ո՛վ որ կը լսէ այս խօսքերս ու չի
գործադրելը՝ կը նմանի յիմար մարդու մը՝ որ իր տունը

կառուցանեց աւագի վրայ: Տեղատարափ անձրեւ իջաւ՝
հեղեղները եկան՝ հովերը փչեցին եւ զարկին այդ տան՝
ու փլաւ. եւ անոր անկումը մեծ եղաւ»:

Տէս նաեւ Ղաւկաս Զ: 46-49

Յիսուս այս առակով մեզի կը սորվեցնէ այն
իրողութիւնը, թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը
աններելի են: Անհատը պարտ է իր կենցաղին կերտած
ճակատագրին յառաջ բերած բոլոր կեանքի պատա-
հարները ընդունիլ: Բոլոր անոնք, որոնք Յիսուսի սոր-
վեցուցածները կ'ընդունին եւ կը գործադրեն, կը կի-
րարկեն իրենց կեանքին մէջ, կը նմանին այն անձին, որ
իր տունը կը շինէ վէմի վրայ: Երբ կեանքի փոթորիկ-
ները՝ խորհուրդներու, զգացումներու, յուզումներու
եւ ցանկութիւններու փոթորիկները կու գան, ինք Աս-
տուծոյ վրայ ունեցած իր հաւատքով բոլորին կը
դիմադրէ: Կը հանդուրժէ առանց վարանումի եւ իր
անդորրութիւնը կը պահէ: Կը մնայ հաստատ իր հաւատ-
քին մէջ: Ինք տեղի չի տար, որ այդ «փոթորիկները»
պատճառ ըլլան որ ինք չեղի կատարելութեան ուղիէն
եւ գործէ Աստուծոյ կամքին հակառակ: Իսկ անոնք,
որոնք Յիսուսի սորվեցուցածներուն չեն հաւատար, կամ
նոյնիսկ եթէ հաւատան, չեն գործադրեր եւ կատարելու-
թեան ուղին իրենց կեանքին մաս չի կազմեր, կը նմա-
նին այն անձին որ իր տունը աւագի վրայ կը շինէ: Երբ
«փոթորիկները» կու գան, անոնք չեն կրնար դիմադրել
եւ տեղի կու տան: Կը գործեն ըստ իրենց «Ես»-ին՝ այն
ինչ որ կը կարծեն թէ իրենց շահաբեր է: Հետեւաբար
իրենք ալ փոթորիկներուն յառաջ բերած աւերներուն
կ'ենթարկուին, որոնց կը յաջորդէ յուսահատութիւն,
ցաւ, վիշտ, հիւանդութիւն, անհամաձայնութիւններ,
նիւթական եւ ֆիզիքական կորուստներ եւ տառապանք:
Աւերները եւ տառապանքներն ալ, անոնց կենցաղին հա-
մապատասխան Ս. Հոգիի հատուցումները կը ներկայա-
ցընեն: Անձին վէմը իր ներքին Քրիստոսն է:

Յիսուս այս առակը պատմելէ առաջ հետեւեալ խօսքը ըսած էր.

«Զի՞նչ կ'ընէ՞ս զիս՝ Տէր՝ Տէր, եւ զոր ասեմն ո՛չ

ասեմէ՞ս»։ (Լուկաս Զ:46)

«Ինչո՞ւ Տէր՝ Տէր կը կոչէք զիս՝ բայց չէք գործադրեր ինչ որ կ'ըսեմ»։

Որով կատարելութեան ուղին Յիսուսի սորվեցուցածն էր կատարելն է։ Հին կտակարանին մէջ ալ գրուած է.

«Իմաստութեամբ շինի ցորն, եւ հանճարով

կանգնի»։ (Լուկաս ԻԴ:3)

«Տունը իմաստութեամբ կը կառուցանուի, ու հանճարով կը հաստատուի»։

Հետեւաբար հաստատ տունը իմաստութեամբ վէմի վրայ կարուցուածն է։ Վերեւ յիշեցինք, թէ անձին հաստատ վէմը Քրիստոսն է։ Այս հիման վրայ անձին բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան իմաստութեամբ՝ ըստ Աստուծոյ կամքին, իր կենցաղն ալ կը մնայ հաստատ՝ կատարելութեան ուղիին մէջ։ Անձին իմաստութիւնը եւ հանճարն ալ իրեն կը տրուի Քրիստոսէ, որ կը յայտնուի անձին մէջ։ Քրիստոս իր խօսքով բացայայտօրէն շեշտած է այս իրողութիւնը։

«Որ ունի զպատգոս-իբանս իմ՝ եւ պաշտէ զնոսս

նա՛ւ որ սիրէ զիս։ Եւ որ սիրէն զիս սիրեացի

ի հօրէ իմմէ եւ ես սիրեցի՛ց զնա, եւ

երէւեցոցի՛ց նմա զիս»։ «... եւ աս նա՛

եկեացո՛ւ է յիշեալնա՛ն աս նմա արասցո՛ւ»։

(Յովհաննոս ԺԴ:21,23)

«Ա՛ն որ ունի իմ պատուիրաններս եւ կը պահէ զանոնք՝ անիկա՛ է զիս սիրողը։ Ա՛ն որ կը սիրէ զիս՝ պիտի սիրուի իմ Հօրմէս. ու ես պիտի սիրեմ զայն՝ եւ զիս պիտի յայտնեմ անոր»։ «... եւ պիտի գանք անոր ու բնակինք անոր հետ»։

ՈՐՈՄԻԱ ԱՌԱԿԸ



ՅՈՐԵՆ



ՈՐՈՄ

«Ը՛յլ առաւ արեւ առ նոսա՝ եւ ասէ:
Նմանեցաւ արեւոյութիւնն երկնից՝ առն, որ
սերմանիցէ սէ՛րմն թարի յագարակի իրօում:
Եւ ՚ի ինն լինել մարդկան, եկն թշնամի
նորա. եւ ցանեաց ՚ի վերայ որոմն ՚ի մեջ
ցորենոյն՝ եւ գնա՛ց: Եւ իբրեւ թոսաւ
խորն եւ արար պարու, ապա երեւեցա՛ւ
եւ որոմն: Մարտացեալ ծառայէ ցանոս-
րեառնն ասէն ցնա. Տէ՛ր՝ ո՞չ սերմն թարի
սերմանեցեր յագարակին ինձ, արդ՝ ոս-
րի՞ ունիցի զորոմն: Եւ նա ասէ զնոսա.
Ը՛յր թշնամի արար զայն: Ըսէն ծառայէն.
Ամա՛րն՝ զի երթիցո՛ւ ի աշխարհո՛ւ զայն ՚ի
թաց: Եւ նա ասէ ցնոսա. Մի՛. գոցե՛
մինչ ինձ զիցէ զորոմնն, եւ զցորեա՛նն

ընդ նմին 'ի Բայ խլիցէ՛: Թո՛յլ Կոռէ
Երկոցոռնոց աճել 'ի միասին մինչեւ 'ի
Հոռնոյն, եւ 'ի Ժամանակի Հնոցոց ասացի՛ց
ցՀնոյն. Բաղեցէ՛ ձախ զորոմնոց, եւ
կացեցէ՛ զայոց խոշոռնա աս 'ի յայրել. եւ
զցորեանն Ժողովեցէ՛ 'ի շրեմարանն իմ՝ :
(Մարգէնոս ԺԳ: 24-30)

«Ուրիշ առակ մըն ալ առաջարկեց անոնց ու ըսաւ.
«Երկիրքի Թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ
իր արտին մէջ լաւ սերմ ցանեց: Մինչ մարդիկ կը
քնանային՝ իր Թշնամին եկաւ, որոմ ցանեց ցորենին մէջ
եւ գնաց: Երբ խոտը ծաղկեցաւ ու պտուղ բերաւ, այն
ատեն որոմն ալ երեւցաւ: Ուստի Հողատիրոջ ծառաները
մօտեցան եւ ըսին անոր. Տէ՛ր, դուն լաւ սերմ չցանեցի՞ր
արտիդ մէջ. ուրեմն որոմը ուրկէ՞ է: Ան ալ ըսաւ
անոնց. Թշնամի մը ըրած է ամիկա: Ծառաները ըսին
իրեն. Ուստի կ'ուզե՞ս որ երթանք ու քաղենք զանոնք:
Իսկ ան ըսաւ. Ո՛չ, որպէսզի երբ որոմը քաղէք՝ ցորենն
ալ չվրցնէք անոր հետ: Թո՛յլ տուէք որ երկուքն ալ
միասին աճին՝ մինչեւ Հունձքի ատենը: Եւ Հունձքի
ատենը պիտի ըսեմ Հնձողներուն. Նախ որո՞մը քաղեցէք
ու խուրձ-խուրձ կապեցէ՛ք՝ այրելու համար՝ իսկ ցորենը
ժողվեցէ՛ք իմ ամբարս»»:

«Յայնժամ Թողեալ Յիսոսս զԺողովոռորդան՝
է՛կն 'ի Կոռն. մասրեան աս նա աշակերտի՛ն՝
եւ ասէն, մէկնեա՛ մեզ զառակ որոմանոցն
աճարակի: Նա ապրասխանի ետ՝ եւ ասէ զնոռ
աս. որ սերմանէ սերմն Բարի՝ Ե որո՛ր՝ մարդոյ:
Եւ աճարակն աշխա՛րհա է: Սերմըն
Բարի՝ նո՛րա էն, որ որո՛րի՛ն արեւոյոռնեան
էն. իսկ որոմնն որո՛րի՛ն շարին էն: Եւ

Դժնամին որ վարեաց պայն՝ սաքանայ է՛: Եւ
Հոռնչէն կարարա՛ծ աշխարհիս է, եւ Հնչող-
էլն՝ Հրեշտա՛կէ են: Որպէս ժողովի որոմնն՝
եւ ՚ի Հոռ աջրի, ա՛յնպէս եղիցի ՚ի կարարա-
ծի աշխարհիս: Լուսիւնացե որդի մարդոյ
վհրեշտակս իւր, եւ ժողովեացեն յարէայոս-
միւնն չորս պամենայն Գայթադոռ-Դիւնս՝ եւ
պայնոսիկ ոյ՛լ Գործէ՛ն պանօրէնոռ-Դիւնն: Եւ
արեցեն պնոսս ՚ի Հնոց Հրո՛յ. ա՛նդ եղիցի
լաւ՝ եւ կրճել ասրամանց: Յայնժամ արդար-
էն Ժադեացին իբրեւ պարեգան յարգայոս-
միւնն երկնից: Որ ոռնիցի ահանջս լսելոյ՝
լորեցէ՛ »: (Մարմէոս ԺԳ:36-43)

«Այն ատեն Յիսուս արձակեց բազմութիւնը, ու տուն
գնաց: Իր աշակերտները մօտեցան իրեն եւ ըսին.
«Բացատրէ՛ մեզի արտին որոմներուն առակը»: Ինք ալ
պատասխանեց անոնց. «Լաւ սերմը ցանողը՝ մարդու
որդին է, արտը՝ աշխարհն է: Լաւ սերմը թագաւորու-
թեան որդիներն են, բայց որոմը չարին որդիներն են:
Թշնամին որ ցանեց գայն՝ Չարախօսն է, Հոռնձքը՝
աշխարհի վախճանն է՝ եւ Հնձողները՝ Հրեշտակներն են:
Ուրեմն ի՛նչպէս որ որոմը կը քաղուի ու կ'այրուի
կրակի մէջ՝ ա՛յնպէս պիտի ըլլայ այս աշխարհի
վախճանին: Մարդու Որդին պիտի գրկէ իր Հրեշտակ-
ները, եւ պիտի հաւաքեն իր թագաւորութենէն բոլոր
գալթակղութիւններն ու անօրէնութիւն գործողները, եւ
պիտի նստեն գանոնք կրակի Հնոցին մէջ. Հոռն պիտի
ըլլայ լաց ու ակուսներու կրճատմ: Այն ատեն արդար-
ները պիտի փայլին արեւի պէս՝ իրենց Հօր թագաւորու-
թեան մէջ: Ա՛ն որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

**Վերեւ տեղադրուած առաջին մէջբերումը առակն
է, իսկ երկրորդը՝ Յիսուսին տուած մեկնաբանութիւնը:
Յիսուսի տուած բացատրութիւնը չատ պարզ է եւ բա-**

ցալայտ: Կը թուի թէ որեւէ յաւելեալ մեկնաբանութեան չի կարօտիր: Բայց Յիսուս, նոյնիսկ իր տուած մեկնաբանութիւններուն մէջ, յաճախ թաղնուած տեղեկութիւններ կու տար: Երբ Յիսուս կ'ըսէ. «Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ՛», ըսել կ'ուզէ թէ ան որ հասկնալու կարողութիւնը ունի թող հասկնայ: Հետեւաբար իր այս խօսքը ականարկութիւն մըն է, որ նոյնիսկ իր տուած բացատրութեան մէջ ալ թաղնուած տեղեկութիւն մը կայ: Ըստ վերեւի տեղեկութեան աշխարհի վախճանին Աստուծոյ թաղաւորութիւնը պիտի գայ: Բայց այլուր Յիսուս ըսած է, թէ Աստուծոյ թաղաւորութիւնը արդէն եկած է: Հետեւաբար պարտ ենք հետեւցընել թէ Յիսուս նոյնիսկ իր բացատրական խօսքերով թաղուն տեղեկութիւն մըն է որ կու տար:

Յիսուս կ'ըսէ. «Լաւ սերմը ցանողը՝ մարդու որդին է»: «Մարդու որդին», մարդու միջոցաւ աշխարհի վրայ Քրիստոսին յայտնութիւնն է: Միթէ Յիսուսի համար չե՞նք ըսեր «Մարդու Որդի»: Ամէն անձի ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է: Միթէ բոլոր ստեղծագործութիւնը Աստուծոյ մարմինը չի՞ ներկայացներ եւ ամէն անհատ ալ Աստուծոյ մարմնին մէջ «բջիջ» մը չի՞ ներկայացներ: Իսկ «Լաւ սերմը թաղաւորութեան որդիներն են»: Թաղաւորութեան որդիները անոնք են, որ կ'ընթանան կատարելութեան ուղիէն, ոչ թէ միայն կը կարդան կամ կ'իմանան Յիսուս Քրիստոսի սորվեցուցածները, այլ նաեւ զանոնք կը գործադրեն: Անոնք կը գործեն ըստ իրենց ներքին լուռ ձայնին, որ կը ներկայացնէ Քրիստոսի՝ Աստուծոյ կամքը: Հետեւաբար լաւ սերմն ալ Քրիստոսի այդ լուռ ձայնը իմացող եւ մտիկ ընողները կ'ըլլան: Առակը կը շարունակէ. «Մինչ մարդիկ կը քնանային՝ իր թշնամին եկաւ, որոմ ցանեց»: «Մարդիկ կը քնանային»-ը ականարկութիւն մըն է մարդուն խաւարամտութեան: Խաւարամիտ

մարդը իր ցած գիտակցութեան մակարդակով անկարող է ճշմարտութիւնը պատրանքէն՝ սուտէն զանազանել, հետեւաբար դիւրութեամբ «թշնամին», (իսկ բացատրութեան մէջ Յիսուս զայն կոչած է «չարախօսը») ցորենին մէջ կը ցանէ որոմը: Չարախօսը սատանան կը ներկայացնէ: Երբ Յիսուս քառասուն օր անապատին մէջ մեկուսացաւ, սատանայէն փորձուեցաւ, այսինքն իր «Շա»-էն փորձուեցաւ: Երբ ինք իր «Շա»-ին յաղթեց, սատանային՝ չարախօսին էր որ յաղթեց: Աւետարանին մէջ գրուած է.

«Լաա եթող զնա սաքանայ. եւ աւա՛
Հրէշորակէ՛ մաթեան եւ պաշտէին զնա»: (Մաթեւ Դ:11)

«Այն ատեն Չարախօսը թողուց զայն, եւ Հրէշտակները մօտեցան ու սպարկեցին անոր»:

«Եւ կադարեալ զամենայն փորձութիւնս
սաքանայի, ՚ի Բա՛յ եկաց ՚ի նմանէ առ խամանակ
մի»: (Դաւիթ Դ:13)

«Երբ Չարախօսը լմնցուց ամբողջ փորձութիւնը, ատեն մը Հեռացաւ անկէ»:

Հետեւաբար այս առակին մէջն ալ «չարախօսը»՝ անձին «Շա»-ը, որոմ կը ցանէ, այսինքն անհատին վնասակար յորդորները կու տայ: Մարդն ալ, իր խաւարամտութեան հետեւանք, այդ յորդորները կ'արդարացնէ, օգտագործելով իր իմացականութիւնը: Յատկանշականը այն է, թէ նախ «լաւ խոտը»՝ ցորենը կը ցանուի եւ յետոյ «չար խոտը»՝ որոմը: Մարդ կը ծնի եւ որովհետեւ իր ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է, հետեւաբար ինք աշխարհ կու գայ իբր «լաւ՝ բարի խոտ»: Երկու տարեկանէն վերջ է, որ ինք կը գիտակցի իր «Շա»-ին գոյութեան, հետեւաբար «չար հոնտը» աւելի վերջ կը ցանուի: Որոմը խոտ մըն է, որ թունաւոր է եւ երբ ուտուի, ջղային դրութեան վրայ կ'ազդէ եւ պատճառ

կ'ըլլայ, որ անձը չկարենայ խօսիլ ու տեսնել: Հետաքրքրական է նաեւ այս առակին մէջ Յիսուսին իբր վատ խոտ «որոմ»-ը օգտագործելը: Երբ անհատը իր կենցաղը կ'ապրի ըստ իր «Ես»-ին կամքին, իր բոլոր խօսքերն ալ կ'ըլլան «թունաւոր» եւ ոչ Աստուածահաճոյ: Իր տեսողութիւնն ալ նմանապէս կ'ըլլայ խանգարուած եւ չի կրնար ճշմարտութիւնը սուտէն, բարին չարէն եւ Աստուածայինը սատանայականէն զանազանել: Երբ Յիսուս կ'ըսէ. «հունձքը՝ աշխարհի վախճանն է», ընդհանրապէս կը կարծենք աշխարհի վերջը՝ երկրագունդին փճացումը, իսկ շատ հաւանական է, որ աշխարհի վերջը ներկայացնէ անհատին ֆիզիքական մահը: Միթէ անհատին մահով աշխարհ իրեն համար վերջ չի գտներ: Յիսուս յաճախ նման նախադասութիւններ կը գործածէր: Հետեւեալ մէջբերումը «Լոյս ի Լուսոյ (Ա)» գիրքին «Ի՞նչ է աստղագիտութիւնը» խորագրեալ Ը. գլուխէն առնուած է.

«Խոյ»-ի դարաշրջանը վերջացաւ «Գառն Աստուծոյ»-ի խաչելութեամբ ու համբարձումով եւ սկսաւ «Զկներ»-ի դարաշրջանը: Յիսուս աշակերտներուն ըսած էր, թէ իրենց հետ պիտի ըլլար միայն մինչեւ իրենց գտնուած դարաշրջանի վերջը:

«...Եւ ամենայն օր ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհի:» (Մատթէոս ԻԸ: 20)

«Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհիս վերջը: Ամէն:»

Աւետարանի անգլերէն լեզուով նոր թարգմանութիւնները գործածած են «age» բառը քան թէ «world» բառը: Ուրեմն «աշխարհի վերջը» կը նշանակէ «դարաշրջանին վերջը»: Պօղոս անգամ կ'ակնարկէ դարաշրջանի (Խոյի

դարաշրջանի) վերջաւորութեան մասին:
Կարդանք:

«Ըյլ այն ամենայն օրինակաւ անցանէր ընդ
նոսա. Բայց Գրէցաւ զսան մէրոյ խրատոս, յոյս
զխիճան յաւիտեանցն Եւաս:» (Ը Կորնթացիս Ժ: Ի)

«Բայց այս ամէն բաները իբրեւ օրինակ կը պատահէին
անոնց. իսկ մեզի՝ քանի որ դարերուն վերջը Հասաւ՝
խրատ ըլլալու համար գրուեցան:»

Նմանապէս երբ Յիսուս կ'ըսէ աշխարհի վերջը, Իր
ականարկութիւնը անհատին մահուան օրուան համար է
եւ ոչ թէ երկրագունդին փճացումը: Անտարակոյս օր
պիտի գայ որ երկրագունդն ալ պիտի փճանայ: Ամէն
ինչ որ ստեղծուած է, վախճան մը ունի: Բուն առակին
մէջ հողատիրոջ ծառաները կ'առաջարկեն որոմը քաղ-
ել, բայց ան չ'արտօներ, որպէսզի ցորենն ալ որոմին
հետ չփրցուի: «Հողատէր»-ը Աստուած է: Աստուած
միշտ մարդուն առիթ կու տայ, որ ան ապաշխարէ:
Հետեւաբար մարդ միշտ կարելիութիւնը ունի մինչեւ
իր մահուան օրը ապաշխարելու: Միթէ Աստուած
չ'ա'րտօներ որ մենք ալ մեր լաւ ու վատ կենցաղով
գոյատեւենք մինչեւ մեր վախճանը: «Որոմ»-ին
վախճանը չարչարանք եւ մահ է: «Կրակի հոռոց»-ը մահը
կը ներկայացնէ, եւ մարմնին մահուան հետ անհատին
անհատականութիւնն ալ կը մեռնի: Իսկ «լաց ու
ակռաներու կրճտում»-ն ալ չարչարանքն է: Մարդուն
հոգին Աստուծոյ մի մասնիկն է եւ չի մեռնիր:
Չարչարանքը անհատին իր կեանքի ընթացքին կեր-
տած ճակատագրին արդիւնքն է: Իր Ս. Հոգիի դէմ գոր-
ծած մեղքերուն արդիւնքն է: Ս. Հոգիի դէմ եղած մեղ-
քերը աններելի են: Այս մեղքերուն հատուցումը,
հոգիին յաջորդ վերամարմնացման, այդ մեղքերուն
յառաջ բերած ճակատագրական վատ պատահարներու
տուած չարչարանքներն են:

ՈՌԿԱՆԻ ԱՌԱՎԵՐ




«Դարչեալ՝ նման է արեայութիւն երկնից ու-
կանի՝ արեւելոյ՝ ի Ժող՝ եւ յամենայն աշտաց ժո-
ղովելոյ: Զոր՝ իբրեւ լցաւ, Հանեալ ՚ի ցամախ՝
եւ նսրեալ ժողովեցին պարի քարին յամանս,
եւ պտրպանն ՚ի քաջ ընկեցին: Մ'յնպէս եղիցի ՚ի
կարարածի աշխարհիս, ելցեն Հրեշտակ՝ եւ
մեկնեացեն՝ պշարս ՚ի միջոյ արդարոց, եւ արկցեն
պնոսս ՚ի Հնոց Հրոյն. անդ եղիցի լա՛ւ եւ
կրճել աքամանց»: (Մատթէոս ԺԳ: 47-5)

«Դարձեալ՝ երկինքի թագաւորութիւնը նման է ծովը
նետուած ուռկանի մը, որ ամէն տեսակ ձուկ կը
ժողվէ: Երբ ուռկանը լեցուեցաւ, Հանեցին ծովեզերքը
եւ նստան, Հաւաքեցին լաւերը ամաններու մէջ, իսկ
դուրս նետեցին վատերը: Ա՛յսպէս պիտի ըլլայ աշխարհի
վախճանին: Հրեշտակները պիտի ելլեն, արդարներուն

մէջէն պիտի գատեն չարերը, ու պիտի նետեն զանոնք
կրակի հնոցին մէջ. հոն պիտի ըլլայ լաց եւ
ակռաներու կրճատում»:

Այս առակին մեկնաբանութիւնն ալ նման է
նախորդին: Ծով նետուած ուռկանը կը ներկայացնէ
բոլոր ստեղծագործութիւնը՝ համայն մարդկութիւնը:
Միթէ բոլոր ստեղծագործութիւնը Աստուծոյ թագաւոր-
ութիւնը չէ՞: Միթէ Յիսուս չըսա՞ւ, թէ Աստուծոյ
թագաւորութիւնը ամէն անհատի սրտին մէջ է: Ըստ
Յիսուսի այս առակին, Աստուծոյ թագաւորութիւնը
նման է «ծովը նետուած ուռկանի մը, որ ամէն տեսակ
ձուկ կը ժողվէ»: Այս հիման վրայ պէտք է հասկնանք
թէ Աստուծոյ թագաւորութեան մէջ կան թէ՛ լաւ եւ թէ՛
վատ «ձուկեր»՝ «մարդիկ»: Ինչպէս նախորդ առակին
մէջ հնձողները զատեցին ցորենը որոմէն, այս առակին
մէջ ալ ձկնորսները կը զատեն լաւ ձուկերը վատերէն:
Ըստ նախորդ առակին Յիսուսի բացատրութեան,
հնձողները եւ այս առակին մէջի ձկնորսները դարձեալ
Աստուծոյ «հրեշտակներն» են: Այս առակին մէջ ալ
դարձեալ շեշտուած է չարերուն վախճանը՝ չարչարան-
քը եւ մահը: Մահը իրենց անհատականութեան մահն է:
Մարդ ընդհանրապէս կը կարծէ թէ մահունէ վերջ ինք
«երկինք» պիտի երթայ եւ յաւիտեան հաճելի կեանք
մը պիտի ապրի: Ըստ Յիսուսի սորվեցուցածին, միայն
անոնք, որոնք իրեն նման կը յաջողին իրենց «Ես»-ը
խաչին վրայ վերջնականապէս անհետացնել՝ մեռցնել,
իրենց մարմնին մահնէն վերջ կ'արժանանան իրենց ան-
հատականութեան յարութեան: Հոգին անմահ է եւ Աս-
տուծոյ մէկ մասնիկն է: Հոգին, ըստ Աստուծոյ կամքին,
կը վերամարմնանայ եւ որովհետեւ նախկին կեանքէն
իր մէջ տեղեկութիւն կը պարունակէ, որով ճակատա-
գիր մը ունի, անձն ալ կ'ենթարկուի այդ ճակատագրին՝
լաւ ու վատ պատահարներուն: Վատ ճակատագիրը կը
չարչարէ, իսկ լաւն ալ կը վարձատրէ:

ՉԻՐՈՂ ԾԱՌԱՅԻՆ ԱՌԱՎ



«Վասն այսորիկ նմանեցա՛ւ արվայոթիւնն
երկնից ա՛ռն թագաւորի, որ կամեցաւ Հա-
մար առնել 'ի մէջ թառայից իւրոց: Եւ
իբրեւ սկսաւ առնուլ, մաքոցաւ առ նա
պարգապան մի թե՛ւր խնկարոյ: Իբրեւ ո՛չ
ոռնէր Հաքոցանել, Հրամայեաց՝ զնա վա-
ճաւե՛լ յերն նորա, եւ զկնն նորա, եւ
զորդիս, եւ զամենայն որ զինչ եւ ոռնիցի՝
եւ Հաքոցանե՛լ: Եւ անկեալ թառայն եր-
կն՛ր պագանէր նմա՛ եւ ասէր. Երկայնա-
մի՛ց լեր առ իս, եւ զամենայն Հաքոցից
վեպ: Պիտացեալ Տէր թառային այնորիկ՝
արշակեա՛ց զնա, եւ զիոխն եթո՛ղ նմա: Եւ
ելեալ թառայն՝ եգիպտոս զմի՛ 'ի թառայակցաց
իւրոց, որ պարգ էր նմա Հարեւր դաճե-
կան. եւ կալեալ զնա՛ խեղդե՛ր եւ ասէր.

Հասրո՛ ինչ զոր պարտիս: Երդ անկեալ ժա-
ռայակցին՝ առ որս նորա, աղաշե՛ր պնա՛
եւ ասէր. Երկայնամե՛ր լեր առ իս՝ եւ Ըս-
րոցե՛ր լէպ: Եւ նա ո՛չ կամէր. այլ շո-
գաւ արկ պնա՛ ՚ի Բանի՛ մինչեւ Ըսրոսացե՛
զպարտսն: Իբրեւ Գեաին ժառայակցե՛ն
նորա որ ինչ եղէն՝ Գրգմէցա՛ն յոյժ, եւ
եկեալ ցոցին Գեաուն իւրեանց պամենայն
որ ինչ եղէն: Յայնժամ կոշեաց պնա Գերն
իւր եւ ասէ. Օսոսա՛յ շար, պամենայն զպար-
տսն Խոզե՛ լէպ՝ վասն զի աղաշեցեր պիս:
Իսկ արդ՝ ո՛չ էր պա՛րտ եւ լէպ՝ ողորմե՛լ
ժառայակցին ինձ, որպէս եւ Էս լէ՛պ
ողորմեցայ: Եւ Բարկացեալ Տէրն նորա՛
մարնեաց պնա Դաւճաց, մինչեւ Ըսրոս-
ցե՛ պամենայն զպարտսն: Սոյնպէս եւ Ըսր
իմ որ՝ յերկինս ե՛ արասցե յէպ, եթե ո՛չ
Խոզոցո՛ւ իւրաւանշե՛ր եղբօր իւրոմ՝ ՚ի
որցե՛ր յերոց պանցանս նոցա»:

(Մարգէնս ԺԲ: 23-35)


«Ուստի երկինքի թագաւորութիւնը կը նմանի
թագաւորի մը, որ ուզեց հաշիւ առնել իր ծառաներէն:
Երբ սկսաւ հաշիւ առնել, տասը հազար տաղանդի
պարտապան մը բերուեցաւ իրեն: Բայց ան վճարելու
կարողութիւն չունենալով՝ անոր տէրը հրամայեց, որ ան
ծախուի, նաեւ անոր կիներն ու զաւակները եւ անոր
ամբողջ ունեցածը՝ ու պարտքը վճարուի: Իսկ ծառան

իյնալով՝ երկրպագեց անոր եւ ըսաւ. Տէ՛ր, Համբերատա՛ր եղիր ինծի Հանդէպ, ու ամէ՛նը պիտի վճարեմ քեզի: Ծառային տէրը՝ գլթալով՝ արձակեց զայն, եւ ներեց անոր պարտքը: Նոյն ծառան գնաց, գտաւ իր ծառայակիցներէն մէկը՝ որ Հարիւր դահեկան կը պարտէր իրեն, ու բռնելով զայն՝ կը խեղդէր եւ կ'ըսէր. Վճարէ՛ ինծի ունեցած պարտքդ: Ուստի իր ծառայակիցը ինկաւ անոր ոտքը, կ'աղաչէր անոր ու կ'ըսէր. Համբերատա՛ր եղիր ինծի՝ եւ պիտի վճարեմ քեզի: Բայց ինք չէր ուզեր. Հապա գնաց ու բանոր նետել տուաւ զայն՝ մինչեւ որ վճարէր պարտքը: Երբ իր ծառայակիցները տեսան ինչ որ պատահեցաւ՝ շատ տրամեցան, ու եկան եւ պատմեցին իրենց տիրոջ ամբողջ պատահածը: Այն ատեն անոր տէրը կանչեց զայն ու ըսաւ. Զա՛ր ծառայ, այդ ամբողջ պարտքը ներեցի քեզի՝ քանի որ աղաչեցիր ինծի. ուրեմն պէտք չէ՞ր որ դո՛ւն ալ ողորմէիր ծառայակիցիդ, ինչպէս ես ողորմեցայ քեզի: Եւ անոր տէրը բարկանալով՝ յանձնեց զայն տանջող ներուն՝ մինչեւ որ վճարէր ամբողջ պարտքը: Իմ երկնաւոր Հայրս ալ նոյնպէս պիտի ընէ ձեզի, եթէ ձեզմէ իւրաքանչիւրը իր եղբօր սրտանց չներէ իր յանցանքները»:

Այս առակին մեկնաբանութիւնը շատ պարզ է: Ամէն անձ միշտ «պարտական» է: Կատարեալ կեանք մը հասարակ մարդու համար կը թուի անկարելի ըլլալ: Առակին մէջի «թագաւոր»-ը Աստուած կը ներկայացնէ: Մարդուն ապրած կեանքը Աստուած տուած է որով Աստուծոյ կը պատկանի: Բայց մենք կը կարծենք, թէ մեր կեանքը մերն է եւ մեզի կը պատկանի: Չենք անդրադառնար, թէ այդ կեանքին համար մենք Աստուծոյ պարտական ենք: Այս կեանքը նպատակ մը ունի եւ օր մը Աստուած մեզմէ հաշիւ պիտի պահանջէ: Երբ մեր կեանքը իր բուն նպատակին համար չենք օգտագործած, Աստուծոյ պարտական կ'ըլլանք եւ անկարող իր պահանջած հաշիւը «վճարել»: Աստուած իր ողորմածութեամբ, ոչ թէ վճարման համար յաւելեալ ժամանակ կու տայ, այլ՝ բոլոր «պարտքը» կը ներէ: Աս կը համապատասխանէ Հայր Աստուծոյ դէմ գործուած մեղքին,

որ ներելի է: Բայց, երբ մենք մեր տեսութեան եւ խաւարամտութեան հետեւանք չենք հասկնար, թէ բոլոր ստեղծագործութիւնը միականութիւն մըն է՝ Աստուծոյ արտայայտութիւնը: Կը ստեղծենք պատրանքային երկուութիւն մը եւ կը կարծենք թէ ուրիշներէ անջատ ենք եւ անոնց հետ կապ չունինք: Հետեւաբար տէր կ'ըլլանք եսասիրութեան: Երբ ծառան իր ծառայակիցին իրեն ունեցած պարտքը, որ իրեն թագաւորին ունեցած պարտքին չնչին մէկ մասն էր, չի ներեր եւ ծառայակիցը պատիժի կ'ենթարկէ, ինք իր վախճանը որոշած կ'ըլլայ: Ինչպէս վերեւ գրուած է, բոլոր ստեղծագործութիւնը Աստուծոյ մարմինն է եւ Ս. Հոգիի զօրութեամբ գոյացած է: Հետեւաբար ամէն անձ Ս. Հոգիի զօրութիւնը կը ներկայացնէ: Ստեղծագործութեան մէջ որեւէ բանի՝ բոյսի, անասունի, բնութեան կամ ոեւէ անձի դէմ գործուած վատ արարք մը Ս. Հոգիի դէմ գործուած կ'ըլլայ, որով ներելի չէ: Ծառան, որովհետեւ իր ծառայակիցին չներեց, Ս. Հոգիի դէմ մեղանչեց եւ պատիժի ենթարկուեցաւ: Յիսուս այս առակը Պետրոսի հետեւեալ հարցումին պատասխան տալէ յետոյ պատմեց. «Տէ՛ր, եթէ եղբայրս մեղանչէ ինծի դէմ՝ քանի՞ անգամ ներեմ անոր. մինչեւ եօթը անգամ»: Իսկ Յիսուս կը պատասխանէ. «Քեզի չեմ ըսեր՝ մինչեւ եօթն անգամ, հապա՛ մինչեւ եօթանասուն անգամ եօթը»: Յիսուսի պատասխանին իմաստը շատ բացայայտ է. ամէն անձ պարտ է իր եղբօրը ներել, ամէն անգամ: Իսկ ո՞վ է իր եղբայրը: Քանի որ բոլորս ալ Աստուծոյ մարմինն, նոյն մարմնոյն մէջ մէյմէկ «բջիջներ» ենք, համայն մարդկութիւնն ալ կը համապատասխանէ մեր եղբօրը: Հետեւաբար, պարտ ենք բոլորին հանդէպ միշտ ներողամիտ ըլլալ:

ԱԳՐԻՆ ԲԱՆՈՒՐՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԸ



«Բանսի նման է արեւոյութիւն երկնից ան
դանոցիստան, որ է՛լ ընդ առաւօրս 'ի
վարձո՛ւ ունել մշակս յայգի իւր: Եւ արկ
վարձս մշակացն առնուն դաճեկան, եւ
առաւելեալց զնոսա յայգի իւր: Եւ ելեալ
զերրորդ ժամո՛ւ՝ երես այլս զի կային դա-
դարկէ՛ 'ի Հրապարակս. առէ՛ եւ ցնոսա.
Երթա՛յէ եւ դու՛ի յայգի իմ, եւ որ ինչ
արժան իցէ՛ դա՛ց յէջ: Գնացին եւ նո՛կա:
Եւ դարձեալ՝ ելեալ զվէ՛ց ժամո՛ւ, եւ զինն
ժամո՛ւ՝ արա՛ր այնպէս: Եւ զմեղասաներորդ
ժամո՛ւ ելեալ, եգիպո՛ս ա՛յլս՝ զի կային դա-
դարկէ՛, առէ ցնոսա. Բնդէ՛ր կայէ՛ ասդ զառ-

բըս ցերեկ դադարելի: Լսեն ցնաւ. Զի ո՛չ
ո՞վ կաւաւսն ունի ի վարձոս: Լսէ ցնաւս.
Երբն յիշէ եւ դո՛ւ յայդին, եւ որ ինչ
արժանի է՝ առնուցուի: Եւ իբրեւ երեկոյ
եղեւ ասէ քէր այգոսն ուգաւարապետ իւր.
Առջեան ունեւան եւ քո՛ւր նոցա վարձոս,
սկսեալ ի յերանոցն մինչեւ ցաւաջինան: Իբ-
րեւ եկին որի ունեւաններորդ ժամոսն,
եւ առին մէն մի դաւեկան: Եկեալ եւ
աւաջինի մասարեին թէ աւելի՛ առնու-
ցուն. եւ առին մէն մի դաւեկան եւ նո՛վա:
Իբրեւ առին՝ քրքնջին ուգանդաւանէն՝
եւ ասեին. Թէ դո՛ւս յերինիդ՝ մի՛ ժամ
գործեցին, եւ Լաւարակո՛րդս մէկ արարեր
ուգոս, որ ունեւորութիւնս աւարն թարձալ
եւ ուգաւ: Նա ուգաւանին եւ միոսմ՝ ի
նոցանէ՝ եւ ասէ. Ընկեր՝ չարկէ՛մ ունեւ,
ո՛չ դաւեկանն միոջ ունեւ արկեր ընդ իս:
Ըստ ունեւոր՝ եւ երբ երեւ կամիմ յերանոցս
քա՛լ որպէս ինչ: Երբ չեցէ՞ ինչ իշխանո-
րութիւն յիմաստունեւ ունչ եւ կամիմ. կամ թէ
անն ինչ չա՛ր եւ, ուն եւ ասալս եմ: Ըստ-
պէս եղեցին յերինի աւաջի՛նի, եւ ասա-

**Ջինի՝ յեդինի: Զի բազում են կոշեցեալի՝
էն սակա՛նի են ընդդէմէ: (Մարշէն Ի:Ի-16)**

«Արդարեւ երկիրքի թագաւորութիւնը նման է հողատիր-
ւոջ մը, որ առտուն կանուխ դուրս ելաւ՝ գործաւորներ
վարձելու իր այգիին համար: Երբ համաձայնեցաւ գոր-
ծաւորներուն հետ՝ օրը մէկ դահեկանի, զրկեց գանոնք
իր այգին: Երրորդ ժամուան ատենները դուրս ելլելով՝
տեսաւ ուրիշներ, որոնք անգործ կայնած էին հրապարա-
կը, ու ըսաւ անոնց. «Դո՛ւք ալ գացէք իմ այգիս, եւ
կու տամ ձեզի ինչ որ իրաւացի է»: Անոնք ալ գացին:
Դարձեալ դուրս ելաւ վեցերորդ ժամուան եւ իններորդ
ժամուան ատենները՝ ու նո՛յնը ըրաւ: Տասնմէկերորդ
ժամուան ատենները դուրս ելաւ՝ ուրիշներ՝ գտաւ՝ որոնք
անգործ կայնած էին, եւ անոնց ըսաւ. «Ինչո՞ւ հոս
ամբողջ օրը անգործ կայնած էք»: Ըսին իրեն. «Որով-
հետեւ ո՛չ մէկը վարձեց մեզ»: Ըսաւ անոնց. «Դո՛ւք ալ
գացէք այգիս՝ ու պիտի ստանաք ինչ որ իրաւացի է»: Երբ
իրիկուն եղաւ՝ այգիին տէրը ըսաւ իր տնտեսին.
«Կանչէ՛՛ գործաւորները եւ տո՛ւր անոնց վարձքը՝ վեր-
ջիններէն սկսելով մինչեւ առաջինները»: Երբ եկան
անոնք՝ որ տասնմէկերորդ ժամուան ատենները գացեր
էին, ստացան մէկական դահեկան: Առաջինները գալով՝
կը կարծէին թէ աւելի՛ պիտի ստանան. բայց իրենք ալ
ստացան՝ մէկական դահեկան: Երբ ստացան՝ տրտմեցին
հողատիրոջ դէմ եւ ըսին. «Այդ վերջինները մէկ ժամ
աշխատեցան, բայց գանոնք հաւասար ըրիր մեզի՝ որ
կրեցինք օրուան ծանրութիւնն ու տաքութիւնը»: Ան ալ
պատասխանեց անոնցմէ մէկուն. «Ընկե՛ր, ես չեմ անիրա-
ւեր քեզ. միթէ՞ դուն ինծի հետ չհամաձայնեցա՞ր մէկ դա-
հեկանի. ա՛ն քուկդ եւ գնա՛: Կ՛ուզեմ որ տամ այս վեր-
ջինին՝ քեզի տուածիս չափ. միթէ՞ արտօնուած չէ. ինծի՛
ընել ի՛նչ որ ուզեմ իմ ունեցածիս: Միթէ՞ քու աչքդ
չա՞ր է՝ որ ես բարի եմ»: Այսպէս՝ յետինները պիտի
ըլլան առաջին՝ եւ առաջինները՝ յետին. որովհետեւ
կանչուածները չատ են, բայց ընտրուածները՝ քիչ»:

**Այս առակին տուած դասն ալ կը վերաբերի անհա-
տին կենցաղին, կեանքի պայմաններուն եւ պարտակա-
նութեան: Մէկ դահեկանի վարձատրութիւնը կը ներկա-
յացնէ Աստուծոյ թագաւորութիւնը, իսկ այգին՝ աշ-
խարհը եւ այգիին բանուորները՝ համայն մարդկու-**

Թիւնը: Աստուած կ'որոշէ մարդուն փրկութեան պարգեւը: Մարդ ինք կարող չէ իր ջանքերով զայն ձեռք ձգել: Որպէսզի մարդ իր վարձատրութիւնը ստանայ, իրեն միայն կը մնայ իր կեանքին պարտականութիւնը լիովին կատարել: Այս աշխարհի մէջ ալ անձեր կան, որոնք չարաչար կ'աշխատին, իսկ ուրիշներ կարծէք առանց մեծ ջանքի իրենց ապրուստը դիւրութեամբ կը հայթայթեն եւ աւելիովը: Այս տարբերութիւնները առաջուց կերտուած ճակատագրին հետեւանքներն են: Ինչ որ կը համապատասխանէ այգիին տիրոջ եւ բանւորին համաձայնութեան: Անհատին համար կարեւորը, իր այս կեանքի ընթացքին, տրուած բոլոր պայմանները եւ պարտականութիւնները առանց դժգոհութեան ընդունիլն է եւ պարտականութիւններն ալ լաւագոյնս կատարել: Իր կատարած պարտականութիւնը «այգիին տիրոջ գործը»՝ Աստուծոյ կամքը կատարելն է:

Ամէն անհատ պարտ է Աստուծոյ կամքը կատարելու համար ապրիլ: Աստուած կը գործէ իր ստեղծագործութեան մէջ, ամէն ինչի միջոցաւ՝ ներառեալ մարդը: Այն անձը, որ իր կեանքի պայմանները կ'ընդունի եւ իր պարտականութիւնն ալ լաւագոյնս կը կատարէ, կ'արժանանայ վարձատրութեան: Ամէն անձի կեանքի պարտականութիւնը Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնելն է: Միթէ Յիսուս մեզի չսորվեցո՞ւց երբ ըսաւ. «Կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

Անհատը պէտք չէ ինքզինք ուրիշներու հետ բաղդատէ եւ եթէ վատ բաղդ ունի, անոր վրայ լայ: Այգիին տիրոջ բոլորին նոյն քանակութեամբ վճարումը ցոյց կու տայ, թէ ամէն անձի, այսինքն կեանքի վարձատրութիւնն ալ նոյնն է՝ Աստուծոյ թագաւորութիւնը, եթէ անշուշտ անձը իրեն տրուած պարտականութիւնը լաւագոյնս կատարած է:

ԵՐԿՈՒ ՈՐԴԻՆԵՐՈՒՄ ԱՐԱԿԸ



«Բայց զիս¹ ըրտ ըստ լ'ան միող էին երկո՛ւ-
որդի՛, է- մադո-ցեալ առ առաջինն՝ առ-
Ո՛րդեալ՝ է՛րբ այսօր Գործեա՛յ յայդ-ող:
'Սա՛ պապասխանի՛ եր՛ է- առ- Երթա՛մ
Տէր՝ է- ո՛չ շոգա-: Մադեա- է- առ-
մե-ան, է- առ- նոյնպէս: 'Սա՛ պապաս-
խանի եր՛ է- առ- Ո՛չ կամիմ: Բայց
յեդոյ զղջացա-՝ է- շոգա- յայդին: Երդ:
ո՛ յերկոցո-նց արա՛ր զկամս Ըօրն: Ասէն-
Յեդինն: Ասէ ցնոսա Յիսո-ս. Ամէն առ-մ
յեզ, զի մախաս-որի է- պո-նիկի՛ յառաջե-
ցէ՛ն իան զյեզ յարէայո-րի-ն երկնից: Զի
եկն Յովհաննէս ճանապարհա՛ւ արդարո-

Դեան՝ եւ ո՛չ Հաւաքացեւի նմա. եւ մախա-
ւորի եւ պոռնիկի Հաւաքացիին նմա, եւ
դոռի դեւի՝ եւ ո՛չ զղջացարուի յեդոյ
Հաւաքաւ նմա» : (Մարքէոս ԻԼ:28-32)

«Ի՞նչ է ձեր կարծիքը. մարդ մը ունէր երկու զաւակ:
Առաջինին ըսաւ. Որդեակ, գնա՛, գործէ՛ այսօր այգիին
մէջ: Ան ալ պատասխանեց. Ձեմ ուզե՛ր երթալ: Բայց
յետոյ զղջաց ու գնաց: Միւսին ալ գնաց եւ նոյնը
ըսաւ: Ան ալ պատասխանեց. Կ'երթամ, տէ՛ր, սակայն
չգնաց: Այս երկուքէն ո՞վ գործադրեց իր հօր կամքը»:
Ըսին անոր. «Առաջի՛նը»: Յիսուս ըսաւ անոնց.
«Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ մաքսաւորներն
ու պոռնիկները ձեզմէ առաջ պիտի մտնեն Աստուծոյ
թագաւորութիւնը: Արդարեւ Յովհաննէս արդարութեան
ճամբայով եկաւ ձեզի, եւ դուք չհաւատացիք անոր.
Բայց մաքսաւորներն ու պոռնիկները հաւատացին անոր,
իսկ դուք տեսաք եւ յետոյ չզղջացիք՝ որ հաւատայիք
անոր»»:

Այս առակն ալ հետաքրքրական է: Մարդը անտա-
րակոյս Աստուած կը ներկայացնէ, իսկ իր երկու որդի-
ներն ալ համայն մարդկութիւնը: Հօրը իր երկու
զաւակներուն այգիին մէջ գործելու պարտականու-
թիւնը տալը, կը ներկայացնէ Աստուծոյ ամէն անհատի
տուած իր կեանքի ընթացքին կատարելիք պարտակա-
նութեան: Ամէն անհատի կեանքի պարտականութիւնը
Աստուածապաշտութիւնն է եւ Աստուծոյ կամքը յառա-
ջացնել: Այգին ալ աշխարհը եւ աշխարհիկ կեանքը կը
ներկայացնէ: Առաջին որդին, որ կը մերժէ այգիին մէջ
աշխատիլ, կը ներկայացնէ մարդկութեան այն զան-
գուածը, որ իր կեանքի ընթացքին ոչ եկեղեցի
կ'երթայ, ոչ կ'աղօթէ եւ նոյնիսկ կը թուի Աստուծոյ
հանդէպ որեւէ յարգանք չունենալ: Ինք մեղանշած
կ'ըլլայ Հայր Աստուծոյ դէմ: Բայց երբ յետոյ կը զղջայ
եւ կ'երթայ ու այգիին մէջ կը գործէ, ըսել է թէ ինք իր
կենցաղով իր կեանքին մէջ ըստ Աստուծոյ կամքին

կ'ապրի ու կը գործէ: Ինք, իր աշխատական գործերով եւ միշտ իրմէ տկարին օգնելով, ինքզինք կ'արդարացնէ: Երբ ինք կը գղջայ Հայրն ալ զինք կը ներէ, որովհետեւ Հայր Աստուծոյ դէմ գործուած մեղքը ներելի է: Իսկ երկրորդ որդին, որ կը հաւանի իր հօր փափաքը կատարել, սակայն չի կատարեր, կը նմանի մարդկութեան այն զանգուածին, որ միշտ ասդին ու անդին Աստուած կը փառաբանէ, Աւետարան կը կարդայ, յաճախ կ'աղօթէ եւ կը թուի Աստուծոյ հաճելի ըլլալ, սակայն իր կեանքին մէջ իր կենցաղով՝ եսասիրութեամբ, միայն իր օգտին եւ հաճոյքին համար կը գործէ: Ինք չի կատարեր իր Հօր իրեն տուած իր կեանքի պարտականութիւնը, այսինքն հապրիր ըստ Աստուծոյ կամքին: Իր այս դիրքով ինք Ս. Հոգիի դէմ մեղանշած կ'ըլլայ, հետեւաբար իր գործած մեղքն ալ աններելի կ'ըլլայ: Այս առակով Յիսուս մեզի սորվեցնել կ'ուզէ, թէ Աստուածապաշտութիւնը ձեւակերպութիւն մը չէ, այլ հայեացք մը, հասկացողութեան մակարդակ մը եւ ապրելակերպ մըն է: Անձը կը սիրէ բոլոր ստեղծագործութիւնը՝ ներառեալ ընդհանուր բնութիւնը, իր բուսական, անասնական աշխարհներով, նաեւ համայն մարդկութիւնը: Կը գործէ ըստ այնմ՝ խնամելով բոլորը եւ ուշադիր կ'ըլլայ որ անոնց որեւէ վնաս չհասցնէ: Ահա՛, աս է ճշմարիտ Աստուած սիրելը եւ Աստուածապաշտութիւնը: Իսկ մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը, եսասիրութեամբ՝ իր անձնական շահին համար, կը շահագործէ երկրագունդը եւ կ'ապականէ օդը, հողը եւ ջուրը: Անխնայ կը փճացնէ անտառները եւ անասուններուն հետ իր վերաբերումն ալ ողբալի է: Սակայն, արտաքին երեւոյթով ինքզինք հանրութեան կը ներկայացնէ որպէս «սուրբ» մը: Յաւալին այն է, որ ինք ալ կը հաւատայ, թէ ինք «սուրբ» մըն է:

ԱՅԳԻՒՆ ՄՇԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԱԿԸ



«Ա՛յլ առա՛կ լռարո՛ւի. Այր մի էր գանդո-
ղեր՝ որ ցանկեաց այգի՛, եւ ցանդով պար-
եաց զնա, եւ փորեաց ՚ի նմա ճնշա՛ն, եւ
շինեաց աշտարա՛կ. եւ է՛ր զնա ցմշակս, եւ
գնա՛ցի րա՛ր աշխարհ: Իբրեւ մերձեցաւ
ժամանակ պողոտայ, առաքեաց զԺառայս իւր
առ մշակսն առնո՛ւլ զպողոտս նորա: Եւ
կալեալ մշակացն զԺառայս նորա, զոմն րան-
ջեցի՛ն, զոմն սպանի՛ն, զոմն խարկոթեցի՛ն:
Դարձեալ առաքեաց ա՛յլ ժառայս Բաւոմս
ձան զառաջինսն, եւ արարի՛ն նոցա՝ նոյն-
պէս: Յետոյ առաքեաց առ նոսա զորդի՛
իւր, եւ ասէ. Թե՛րեւս՝ ամաշեպե՛ն յորդ-
ոյ ասորի իմմէ: Իսկ մշակի՛ն իբրեւ րեսին
զորդի՛ն, ասէն ընդ միմեա. Սա՛ է ժառան-

Գըն էկա՛յի աղանցո՛ւն զսա, է- կալցո՛ւն
չխառանգո՞ւթիւնն սորա: Ե- առեալ՝ Հանին
չնա արդատոյ ինն զայԳին, է- աղանին:
Լըդ՝ յորժամ էկեացէ Կէ՛ր այԳոյն, զԽճ
արասցէ մշակացն այնոցիկ: Լաւն ցնա.
Չշարն շարա՛ւ կորո՛սցէ. է- զայԳին Կացէ
այլո՛ց մշակաց, որի Կայցէ՛ն նմա զարդա
՛ի ժամոռ իւրեանց»: (Մարգէն ԻԸ:33-41)

«Հետեցէ՛ք ուրիշ առակ մըն ալ: Հողատէր մը կար՝ որ
այգի մը տնկեց, ցանկով պատեց զայն, Հնձան փորեց
անոր մէջ, աշտարակ կառուցանեց, մշակներու Հանձնեց
զայն եւ ճամբորդեց: Երբ պտուղի ատենը մօտեցաւ՝ իր
ծառաները՝ զրկեց մշակներուն, որպէսզի ստանան անոր
պտուղները: Մշակները բռնեցին անոր ծառաները,
մէկը ծեծեցին, միւսը սպաննեցին, ուրիշ մը
քարկոծեցին: Դարձեալ ծառաներ զրկեց՝ առաջիններէն
չատ, եւ անոնց ալ նոյնպէս ըրին: Ամենէն ետք իր
որդին զրկեց անոնց՝ ըսելով. Թերեւս պատկառին
որդիէս: Բայց մշակները՝ երբ տեսան որդին՝ ըսին
իրարու. Ա՛յս է ժառանգորդը. եկէ՛ք սպաննենք զայն եւ
տիրանա՛նք անոր ժառանգութեան: Ու բռնեցին զայն,
այգիէն դուրս Հանեցին եւ սպաննեցին: Ուրեմն երբ
այգիին տէրը գայ, ի՞նչ պիտի ընէ այդ մշակներուն»:
Ըսին իրեն. «Չարաչար պիտի կորսնցնէ այդ չարերը, եւ
այգին պիտի յանձնէ ուրիշ մշակներու, որոնք
պտուղները իրենց ատենին պիտի տան իրեն»:

Տէս նաեւ Մարգէն ԺԲ:1-9 Է- Ղոսէաս Ի:9-16

Այս առակը փոխաբերաբար կը ներկայացնէ
մարդկութեան եւ Աստուծոյ միջեւ եղած «համաձայնու-
թիւնը» եւ փոխարաբերութիւնը: Առաջին հերթին
այգին դարձեալ կը ներկայացնէ աշխարհը եւ երբ
առակին մէջ Յիսուս կ'ըսէ. «Հողատէր մը կար՝ որ այգի
մը տնկեց, ցանկով պատեց զայն, Հնձան փորեց անոր

մէջ, աշտարակ կառուցանեց», կը նեկայացնէ Աստուծոյ ստեղծագործութիւնը: Անտարակոյս «Հողատէր»-ն ալ Աստուած կը ներկայացնէ: «Մշակներու հանձնեց զայն»ը ակնարկ մըն է Ծննդոց գիրքի մէջի այն համարներուն, ուր Աստուած մարդուն իշխանութիւն կու տայ բոլոր երկրի վրայ (Ծննդոց Ա. 28 եւ Բ. 15): Մշակները եսասիրութեամբ կ'ուզեն բոլոր բերքը իրենց պահել, քան թէ հողատիրոջ տալ: Համայն մարդկութիւնն ալ իրեն կենցաղով, եսասիրութեամբ կ'ապրի եւ միայն իր անձնական շահին եւ հաճոյքին համար կը գործէ: Մշակներուն պարտականութիւնը հողատիրոջ համար այգիին մէջ գործելն է: Նմանապէս մարդկութեան պարտականութիւնն ալ Աստուծոյ համար ապրիլն է: Բոլոր ստեղծագործութիւնը խնամել է: Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնելն է: Ծառաները, որոնք հողատէրը ղրկեց, կը ներկայացնեն Հին Կտակարանին մէջ նշուած մարգարեները, որոնք ղրկուած էին մարդկութեան յիշեցնելու համար իրենց կեանքին բուն նպատակը եւ պարտականութիւնը: Սակայն փոխանակ անոնց յորդորները մտիկ ընելու եւ իրենց կենցաղը փոխելու, մարդիկ յաճախ զանոնք նախատած ու սպաննած են: Հողատիրոջ իր որդին ղրկելն ալ կը ներկայացնէ Աստուծոյ Որդւոյն մարդեղութեան՝ Քրիստոսի յայտնութեան Յիսուսի միջոցաւ: Ինչպէս առակին մէջ որդին մեռցուցին, միթէ մարդիկ ալ Յիսուս Քրիստոսը խաչելով չմեռցուցի՞ն: Յիսուս առակը կը վերջացնէ հարցումով մը. «Ուրեմն երբ այգիին տէրը գայ, ի՞նչ պիտի ընէ այդ մշակներուն»: Այս հարցումին տրուած պատասխանն ալ բացայայտ է: Յիսուս այս առակով կը շեշտէ այն ինչ որ ինք բացայայտ ըսած էր իր հետեւեալ խօսքով. «Ինչ որ ցանես, ան կը հնձես»: Մեր կենցաղը մեր ցանած հունտն է, այն ինչ որ պիտի քաղենք մեր ցանածէն կախեալ է:

ՀԱՐԱՆԵԿԱՆ ԿՈՉՈՒՄԵՐ ԱՌԱՎԸ



«Դարձեալ պապականի եր Յիսոս, ե-
տե՛ր ցնոսա առակօ՛ղ: Նմանեցաւ արժայո-
րին երկնից՝ ա՛ռն Խաճա՝որի, որ արա՛ր
Հարսանիս որդե՛րս եւրո՛մ: Եւ առա՛խեաց
սքառայս իւր կոշե՛ւ սհրա՛խրեալան ՚ի
Հարսանիս: Եւ ո՛չ կամեցան Գալ: Դարձ-
եալ՝ առա՛խեաց ա՛յլ թառայս՝ եւ տե-
ւացե՛ղ Հրա՛խրելոցն. Աճառասիկ սքա՛շ
իմ պարարասցելի. սոռա՛րակ է պարարակ
սեւեա՛ւ են, եւ ամենայն ինչ պարա՛սք
եկա՛յ ՚ի Հարսանիս: Եւ նո՛գա յաւա՛ցեալ՝
Գնացին ոմն յաճա՛րակ իւր, եւ ոմն ՚ի

վաճա՛ւ իւր, եւ այլե՛կ հաւան զԺառանգս
նորա, Թշնամանեցին, եւ սորանե՛ն: Իսկ
ԹաԳաւորն իԹրեւ լո՛ւսաւ՝ Բարկացա՛ւ, եւ
առա՛ւելեաց զԿօրս իւր եւ սարակեաց զսոս-
նողսն զայնոսիկ, եւ զէաղա՛նն նոցա այր-
եա՛ց: Յայնժամ ասե՛լ զԺառանգս իւր. Հար-
սանի՛ն ապարա՛սք են, եւ Հրաւիրեալէն
շե՛նն արժանի: Ըրդ՝ երթա՛յ՛ յանցս Ճանա-
պարհաց, եւ զորս միանԳամ Գրանիցե՛լ՝
կոշեցե՛լ է՛ ի Հարսանիսս: Եւ ելեալ Ժառայ-
էլն ՚ի Ճանապարհս Ժողովեցին զամենեւեան
զոր եւ Գրին՝ զշարս եւ զԲարին. եւ լցա՛ն
Հարսանի՛ն Բազմականօ՛ղ: Եւ մտեալ ԹաԳա-
ւորն Հայել զԲազմականօ՛ղն, ետես անդ
ա՛յր մի՛ որ ո՛չ էր զԳեցեալ Հանդերձ Հար-
սանեաց: Եւ ասե ցնա. Ը՛նկեր՝ զիա՛րդ
մտեր այսր, զի ո՛չ ունէիր Հանդերձ Հար-
սանեաց: Եւ նա պապանջեցա՛ւ: Յայնժամ
ասե ԹաԳաւորն ցապասասորսն. Սաղեցե՛լ է
զդորս զորս եւ զյեա՛ւ եւ Հանե՛լ է զդա՛ ՚ի
խաւա՛րն արդա՛նն, ա՛նդ եղիցի լա՛լ եւ
կրճել սորամանց: Զի Բազմա՛ն էն կոշեց-
եալէ՛ եւ սակաւ է ընդրեալէ՛ »: (Մատթեոս ԻԲ: 1-14)
« Յիսուս դարձեալ առականերով խօսեցաւ անոնց եւ ըսաւ.


«Երկիրքի թագաւորութիւնը կը նմանի թագաւորի մը՝ որ Հարսանիք ըսաւ իր որդիին, ու ղրկեց իր ծառաները՝ կանչելու Հարսանիքին Հրաւիրեալները. սակայն անոնք չուզեցին գալ: Դարձեալ ուրիշ ծառաներ ղրկեց եւ ըսաւ. Ըսէ՛ք Հրաւիրեալներուն. «Ահա՛ պատրաստեցի իմ ճաշս. գուարակներս ու գէշ անասուններս մորթուած են՝ եւ ամէն բան պատրաստ է. եկէ՛ք Հարսանիքի»: Բայց անոնք անհոգութիւն ընելով՝ գացին մէկը իր արտը, ու միւսը՝ իր առետուրին: Ուրիշներ՝ բռնեցին անոր ծառաները, նախատեցին եւ սպաննեցին: Թագաւորն ալ՝ երբ լսեց՝ բարկացաւ. ղրկեց իր օրքերը, կորսնցուց այդ մարդասպանները ու այրեց անոնց քաղաքը: Այն ատեն ըսաւ իր ծառաներուն. Հարսանիքը պատրաստ է, բայց Հրաւիրեալները արժանի չէին: Ուրեմն գացէ՛ք դէպի ճամբաներուն գլուխները, եւ ո՛վ որ գտնէ՛ք Հրաւիրեցէ՛ք Հարսանիքի: Այդ ծառաները դուրս ելան՝ դէպի ճամբաներուն գլուխները, եւ ո՛վ որ գտան՝ թէ՛ չար, թէ՛ բարի, բոլորն ալ Հրաւիրեցին. ու Հարսնետունը լեցուեցաւ Հրաւիրեալներով: Երբ թագաւորը մտաւ՝ տեսնելու Հարսնետուները, տեսաւ մարդ մը՝ որ Հագած չէր Հարսանիքի Հագուստ: Ըսաւ անոր. Ընկէ՛ր, ի՞նչպէս մտար Հոս՝ առանց Հարսանիքի Հագուստի: Ան ալ պապանձեցաւ: Այն ատեն թագաւորը ըսաւ սպասարկուներուն. Կապեցէ՛ք ասոր ոտքերն ու ձեռքերը, եւ առէ՛ք ու նետեցէ՛ք գայն դուրսի խաւարը. Հոն պիտի ըլլայ լաց եւ ակուսներու կրճտում: Որովհետեւ կանչուածները չատ են, բայց ընտրուածները՝ քիչ»»:

ՏԷՊ ՆՈՒՆ ՂԱՆԿԱՍ ԺԴ: 15-24

Յիսուս յաւիտենական կեանքի մասին յաճախ ակնարկած է օգտագործելով Հարսանեկան խնճոյքի փոխաբերական իմաստը: Այս առակին մէջ, անտարակոյս, թագաւորը Աստուած կը ներկայացնէ, իսկ իր որդիին Հարսանիքն ալ ամէն մի անհատի «Հարսանիքը»՝ Աստուծոյ Որդւոյն՝ Քրիստոսի հետ միացումը: Ամէն անձ Քրիստոսի «Հարսը» ըլլալու կարելիութիւնը ունի: Հրաւիրեալները կը թուին հոգեւորական դասը ըլլալ: Յիսուս շատ հաւանական է որ կ'ակնարկէր օրուայ հըրեայ քահանայական դասակարգին, անոնք, որոնք իրենց կենցաղի օրինակով, հոգեւոր ճանապարհին առաջնորդ-

ները պէտք էր ըլլային: Սակայն հրաւիրեալներէն ոեւէ մէկը, զբաղ իրենց անձնական հաշիւներով, չուզեցին հարսանիքին մասնակցիլ: Ասոր իմաստը այն է, թէ մարդ իր եսասէր կենցաղով պատրաստ չէ Քրիստոս իր մէջ յայտնաբերելու եւ Աստուծոյ միանալու՝ Քրիստոսի հարսը ըլլալու: Ոչ թէ միայն մերժեցին այլ նաեւ զրկուած ծառաները նախատեցին, ծեծեցին ու մեռցուցին: Դարձեալ այս առակին մէջ ալ ծառաները կը ներկայացնեն մարգարէները, որոնց յորդորը ճիշդ՝ Աստուածահաճոյ կենցաղը ցոյց տալ եւ կեանքին բուն նպատակը սորվեցնել էր: Բոլոր անոնք, որոնք հրաւէրը մերժեցին «արժանի չէին» եւ հարսանիքի խնճոյքէն՝ յաւիտենական կեանքէն զրկուեցան ու իրենց վախճանն ալ մահ եղաւ: Միթէ մեր անհատականութիւնն ալ մեր մարմնին հետ չի՞ մեռնիր: Միայն եթէ Քրիստոսի «հարսը» ըլլանք, Քրիստոսով մեր անհատականութիւնն ալ կը պահենք եւ հարսանեկան խնճոյքին կ'արժանանանք: Թագաւորին փողոցի գլուխները ով որ գտնուի՝ «թէ՛ չար եւ թէ՛ բարի», խնճոյքի հրաւիրելը, կը համապատասխանէ Աստուծոյ ամէն անհատի՝ թէ՛ չար եւ թէ՛ բարի, յաւիտենական կեանքի հրաւէրին: Կարելորը այն է, թէ անձը հոն ներկայանայ հարսանեկան հագուստով: Հարսանեկան հագուստը, փոխաբերական իմաստով, կը ներկայացնէ անձին ինքզինք բարելաւած ըլլալը: Իսկ այն անձը, որ կ'ուզէ հարսանեկան խնճոյքին մասնակցիլ՝ յաւիտենական կեանք ունենալ, սակայն ինքզինք չէ բարելաւած, իր կենցաղը չէ փոխած եւ իր «Ես»-ը չէ անտեսած, դուրս կը հանուի եւ չ'արտօնուիր որ հարսանիքին մասնակցի: Առանց ճշմարիտ ապաշխարութեան յաւիտենական կեանքի արժանանալ անկարելի է: Անցեալը կարելոր չէ, այլ՝ միայն ներկան: Ամէն անհատ միայն ներկան կ'ապրի, պարտ ենք զայն արժեւորել:

ՏԱՍԸ ԿՈՅԱԵՐՈՒՄ ԱՌԱՎԸ



«Յայնժամ նմանեացի արդայո՞ւրիւն երկնից
դա՛սն կոսանաց, որոց առեալ զլապտերս
իւրեանց՝ ելին ընդ առաջ փեռայի եւ Հար-
սին: Հինգն ՚ի նոցանէ յիմարդ էին՝ եւ
Հինգն իմաստոսն: Յիմարդն առին զլապտեր-
սըն, եւ չէի ընդ իւրեանս ո՛չ թարջին: Իսկ
իմաստոսնն առին եւ չէի ամանօղ ընդ
լապտերս իւրեանց: Եւ ՚ի յամէլ փեռային,
նիրհեցի՛ն ամենեկեան եւ ՚ի խոն մորին: Եւ
՚ի մեջ գիշերի եղեւ թարթառ. Եւս՝ փեռայ
Գա՛յ, արի՛՛ք ընդ առաջ նորս: Յայնժամ յար-
եան ամենայն կոսանին, եւ կազմեցին զլապ-
տերս իւրեանց: Եսէն յիմարդն ցիմաստոսնն.
Տո՛ւղ մեզ յիւղոյդ չերմէ, զի ահա՛ շիջանին
լապտերդ մեր: Պատասխանի երոսն իմաստոսն-

էլն՝ եւ ասեն. Գոցե ո՛չ իցե մեզ եւ յեզ
բաւական, այլ երթա՛յ՛նք ի վաճառականն՝ եւ
Գնեսք՛նք յեզ: Իբրեւ նո՛րա Գնացին Գնել՝ եւ
էկն փեսայն եւ պարտասպէն մորն՝ ընդ նաւ
՛նք Լարսանիսն՝ եւ փակեցա՛ն Դոռանն: Յե-
րոյ՝ Գան եւ ա՛յլ կոսանէն՝ եւ ասեն. Տէ՛ր
Տէ՛ր բա՛ց մեզ: Նա պարտասպանի եր եւ
ասե. Լմէն ասե՛մ յեզ, թէ ո՛չ Գրդեմ զյեզ:
Երթո՛ւն կացէ՛նք զի ո՛չ Գրդե՛նք զօրն եւ ո՛չ
զժամ»: (Մարթէոս ԻԵ:1-13)


«Այն ատեն երկիրքի թագաւորութիւնը պիտի նմանի
տաւր կոյսերու, որոնք՝ առնելով իրենց լապտերները՝
գացին դիմաւորելու փեսան: Ասոնցմէ Հինգը իմաստուն
էին, իսկ Հինգը՝ յիմար: Յիմարները առին իրենց
լապտերները, բայց ձէթ չառին իրենց հետ. սակայն
իմաստունները՝ ամաններով ձէթ ալ առին իրենց
լապտերներուն հետ: Երբ փեսան ուշացաւ, բոլորն ալ
թմրեցան ու քնացան: Կէս գիշերին գոչիւն մը եղաւ.
Ահա՛ փեսան կու գայ. գացէ՛ք դիմաւորելու գինք: Այն
ատեն բոլոր կոյսերը ոտքի ելան եւ յարգարեցին իրենց
լապտերները: Յիմարները ըսին իմաստուններուն. Տուէ՛ք
մեզի ձեր ձէթէն, որով հետեւ մեր լապտերները կը
մարին: Իմաստունները պատասխանեցին. Ո՛չ. գուցէ
չբաւէ մեզի ու ձեզի. այլ մանաւանդ գացէ՛ք
ծախողներուն եւ գնեցէ՛ք ձեզի համար: Երբ անոնք
գացին գնելու՝ փեսան եկաւ. պատրաստ եղողները
հարսանիքի մօտն անոր հետ, ու դուռը գոցուեցաւ:
Յետոյ միւս կոյսերը եկան եւ ըսին. Տէ՛ր, Տէ՛ր, բա՛ց
մեզի: Բայց ան պատասխանեց. Ճշմարտապէս կը
յայտարարեմ ձեզի. «Եւ չեմ ճանչնար ձեզ»: Ուրեմն
արթո՛ւն կեցէք, որով հետեւ գիտէք ո՛չ օրը, ո՛չ ժամը»:

**Այս առակին մէջ ալ Յիսուս դարձեալ հարսանիքը
իր փոխաբերական իմաստով կ'օգտագործէ՝ իբր Աստու-
ծոյ թագաւորութիւնը: Տասը կոյսերը կը ներկայացնեն
համայն մարդկութիւնը: Անոնք երկուքի բաժնուած են.**

Հինգ հատը իմաստուն եւ հինգն ալ յիմար: Համայն մարդկութեան մէջ ալ կան իմաստուն անհատներ, որոնք կը հետապնդեն կատարելութեան ուղին, կան նաեւ յիմարներ, որոնք չեն փափաքիր կատարելութեան ուղիէն ընթանալ: Իմաստունը կը կատարէ Աստուծոյ կամքը եւ կ'ապրի իր կեանքին բոլն նպատակը, որ է Աստուածայայտնութիւնը իր մէջ: Իսկ յիմար մարդը կը կատարէ իր «Ես»-ին կամքը եւ կ'ապրի կեանք մը եսասիրութեան: Տասը կոյսերն ալ, իրենց լապտերները ի ձեռին, կ'երթան փեսան դիմաւորելու: Ասոր իմաստը այն է, թէ ամէն մարդ կ'ուզէ «փրկուիլ»: Կոյսերը «հարսը» կը ներկայացնեն: Վերեւ տեղադրուած մէջքերով մի գրաբար մասին մէջ գրուած է. «Ելին ընդ առաջ փեսայի եւ հարսին», իսկ աշխարհաբարին մէջ գրուած է. «Գացին դիմաւորելու փեսան»: Աշխարհաբարին մէջ «հարս»-ը զանց առնուած է: Յայտնի չէ, թէ ինչու նման տարբերութիւն մը գոյութիւն ունի: Ամէն անձ կ'ուզէ Աստուծոյ՝ Քրիստոսի միանալ, այսինքն Քրիստոսի «հարսը» ըլլալ: Սակայն միայն անոնք, որոնք իմաստութեամբ իրենց հետ ձէթ առած են, այդ փառքին կ'արժանանան: Յաւելեալ ամաններով ձէթ»-ին իմաստը, անձին Աստուածայայտնութեան ճամբուն մէջ ունեցած համբերութիւնը եւ յարատեւութիւնը կը ներկայացնէ: Անոնք, որոնք յաւելեալ ձէթ չեն առած, գուցէ փափաքին Քրիստոսի յայտնութիւնը իրենց մէջ ունենալ, բայց, որովհետեւ, այդ փափաքը զօրաւոր չէ, կատարելութեան ուղիին մէջ անընդհատ ընթանալու համբերութիւնը եւ յարատեւութիւնը չունին, հետեւաբար չեն կարողանար իրենց փափաքը իրականացնել: Տասը կոյսերուն թմրիլը եւ քնանալը կը ներկայացնէ համայն մարդկութեան խաւարամտութիւնը: «Կէս գիշերին գոչիւն մը եղաւ»-ը մարդոց իրենց կեանքին բոլն նպատակին անդրադարձն է: Մարդ, ընդհանրապէս այս

անդրադարձը կ'ունենայ իր յառաջացեալ տարիքին մէջ, երբ կ'անդրադառնայ թէ աշխարհի շլացուցիչ «սա-դա-նա»-երը «պարապ» են: Երբ իր երիտասարդութեան, ան չէ հետապնդած կատարելութեան ուղին, իր կեանքի մայրամուտին հաւատքի, համբերութեան եւ յարատեւութեան կարելիութիւնն ալ չ'ունենար, որովհետեւ հետը «ձէթ» չէ առած, հետեւաբար չի կրնար լապտերը վարել եւ անոր լոյսը՝ Քրիստոս իր մէջ յայտնաբերել: Մարդ արարած իր խաւարամտութեան միջոցին երբեմն «լապտերը կը մարէ»: Սակայն, եթէ ան իմաստուն է, կատարելութեան ուղիէն չի շեղիր: Լապտերին բոցը՝ լոյսը կը ներկայացնէ անհատին ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի Լոյսին յայտնութիւնը անձին մէջ: Փոխաբերաբար ան նաեւ կը ներկայացնէ անհատին ներքին լուռ ձայնը, որ անհատը կ'առաջնորդէ կատարելութեան ուղիին մէջ: Առանց Քրիստոսի առաջնորդութեան կարելի չէ կատարելութեան ուղիին մէջ մնալ: Իսկ Քրիստոսի առաջնորդութիւնն ալ կը նշանակէ ապրիլ ըստ ներքին լուռ ձայնին, որ ընդհանրապէս մարդիկ կ'անտեսեն: Փեսային երբ գալը յայտնի չէ: Քրիստոսին ալ անձին մէջ յայտնուելու օրը, ժամը կամ վայրկեանն ալ յայտնի չէ, որովհետեւ անձը միայն կրնայ ինքզինք «հարսանիքին» պատրաստել եւ իր ջանքով չի կրնար Քրիստոս իր մէջ յայտնաբերել: Այս վերջինը միայն Աստուծոյ կախեալ է: Այն յիմար կոյսերը որոնք նոր ձէթ առնելու գացին, կը ներկայացնեն այն անձերը, որոնք կատարելութեան ուղիէն շեղած են եւ փեսային գալուստին՝ Քրիստոսի յայտնութեան չեն արժանանար: Յիմար կոյսերը իմաստուններէն ձէթ չեն ստանար: Ասոր իմաստն ալ այն է, թէ ամէն անձ ինք պատասխանատու է իր կենցաղէն: Միթէ Յիսուս ուրիշ առիթով ալ տարբեր բառերով նոյնը չէր ըսած. «Խաչդ առ եւ ետեւէս եկուր»:

ԵՐԵ ԾԱՌԱՆԵՐՈՒ ԱՌԱՎ



«Որպէս այր մի գնացեալ 'ի քա՛ր աշխարհ,
կոշեաց զԺառանգս իւր՝ եւ եր նոցա զինչս
իւր: Ումեմն եր Հինգ խնէար, եւ ումե-
մըն երկո՛ւս, եւ ումեմն մի՛. իւրախանշի՛ւր
ըսոր իւրո՛ւմ կարի, եւ գնաց: Չոգաւ վաղ-
վաղակի՛ որ ա՛ռ զՀինգն, գործեա՛ց նո՛ւթ,

Եւ շահեցաւ ան իւր Ընդ: Նոյնպէս Եւ
որ զերկո՛ւսն շահեցաւ ան իւր Երկո՛ւս:
Եւ որ զմե՛ն առ՝ Գնաց փորեա՛ց զերկիր,
Եւ Թափոյց զարծաթ ցեա՛ւն իւրոյ: Յետ
Բաւո՛ւմ Ժամանակի, Գա՛յ ցեր ծառայիցն
այնոցիկ, Եւ առնէ Ըմա՛ւրս ՚ի մէջ նոցա:
Եւ մարտոցեա՛լ որ զԸնդ խնկարն առ,
մարտոյ ան իւր Ընդ խնկար՝ Եւ ասէ.
Տէ՛ր՝ Ընդ խնկար Երո՛ւր ցիս, արդ
աւաւանիկ՝ Ընդ ան իւր խնկար ՚ի
Վերայ շահեցայ: Ասէ ցնա ցերն իւր. Աւ-
նի՛ւ Ժառայ՝ Բարի՛ Եւ Ըաւարարի՛մ, որով-
Ըերէ Եւ ասկառո՛ւղ Ըաւարարի՛մ Ես, ՚ի
Վերայ Բաւո՛ւմ Կացոցի զիւր. մո՛ւր յո՛ւ-
րախոռո՛րն ցեառն իւր: Մարտոցեալ Եւ
որոյ զերկո՛ւս խնկարն առեալ էր, Եւ
ասէ. Տէ՛ր՝ Երկո՛ւս խնկարս Երո՛ւր ցիս,
աւաւանիկ Երկո՛ւս Եւ ան իւր խնկարս զոր
՚ի Վերայ շահեցայ: Ասէ ցնա ցերն իւր.
Աւնի՛ւ Ժառայ՝ Բարի՛ Եւ Ըաւարարի՛մ,
որովԸերէ Եւ ասկառո՛ւղ Ըաւարարի՛մ Ես,
՚ի Վերայ Բաւո՛ւմ Կացոցի զիւր. մո՛ւր
յո՛ւրախոռո՛րն ցեառն իւր: Մարտոցեալ Եւ
որոյ զմե՛ն խնկարն առեալ էր, Եւ ասէ.

Տեր՝ Գերգեիս զի այր մի խիստ էս, Ընչեմ՝
չոր ո՛չ սերմանեցեր, է- ժողովե՛մ՝ ուսորի
ո՛չ սփռեցեր. երկեմ՝ Գնացի է- Բախոցի՝
չվանձարս ի՞նչ երկրի. արդ՝ աւանանի ի՞նչդ՝
չէ՛ք զ: Պարասխանի էր ցերն՝ է- ասե
ցնա. Օսոս՝ շար է- զար՝ Գերգեիս Բե
Ընչեմ՝ ուսորի ո՛չ սերմանեցի, է- ժողո-
վե՛մ՝ ուսորի ո՛չ սփռեցի. պա՛րս էր ի՛նչ
արկանել զարժաբն իմ ՚ի սեղանաւորս, է-
եկեալ էս՝ ցոյցս արեւանջի զիմն: Արդ՝
ասե՛ք ՚ի դմանե զվանձարդ՝ է- ցո՛ւ-
այնմ որ ունիցի զբա՛ն իմանարն: Զի
ամենայնի որ ունիցի՝ ցացի՝ է- յաւելցի,
է- որ ո՛չն ունիցի, է- զոր ունիցի՛ն՝
Բարձր ՚ի նմանէ: Եւ զժառանգտ անդիպան
Ըանե՛ք ՚ի խաւարն արդարեւ. ա՛նդ էղիցի
լալ է- կըճել արամանց»: (Մարտէոս ԻԵ: 14-30)
«Արդարեւ երկինքի թագաւորութիւնը կը նմանի ճամ-
բորդոյ մարդու մը, որ կանչեց իր ծառաները, եւ
յանձնեց անոնց իր ինչքը. մէկուն տուաւ Հինգ տա-
ղանդ, մէկուն՝ երկու, ու մէկուն՝ մէկ. իւրաքանչիւրին՝
իր կարողութեան չափով, եւ իսկոյն մեկնեցաւ: Հինգ
տաղանդ ստացողը գնաց, օգտագործեց գանոնք, ու
չահեցաւ ուրիշ Հինգ տաղանդ: Նմանապէս երկու
ստացողը չահեցաւ ուրիշ երկու ալ: Իսկ մէկ ստացողը
գնաց, փորեց գետինը եւ ծածկեց իր տիրոջ դրամը:
Շատ ժամանակ ետք՝ այդ ծառաներուն տէրը եկաւ ու
հաշիւ ուղեց անոնցմէ: Հինգ տաղանդ ստացողը
մօտեցաւ եւ բերաւ ուրիշ Հինգ տաղանդ՝ ըսելով. Տէր,

Հինգ տաղանդ յանձնեցիր ինծի. ահա՛ ուրիշ Հինգ տաղանդ ալ շահեցայ անոնցմէ զատ: Տէրը ըսաւ անոր. Ապրի՛ս, բարի ու հաւատարիմ ծառայ. դո՛ւն՝ որ հաւատարիմ եղար քի՛չ բանի մէջ՝ պիտի նշանակեմ քեզ շա՛տ բաներու վրայ. մտի՛ր տիրոջդ ուրախութեան մէջ: Երկու տաղանդ ստացողն ալ մօտեցաւ եւ ըսաւ. Տէ՛ր, երկու տաղանդ յանձնեցիր ինծի. ահա՛ ուրիշ երկու տաղանդ ալ շահեցայ անոնցմէ զատ: Տէրը ըսաւ անոր. Ապրի՛ս, բարի ու հաւատարիմ ծառայ. դո՛ւն՝ որ հաւատարիմ եղար քի՛չ բանի մէջ, պիտի նշանակեմ քեզ շա՛տ բաներու վրայ. մտի՛ր տիրոջդ ուրախութեան մէջ: Մէկ տաղանդ ստացողն ալ մօտեցաւ եւ ըսաւ. Տէ՛ր, գիտէի թէ դուն խիստ մարդ մըն ես. կը Հնձեմ չսերմանած տեղէդ, ու կը ժողվեա չցանած տեղէդ. ուստի վախճալով՝ գացի, պահեցի քու տաղանդդ գետինին տակ. ուստի ահա՛ քուկդ՝ քեզի: Իր տէրը պատասխանեց իրեն. Չա՛ր եւ ծո՛յլ ծառայ. գիտէիր թէ կը Հնձեմ չսերմանած տեղէս, ու կը ժողվեմ չցանած տեղէս. ուրեմն պէտք էր որ դնէիր իմ դրամս սեղանաւորներուն քով, որպէսզի տոկոսո՛ւմ ստանայի եկած ատենս: Ուստի առէ՛ք ատկէ տաղանդը, ու տուէ՛ք տասը տաղանդ ունեցողին. որով Հետեւ ամէն ունեցողի պիտի տրուի, եւ պիտի ըլլայ առատութեան մէջ, բայց չունեցողէն պիտի առնուի ունեցա՛ծն ալ: Իսկ նետեցէ՛ք այդ անպէտ ծառան դուրսի խաւարը. հոն պիտի ըլլայ լաց ու ակուսներու կրճատում:

Տէս նախ Դոմէան ԺԹ: 11-27

Դարձեալ, այս առակին մէջ ալ, ճամբորդող մարդը փոխաբերաբար կը ներկայացնէ Աստուած: Ծառաները կը ներկայացնեն համայն մարդկութիւնը: Ծառաներուն տրուած «տաղանդները», կը ներկայացնեն ամէն մի անհատի ի ծնէ Աստուծոյ կողմէ տրուած տաղանդները՝ զանազան կարողութիւնները, որոնցմով մարդ օժտուած է: Ոմանց կարողութիւնները սահմանափակ են, իսկ ուրիշներունը՝ հանճարի մակարդակ: Հինգ, երկու եւ մէկ տաղանդի տարբերութիւնները կը ներկայացընեն մարդոց ունեցած կարողութիւններու տարբերութիւնները: Մարդիկ զօրութեան մարմին մը ունին եւ մարդուն հոգին Աստուծոյ զօրութեան՝ Ս. Հոգիին մաս

կը կազմէ: Զօրութիւնը իր մէջ իր թրթռացումի յաճախականութեան փոփոխութեամբ տեղեկութիւն կը պարունակէ (ինչպէս ձայնասփիւրի ալիքները եւ-
այլն): Մարդոց կարողութիւնները կախեալ են գիրենք
կազմող զօրութեան թրթռացումի յաճախականու-
թեան որակէն: Մարդկային կեանքը, գինք կազմող
զօրութեան թրթռացումի յաճախականութիւնը բարձ-
րացնելու առիթ մըն է: Աս կախեալ է անձին կերտած
կենցաղէն եւ այդ ուղղութեամբ իր թափած ջանքէն:
Ինք պարտ է ինքզինք միշտ բարելաւել: Անոնք, որոնք
հինք եւ երկու տաղանդ ստացած էին կրկնապատկեցին
իրենց վստահուածը: Նմանապէս ամէն անձ իր կեանքի
ընթացքին պարտ է ինքզինք բարելաւել եւ բարձրա-
ցընել իր զօրութեան թրթռացումի յաճախականու-
թիւնը: Աս կը համապատասխանէ իր գիտակցութեան
մակարդակը եւ իր ստացած իմաստութեան որակը
բարձրացնելուն: Յիսուս իր զօրութեան բարձր թրթռա-
ցումի յաճախականութիւնը ցոյց տուաւ երբ իր մար-
մինը ալլակերպեցաւ: Միայն զօրութեան բարձր յաճա-
խականութեամբ թրթռացում մը կրնայ անձին մէջ
Քրիստոս յայտնաբերել: Յիսուս այս իրողութիւնը մե-
զի օրինակով ցոյց տուաւ: Այն անձը որ մէկ տաղանդ
ստացաւ եւ նոյնը իր տիրոջ վերադարցուց, կը ներկա-
յացնէ անոնք, որոնք իրենց տրուած կեանքին մէջ
ինքզինքնին չեն բարելաւել: Այն ինչ որ անոնց
տրուած էր, ան ալ ետ պիտի առնուի: Մարդկային
կեանքը իրենցմէ պիտի առնուի: Ստեղծագործութեան
նպատակը եւ մարդու կեանքին նպատակը Աստուածա-
յայտնութիւնն է: Եթէ մարդ այդ նպատակին չծառայէ,
իր կեանքի նպատակին մէջ թերացած կ'ըլլայ: Իսկ
անոնք, որոնք ինքզինքնին կը բարելաւեն, ալ աւելի
տաղանդներու կ'արժանանան: Միթէ ծուլութիւնը մա-
հացու մեղքերէն մին չէ՞:

ԱՄԱՐՏ ՀԱՐՈՒՄՏԻՆ ԱՌԱՎ



«Խօսեցա՛ւ առ նոսա առակ մի՛ է ասէ.
Ան ուրումն մեծապան երուն անդէ
դոճմակա՛նս: Եւ խորհէ՛ր 'ի միտս իր՝ է-
ասէր. Զի՞ Գործեցից՝ զի ո՛չ Գոյ Գեղի
որ ժողովեցից զարդիւնս իմ: Եւ ասէ.
Գիտէ՛մ զինչ արարից. խկեցի՛ց զշրեմարա-
նըս իմ՝ էւ էս մեծամեծս շինեցից է-
անդր ժողովեցից զցորեան էւ զամենայն
բարութիւնս իմ. էւ ասացից ցանչն իմ.
ա՛նչն՝ ունի՛ս բազում բարութիւնս Համ-
բարեալ ամաց բազմաց. Հանգի՛ր՝ կէ՛ր՝ ա՛րբ
էւ ուրա՛խ լիւր: Ասէ ցնա Ասորոսած. Ան-

մեր՝ յայսմ Գիշերի զոգիտ 'ի լէն 'ի Բայ
դաւանջիցեն, իսկ զոր պարտասցեցերն ո՞ւմ
լինիցի: Նոյնպէս էւ որ Գանձէ անձին, էւ
ո՛չ յԼսորոսաթ մեծանայցէ»: (Ղուկաս ԺԲ:16-21)
«Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Հարուստ
մարդու մը արտերը տուին առատ բերքեր, եւ ան կը
մտածէր ինքնիրեն՝ ըսելով. Ի՞նչ ընեմ, որովհետեւ տեղ
չունիմ՝ ուր բերքերս ժողվեմ: Եւ ըսաւ. Սա՛ պիտի ընեմ.
պիտի քանդեմ ամբարներս, պիտի կառուցանեմ աւելի՛
մեծերը, Հոն պիտի ժողվեմ իմ բոլոր բերքս ու
բարիքներս, եւ պիտի ըսեմ անձիս. «Ո՛վ իմ անձս, շատ
բարիքներ ունիս՝ դիզուած շատ տարիներու համար.
Հանդէ՛, կե՛ր, խմէ՛ եւ զուարճացի՛ր»: Բայց Աստուած
ըսաւ անոր. Անմի՛տ՝ այս գիշեր անձդ պիտի
պահանջուի քեզմէ. ուստի որո՞ւ պիտի ըլլան այդ
պատրաստած բաներդ: Այսպէս է ան՝ որ գանձ կը դիզէ
ինքնիրեն համար, բայց չի հարստանար Աստուծոյ մօտ»:

Այս առակին մեկնաբանութիւնը շատ պարզ եւ
ինքնայայտ է: Հարուստ մարդը կը ներկայացնէ բոլոր
անոնք, որոնք աշխարհի շլացուցիչ ցանկութիւններէն
տարուած կը ջնան միայն իրենց հանգիստին համար
ապրիլ: Հարստութիւն կը դիզեն եւ երջանկութիւնը կը
փնտռեն աշխարհիկ հաճոյքներով զուարճանալու մէջ:
Մարդ, գիտնալով հանդերձ թէ ինք մահկանացու մըն
է, կ'ապրի իբր թէ բնաւ պիտի չմեռնի: Այս առակով
Յիսուս մեզի ցոյց կու տայ նման կենցաղի մը յիմարու-
թիւնը եւ անխոհմտութիւնը: Այն ինչ որ աշխարհի կը
պատկանի, աշխարհի մէջ կը մնայ: Երբ մարդ կը
մեռնի հետը աշխարհէն ոչինչ կրնայ տանիլ, միայն՝
տեղեկութիւն: Որպէսզի այդ տեղեկութիւնը դրական
ըլլայ, ինք իր կեանքի ընթացքին, փոխանակ աշխար-
հիկ հաճոյքներով երջանկութիւն եւ ֆիզիքական խա-
ղաղութիւն փնտռելու, պարտ է, իրեն օգտակար, հոգե-
կան խաղաղութեան եւ Աստուածային երանութեան

ձգտելի: Յիսուս այս առակով սորվեցուցածը ալ աւելի բացայայտ տարբեր ձեւով ալ ըսած է.

«Մի՛ երկնշիւ Ըօր փոփոխի, զի Լաճեցաւ Լայր յեր Գա՛ւ յեւ զարեայո՞ւթիւնն: Վաճառեցէ՛ք զինչ՞ յեր, եւ Գո՛ւ զոգորմոս՞ութիւն եւ արարէ՛ք յեւ խախտաւ անանջ, Գանձ անպահա՛ս յերկինս. ո՛ր ո՛չ Գող մերձեանայ, եւ ո՛չ ցեց ապահանէ: Զի ո՛ր Գանձն յեր եւ, ա՛նդ եւ սիրտ յեր եղիցին»: (Ղաւնա ԺԲ:32-34)

«Մի՛ վախճար՝ պղտի՛կ Ըօտ՝ որովհետեւ ձեր Հայրը բարեհաճեցաւ՝ որ ձեզի տայ Թագաւորութիւնը: Ծախեցէ՛ք ձեր ինչքը եւ ողորմութիւն տուէք. Հմաշող քսակներ պատրաստեցէք ձեզի Համար՝ ու Հպակտող գանձ մը՝ երկինքը՝ ուր ո՛չ գողը կը մօտենայ եւ ո՛չ ցեցը կ'ապականէ: Որովհետեւ ո՛ւր որ է ձեր գանձը՝ Հո՛ն պիտի ըլլայ նաեւ ձեր սիրտը»:

«Մի՛ Գանձէ՛ք յեւ Գանցս յերկրի. ո՛ր ցեց եւ ո՛րիճ ապահանեն, եւ ո՛ր Գողէ՛ր ալան Լաքանեն եւ Գողանան: Այլ Գանձեցէ՛ք յեւ Գանցս յերկինս, ո՛ր ո՛չ ցեց եւ ո՛չ ո՛րիճ ապահանեն, եւ ո՛չ Գողէ՛ր ալան Լաքանեն եւ Գողանան: Զի ո՛ր Գանձէ՛ք յեր եւ, ա՛նդ եւ սիրտ յեր լիցին: (Մաթեւոս Զ.:19-21)

«Երկրի վրայ գանձեր մի՛ դիպէք ձեզի՝ ուր ցեցը եւ ժանգը կ'ապականեն՝ ուր գողերը պատ կը ծակեն ու կը գողնան: Հապա երկինքը գանձեր դիպեցէք ձեզի՝ ուր ո՛չ ցեցը եւ ո՛չ ժանգը կ'ապականեն՝ ու ո՛չ գողերը պատ կը ծակեն եւ կը գողնան: Որովհետեւ ձեր գանձը ո՛ւր որ է՝ ձեր սիրտն ալ Հո՛ն պիտի ըլլայ»:

Երկնային գանձը կարելի է հաւաքել Աստուածապաշտութեան կենցաղով մը: Այս վերջինն ալ կարելի է բոլոր ստեղծագործութիւնը սիրելով եւ խնամելով եւ բոլորին հանդէպ բարեացակամ եւ կարեկից ըլլալով:

ՀԱՄԱՏՈՐԻԱ ԿԱՄ ԱՆՀԱՄԱՏՈՐԻԱ ԾԱՌԱՍ



«Եղիցին Գօգրի յեր պնդեալ ընդ մեջ»,
էւ ճրագոռնի լոցեալի: Եւ դոռն նմա-
նօղի մարդկան՝ որ ա՛կն ունիցին Տէառն
իւրեանց՝ Բէ Էրժ դառնայցէ ՚ի Հարսան-
եաց: Զի յորժամ Գայցէ էւ Բախիցէ, զաղ-
զաղակի՛ Բանայցեն նմա: Երանի՛ իցէ Ժա-
ռայցին այնոցիկ, զորս Էկեալ Տէրն Գրցէ
արժէնա: Ըմէն առե՛մ յեւ՝ զի Գօգրի ընդ
մեջ ածցէ, էւ Բազմեցոոսցէ զնոսս, էւ
անցեալ պաշտիցէ՛ զնոսս: Եւ Էթէ յերկ-
րորդ՝ կամ յերրորդ պաճո՛ւ Էկեացէ՛ էւ
Գրցէ այնպէս, Էրանելի՛ Էն Ժառայի՛ն այնո-

էիկ: Բայց զայն Գերասիմ'ն, ելէ Գերեմ
դանոսիւն յորո՞մ ժամո՞ւ Գող Գայ, շրայր
Խոյլ ական Ըստանէ՛լ 'ի դան իւրո՞մ: Եւ
դո՞ւ՛ եղէրո՞ւն զարարասցէ, զի յորո՞մ
ժամո՞ւ ո՛չ կարժիցէի, Գայ որդի մարդոյ:
Ըսէ Պէրրոս. Տէր՝ առ մե՞զ ասացեր զա-
րակդ զայդ՝ Բէ առ ամենեւեան: Եւ ասէ
Տէր. Ո՞վ իցէ Ըստարիմ ցնիւս եւ իմաս-
դո՞ւն, զոր կացոյց դէ՛ր իւր 'ի ղերայ Գեր-
դաստանի իւրոյ դա՛լ 'ի ժամո՞ւ զկերակո՞-
րս: Երանի՛ իցէ Ժառային անմիկ՝ զոր եկ-
եալ դէ՛ր իւր 'ի Գրանիցէ արարեալ ան-
պէս: Ըրդարեւ ասե՛մ յեւ, զի 'ի ղերայ
ամենայն ընշից իւրոց կացո՞ւցէ զնա: Ըսա
Բէ ասիցէ Ժառայն ան՝ ի որդի իւրո՞մ.
Յամէ՛ դեր իմ 'ի Գալ. եւ ականիցի Ըստ-
կանել զԺառայան եւ զաղանայս, ուրիւ
եւ ընդէ՛լ եւ արժե՛նալ, եկեացէ դեր Ժառա-
յին անորիկ՝ յառո՞ր յորո՞մ ակն ո՛չ ունի-
ցի, եւ 'ի ժամո՞ւ յորո՞մ ո՛չ Գերիցէ, ընդ
մէ՛ջ կրեացէ զնա, եւ զմանն նորա ընդ
անճառա՛րս դիցէ: Եւ Ժառայն որ Գերիցէ
զկամս ցեառն իւրոյ՝ եւ ոչ զարարասցեացի
ըստ կամաց նորա, արժցէ Գան Բաշո՞մ:

Եւ որ ոչն գիտիցէ՝ Եւ արժանի Գանի ինչ
Գործիցէ, արքցէ Գան սակա՛ւ: Լմէնա՛յն
որո՛ւմ շաք Կոստ, շա՛ր խնդրեացի ՚ի
նմանէ. Եւ որո՛ւմ Բազոր՝ մանդեցաւ,
սոսաւ՝ Լ Եւս Կաճանջեացէն ՚ի նմանէ»: *(Ղուկաս ԺԲ:35-48)*

«Ձեր մէջքերը թող դօտեւորուած ըլլան, ու ճրագները՝ վառուած. եւ դուք նման եղէք այն մարդոց, որ կը սպասեն իրենց տիրոջ թէ ե՛րբ պիտի վերադառնայ Հարսանիքէն. որպէսզի երբ գայ ու դուռը բախէ՝ խնդնէ բանան անոր: Երանի՛ր այն ծառաներուն, որ տէրը արթուն պիտի գտնէ՝ երբ գայ: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ ի՛նք դօտին մէջքը պիտի կապէ, սեղան բազմեցնէ գանոնք, եւ առջեւ անցնելով՝ պիտի սպասարկէ անոնց: Եթէ գիշերուան երկրորդ պահուն գայ, կամ երրորդ պահուն գայ եւ այնպէս գտնէ՝ երանելի՛ են այդ ծառաները: Բայց սա՛ Հասկցե՛ք. եթէ տանուտէրը գիտնար թէ գողը ո՛ր ժամուն պիտի գայ, արթուն կը կենար ու թոյլ չէր տար՝ որ ծակէ իր տունը: Ուրեմն դո՛ւք ալ պատրաստ կեցե՛ք, քանի որ մարդու Որդին պիտի գայ այնպիսի ժամու մը՝ որ դուք չե՛ք կարծեր»: Պետրոս ըսաւ անոր. «Տէ՛ր, այդ առակը մեզի՞ կ'ըսես՝ թէ բոլորին ալ»: Տէրը ըսաւ. «Ուրեմն ո՛վ է այն Հաւատարիմ եւ իմաստուն տնտեսը, որ տէրը պիտի նշանակէ իր ծառաներուն վրայ՝ որպէսզի ատենին տայ անոնց ուտելիքը: Երանի՛ր այդ ծառային, որուն տէրը՝ երբ գայ՝ պիտի գտնէ թէ այդպէս կ'ընէ: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ պիտի նշանակէ գայն իր ամբողջ ինչքին վրայ: Հապա եթէ այդ ծառան ըսէ իր սիրտին մէջ. Իմ տէրս կ'ուշացնէ իր գալը, եւ սկսի ծեծել ծառաներն ու աղախինները, ուտել, խմել եւ արբեմալ, այդ ծառային տէրը պիտի գայ այնպիսի օր մը՝ երբ չի սպսեր, եւ այնպիսի ժամու մը՝ որ չի գիտեր. երկուքի պիտի կտրէ գայն, ու պիտի դնէ անոր բաժինը անհաւատարիմներուն Հետ: Այն ծառան՝ որ գիտէ իր տիրոջ կամքը եւ չի պատրաստուիր, ո՛չ ալ կը գործէ անոր կամքին Համաձայն, շա՛տ պիտի ծեծուի:

Բայց ա՛ն որ չի գիտեր ու ծեծի արժանի բաներ ընէ,
քիչ պիտի ծեծուի: Որո՛ւն որ շատ տրուեցաւ՝ շատ պիտի
պահանջուի անկէ, եւ որո՛ւն որ աւելի յանձնուեցաւ՝ ա՛լ
աւելի պիտի ուզուի անկէ»:

Տէս Զաւէ- Մարթէոս ԻԴ: 45-51

Այս առակը իր մէջ կը պարունակէ երկու անջատ
առակներ: Յիսուսի ըսած առակը ծառաներուն համար
անընդհատ արթուն ըլլալու յորդոր մըն է (համարներ
35-40): Առակին երկրորդ մասը պատասխան է Պետ-
րոսի հարցումին, թէ այդ առակը իրե՞նց համար ըսած
էր: Յիսուս այդ հարցումին կը պատասխանէ երկրորդ
առակով մը (համարներ 42-48): Կը թուի, թէ Յիսուս այս
երկու առակներն ալ, թէ՛ Իր աշակերտները եւ թէ՛
համայն մարդկութիւնը ի մտի ունենալով ըսած է:

Յիսուս առակին առաջին մասը կը սկսի «Զեր
մէջքերը» բառերով: Ուրեմն «Զեր» բառէն յայտնի
կ'ըլլայ, թէ խօսքը ուղղուած է աշակերտներուն, բայց
երբ անմիջապէս կ'աւելցնէ. «... եւ դուք նման եղէք այն
մարդոց», ուստի ակնարկը կ'ըլլայ բոլորին համար:
Առակին մէջ «Տէր»-ը կը ներկայացնէ Քրիստոս: Տէրը
հարսանիքէն պիտի վերադառնայ: Հարսանիքը Աստու-
ծոյ թագաւորութիւնը կը ներկայացնէ եւ հարսանիքէն
եկողն ալ Աստուծոյ թագաւորութենէն կու գայ, հետե-
ւաբար ակնարկը անձին մէջ Քրիստոսի յայտնութեան
համար է: Երանելի են այն ծառաները, որոնք Տէրը
արթուն պիտի գտնէ: Ծառաները կը ներկայացնեն հա-
մայն մարդկութիւնը: Իսկ անոնց արթնութիւնն ալ կը
ներկայացնէ իրենց բարձր գիտակցութեան մակարդա-
կը: Անոնք, որոնք արթուն չեն, խաւարամիտ են: Միայն
անոնք, որոնք խաւարամիտ չեն եւ բարձր գիտակցու-
թեան տէր, պիտի արժանանան Քրիստոսի առաջնորդու-
թեամբ խնճոյքին մասնակցիլ՝ Աստուծոյ թագաւորու-
թեան արժանանալ: Ասիկա յայտնի կ'ըլլայ առակին
մաս կազմող Յիսուսի հետեւեալ խօսքէն. «Ճշմա՛րտա-

պէս կը յայտարարեմ ձեզի, թէ ի՛նք դօտին մէջքը պիտի կապէ, սեղան բազմեցնէ զանոնք, եւ առջեւ անցնելով՝ պիտի սպասարկէ անոնց»։ Առակին մնացեալ մասը յորդոր մըն է, որպէսզի ամէն անձ միշտ ամէն վայրկեան, պատրաստ ըլլայ, որովհետեւ մարդ չի գիտեր, թէ երբ Քրիստոս իր մէջ պիտի յայտնուի։ Այս հիման վրայ մարդ իր կեանքի ընթացքին ամենեւին պէտք չէ շեղի կատարելութեան ուղիէն։ Իր միտքը Աստուծոյ վրայ կեդրոնացած, ինք պէտք է Աստուծոյ ներկայութիւնը՝ Քրիստոս տեսնէ ամէն անհատի եւ ամէն ինչի մէջ եւ ըստ այնմ վարուի՝ խորհի, խօսի եւ գործէ, բոլորին հետ։ Առակին այս վերջին մասին մէջ, Յիսուս նաեւ կը զգուշացնէ, որպէսզի քնանալով՝ խաւարամտութեամբ, «Ես»-ին զոհը չըլլանք։ Գողը կը ներկայացնէ «Ես»-ը։ Այն անձը որ արթուն է՝ բարձր գիտակցութեան տէր, չ'արտօնէր, «որ գողը իր տունը ծակէ»։ Դարձեալ մարդ չի գիտեր թէ «Ես»-ը երբ եւ ինչպէս պիտի կատարէ իր յարձակումը եւ «ծակէ տունը»։ Տունը մարդուն անհատականութիւնը կը ներկայացնէ։ Իսկ «Ձեր մէջքերը թող դօտեւորուած ըլլան, ու ճրագները՝ վառուած»-ն ալ, միշտ Քրիստոսի յայտնութեան համար պատրաստ ըլլալու ակնարկն է ։

Առակին երկրորդ մասը, Յիսուսին, դարձեալ առակի մը ձեւով, Պետրոսին տուած պատասխանն է։ Ասալ Յիսուսի կողմէ իր աշակերտներուն տրուած յորդոր մը ըլլալ կը թուի։ «Հաւատարիմ եւ իմաստուն տնտէսը», հոգեւոր կեանքի մէջ իրենց օրինակով հանրութիւնը առաջնորդողները կը ներկայացնէ։ Իբրեւ Յիսուսի աշակերտները, Յիսուսի համբարձումէն վերջ, իրենք հաւատքին առաջնորդները եղան։ Իրենց մահէն վերջ ալ՝ իրենց ձեռնադրած անձերը՝ այսօրուայ կղերականաց դասակարգը։ Ուրեմն Յիսուսի յորդորը ուղղուած է բոլոր կրօնաւորներուն։ Անոնք իրենց ձեռնադրու-

Թեամբ իբր տնտես նշանակուած են ծառաներուն վրայ: Ծառաները մարդկութիւնը կը ներկայացնեն: «Ատենին տայ անոնց ուտելիքը»-ն ալ, պատշաճ կերպով եւ ժամանակին ժողովուրդը կատարելութեան ուղիին մէջ առաջնորդելու ակնարկն է: «Ծեծել ծառաներն ու աղախինները» ակնարկ մըն է կղերականաց դասակարգին իրենց անձնական շահերուն համար ժողովուրդի շահագործման: «Ուտել, խմել եւ արբենալ»-ն ալ իրենց անձնական շահերը կը ներկայացնեն: Պէտք չէ մոռնալ միջնադարուն Հռովմի Կաթողիկէ Եկեղեցւոյն արքայութեան մէջ տեղ ծախելը: Իրենք ալ անհաւատարիմներուն հետ պիտի դասուին: Առակին վերջին մասը ազդարարութիւն մըն է, բոլոր անոնց, որոնք գիտեն կատարելութեան ուղին, բայց գիտնալով հանդէրձ չեն ընթանար այդ ուղիէն: Իրենք կատարելութեան ուղին գիտնալով, ստանձնած են վեհ պարտականութիւն մը: Այդ պարտականութիւնը հանրութեան օրինակ ըլլալ եւ իրենց վստահուած հօտը հովուելն է: Ազդարարութիւնը այն է, թէ եթէ գիտնալով հանդերձ չգործեն պատշաճօրէն, իրենց պատիժը շատ աւելի մեծ պիտի ըլլայ, քան թէ անոնց, որոնք նոյն սխալները կը գործեն, բայց անգիտակցաբար: Վերեւ նշեցինք, թէ ովքեր են առաջնորդները:

Անտարակոյս, Յիսուսի խօսքը կը թուի ուղղուած ըլլալ կղերականաց դասուն, բայց Յիսուս միանգամայն իր այս խօսքերը ուղղած է ամէն մի անհատի: Որովհետեւ այն անձը, որ ինք կը սորվի եւ իր կեանքի ընթացքին ջանք չի խնայեր կատարելութեան ուղին գտնել ու չչեղիլ այդ ուղիէն, նաեւ կը ստանձնէ պարտականութիւն մը, օգնելու եւ սորվեցնելու այդ ուղին իր «եղբօր»-ն ալ: Եւ ո՞վ է իր «եղբայր»-ը: Մարդկութեան մէջ բոլորս ալ իրարու քոյր եւ եղբայր ենք:

ԽՈՐԱՄԱՆԿ ՏՆՏԵՍԻ ԱՌԱՎ



«Եւ ասէ աս աշակերտան. Ե՛յր մի էր մեծա-
դոն, որոյ էր՝ ցնորէ՛ս. եւ եղէւ պնմանէ
ամբաստանոթիւն որպէս լիւ վարանցէ՛ պնշա
նորա: Առշէաց՝ եւ ասէ. Զի՞նչ է այս պոր
լսեմս պէ՛ն, որո՛ւր պնամա՛ր ցնորեաոթեանդ
է, պի՛ ո՛չ եւս կարեա լինել ցնորեա: Ես
ընդ միցա իւր ցնորեան. Զի՞նչ Գործեցից պի
դէր իմ Ըանէ՛ պնորեաոթիւնս. Գործել՝ ո՛չ
կարեմ. մորաանալ՝ ամաշէ՛մ: Գիցե՛մ պնշ
արարից. պի՛ յորժամ ՚ի Բաց լինիցիմ ՚ի
ցնորեաոթեանէս, ընկալցի՛ն պիս ՚ի որո՛նս
իւրեանց: Եւ կռշեցեալ աս ինչն մի ըսց
միողէ՛ ՚ի պարգապանաց ցեա՛սն իւրոյ. աս
ցառաջինն. Քանի՞ ինչ պարգիս ցեա՛սն
իմոմ: Եւ նա ասէ. Հարեա՛ր մա՛ր Յիւրոյ:
Ես ցնա. Աս՝ պարի չէ, եւ նի՛սպ Գրեա

վաղվաղակի յիսո՛ւն: Դարձեալ ասէ ցմեան.
Դո՛ւ չանի՞ ինչ պարտիս: Եւ նա ասէ.
Հարեւո՛ր չո՞ւ ցորենոյ: Եւ ասէ ցնա. Կա՛
չգիր չո՛ւ եւ նի՛սք գրեալ ուրիսո՛ւն: Եւ
Գողթա՛յ ցորեն զորնո՛ւն անիրաւօրեան, զի
իմաստութեամբ արար: Զի որդի չէ աշխարհիս
այսորիկ իմաստագործո՛յն չէ եւ չան զորդիս
լո՛ւսոյ յա՛յգս իրեանց: Եւ ես չեմ ասեմ.
Արարե՛լ չեմ բարեկա՛մս 'ի մամռնայե
անիրաւօրեան. զի յորժամ պակասից՛ այն,
ընկալցին զչեմ 'ի յա՛րկսն յաւորենականս: Որ
'ի փո՛ղոն Ըստարիմ է, եւ 'ի բաւմի՛ն
Ըստարիմ եւ որ 'ի փո՛ղոն՝ անիրաւ, եւ 'ի
բաւմին անիրաւ է: Իսկ արդ՛ էլ չանիրաւ
մամռնային շեղե՛լ Ըստարիմէ, զճշմարտին
չեմ՝ ո՞ր Ըստասացէ: Եւ էլ չեմ յօրարին
շեղե՛լ Ըստարիմէ, զչեմն՝ ո՞ր ցայցէ չեմ:
Ո՛չ ո՛ր կարէ երկո՛ւց ցորենոյ թառայել. զի
էլ չեմ զմին՝ արիցէ, եւ զմեան ո՛րե՛ւ. կամ
զմին՝ մեծարիցէ, եւ զմեանն արեւմարիցէ:
Ո՛չ կարե՛լ Աստուծո՛յ թառայել եւ
մամռնայի»: (Ղուկաս ԺԶ:1-13)

«Իր աշակերտներուն ալ ըսաւ. «Հարուստ մարդ մը կար՛
որ տնտես մը ունէր. ասիկա ամբաստանուեցաւ անոր առ-
ջեւ՝ որպէս թէ կը փճացնէ անոր ինչքը: Ուստի կանչեց
զայն եւ ըսաւ անոր. Այս ի՞նչ է՝ որ քու մասիդ կը
լսեմ. տնտեսութեանդ հաշիւը տուր, որովհետեւ ա՛լ չես

կրնար տնտես ըլլալ: Տնտեսը ըսաւ ինքնիրեն. Ի՞նչ ընեմ, որովհետեւ տէրս տնտեսութիւնը կ'առնէ ինձմէ: Հեմ կրնար Հողագործ ըլլալ, կ'ամչնամ մուրալ: Գիտե՛մ ինչ պիտի ընեմ, որպէսզի երբ հեռացուիմ իմ տնտեսութենէս՝ ընդունին զիս իրենց տունը: Եւ իրեն կանչելով իր տիրոջ պարտազաններէն իւրաքանչիւրը, ըսաւ առաջինին. Դուն ո՞րչափ կը պարտիս իմ տիրոջս: Ան ալ ըսաւ. Հարիւր մար ձէթ: Ըսաւ անոր. Ա՛ն մուրհակդ՝ ու շուտով նստէ՝ «Հիտո՛ւն» գրէ: Յետոյ ըսաւ միւսին. Դո՛ւն ո՞րչափ կը պարտիս: Ան ալ ըսաւ. Հարիւր քոռ ցորեն: Ըսաւ անոր. Ա՛ն մուրհակդ եւ «ութսո՛ւն» գրէ: Տէրը գովեց անիրաւ տնտեսը՝ որ ուշիմութեամբ վարուեցաւ. որովհետեւ այս աշխարհի որդիները աւելի՛ ուշիմ են իրենց սերունդին մէջ՝ քան լոյսի որդիները: Ես ալ կ'ըսեմ ձեզի. Բարեկամներ՝ ըրէք ձեզի անիրաւ մամոնայէն, որպէսզի երբ ան պակսի, ընդունին ձեզ յաւիտենական բնակարաններու մէջ: Ա՛ն որ ամենափոքր բանին մէջ հաւատարիմ է՝ շատին մէջ ալ հաւատարիմ կ'ըլլայ, եւ ան որ ամենափոքրին մէջ անիրաւ է՝ շատին մէջ ալ անիրաւ կ'ըլլայ: Ուրեմն եթէ անիրաւ մամոնային մէջ հաւատարիմ չըլլաք՝ ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի վստահի ձեզի: Եթէ ուրիշին բանին մէջ հաւատարիմ չըլլաք, ձերը ո՞վ պիտի տայ ձեզի: Ո՛չ մէկ ծառայ կրնայ ծառայել երկու տիրոջ. որովհետեւ կա՛մ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկուն պիտի յարի ու միւսը արհամարհէ: Զէք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»»:

Այս առակը առաջին հերթին կրնայ զարմանք պատճառել, որովհետեւ «Հարուստ մարդը» կը գովէ իր տնտեսը, որ առաջին ամբաստանութենէն յետոյ, երկրորդ անգամ, տիրոջը պարտք ունեցողներուն պարտքերը, իր անձնական շահուն՝ իր ապագային համար, պակսեցնելով դարձեալ անիրաւութիւն կը գործէ եւ տիրոջը վնաս կը հասցնէ: Արդեօք Յիսուսի նպատակը անիրաւութիւնը գովե՞լ էր: Վստահաբար ո՛չ: Այս առակով Յիսուս մեր կերտելիք կենցաղին նկատմամբ լուրջ դաս մը կու տայ: Դարձեալ նման միւս բոլոր առակներուն, առակին մէջ ամէն ինչ իրեն փոխաբերական իմաստը ունի: «Հարուստ մարդը» կը ներկայացնէ Աստուած եւ «անոր ինչքն» ալ՝ ստեղծագործութիւնը՝

աշխարհի բարիքները: Տնտեսը, որ «հարուստ մարդուն» բոլոր գործերուն վրայ վերակացու եւ կառավարիչ նշանակուած էր եւ կը ղեկավարէր զանոնք, կը ներկայացնէ համայն մարդկութիւնը, ինչպէս նաեւ ամէն մի անհատ: «Այգիին մշակներուն» առակին նման, ուր «Մշակներու յանձնեց զայն»-ը, ակնարկ մըն էր Ծննդոց գիրքի մէջի այն համարներուն, ուր Աստուած մարդուն իշխանութիւն տուած էր բոլոր երկրի վրայ (Ծննդոց Ա. 28 եւ Բ. 15), որպէսզի մարդ իր իմացականութեամբ զայն պատշաճ կերպով կառավարէր: Այս առակին մէջ ալ նոյնն է տնտեսին պարտականութիւնը: Մարդուն պարտականութիւնն է խնամել եւ պատշաճ կերպով օգտագործել աշխարհի բարիքները իր Տիրոջ՝ Աստուծոյ նպատակին ծառայելու համար: Մարդ արարած իր պարտականութենէն եւ կատարելութեան ուղիէն շեղած, իր եսասիրութեան պատճառով կը «փճացնէ» Աստուծոյ «ինչքը»՝ աշխարհը եւ բնութիւնը ու արգելք կը հանդիսանայ, որ Աստուածայատնութիւնը իր՝ մարդու միջոցաւ իրականանայ, այսինքն Քրիստոս մարդուն մէջ եւ մարդուն միջոցաւ ի յայտ գայ: «Տնտես»-ը իր գործած այս անխոհեմութեան հետեւանք իր ապագան կը խորտակէ: Այն անձը, որ իր կեանքի ընթացքին եսասիրութեամբ կ'ապրի եւ Աստուծոյ կամքը չի կատարեր, չի կրնար շարունակել Աստուծոյ տնտեսը՝ ծառան ըլլալ եւ կատարելութեան ուղիին մէջ մնալ: Աստուծոյ տնտեսը ան է, որ կատարելութեան ուղիէն կ'ընթանայ: Տնտեսը իր ապագան ապահովելու համար ուշիմութեամբ վարուեցաւ: Առակին մէջ, տիրոջ իր տնտեսին տուած գովասանքը անոր ըրածին համար չէր, այլ՝ անոր ուշիմութեան համար, որովհետեւ ան իր ապագային համար գործած էր: Այս տեսակէտը յայտնի է, առակին մէջի գովասանքէն անմիջապէս վերջ Յիսուսի ըսած խօսքերէն: Յիսուս կ'ըսէ. «... որովհետեւ այս աշխարհի որդիները աւե-

լի՛ ուշիմ են իրենց սերունդին մէջ՝ քան լոյսի որդիները»։ Անոնք, որոնք կը ձգտին կատարելութեան ուղիէն ընթանալ, ընդհանուր առմամբ ուշիմ չեն եւ կը չեղին ուղիէն։ Երբ Յիսուս կ'ըսէ. «Բարեկամներ՝ ըրէ՛ք ձեզի անիրաւ մամոնայէն», ըսել կ'ուզէ դաս առէ՛ք անոնցմէ, որ կատարելութեան ուղիէն չեն ընթանար, սակայն խորամանկ են եւ իրենց ապագայի ֆիզիքական եւ նիւթական հանգիստը ապահովելու համար ուշիմութեամբ կը գործեն։ Առնուելիք դասը այն է, որ լոյսի որդիները, որոնք կատարելութեան ուղիէն կը ցանկան ընթանալ, պարտ են նման ուշիմութեամբ պատրաստեն իրենց ապագան, ինչպէս նաեւ իրենք զիրենք։ Այս անգամ ակնարկը իրենց հոգեւոր ապագային համար է։ Երբ անհատը ուշիմութեամբ կը կերտէ իր կենցաղը եւ եթէ նոյնիսկ ինք կատարելութեան ուղին չի հետապնդեր, գոնէ ուշիմութեամբ գործել սորված կ'ըլլայ։ Եւ երբ օր մը կ'անդրադառնայ իր գործած սխալին ու աշխարհի շլացուցիչ ցանկութեանները այլեւս զինք չեն հրապուրեր, իր սորված ուշիմութիւնը գործածելով կը հետապնդէ կատարելութեան ուղին եւ արժանի կ'ըլլայ յաւիտենական կեանքի։ Աշխարհի շլացուցիչ ցանկութիւններուն պակսիլը Յիսուս կը յայտնէ հետեւեալ խօսքով. «որպէսզի երբ ան (մամոնան) պակսի, ընդունին ձեզ յաւիտենական բնակարաններու մէջ»։ Յիսուս այս առակը կ'եզրափակէ երկու կարեւոր դասերով։ Ասոնց առաջինը հետեւեալն է. «Ա՛ն որ ամենափոքր բանին մէջ հաւատարիմ է՝ շատին մէջ ալ հաւատարիմ կ'ըլլայ, եւ ա՛ն որ ամենափոքրին մէջ անիրաւ է՝ շատին մէջ ալ անիրաւ կ'ըլլայ։ Ուրեմն եթէ անիրաւ մամոնային մէջ հաւատարիմ չըլլաք, ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի վստահի ձեզի։ Եթէ ուրիշին բանին մէջ հաւատարիմ չըլլաք, ձե՛րը ո՞վ պիտի տայ ձեզի»։ Յիսուսի սորվեցուցած այս դասը կը

վերաբերի մարդկային կենցաղին: Եթէ նոյնիսկ աշխարհին կապուած ըլլանք՝ փոխանակ բոլորին միականութիւնը տեսնելու «երկուութեան» պատրանքէն տարուած, պարտ ենք մեր բոլոր փոխյարաբերութիւններուն մէջ թէ՛ հաւատարիմ ըլլալ եւ թէ՛ անիրաւութիւն չընել: Աշխարհիկ կեանքը, երբ բաղդատուի յաւիտենական կեանքին հետ, ճղճիմ ոչնչութիւն մըն է: Ըստ Յիսուսի տուած դասին, եթէ այս աշխարհի վրայ մեր կենցաղը չէ հիմնուած հաւատարմութեան եւ ուրիշին իրաւունքը տալու առաքինութիւններու վրայ, ինչպէս կրնանք յուսալ, որ Աստուած ալ մեզի վստահի յաւիտենական կեանքը: Եթէ փոքրին մէջ հաւատարիմ եւ արդար չենք, անկարելի է որ «չատին» մէջ հաւատարիմ եւ արդար ըլլանք: Իսկ երբ Յիսուս կ'ըսէ. «...ձե՛րը ո՞վ պիտի տայ ձեզի», հոս «ձերը» մեր ներքին Քրիստոսն է եւ մեզի տրուելն ալ՝ մեր մէջ Քրիստոսի յայտնութիւնը: Յիսուսի տուած երկրորդ դասն ալ հետեւեալն է. «Ո՛չ մէկ ծառայ կրնայ ծառայել երկու տիրոջ. որովհետեւ կա՛մ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկուն պիտի յարի ու միւսը արհամարհէ: Չէք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»: Մարդ չի կրնար իր «Ես»-էն ծագող աշխարհիկ ցանկութիւններէն եւ հաճոյքներէն տարուած, զանոնք հետապնդող կենցաղով մը յաւիտենական կեանքին արժանանալ: Մարդ իր ազատ կամքով կը զատէ իր անհատականութեան ժխտական բեւեռը՝ իր «Ես»-ը եւ ըստ այնմ կ'ապրի: Եւ կամ ալ կը զատէ զրական բեւեռը՝ Քրիստոս եւ կ'ապրի ըստ Աստուծոյ կամքին: Իսկ ան ընդհանրապէս կը ջանայ երկուքին միջեւ օրօրուել: Աս անկարելի է: Մարդ չի կրնար երկու տիրոջ ծառայել:

ԱՊԵՏ ՂԱԶԱՐՈՒՄԻ ԱՌԱՎԸ



«Եյր ոմն էր մեթափոռն, է- ագանէր քե-
ւե՛ւս է- ծիրանիս, է- ուրա՛խ լինէր Հա-
նադաս առաքապէս: Ե- աղէ՛ս ք ոմն անոն
Ղա՛ւարոս, անկեալ դնէր առ դրան նորա
վերա-որեա՛ւ. է- ցանկա՛յր լնու-լ զորովայն
իւր ՚ի փշրանացն՝ որ անկանէին ՚ի սեղանոյ
մեթափանն: Եյլ է- շո՛ւնէ է-ս՝ Գային է-
լիզո-ին զվերս նորա: Եղէ- մեռանել աղէա-
յին, է- ցանել Հրեշտակացն զնա ՚ի Գո՛գ
ԱթրաՀամոս: Սեռա՛ւ է- մեթափոռնն՝ է-
լաղէցաւ: Ե- ՚ի դժոխան՝ ամբա՛րջ զաշս
իւր մինչ ՚ի ցանջանան էր. էրե՛ս զԱթրա-
Համ ՚ի Հեռաաքանէ է- զՂաւարոս ՚ի Գո՛գ
նորա Հանգոցեալ: Ե- նա՛ աղաղակեա՛ց է-
ասէ. Հայր ԱթրաՀամ՝ ողորմեա՛ց ինձ, է-

առաջինս՝ Վազարոս, չի թաքցել պատճառներն իրոյ 'ի ջոհ, եւ պովարեցէ՛ն զիս-
պէս իմ, չի պատկանիմ 'ի քաղաքի մարի: Եւ
ասէ ցնա Աբրահամ. Ո՛րդեակ յիշեա՛ն չի ըն-
կալա՛նք անդէն զբարեա ին 'ի կենսան ին,
եւ Վազարոս նոյնպէս զշարշարա՛նս. արդ՝
ասք մխրթարի, եւ դոս այդք՝ պատկանիմ:
Եւ 'ի վերայ այսք ամենայնի՝ վե՛հ մե՛ծ է
ընդ մեզ եւ ընդ եթէ կամեցինք ասքի՝ առ-
ջեզ անցանել, ո՛չ կարեն. եւ ո՛չ այդք ո՛վ
առ մեզ անցանել: Եւ ասէ. Արդ աղաշեմ
չէ՛նք ճա՛նչ, չի արձակեցեա՛ն զդոս 'ի քոն
ճօր իմոյ. եւ իմ անդ եղբա՛նք Հինգ,
որպէս չի քայցէ նոցա վկայութեան. չի մի՛
եւ նոյն Գայցէն յայս քեզի քանջանայ:
Եւ ասէ Աբրահամ. Ունին զՄովսէ՛ն եւ
զմարգարեան, նոցա լոսեցէն: Եւ նա՛ ասէ.
Ո՛չ՝ ճա՛նչ Աբրահամ, քայց թէ 'ի մեռելոց
ո՛վ երթեցէ առ նոսա, եւ ապաշխարեցէն:
Եւ ասէ ցնա. Եթէ Մովսէսի եւ մարգարե-
րցն ո՛չ լսեն, եւ ո՛չ թէ 'ի մեռելոց ո՛վ
յառնեցէ՛ն ճառանեցին»: (Ղաւկա ժ:9:19-31)

«Հարուստ մարդ մը կար՝ որ ծիրանի ու բեհեզ կը
հազնէր, եւ ամէն օր փառահեղ խրախճանք կը սարքէր:
Ղազարոս անունով աղքատ մըն ալ կար՝ պալարներով

ծածուկած, որ պառկած էր անոր դրան քով, ու կը ցանկար կշտանալ Հարուստին սեղանէն ինկած փշրանքներէն. նաեւ շուներն ալ կու գային եւ կը լզէին անոր պալարները: Այդ աղքատը մեռաւ, ու հրեշտակները Աբրահամի գոգը տարին գայն: Հարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ: Մինչ դժոխքը՝ տանջանքի մէջ էր, իր աչքերը բարձրացնելով՝ Հեռուէն տեսաւ Աբրահամը, ու Ղազարոսը՝ անոր գոգը Հանգիստ նստած: Ուստի գոչեց. Հայր Աբրահամ, ողորմէ՛ ինձի ու դրկէ՛ Ղազարոսը, որպէսզի ջուրի մէջ թաթիս իր մատին ծայրը եւ գովացնէ լեզուս, որովհետեւ կը տանջուիմ այս բոցին մէջ: Աբրահամ ըսաւ. Որդեակ, յիշէ՛ թէ դուն կեանքիդ ընթացքին ստացար բարեքներդ, նմանապէս Ղազարոս՝ չարեքներ. Հիմա ան Հոս կը մխիթարուի, ու դուն կը տանջուիս: Այս բոլորէն զատ՝ մեր եւ ձեր մէջտեղ Հաստատուած մեծ անդունդ մը կայ, որպէսզի ասկէ ձեզի անցնիլ ուզողները չկարենան, ո՛չ ալ ասկէ մեզի գալ ուզողները՝ անցնին: Ան ալ ըսաւ. Ուրեմն կը խնդրեմ քեզմէ, Հայր, որ դրկես գայն Հօրս տունը, քանի որ Հինգ եղբայր ունիմ. որպէսզի վկայէ անոնց, որ անոնք ալ չգան այս տանջանքի տեղը: Աբրահամ ըսաւ անոր. Անոնք ունին Մովսէսն ու մարգարեները, թող անոնց մօտիկ ընեն: Ան ալ ըսաւ. Ո՛չ, Հայր Աբրահամ. Հապա եթէ մեռելներէն մէկը երթայ անոնց՝ պիտի ապաշխարեն: Իսկ ան ըսաւ անոր. Եթէ մօտիկ չեն ըներ Մովսէսի եւ մարգարեներուն՝ պիտի չհամոզուին՝ նոյնիսկ եթէ մէկը մեռելներէն յարութիւն առնէ»:

Այս առակով Յիսուս մեզի կը սորվեցնէ կեանքի մէջ անձնասէր չըլլալ եւ մարմնային հաճոյքներուն համար չապրիլ: «Հարուստ մարդ»-ը կը ներկայացնէ անոնք, որոնք իրենց քիմքին եւ այլ մարմնային հաճոյքներու համար կ'ապրին: Միթէ «որկրամոլութիւնը մահացու մեղքերէն մին է» չէ՞ ըսուած: Իսկ Ղազարոս աշխարհի մէջ ոչինչ ունէր: Ան նոյնիսկ կը ցանկար Հարուստին սեղանէն ինկած փշրանքներով կշտանալ: Յիսուս ուրիշ առիթով ալ երկինքի թռչունները եւ դաշտերուն շուշանները օրինակ բերելով ըսած է, թէ Աստուած բոլորին կը հոգայ եւ մարդը մատնա-

ներշնչելով ըսած է. «որքան ակելիով մարդուն»: Տիեզերքի մէջ ամէն ինչ ըստ Աստուծոյ կամքին կ'ընթանայ, բացի մարդը, որ ազատ կամք ունի: Բայց մարդը, իր ազատ կամքով, կարողութիւնը ունի կատարելութեան ուղին գտել եւ ապրիլ ըստ Աստուծոյ կամքին: Սակայն ան ընդհանուր առմամբ կը հետեւի իր «Ես»-ին եւ կ'ապրի ըստ անոր կամքին: Ամէն անձ կը ծնի որոշ տաղանդներով եւ որոշ կացութիւններու մէջ: Ասոնք Աստուծոյ քմահաճոյքէն կախեալ չեն: Եթէ ըլլային, Աստուած արդար չէր ըլլար: Քաւ լիցի: Այլ ամէն անհատի կեանքի պատահարները եւ իր ունեցած կարողութիւնները արդիւնք են իր հոգիի մէջ ի տեղեկութիւններուն՝ մնացած անոր նախկին մարմնացումներէն: Ասոնք բոլորն ալ կամ վարձատրութիւններ են, կամ «պարտքեր», որոնք պէտք են «վճարուիլ»: Մեզի կը մնայ մեր կեանքի բոլոր լաւ ու վատ պատահարները ընդունիլ: Վատ պատահարներուն համար չգանգատիլ եւ լաւատես ըլլալ եւ գիտնալ թէ «պարտք» մըն է որ կը «վճարենք»: Ղազարոս իր այս կեանքին մէջ ընդունած էր իր կեանքի կացութիւնը: Իր «պարտքը» «վճարած» ըլլալով մահէն յետոյ արժանացած էր փրկութեան, որ փոխաբերական իմաստով նկարագրուած է իբր. «ի գո'գ նորա (Աբրահամի) հանգուցեալ»: Իսկ պարտ ենք լաւ պատահարները ընդունիլ իբր վարձատրութիւն եւ Աստուծոյ փառք տալ: Զանոնք պէտք է օգտագործել հանրութեան օգտին համար եւ ոչ եսասիրութեամբ միայն անձնական հաճոյքներու համար: Հարուստը իրեն տրուած վարձատրութիւնը մսխեց եւ իր կեանքը չարժեքաւորեց: Իր վարձատրութիւնը եղաւ իր աշխարհիկ մարմնային հաճոյքները: Եթէ ինք իրեն տրուած վարձատրութիւնը՝ հարստութիւնը գործածէր ի նպաստ հանրութեան օգտին, իր ըրածը պիտի ըլլար ճշմարիտ Աստուածպաշտութիւն եւ ինք պիտի արժանանար ակե-

լի բարձր վարձատրութեան՝ Աստուծոյ թագաւորութեան: «Հարուստ մարդ»-ը իր մահէն յետոյ իր գործած սխալներուն կ'անդրադառնայ եւ կ'ենթարկուի իր աշխարհիկ կենցաղին յառաջ բերած տառապանքներուն: Ինք կ'աղաչէ, որ Ղազարոս իր տառապանքը քիչ մը մեղմացնէ, ինչ որ անկարելի է: Ամէն անձ ինք պատասխանատու է իր խորհուրդ, խօսք ու արարքներուն յառաջ բերած հակազդեցութիւններուն, ինչպէս նաեւ իր կեանքի պայմաններուն եւ իր ապրած կենցաղին: Առակին վերջին մասը կը ներկայացնէ, Հարուստ մարդուն իր ներկայ կացութենէն որոշ չափով սորված դասը: Ան կը մտահոգուի իր եղբայրներուն վախճանով եւ կը փափաքի կացութիւնը անոնց տեղեկացնել, որպէսզի իրենց կենցաղը փոխեն ու շտկեն: Իր մտահոգութիւնը կը թուի դարձեալ իր մէջ եսասիրութեան նշոյլ մը ունենալ, որովհետեւ մտահոգութեան առարկան միայն իր անմիջական սիրելիները, իր ընտանիքին անդամներն են: Մտահոգութիւնը եւ կարեկցութիւնը պէտք է ըլլայ ի նպաստ համայն մարդկութեան եւ ոչ միայն մեր անմիջական սիրելիներուն համար: Հայր Աբրահամ կը յիշեցնէ Մովսէսի եւ մարգարէներուն սորվեցուցածները եւ եթէ հետեւին այդ գրուածներուն կը շտկեն իրենց կենցաղը: Հարուստը կը խորհի թէ եթէ մեռեալներէն մէկը անոնց քով երթայ, անոր մտիկ կ'ընեն: Հայր Աբրահամ կ'ըսէ, թէ անոր ալ մտիկ չեն ըներ: Առակին այս մասին մէջ կարծէք Յիսուս ականարկ մը կ'ընէր իր Յարութեան: Միթէ Յիսուս Քրիստոս մեռելներէն յարութիւն չառա՞ւ եւ ետ չեկա՞ւ: Իր յարութենէն վերջ ինք դարձեալ քարոզեց ու սորվեցուց: Արդեօք մարդիկ իր սորվեցուցածները կը կիրարկե՞ն: Ուրեմն Յիսուս ինք փաստեց, թէ առակին մէջ իր ըսածին նման, եթէ մեռեալը անգամ ետ գայ, անոր մտիկ չեն ըներ: Որով ըստ այնմ ապրինք:

ԱՅՐԻՆ ԵՒ ԴԱՏԱԽՈՐԻՆ ԱՌԱԿԸ



«Լաայ է- առա՛կ մի նոցա, առ այն՝ թէ
պա՛րոյ է յամենայն ժամ կա՛լ նոցա յաղօթա՛
ն է- մի՛ շանցրանալ: Լաէ- Դադառ-ո՛ր մի էր
'ի փառափի ուրեմն, յԼադո-թոյ ո՛չ երկն-
շէր՝ է- 'ի մարդկանէ ո՛չ ամաշէր: Ե-
այրի՛ մի էր 'ի նմին փառափի, Գա՛յր առ-
նա է- ասէր. Դա՛յր արա ինչ յոսոխէ իմմէ:
Ե- ո՛չ կամէր 'ի Բազում ժամանակս: Յե-
յանորիկ ասէ՛ 'ի մորի իւրում, թէ է- յԼա-
դո-թոյ ո՛չ երկնշիմ, է- 'ի մարդկանէ ո՛չ
ամաշէմ, Գոնէ՛ զասն աշխա՛յր առնելոյ զիս
այր-ոյն արարի՛ց նմա դադ, զի մի՛ 'ի

«սպասե՛լ եկեալ թախանջիցե՛ր զիս: Եւ ասէ
Տէր. Լռարո՞ւմ չի նշ դատարանի մէջ անիրա-
ւորութեան ասելը: Իսկ Լսարոն ասա՛ւ, ո՞չ անհիցե
վրէժխնդրութիւնն ծառայից իրոց, որ
աղաղակէ՛ն աս նա՝ ի գոհե՛լ եւ ի գիշերի,
եւ երկայնամիտ մեռնի լինիցի աս նոսա:
Եյո՛ւ, ասե՛մ զի արասցե՛ վրէժխնդրութիւնն
նոցա վաղվաղակի: Իսկ որդի մարդոյ եկեալ,
Գրանիցե՛ր արդեւ չեմ անհրաժեշտ յերկրի»:
(Ղուկաս ԺԷ:1-8)

«Առաւ մըն ալ ըսաւ անոնց, որ գիտնան թէ պէտք է
ամէն՝ն ատեն աղօթել՝ առանց ձանցրանալու: Ըսաւ.
«Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ Աստուծոյ չէր
վախնար ու մարդ չէր յարգեր: Նոյն քաղաքին մէջ այ-
լի մըն ալ կար, որ կու գար անոր եւ կ'ըսէր. Պաշտ-
պանե՛ր իմ իրաւունքս՝ ոսոխիս դէմ: Ան ժամանակ մը
չէր ուզէր անոր մտիկ ընել. բայց յետոյ ըսաւ ինքնի-
րեն. Թէպէտ Աստուծոյ չեմ վախնար ու մարդ չեմ
յարգեր, գո՛նէ պաշտպանեմ այս այրիին իրաւունքը՝ գիս
անհանգստացնելուն համար, որպէսզի չգայ ամէն ատեն
թախանձէ ինծի»: Եւ Տէրը ըսաւ. «Լսեցե՛ք ի՛նչ կ'ըսէ
անիրաւ դատաւորը: Հապա Աստուծոյ պիտի չպաշտպա-
նե՞՞ իր ընտրեալներուն իրաւունքը, որոնք կը գոչեն
իրեն ցերեկ ու գիշեր, թէեւ համբերատար ըլլայ անոնց
հանդէպ: Կը յայտարարեմ ձեզի թէ չուտո՞վ պիտի
պաշտպանէ անոնց իրաւունքը. բայց երբ մարդու Որդին
գայ, արդեօք հաւատք պիտի գտնե՞՞ երկրի վրայ»:

**Այս առակը համբերութեան եւ յարատեւութեան
դաս մըն է: Այրիին դատը կը ներկայացնէ մարդու
կեանքը: Անիրաւ դատաւորը կը ներկայացնէ կեանքի
անբաղձալի պատահարները եւ դժուարութիւնները,
որոնք շատ անգամ կը թուին անիրաւութիւն ըլլալ եւ
մարդուն վրայ յուսահատութիւն կը բերեն եւ պատճառ**

կ'ըլլան որ ան իր հաւատքը կորսնցնէ: Կը թուի թէ աշխարհի տէրը «Սատանան» է, որով աշխարհի մէջ անիրաւութիւն կը տիրէ: Միթէ բոլորս ալ մեր կեանքի ընթացքին չե՞նք ապրած կացութիւններ, որոնք անիրաւութիւններ համարած ենք: Միթէ Հայոց ցեղասպանութիւնը անիրաւութիւն չե՞նք նկատեր: Անիրաւ դատաւորն ալ աշխարհի այդ անիրաւութիւնը կը ներկայացնէ: Հակառակ բոլոր դժուարութիւններու այրիին յարատեւ դատաւորին ներկայանալը կը համապատասխանէ, հակառակ ամէն ինչի, մարդուն կատարելութեան ուղիէն չչեղելուն: Ճշմարտութեան վրայ եղած հաւատքով եւ առանց նպատակէն չեղելու, համբերութեամբ եւ յարատեւութեամբ կարելի է ի վերջոյ յաղթանակը ձեռք ձգել: Յիսուս, առակի սկիզբնաւորութեան առակին բուն նպատակը կ'ըսէ. «... որ գիտնան թէ պէտք է ամէն ատեն աղօթել՝ առանց ձանցրանալու»: Վստահաբար, Յիսուսի ըսածը առտու-իրիկուն ծունկի դալ եւ անընդհատ աղօթել չէր: Որովհետեւ մարդուն կեանքը անընդհատ աղօթք մը պէտք է ըլլայ: Իր միտքը Աստուծոյ վրայ կեդրոնացած, ամենուրեք Աստուած տեսնէ, ամէն անհատ եւ անասուն նկատէ Աստուծոյ մէկ արտայայտութիւնը եւ այդ հայեացքով վարուի բոլորին հետ: Նման կեանք մը կ'ըլլայ անընդհատ աղօթք: Ահա՛ աս է ճշմարիտ Աստուածպաշտութիւնը: Որովհետեւ անիրաւ դատաւորը այրի կնոջ համբերութիւնը եւ յարատեւութիւնը չունի, վերջապէս կը հաւանի անոր դատը տեսնել: Եթէ մենք ալ մեր կենցաղով համբերութեամբ եւ յարատեւութեամբ առանց չեղելու յառաջանալ կատարելութեան ուղիէն, օր մը մենք ալ մեր իրաւունքը կը ստանանք: Կարծէք նման խոչնդոտներ կը ներկայանան մեր կեանքերուն մէջ փորձելու համար մեր հաւատքը, համբերութիւնը եւ յարատեւութիւնը:

ՓԱՐԻԱԵՅԻՒՆ ԵՒ ՄԱՐԱՍԽՈՐԻՆ ԱՌԱԿԸ



«Ըսուց էւ առ ոմանս պանծացեալս յան-
ջինս թէ արդարէ իցեն՝ էւ խորիցեն զբա-
ւոմս, զստակս զայս: Եւ թէ երկուքն ՚ի
հաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի՝ էւ
մեւսն մախառոր: Փարիսեցին կա՛յր մեկու-
սի, էւ զս՛յս առանջին աղօթս մարտցա-
նէր. Ըսորտա՛ջ իմ՝ Գոհանա՛մ զէ՛են. զի
ո՛չ էմ իբրեւ զայլս ՚ի մարտկանէ, զյափռշ-
հակօղս՝ էւ զանիրա՛ւս՝ էւ զշօ՛ւնս, կամ
իբրեւ զայս մախառոր: Ելլ ապա՛մ երկի՛ցս
՚ի շաբաթոս, էւ համ հասանո՛րդըս յամե-

նայն սրացումայ իմոց: Եւ մախաւորն
կայր մէկոսի, եւ ո՛չ կամէր՝ եւ ո՛չ պաշս
ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկո՛ւր-
ծս իւր՝ եւ ասէր. Լսորո՛ւմ՝ խաւա՛ս զիս
զմէջաւորս: Լաւ՛մ էջ սա արդարացեալ՝ ի
դո՛ւն իւր խն զնա: Զի ամենայն որ
բարձրացոյցանէ պանշն իւր, խոնարհեացի՛.
Եւ որ խոնարհեցոյցանէ՛ պանշն, բարձրաս-
ցի՛»: (Ղուկա ԺԸ:9-14)

«Աս՛ առական ալ ըսաւ ոմանց, որոնք իրենք իրենց վրայ
կը վստահէին թէ արդար են, եւ կ'անարգէին
ուրիշները. «Երկու մարդ տաճարը բարձրացաւ
աղօթելու, մէկը՝ Փարիսեցի, ու միւսը՝ մաքսաւոր:
Փարիսեցին կայնած էր եւ սա՛պէս կ'աղօթէր ինքնիրեն.
Ո՛վ Աստուած, շնորհակալ եմ քեզմէ՛ որ ուրիշ մարդոց
պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող, կամ ալ այս
մաքսաւորին պէս. Հապա շաբաթը երկու անգամ ծոմ
կը պահեմ, եւ ամբողջ եկամուտիս տասանորդը կու
տամ: Իսկ մաքսաւորը Հեռուն կայնած էր, ու չէր ուզեր
աչքն ալ բարձրացնել երկինք, Հապա՛ ծեծելով իր
կուրծքը՝ կ'ըսէր. Աստուա՛ծ, ներէ՛ ինծի՛ մեղաւորիս: Կը
յայտարարեմ ձեզի թէ ասիկա այն միւսէն աւելի
արդարացած իջաւ իր տունը. որովհետեւ ո՛վ որ կը
բարձրացնէ ինքզինք՝ պիտի խոնարհի՛ իսկ ո՛վ որ կը
խոնարհեցնէ ինքզինք՝ պիտի բարձրանայ»»:

*Այս առակին սորվեցուցած դասը բացայայտ է:
Յիսուս այս առակով երկրորդ անգամ մը եւս կը շեշտէ,
այն ինչ որ ինք սորվեցուցած էր լերան քարոցին մէջ:*

*«Երանի Հեշոց, զի նո՛ւա ժառանգեացեն
զերկիր»»: (Մարգէնոս Ե:5)*

«Երանի՛ Հեզերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն
երկիրը»:

Յիսուսի սորվեցուցածը հեզ եւ խոնարհ ըլլալն էր: Այս

առակին մէջ, փարիսեցին՝ օրէնքի մարդը, հպարտութիւն ցոյց կու տայ բոլոր կրօնական օրէնքներուն լիովին հետեւած, ինքզինք կ'արդարացնէ: Այս արդարացումը իր պարտականութիւնը կատարած ըլլալու հպարտութիւնն է: Միթէ հպարտութիւնը մահացու մեղքերէն մին չէ՞: Երբ անհատը կատարելութեան ուղիին մէջ կը կարողանայ իր կենցաղը փոխել, նոյնիսկ կը կարողանայ իր միտքին ղեկը իր ձեռք առնել եւ չտարուիլ իր «Ես»-ի յառաջ բերած ցանկութիւններէն ու եսասիրութենէն, իր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան ըստ իր ներքին լուռ ձայնին, ըստ Քրիստոսի կամքին, նոյն իսկ այդ պահուն ինք դէմ առ դէմ կու գայ իր «Ես»-ին հետ եւ կ'ենթարկուի անոր վերջին, բայց ամենաազդեցիկ խաղին՝ յաջողած ըլլալու հպարտութեան: Այս վերջինը անհատին տարիներով աշխատած եւ ձեռք ձգած յառաջդիմութիւնը մէկ երկվայրկեանի մէջ կ'ոչնչացնէ: Միթէ Յիսուս ալ խաչին վրայ, իր մահէն առաջ, վերջին անգամ ըլլալով իր «Ես»-ին ազդեցութեան չենթարկուեցա՞ւ: Ստանան՝ «Ես»-ը, Յիսուսի քով խաչուող չարագործին բերնով Անոր յիշեցուց իր ունեցած կարողութիւնները, որպէսզի զանոնք օգտագործելով խաչէն վար իջնար եւ իր չարչարանքներուն վերջ տար: Բայց Յիսուս իր ունեցած կարողութիւններուն նկատմամբ հպարտութիւն չունէր: Քրիստոնէութեան մէջ կան խմբակներ, որոնք կը յայտարարեն, թէ փրկուած են եւ ուրիշները կը նկատեն դժոխքի արժանի: Միթէ աս ալ հպարտութեան երեւոյթ մը չէ՞: Իսկ անոնք, որոնք ինքզինքնին փրկուած չեն նկատեր, կ'աղօթեն Աստուծմէ ողորմութիւն եւ առաջնորդութիւն, որպէսզի կատարելութեան ուղիէն չչեղին: Մաքսաւորը կը ներկայացնէ հեզութիւն, խոնարհութիւն եւ մեղաւոր ըլլալու գիտակցութիւնը:

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՅԻՆ ԱՌԱՎ



«Եւ ահա՝ յարեաւ ռմն օրինական՝ փորձէ՛ր
չնա եւ ասէր. Վարդապետ՝ զի՞նչ Գործե-
ցից՝ զի զկէանան յաւիտենականն ժառանգե-
ցից: Եւ նա՝ ասէ ցնա. Յօրէնս զի՞նչ Գոր-
տալ է, ռբոյէս ընթէոնոս: Նա պարասխա-
նի եր՝ եւ ասէ. Սիրեացես զՏէր Աստուած
էո յամենայն արդէ իոմմէ, եւ յամենայն
անշնէ իոմմէ, եւ յամենայն զօրութենէ
իոմմէ, եւ յամենայն մրաց իոց. եւ զըն-
կեր իո իբրեւ զանշն իո: Եւ ասէ ցնա.
Ողբ՛ղ երո՛ր զպարասխանիդ, զս՛յդ արա՛՝
եւ կեցցե՛ս: Նա իբրեւ կամեցաւ զանշն

արդարացող-ցանել ասէ ցՅիսուս. Եւ ո՞վ է
իմ ընկեր: Պատասխանի եր Յիսուս՝ Ե-
սսէ. Ըյր մի՝ իջաներ յԵրուսաղէմէ յԵրի-
վով, Եւ անկա՛ւ ՚ի Յէռոս ասալակաց, որդի
մերկացինսն զնա, Եւ զէ՛րս ՚ի զերայ երին,
Թողին կիսամաւ Եւ Գնացի՛ն: Դէ՛պ եղե-
վաւանայի միոջ՝ իջանել ընդ նո՛յն Ճանա-
պարւ, Եւ ցիտեալ զնա՝ զա՛նց արար: Սոյն-
պէս Եւ զէ-րացի մի՝ եկեալ ընդ նոյն
ցիտի, Երեւ Եւ զա՛նց արար: Սամարացի
ոմն Ճանապարհորդեալ, Է՛կն ընդ նոյն աս-
նովաւ, Եւ ցիտեալ զնա Գթացա՛ւ Եւ
մարդեալ պարեա՛ց զզէրս նորս, արկեա՛լ
՚ի զերայ Յէթ Եւ Գի՛նի. Եւ երեալ ՚ի
Գրասարոս ի-րոյ՝ ա՛ջ զնա ՚ի պանդոկի մի,
Եւ դարմանեա՛ց զնա: Եւ ՚ի զաղի՛ւ անդր՝
իբրեւ Էլանէ՛ր անցի, Ըանեալ է՛ր ցպանդո-
կապերն երկուս դաւեկանս՝ Եւ ասէ. Դար-
մա՛ն ցար դմս, Եւ զոր ինչ Ժախեացես ՚ի
դա՛՝ ՚ի մի-սանգա՛մ Գալստեան իմոմ Ըա-
րոցից իւզ: Ըրդ՝ ո՞ յերեցողն ՚ի նոցա-
նէ Թոսի իւզ մերձա-որ լինել անկելոյն ՚ի
Յէռոս ասալակացն: Եւ նա՛ ասէ. Որ արա՛ր
զողորմոս-թի-նն ՚ի զերայ նորս: Ըսէ ցնա

Յիսուս. Ե՛րբ է՛ւ դո՛ւ՝ արա նո՛յնպէս» :
(Ղուկաս Ժ:25-37)

«Աւա՛՛ օրինական մը կանգնեցաւ, ու փորձելով զայն՝
ըսաւ. «Վարդապե՛տ, ի՞նչ ընեմ՝ որ ժառանգեմ
յաւիտենական կեանքը»: Ան ալ ըսաւ անոր. «Ի՞նչ
գրուած է Օրէնքին մէջ, ի՞նչպէս կը կարդաս»: Ան ալ
պատասխանեց. «Սիրէ՛՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ
սիրտովդ, ամբողջ անձովդ, ամբողջ գօրութեամբդ եւ
ամբողջ միտքովդ, ու ընկերդ՝ քու անձիդ պէս»: Ինք
ալ ըսաւ անոր. «Շիտա՛կ պատասխանեցիր, ըրէ՛՛ ատիկա՛
ու պիտի ապրիս»: Իսկ ան՝ ուզելով արդարացնել
ինքզինք՝ ըսաւ Յիսուսի. «Բայց ո՞վ է իմ ընկերս»:
Յիսուս պատասխանեց. «Մէկը Երուսաղէմէն Երիբով
կ'իջնէր եւ աւազակներու ձեռքը ինկաւ, որոնք
մերկացուցին զայն, վիրաւորելով կիսամեռ թողուցին ու
գացին: Պատահեցաւ որ քահանայ մը իջնէ այդ
ճամբայէն. տեսնելով զայն՝ միւս կողմէն անցաւ:
Նմանապէս Ղեւտացի մը Հասնելով այդ տեղը՝ գնաց
եւ տեսաւ, ու միւս կողմէն անցաւ: Բայց Սամարացի մը՝
որ կը ճամբորդէր, եկաւ անոր քով, եւ տեսնելով զայն՝
գլխաց: Մօտեցաւ, փաթթեց անոր վէրքերը, վրան ձէթ ու
գինի թափելով եւ իր գրաստին վրայ դնելով՝ տարաւ
զայն պանդոկ մը, ու հոգ տարաւ անոր: Հետեւեալ օրը՝
երբ կը մեկնէր անկէ, Հանեց երկու դահեկան, տուաւ
պանդոկապետին եւ ըսաւ անոր. «Հո՛գ տար ատոր, ու
ի՛նչ որ աւելի ծախես՝ պիտի վճարեմ քեզի երբ
վերադառնամ»: Ուրեմն այս երեքէն ո՞վ կը կարծես թէ
ընկերը եղաւ աւազակներու ձեռքը ինկողին»: Ան ալ
ըսաւ. «Ա՛ն՝ որ կարեկցեցաւ անոր»: Ուստի Յիսուս ըսաւ
անոր. «Գնա՛՛, դո՛ւն ալ նոյնպէս ըրէ՛»»:

**Յիսուս այս առակը օրինական մարդուն ըսաւ իբր
պատասխան անոր երկրորդ հարցումին: Օրինական
մարդուն առաջին հարցումը «Վարդապե՛տ, ի՞նչ ընեմ՝
որ ժառանգեմ յաւիտենական կեանքը»-ն էր: Այս
հարցումէն ետք մարդուն եւ Յիսուսի միջեւ տեղի
ունեցած խօսակցութեան մասին հոս պիտի չանդրա-
դառնամ, որովհետեւ հոն ըսուածին մեկնաբանութիւնը
ներկայացուած է այս գիրքին յառաջաբանին մէջ:**

Օրինական մարդուն երկրորդ հարցումն ալ «Բայց ո՞վ է իմ ընկերս»-ն է: Յիսուս այս հարցումին որպէս պատասխան պատմեց բարի սամարացիին առակը: Այս առակին մեկնաբանութիւնը շատ պարզ է: Աւագակներու ձեռքը ինկող անհատը, վիրաւորուած, կիսամեռ, մերկ եւ ճամբուն եզերքը մնացած, կը ներկայացնէ ունէ մի անհատ, որ օգնութեան պէտք ունի: Քահանայ մը եւ Ղեւտացի մը խեղճ մարդը կ'անտեսեն եւ չեն օգներ, նոյնիսկ ճամբուն միւս կողմէն կ'անցնին: Թէ՛ քահանան՝ ժողովուրդին հոգեւորական առաջնորդը եւ թէ՛ Ղեւտացին, օրուայ հրեայ ընկերութեան մէջ պատիւ ունեցող եւ յարգուած անձեր էին: Միթէ մենք ալ շատ անգամ չե՞նք անտեսեր կարեկցութեան պահանջը ունեցող անձ մը: Իսկ Սամարացին, որ հրեաներու կողմէ ատելութեան առարկայ էր, կարեկցութիւն ցոյց տուաւ եւ մարդուն վէրքերը փաթթեց, զայն պանդոկ տարաւ ու անոր խնամքին համար ալ վճարում ըրաւ: Հետեւեալ օրն ալ դարձեալ այցելեց: Նկատելով որ զոհը հրեայ մըն էր, Սամարացին այս բարիքը ըրաւ զինք «ատող» անձի մը: Յիսուսի սորվեցուցածը այն է, թէ ամէն մի անհատ անկախ իր պատկանած ցեղէն, ազգէն, կրօնքէն եւ ընկերութեան մէջ իր դիրքէն մեր եղբայրն է, սակայն յաճախ մենք զանոնք թշնամի կը համարենք: Պարտ ենք ամէն անհատ տեսնել իբր Գրիստոսի մէկ արտայայտութիւնը: Բոլորս ալ Աստուծոյ մարմնին մէջ մէկական բջիջներ ենք: Ինչպէս մեր մարմնի ամէն մէկ բջիջը կը գործէ ի նպաստ ընդհանուր մարմնին օգտին, որով բոլոր միւս բջիջներու օգտին, մենք ալ պարտ ենք նմանապէս ապրիլ Աստուծոյ մարմնին մէջ միւս բոլոր «բջիջ»-ներու՝ անհատներու օգտին: Գիտակցինք թէ՛ ոչ, բոլորս ալ Գրիստոսով մէկ ենք:

ՎԵՐՁԱԲԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս վերջաբանով նպատակս Յիսուսի սորվեցողւոյ «կատարելութեան ուղիին» նկատմամբ իմ հասկացողութեանս ամփոփումը ներկայացնել է:

Մարդ արարած, ըստ իր ճակատագրին իրեն տրուած ընտանիքին եւ կացութեան մէջ կը ծնի: Ան, իրեն տրուած կեանքի պայմաններուն համաձայն, նաեւ ունի կատարելիք պարտականութիւն մը: Այս պարտականութիւնը, ընկերութեան (society) մէջ իր ունեցած բաժինն է, որ պէտք է լաւագոյնս կատարէ յօգուտ ընդհանուրին: Երբ անհատը կը յաջողի իր այս պարտականութիւնը լաւագոյնս կատարել բոլոր ընկերութեան անդամներուն հետ սիրով, բացարձակ հաւատարմութեամբ, յօգուտ բոլորին, նոյնիսկ ինքնագոհողութեամբ եւ կարեկցութեամբ, ինքզինք աւելի բարձր մակարդակի կը բարձրացնէ: Իր ինքնագոհողութիւնը, բարեսիրութիւնը եւ բարեգործութիւնը եղած կ'ըլլան ոչ միայն իր անմիջական ընկերութեան, այլ յամայն մարդկութեան համար: Նման կենցաղ մը անձը կը դնէ կատարելութեան ուղիին սեմին, որպէսզի անձը այդ ուղիէն յառաջանայ եւ իրականացնէ իր կեանքին բուն նպատակը, որ ըստ Յիսուսի յորդորին, կատարեալ ըլլալ է, ինչպէս մեր երկնաւոր Հայրը կատարեալ է:

«Լըրդ Էդլեր»-ի դոկտրինայի համաձայն, որպէս ե-

Հայրն յէր երկնաւոր համայնի է»: (Մարտի 17:48)

«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

Կատարելութեան ուղիին մէջ յառաջանալ առանց յարատեւութեան եւ համբերութեան անկարելի է:

Անոնք, որոնք ոչ իբր բերնի ծամոց, այլ ճշմարտապէս եւ լրջութեամբ կը ցանկան յաւիտենական կեանքի՝ Աստուծոյ թագաւորութեան արժանանալ, պէտք չէ որեւէ ջանք խնայեն: Այս ջանքերուն ամենէն դժուարն ու ամենէն կարեւորը ինքնազսպումը եւ անձնատիրութիւնն են: Անհատը պէտք է իր անձին, միտքին եւ զգացումներուն վրայ բացարձակ իշխանութիւն կերտէ: Երբ ան այս ուղղութեամբ կը յաջողի, այն բոլոր աշխարհիկ ցանկութիւնները, որոնց մարդ արարած ընդհանրապէս կ'ենթարկուի, զանոնք բոլորն ալ կ'անտեսէ: Այն ատեն իրեն կարելի կ'ըլլայ այնպիսի գիտակցութեան մակարդակի մը հասնիլ, որ նոյնիսկ հոգեւոր ճանապարհին մէջ յառաջդիմութեան ցանկութիւնն անգամ կ'անտեսէ: Կարելի է այս վերջին նախադասութիւնը շատերու զարմանք պատճառէ: Ճշմարտութիւնը այն է, թէ երբ անձը «Ես հոգեւոր ճանապարհէն պիտի յառաջանամ» կ'ըսէ, ըսել է թէ իր «Ես»-ը տակաւին իր մէջ կը գործէ: Նոյնիսկ եթէ մինչեւ կատարելութեան ուղիին վերջը հասնի, հպարտութիւնը, որ «Ես»-ին վերջին յաղթուկն (trump card) է, իրեն յաջողած ըլլալու հպարտութիւնը կու տայ եւ անձն ալ իր նպատակին՝ յաւիտենական կեանքին չի կրնար արժանանալ: Մինչ այդ, եթէ անձին թափած բոլոր ջանքերը ճշմարտութենէն իրեն նշոյլ մը կը սորվեցնեն, իր ջանքերը պարպի վատնած չ'ըլլար եւ ինք անոնց պարզեւները կը ստանայ: Երբ անհատը առօրեայ ինքնազսպումի եւ անձնատիրութեան մէջ կը յաջողի, ան նաեւ կեանքին իրեն ներկայացուցած բոլոր վատ պատահարներուն հանդարտութեամբ եւ արիութեամբ կը հանդուրժէ: Մարդ իր կեանքի ընթացքին միշտ լաւ ու վատ պատահարներու կ'ենթարկուի: Լաւը՝ բարին եւ վատը՝ չարը, պէտք չէ ֆիզիքական մակարդակի պատահարներով չափուին: Երբ անձին կենցաղը չի համապատասխաներ

այն բարձր մակարդակին, որ ինք կարենայ կատարելութեան ուղիին մէջ յառաջանալու ցանկութիւնը իրականացնել, պէտք չէ յուսահատի: Ընդհակառակը, այն ինչ որ կեանքը իրեն կը ներկայացնէ, այդ բոլորին համար պէտք է գոհունակութիւն յայտնէ: Բոլոր ձախողութիւններուն պատճառը մտային թուլամտութիւնն ու բարոյական անհոգութիւնն է: Անձը ինքն է որ կ'արտօնէ, որպէսզի կեանքի հոսանքները զինք քշքշեն «ասդին-ու-անդին», քան թէ ինք իր կեանքին նոր ուղղութիւն մը տայ: Ընդհանուր մարդկութեան ըստ ներկայ գիտակցութեան մակարդակին, իր կատարելութեան ուղիին մէջ յառաջացումը շատ ճղճիմ է: Մարդ իր կարծածէն, հետեւաբար իր կատարածէն շատ աւելին ընելու կարողութիւնը ունի:

Ներկայիս մարդկութեան ընդհանուր դաստիարակութիւնը հիմնուած է այնպիսի տուեալներու վրայ, որոնք մարդուն մէջ նիւթապաշտութիւնը կը յառաջացնեն եւ հոգեւոր կեանքի ձգտումները արմատախիլ կ'ընեն: Հետեւաբար մարդուն ստացած ուսումը, իրեն համար անեծք մը կ'ըլլայ: Ան չի կրնար նոյնիսկ հասկնալ եւ ըմբռնել Աւետարաններուն մէջ մեզի ներկայացուած իմաստասիրութիւնները: Բայց, երբ անհատը հետաքրքրութեամբ, բացարձակ հաւատքով եւ վճռականութեամբ ինքզինք կը դաստիարակէ, իր մտային դռները կը բացուին «ոսկեայ դար»-ու մը: Հաւատքը շատ կարեւոր է, որովհետեւ առանց հաւատքի չի փնտռեր Յիսուսի սորվեցուցած այն բոլոր թագուն գիտելիքները եւ զանոնք կառավարող օրէնքները, որով չ'ըմբոստանար ալ պարզ, աշխարհիկ եւ հասարակ իմացականութեան մը դէմ: Բայց, եթէ ան իր հաւատքին եւ յարատեւութեան հետեւանք զանոնք գտնէ, այն ատեն կը հասկնայ թէ այն բոլորը, որ ինք «հրաշք» կը կարծէր, անոնք հրաշքները չեն, այլ ամէն ինչ՝ բոլոր

ստեղծագործութիւնը, հրաշք մըն է: Այն ատեն բոլոր աւելորդապաշտութիւնները (superstitions) կ'անհետանան եւ այն ատեն կ'ըմբռնէ Յիսուսի ըսած հետեւեալ խօսքին իմաստը.

«... Լմէն ամէն ասէ՛մ թէ որ Լաւապա՛յն
յի՞ս զԳործ» զոր էս Գործէ՛մ, էս նա՛
Գործէսցե՛ ես մեծամեծս է՛ս ինչ զնոյնս
Գործէսցե՛ . . . » : (Յովհաննէս ԺԳ:12)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛յն որ կը հաւատայ ինծի, ի՛նք ալ պիտի ընէ այն գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր պիտի ընէ, ...»:

Այս ուղղութեամբ համբերութիւնը ամենակարեւոր յատկութիւններէն մին է, որ մարդ արարած պարտ է կերտել իր անձին մէջ: Որեւէ արժէքաւոր բան մը չուտ մը ձեռք ձգել կարելի չէ: Հետեւաբար կատարելութեան ուղիին մէջ յառաջանալու համար, մարդ պարտ է իր պարզ եւ հասարակ իմացականութիւնը (intellect) մարզէ եւ բարելաւէ: Առանց կենսատու գորութեան, իմացականութիւնը ինքիւրմէ որեւէ գորութիւն կամ կարողութիւն չունի: Ուրեմն մարդուն իմացականութիւնը «լուսաւորող»-ը իր ներքին Քրիստոսին «Լոյս»-ն է: Հետեւաբար մարդուն ունեցած իմացականութեան որակը կախեալ է Քրիստոսէն ստացած «Լոյս»-ին քանակէն: Իսկ իր Քրիստոսէն ստացած «Լոյս»-ին քանակն ալ կախեալ է իրմէ: Երբ անձը իր ազատ կամքով իր բնոյթը կը փոխէ եւ զայն կը մօտեցնէ իր անհատականութեան դրական բեւեռին՝ Քրիստոսի, քան թէ յարի դէպի ժխտական բեւեռին՝ «Ես»-ին, բարձր քանակով Քրիստոսի «Լոյս»-էն այն ատեն կ'օգտուի: Երբ իր իմացականութիւնն ալ Քրիստոսէն յաւելեալ «Լոյս» կը ստանայ, աւելի լաւ կը հասկնայ եւ կ'ըմբռնէ

Աւետարաններուն մէջ գրուածներուն իմաստը: Իր ստացած գիտութիւնն ալ կ'ըլլայ մտային սնունդ, ինչպէս ուտեստեղէնն ալ սնունդն է մարմնոյն: Այդ մտային սնունդով ալ միտքը կատարելութեան ուղիին մէջ աւելի կ'աճի: Անգլերէն առածը կ'ըսէ. «Knowledge is power»՝ գիտութիւնը զօրութիւն է: Նմանապէս կատարելութեան ուղիին մէջ ալ երբ անհատը յաւելեալ գիտութեան կը տիրանայ, ինք աւելի կը զօրանայ: Հարկաւ այս զօրացումը ֆիզիքականը չէ, այլ իր հաւատքին, վճռականութեան, համբերութեան եւ յարատեւութեան զօրացումն է: Այն անձը որ ինքզինք աշխարհիկ հետապնդումներէն չի ձեռքազատեր եւ կատարելութեան ուղիին չի ձգտիր, իր ստացած գիտութիւնն ալ կը նմանի մուրացկանի մը ստացած մեծահարուստին սեղանէն թափած «փշրանքներուն»:

Ինչպէ՞ս յաջողիլ կատարելութեան ուղիին մէջ: Ինչպէ՞ս մեր բնոյթը փոխել եւ զայն մօտեցնել մեր անհատականութեան դրական բեւեռին՝ Քրիստոսին: Նախ, անձը պարտ է իր բոլոր անասնական կիրքերը ու ցանկութիւնները զսպել եւ ամէն տեսակի եսասիրութենէ ինքզինք ձեռքազատել: Իր բոլոր ձգտումները պէտք են այլասիրական ըլլալ: Ամէն անհատ, ըստ իր բնոյթին, կ'որոշէ, թէ ինչպէս եւ ինչ արագութեամբ պէտք է կատարելութեան ուղիին մէջ ընթանայ: Կատարելութեան ուղիին մէջ ընթանալ կարելի չէ դասախօսութիւններ մտիկ ընելով, սուրբերու պատկերներու առջեւ աղօթելով, վիզէն խաչ կախելով, Աւետարան համբուրելով, կամ նոյնիսկ պարզապէս եկեղեցի յաճախելով: Երբ անձը ժամերգութիւններուն եւ Ս. Պատարագին բուն իմաստը եւ անոնց իրենց ցոյց տուած ու սորվեցուցածները կարող չէ հասկնալ, եւ նոյնիսկ եթէ հասկնայ, բայց սորված փոփոխութիւնը իր անձին մէջ չիրականացնէ, եկեղեցի յաճախելն ալ ի զուր է:

Եկեղեցական արարողությունները եւ նամանաւանդ Ս. Պատարագը, Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղին ցոյց տուող ամենակարեւոր ամփոփումն են: Մինչ այդ, վերոյիշեալ բոլոր միջոցառումները կը յանձնարարուին, որովհետեւ անոնք անհատը կը պատրաստեն կատարելութեան ուղիին համար, բայց անոնք այդ ուղին չեն: Ընդհանուր առմամբ կը յանձնարարուի ծոմապահութեամբ աղօթել: Բայց այս պարագային աղօթելը Աստուծոյ աս ու ան խնդրելը չէ, այլ աղօթքին ամենավեհ ձեւը՝ խոկալն է: Խոկալը լռութեան ժամանակ մըն է: Այդ լռութեամբ կ'արտօնենք, որ Աստուած բնութեան միջոցաւ մեզի «խօսի»: Ասոնց առնթեր խորհուրդի, խօսքի եւ գործքի ողջախոհութիւնը եւ ինչպէս նաեւ վերեւ գրուած յարատեւութիւնը եւ համբերութիւնն ալ անհրաժեշտ են:

Մինչեւ որ անհատը կատարելութեան ուղիին մէջ որոշ գիտակցութեան մակարդակի մը չհասնի, Յիսուսի ըսած թագուն գիտութիւններն ալ իրեն բացայայտ չեն ըլլար: Պէտք չէ մոռնանք, թէ գիտակցութեան «Լոյս»-ը իր ներքին Քրիստոսէն կու գայ: Անձը կրնայ շատ բաներ ցանկալ, նոյնիսկ կատարելութեան ուղիին մէջ: Միթէ ամէն մարդ չի՞ ցանկար Աստուծոյ թագաւորութեան փորձառութիւնը ունենալ: Փրկուածներու աղանդին անդամներուն փրկութիւն ստանալու ցանկութիւնը շատ բարձր որակ ունի: Բայց միայն ցանկալը, նոյնիսկ ցանկութեան բարձր որակը բաւարար չեն, այլ անձը նոյն չափով ալ պարտ է ընդունակ ըլլալ: Միթէ եկեղեցւոյ մեծ պահքի շրջանը իր պատշաճ արարողութիւններով եւ Աւագ Շաբթուայ երեք օրուայ ծոմապահութիւնով եւ Զատիկուայ առաւօտեան Յարութեան տօնակատարութիւնով եւ հաղորդութեան խորհուրդով մեզի չի սորվեցնէր նոյնը ընել մեր կեանքին մէջ, որպէսզի մեր ներքին Քրիստոսն ալ մեր մէջ Յարու-

Թիւն առնէ եւ իր հետ հաղորդուինք եւ ընդունակ ըլլանք իր «Լոյս»-ին:

Կատարելութեան ուղին իր մէջ չատ մը խոչնդոտներ ունի, հետեւաբար այդ ուղիին մէջ յառաջացումը զօրաւոր կամ քի, վճռականութեան եւ յարատեւ ջանքի կը կարօտի: «Ճամբան», «փուշ»-երով լեցուն, կը դժուարացնեն յառաջացումը: Վարանում, կասկածամտութիւն, ծաղրանք, արհամարանք, նախանձ, փորձութիւն, անհամբերութիւն եւ անհաստատ կամք կը ներկայացնեն այդ «փուշ»-երը: Այդ «փուշ»-երուն նպատակը անհատին վճռականութիւնը, ցանկութեան որակը եւ լրջութիւնը ստուգելու համար է: Հետեւաբար անհատը պարտ է «երկաթեայ» զօրաւոր կամք մը ունենալ, բայց միանգամայն պարտ է հեզ, ազնիւ եւ խոնարհ ըլլալ ու զինք դէպի չարութեան մղող մարդկային բոլոր կիրքերէն ձերբազատուած: Պարզապէս որոշ սովորութիւններու զսպում անօգուտ է, եթէ այդ «հոգին» իր մէջ չէ արթնցած կամ այդ «սերմը» իր մէջ չէ ծլած: Շատեր կը խոստանան մեծ պահքի շրջանին ծխախոտ չծխել, կամ արեւցուցիչ ըմպելիներ չգործածել, կամ միս չուտել...: Նման զսպումներ անտարակոյս լաւ եւ օգտակար են յաջաւորող զապահութեան եւ նոյնիսկ նախնական «քայլեր»-ը ապագային աւելի լուրջ ինքնազըսպումներու ճամբան բանալու: Բայց երբ եօթը շաբաթ յետոյ Զատիկի տօնը անցնի եւ իրենք վերադառնան հին սովորութիւններուն, կը նշանակէ թէ այդ «սերմ»-ը իրենց մէջ տակաւին չէ ծլած:

Ընդհանուր առմամբ հետեւեալ երեք զգացումները՝ բարկութիւն, ազահութիւն եւ խաբեբայութիւն, ոչ միայն կատարելութեան ուղիին մէջ յառաջացման արգելք կը հանդիսանան, այլ նոյնիսկ կատարելութեան ուղիի մը գոյութիւնը մեր գիտակցութենէն կը խափանեն: Իսկ մարդու բնութեան հետեւեալ հինգ

յատկութիւնները՝ նախանձ, կիրք, փոփոխամտութիւն, ծուլութիւն եւ անհաւատութիւն մարդուն մէջ խաւարամտութիւն կը յառաջացնեն, հետեւաբար մարդն ալ չի կարողանար ճշմարտութիւնը տեսնել: Մարդոց սըրտերը ունայնամտութեամբ եւ չարութեամբ, կամ անզգամութեամբ ապականած, կարող չեն իրենց ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի փորձառութիւնը ունենալ: Կեանքը մեզի բազմաթիւ պայքարներ եւ փորձութիւններ կը ներկայացնէ: Եթէ անոնց չյաղթենք կատարելութեան ուղիին մէջ յաջողիլ անկարելի կ'ըլլայ: Երբ Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղիին օրէնքներուն դէմ գործենք, դարձեալ անկարելի կ'ըլլայ յաջողիլ: Իսկ եթէ անհուն «հորիզոնը» տեսնել կը փափաքինք, պարտ ենք լերան մինչեւ գագաթը բարձրանալ: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «Ուզեցէք եւ պիտի տրուի»: Հետեւաբար մեզի կը մնայ միայն ուզել: Ի՞նչ է, որ կ'ուզենք: Պէտք է ուզենք անհուն «հորիզոնը» տեսնել: Բայց ուզելը միայն «տուր» ըսել չէ, այլ գործքով ցոյց տալ է, անձնապէս լեռը մագլցիլն է: Ինչպէս վերեւ յիշուած է, «Ես»-ին վերջին յաղթուկը, յաջողած ըլլալու հպարտութիւնն է, որ դարձեալ եսասիրութեան նշան է: Այդ հպարտութիւնը պատճառ կրնայ ըլլալ, որ լերան գագաթը հասնելէ յետոյ չկարողանանք «հորիզոնը» տեսնել եւ լեռնէն վար գլորիլ եւ մենք մեզի աւելի վնաս հասցնել, քան թէ օգուտ: Հակառակ այս բոլորին ամէն անձ իր կարողութեան սահմաններուն ներքեւ, պարտ է հետապնդել կատարելութեան ուղին, որովհետեւ կամ պիտի յաջողինք կամ պիտի փճանանք: Միթէ չէ՞ գրուած.

«Զի խոշակն մեղաց մահ է.» (Հովմայեցիս Զ:23)
«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»





-Դ-

ՅԱԲԵԼՈՒԱԾԱԿԱՆ

Ա - Աստուծ աւ'ր է
Բ - Իմաստալի՜՜ հօսքեր-Ա
Գ - Իմաստալի՜՜ հօսքեր-Բ
Դ - Մէլսնային եօթը յորդորները
Ե - Այն ինչ որ սորվեցայ ...
Զ - Սէրը եւ նահանջը
Է - Թիթեռնիկը եւ յարդը
Ը - Ամէն ինչ Զօրութիւն է
Թ - Ալուերթ էյնսէյսի նամակը
Ժ - Պոյս ամ թոյիս
-Աստուծոյ դրսծ անուաները

«ԱՍՏՈՒԱԾ ՍԷՐ Է»

«Աստուած սեր է: Ով որ սիրոյ մէջ կը մնայ՝ անիկա Աստուծոյ միացած կը մնայ եւ Աստուած ալ՝ իրեն միացած», (Ա ՅՈՎՀ. Դ 16):

Արդարեւ, այն որ զԱստուած կը սիրէ, կը սիրէ նաեւ իր նմանը՝ մա՛րդը, քանի որ աստուածային սերը կը յայտնուի մարդասիրութեամբ՝ եղբայրսիրութեամբ: Այս ուղղութեամբ, մէկը որ չի սիրեր իր նմանը, կը տեսնէ զայն եւ սիրով չի վարուիր անոր հետ, ի՞նչպէս կրնայ զԱստուած սիրել՝ երբ Ան չի՛ տեսներ:

Մարդ զԱստուած սիրող կը ճանչցուի, երբ իր նմանը՝ այսինքն մա՛րդը կը սիրէ հոգեպէս, առանց խտրութեան: Արդարեւ սերը արժեք կը ստանայ երբ ան հոգիով կ'արտայայտուի՝ սիրտէն, անկեղծութեամբ կը բղխի եւ կախում չունի մարմնաւորէն:

Հոգեւոր սերը բոլորովին տարբեր է մարմնաւոր սերէն: Ուստի, այն մարդը՝ որ կը սիրէ՝ կը ճանչցուի Աստուծոյ կողմէ եւ ինք կը ճանչնայ զԱստուած, եւ ան՝ որ կ'ատէ եւ չի սիրեր իր նմանը, կարեկցութեամբ չի մօտենար անոր, բոլորովին անծանօթ մըն է Աստուծոյ եւ չի կրնար վայելել աստուածային շնորհ:

Իսկ այն՝ որ իր նմանը սուրբ եւ նուիրական սիրով կը սիրէ՝ Աստուծոյ բնակարան կըլլայ եւ Ան կը բնակի այդ սիրող մարդուն հոգիին մէջ:

Ուրեմն կը տեսնուի, որ սերը բոլորովին հոգիի արտայայտութիւն մըն է եւ պէտք չէ անոր մարմնական հանգամանք տալ, քանի որ սիրոյ նկարագիրը որեւէ կապ չունի մարմնաւորի հետ: Եւ քանի որ «Աստուած սէր է», այս կը նշանակէ, որ սերը հոգեւոր

արժեք մըն է եւ կախում չունի մարմնաւոր որեւէ արժեքի հետ: Առաձը կ'ըսէ. «Ամենէն երկար հեռաւորութիւնը՝ սիրոյ զգացումէ գուրկ երկու մարդու հեռաւորութիւնն է»: Ասոր փոխարէն սերը ամէն հեռաւորութիւն կը մօտեցնէ, ամէն անձանօթ կը մտերմացնէ՝ պատեր կը քանդէ, սառոյցներ եռացող ջուրերու կը վերածէ՝ եւ «դժոխք»ը «դրախտ»ի կը փոխակերպէ:

Սերը այնքան կարեւոր է եւ անհրաժեշտ, քանի որ սերը կենսատու է, կեանքը սիրոյ արդիւնք է եւ անոր միջոցով է, որ կեանքը կը գոյատեւէ: Արդարեւ Յիսուս Քրիստոս, սիրեց մարդը եւ ճշմարիտ Հոգին դրկեց, որպէսզի անոր մէջ բնակի, եւ մարդ տաճար ըլլայ Սուրբ Հոգիին: Եւ այս միջոցով է, որ մարդուն իմանալի հոգին՝ Աստուծոյ անիմանալի Հոգիին հետ կը հաղորդակցի, կը կապուի:

Ուստի մարդ պէտք է սիրէ իր նմանը՝ ինչպէս Յիսուս Քրիստոս սիրեց զինք՝ մարդը եւ սերը սահմանեց ըսելով. «Սիրեցէ՛ք զիրար: Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ զիրար սիրեցէք: Ձեր զիրար սիրելով է որ մարդիկ պիտի գիտնան, թէ դուք իմ աշակերտներս էք», (ՅՈՎՀ. ԺԳ 34-35): Եւ երբ Յիսուս կ'ըսէ. «Ով որ կ'ընդունի իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք, ա՛ն է որ զիս կը սիրէ», (ՅՈՎՀ. ԺԴ 21): Եւ այս ալ ցոյց կու տայ բացայայտօրէն, թէ՛ սերը «սէ՛ր» է, երբ կը գործադրուի, այլապէս միայն մտածումով կամ խօսքով սեր ունենալ իսկապէս եւ հոգեպէս «սիրել» չի՛ նշանակեր, այլ սերը գործի, աշխատանքի, շարժումի պէտք է վերածուի եւ այդպէս արտայայտուի: Ուստի «կը սիրեմ», ըսել չի՛ բաւեր, այլ պէտք է գործնապէս եւ

հոգեպէս սիրէ՛լ: Մէրը «մտածում» կամ «խօսք» չէ, այլ՝
գործ, աշխատանք եւ շարժո՛ւմ:

Եւ վերջապէս, Յիսուս շէշտը կը դնէ մեծագոյն
սիրոյ վրայ, որ մարդիկ կրնան ունենալ, եւ կ'ըսէ.
«Մեծագոյն սէրը այն սէրն է, որով մարդ ինքզինք կը
գոհէ իր բարեկամներուն համար: Դուք իմ բարեկամ-
ներս էք, եթէ գործադրէք ի՛նչ որ կը պատուիրեմ
ձեզի», (ՅՈՎՀ. ԺԳ 13-14): Ահաւասիկ, սիրելի՛ հաւա-
տարիմ բարեկամներ, սէրը ա՛յնքան զօրաւոր զգա-
ցում մըն է, որ մինչեւ իսկ մարդ կրնայ գոհել իր
կեանքը իր նմանին՝ իր սիրածին՝ մա՛րդուս համար:
Եւ նոյնինքն Յիսուս տիպարը, կենդանի օրինակը
եղաւ այս ճշմարիտ, անկեղծ հոգեւոր սիրոյն՝ երբ իր
կեանքը տուաւ մարդոց փրկութեան համար խաչին
վրայ գոհուելով: Սիրոյ բարձրագոյն աստիճանն է
գոհուիլ ուրիշի փրկութեան եւ որեւէ օգտին համար:
Այն որ յանձն կառնէ այս գոհողութիւնը՝ անձնանուի-
րութիւնը, այն է որ ըմբռնած է սիրոյ ճշմարիտ
իմաստը: Եւ այս պատճառով, կարելի է ըսել, թէ՛ սէրը
ամենէն աստուածահաճոյ, ամենէն աստուածամերձ,
ամէն առաքինութենէ վեր եւ ամենէն ազնիւ զգացումն
է՝ աստուածատուր պարգե՛ւ մը մարդուն տրուած, որ
մարդուս արժանաւորութիւնը կը հաստատէ եւ
արժանապատուութեան զարգացման կը նպաստէ,
մարդս «մարդ» կ'ընէ:

Ուրեմն բացայայտ կերպով կ'երեւի, թէ՛ սէրը
Աստուծոյ մօտ որքա՛ն արժէք ունի եւ թէ՛ ի՛նչպէս
մարդս Աստուծոյ նման կ'ընէ: Եւ եթէ Աստուած սէ՛ր է,
ապա ուրեմն մարդ սիրոյ միջոցով հետզհետէ կը
մօտենայ եւ աստուածանմա՛ն կ'ըլլայ:

Արդարեւ, սիրոյ փաստը կը քաղենք Քրիստոսի կեանքէն՝ ո՛չ միայն իր խաչելութեամբ, այլ ամբողջ կեանքէն՝ առակներէն, հրաշքներէն եւ քարոզութիւններէն: Քրիստոսի ամբողջ կեանքը սիրոյ տիպար մըն է՝ սիրոյ մարմնացումը, ինչպէս ամբողջ Աւետարանը՝ սիրոյ բիրեղացո՛ւմը:

Արդարեւ, Քրիստոս, բարեկամին կամ հանրութեան օգուտը կը դնէ մարդուս վրայ որպէս ծանր պարտաւորութիւններ, որոնք աւելի՛ բարձր՝ աւելի՛ նուիրական են՝ քան մարմնական գոհացումները՝ հացի խնդիրը եւ այլ մտահոգութիւններ:

Եւ ահաւասիկ սկզբունք մը եւս, թէ՛ «պէտք է մարդընէ իր բարեկամին համար այն ամէնը՝ ի՛նչ որ կ'ուզէ որ բարեկամը ընէ իրեն»: Ընկերական այդ բիրեղացած անկեղծ սէրը հոս բոլորովին փոխադարձ է, եւ փոխադարձ սէրը երբեք չարիք չի մտածեր իր մերձաւորին համար, չուրախանար՝ երբ անիրաւութիւն կը պատահի անոր, այլ կ'ուրախանայ երբ արդարութիւնը՝ իրաւունքը՝ ճշմարտութիւնը երեւան կու գան, եւ իր բարեկամը անոնց արդիւնքը կը վայելէ, ի՛նչպէս որ իրեն համար նո՛յնը կը ցանկանար:

Չարախօսութիւնը, մանաւանդ ստախօսութիւնը, բամբասանքը ամենամեծ թշնամիներն են սիրոյ, եւ արգելքներ՝ սիրոյ ազնիւ զգացումին:

Ուրեմն, ամենէն առաջ պէտք է զգուշանալ մանաւանդ բանակրկիտ անձերու խառնակիչ ազդեցութենէն՝ սաստիկ զգուշանալ կամայ թէ ակամայ ինքն իր անձին փորձելու այդ տկարութիւնը: Արդարեւ, Քրիստոսի բոլոր «վա՛յ»երը այդպիսի կեղծաւորներու վրայ են՝ որոնք կը հաւասարին այն ստորին

մակդիրներուն՝ որոնք գործածուած են անոնց դէմ Աւետարանին մէջ:

Ուստի եւ ան որ կը սիրէ, յայտնի է մարդոց եւ համարձակ Աստուծոյ առջեւ, քանի որ ո՛չ մէկ չարիք կը խափանէ սէրը, եւ անկեղծ սէր ունեցողը մահացու մեղքերէ չի վախնար, այլ Աստուծոյ անհո լն սիրովը զինուած կըլլայ:

Հոն՝ ո՛ր սէր կայ, այնտեղ վախ գոյութիւն չունի, կըսէ Յովհաննէս Առաքեալ. «Սէր ունեցողը վախ չունի, որովհետեւ կատարեալ սէրը ամէն վախ կը փարատէ: Արդարեւ, վախը պատիժի հետ կապ ունի, եւ ո՛վ որ կը վախնայ՝ սիրոյ մէջ կատարեալ չէ», (Ա ՅՈՎՀ. Դ 18):

Սէրը երկրայինները երկնայի՛ն կընէ....:

ՄՍՇՏՈՅ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ





Հոն ուր որ Հաւարիկ կայ
Հոն Սէր կ'ըլլայ
Հոն ուր որ Սէր կայ
Հոն խաղաղութիւն կ'ըլլայ
Հոն ուր որ խաղաղութիւն կայ
Հոն Աստուած կ'ըլլայ
Հոն ուր որ Աստուած կայ
Հոն կարիք չկայ

ԻՄԱՍՏԱԼԻՅ ԽՕՍՔԵՐ - Ա

- Օ՛ր փնտռող, նախ ճշգէթէ ի՞նչ կը փնտռես, ապա սկսէ փնտռել:

- Աշխատէ, աշխատէ, աշխատէ: Աշխատանքը պաշտամունք մըն է. զայն Աստուծոյ նուիրէ:

- Գաղափար մը իրականացնելու տենչանքը կը մեռնի, եթէ այդ ուղղութեամբ որեւէ ջանք չկատարուի:

- Ամէն մի ձախորդութիւն քայլ մըն է դէպի յաջողութիւն:

- Ամէն գործուած սխալ դաս մը կու տայ: Գործուած սխալները մեր լաւագոյն ուսուցիչներն են:

- Հոգեւոր ճանապարհի մէջ յառաջանալու ջանքը համբերութեամբ եւ յարատեւութեամբ անընդհատ պէտք է նորոգուի:

- Կը յաջողին անոնք, որոնք գործելու համարձակութիւնը ունին: Հազուադիւրէն է որ երկչոտը յաջողի:

- Ծուլութիւնը յուսախաբութեան եւ անյաջողութեան ծնունդ կու տայ:

- Մի ապրիւր քիմքիդ համը եւ զգացումներդ գոհացնելու նպատակով, այլ՝ ճշմարիտ էութիւնդ յայտնաբերելու նպատակով:

- Կեանքին նպատակը պէտք է ըլլայ Աստուծոյ հետ մէկ ըլլալ եւ բոլոր ստեղծագործութեան մէջ Իրեն ծառայել:

- Առանց «Ես»-ի բնաջնջման կարելի չէ ճշմարտութեան կամ Աստուծոյ հասնիլ:

- Ինքնաճանաչումը վախկոտին եւ տկարին համար չէ, այլ՝ քաջին, համարձակին եւ կամքով զօրաւորին:

- Փորձառուն եւ փորձառութիւնը ստացուած փորձառութենէն կարելի չէ անջատել:

- Եթէ գտնես խօսքը խօսողը, տեսքը տեսնողը եւ ձայնը լսողը, այն ատեն անմահութեան կ'արժանանաս:
- Խաղաղութիւն, անմահութիւն եւ յաւիտենական երանութիւն միայն Աստուծով կարելի է ձեռք ձգել:
- Ճշմարտութեան մէջ երկուութիւն գոյութիւն չունի: Բոլոր փոփոխութիւնները պատրանքային են:
- Հիմնական ճշմարտութիւնը այն է, թէ ոչինչ կը մեռնի, այլ ամէն ինչ կը կերպարանափոխուի:
- Առանց ներհայեցողութիւն կերտելու, մտաւորական մարդը անկատար է:
- Աստուած մեր մէջ մոլորացկանի հագուստով կը քալէ: Յաւով տքացող հիւանդի մը կերպ կը ներկայանայ: Աչքերդ բաց ու բոլորին մէջ Զինք տեսիր: Ուստի բոլորը սիրէ ու բոլորին ծառայէ:
- Քու պարտականութիւնդ Աստուածայայտնութիւնը իրականացնել է: Ասիկա իր մէջ կը բովանդակէ բոլոր միւս պարտականութիւնները:
- Մարմինը անընդհատ հոգիին դէմ կը պատերազմի, հետեւաբար միշտ աչալուրջ եղիր:
- Անհատը իր կեանքը կը բարդացնէ երբ սկսի իր ունեցածէն աւելին ցանկալ:
- Երբ ցանկասէր հաճոյքներու կը յանձնուիս, անոնց դէմ դիմադրելու ոյժդ ալ կը տկարացնես:
- Առանց եսասիրութեան հանրութեան ծառայել կատարելիութեան ճամբուն առաջին քայլն է:
- Եթէ չենք սիրեր համայն մարդկութիւնը եւ անոր չենք ծառայեր, ոչ մեր կեանքը լրիւ ապրած կ'ըլլանք, ոչ ալ՝ իմաստաւորած:
- Եթէ դուն բարի ես, համայն աշխարհն ալ քեզի համար բարի կ'ըլլայ:
- Արարք մը բարի է եթէ բարեացակամութեան արդիւնք է եւ նպատակն ալ՝ բարի:

- Բոլոր մարդկութեան համար միշտ յաւր բաղձայ: Կեանքդ արգաւանդ կ'ըլլայ եւ խաղաղ, դուն ալ՝ երջանիկ:

- Եթէ սկզբունքով արդար եւ անձնուրաց ըլլաս, բոլոր արարքներդ ալ ինքնաբերաբար բարեմիտ կ'ըլլան:

- Մի՛ աճապարեր, զսպէ՛ զգացումներդ, հանդարտօրէն մտածէ, միտքդ խաղաղեցուր, ապա գործէ խոհեմութեամբ, ուշադրութեամբ եւ իմաստութեամբ:

- Հոգեւոր ճանապարհուծիւնը զառիվեր ընթացք մըն է: Կը կարօտի անհուն համբերութեան եւ յարատեւութեան:

- Բոլոր դժուարութիւնները եւ անբաղձալի պատահարները մեր կամքը աւելի զօրացնելու եւ անխախտ պահելու համար Աստուծոյ տրուած առիթներ են:

- Լայնամտութիւնը հոգեւոր կեանքին մէջ յառաջդիմութեան նշան մըն է:

- Ամենամեծ սխալը հոգեւոր ճանապարհին մէջ ցոյց տրուած յառաջդիմութեան հպարտութիւնն է: Բարոյական եւ հոգեւոր հպարտութիւնները շատ աւելի վտանգաւոր են քան պարզ հարստութեան եւ ուժի հպարտութիւնը:

- Մեղադրանքը եւ գովասանքը օդին մէջ անիմաստ թրթռացումներ են: Անոնցմէ բարձր կեցիր:

- Խաւարամտութիւն, բթամտութիւն, չփոթութիւն եւ խաբեականը մեր գերութեան պատճառ եղած հիմնական ախտերն են:

Թարգ. Վ. Ս.



ԻՄԱՍՏԱԼԻՅ ԽՕՍՔԵՐ - Բ

Լաւ գործէ, նախանձոտներ պիտի ունենաս. Լաւագոյնը գործէ, ամօթահար պիտի ընես զանոնք: «ՖՈՒՆԷԼԻՒՆ»

*Բռնութիւնը տկարութեան խոստովանանքն է թէ՛ արուեստի մէջ, թէ՛ ալ քաղաքականութեան:

*Նախանձը ամենէն առաջ կը կործանէ քու անձդ եւ կը հեռացնէ քեզ քու շրջապատէդ եւ ընկերներէդ:

*Ամենածիծաղելի ցանկութիւնը բոլորին կողմէ սիրուած անձ մը ըլլալու ցանկութիւնն է:

*Գոհարը զին ունի, բայց բարի խրատը անգին է:

«Մարդիկ հաւասար են ծնում, անհաւասար ապրում, հաւասար էլ մեռնում են»:

«Ներքին անհամերաշխութիւնը աւելի շատ է Հայրենիքը կորստեան մատնում, քան եկած թշնամին»:

ՄԿՐՏԻՉ Ա. ՎԱՆԵՅԻ – ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Միայն գաղափարն է, որ ոչ մահ ունի, ոչ դատաւոր, ոչ գերեզման և ոչ դագաղ.

Սիամանթօ

Նպատակս տկարութիւն չի ճանչնար.

Սիամանթօ

Մարդ ըլլալու համար չի բաւեր երկու ոտք ունենալ, էականն է՝ երկու ոտքով չսողալ.

Եղիա Տէմիրճիպաշեան

Աչքը թարթիչ ունի, մայուածքը՝ թոփշ.

Եղիա Տէմիրճիպաշեան

Երբ մարդ իր իրաւունքները պաշտպանել չի գիտեր, արժանի չէ գանձի վայելելու.

Սրբուհի Տիւսաբ

Չես գիտեր, թէ վաղն ի՞նչ կը ծնի. Մարդուս կեանքը վայրի ծաղկի կը մնամի, որ այսօր բացուած է, իսկ վաղը՝ կը թառամի.

Նաղաշ Յովնաթան

Իմաստուն մարդուն խրատ տուր, ամ քեզ աւելի կը սիրէ. Ամբիտիմ և ամգետիմ խրատ տուր, ամ քեզ կ'ատէ.

Յովհաննէս Երզնկացի



ՄԵՎԼԱՆԱՅԻՆ ԵՕԹԸ ՅՈՐԴՈՐՆԵՐԸ

- Ա- Արատաձեռնութեամբ եւ օգնութեամբ,
եղիւր նման վազող ջուրի:
- Բ- Ողորմութեամբ եւ կարեկցութեամբ,
եղիւր արեւի նման:
- Գ- Ուրիշներուն սխալը,
նման գիշերուայ խաւարին, անտեսանելի ըրէ:
- Դ- Բարկութեան եւ ջղայնութեան պահուն,
եղիւր դիակի նման:
- Ե- Խոնարհութեամբ եւ համեստութեամբ,
եղիւր հողին նման:
- Զ- Հանդուրժողականութեամբ,
եղիւր ծովի նման:
- Է- Երեւցիւր այնպէս ինչպէս որ ես,
կամ եղիւր այնպէս ինչպէս որ կ'երեւիս:
Թարգմանութիւն



**ՀՐԱՇՔՆԵՐԸ ԿԸ
ՊԱՏԱՀԻՆ ՈՉ ԹԷ
ԲՆՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՊԱԿ, ԱՅԼ
ՀԱԿԱՊԱԿ՝ ԻՆՉ ՈՐ ՄԵՆՔ
ԳԻՏԵՆՔ ԲՆՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ:**

ՍՈՒՔ ՕԳՈՍՏԻՆՈՍ

ԱՅՆ ԻՆՉ ՈՐ ՍՈՐՎԵՑԱՅ ...

Աշխարհի մէջ լաւագոյն դասարանը տարեցի մը
խորհուրդներն են:

Երբ սիրահարուած ես, ատիկա յայտնի կ'ըլլայ:

Եթէ օրուայ մէջ զիս նոյնիսկ մէկ հոգի ուրախացնէ,
ամբողջ օրս ուրախ կ'անցնի:

Երբ փոքրիկ մը թեւերուդ մէջ քնանայ,
խաղաղութեան զգացումները քեզ կը պատեն:

Արդար ըլլալ իրաւացի ըլլալէ աւելի կարեւոր է:

Փոքրիկի մը տուած նուէրը երբեք պէտք չէ մերժուի:

Երբ մէկուն օգնելու ոյժը եւ կարելիութիւնը
չունիմ, աղօթքներովս անոր օգնութեան կրնամ
հասնիլ:

Մարդ երբեմն կառչելիք ձեռքի եւ զինք հասկցող անձի
մը կարիքը կը զգայ:

Կեանքը արտաքինոցի թուղթի կը նմանի, որքան
վերջաւորութեան հասնի, այնքան շուտով կը
վերջանայ:

Հարստութիւնը մարդուն դասակարգին բարձրացման
չօժանդակեր:

Նոյնիսկ ամենախիստ անձն անգամ կ'ուզէ գնահատուիլ
եւ սիրուիլ:

Իրողութիւններու անտեսումը իրողութիւնները
իրողութիւն ըլլալէ չեն դադրեցներ:

Երբ քեզ վերաւորող անձը փոխադարձաբար
վերաւորես, անոր առիթ կու տաս որ ան շարունակէ
քեզ վերաւորել:

*

Սէրն է որ վերքերը կը բուժէ, ոչ թէ ժամանակը:

*

Հասուննալու միակ միջոցը անձէդ աւելի ուշիմ
մարդոց հետ գործակցիլն է:

*

Մարդոց, որոնց կը հանդիպիս, զանոնք միշտ ժպիտով
դիմաւորէ:

*

Մինչեւ սիրահարութիւն, ոչ ոք կատարեալ է: Սէրը
կոյր է:

*

Կեանքը դաժան է, բայց ես՝ դիմացկուն:

*

Առիթները չեն կորսուիր, ինչ որ դուն կը փախցնես,
ուրիշ մը զայն կ'արժեքաւորէ:

*

Եթէ դուն դառնութեամբ լեցուն ես, երջանկութիւնը
քեզմէ հեռու կը մնայ:

*

Երանի թէ մօրս մահէն առաջ անգամ մը եւս անոր
«քեզ կը սիրեմ» ըսած ըլլայի:

*

Մեր արտայայտութիւնները պէտք չէ վերաւորիչ
ըլլան, կրնան մեզի վերադարձուիլ:

*

Ժպիտը անձը համակրելի դարձնող ներուժ մըն է
առատօրէն տրուած:

*

Մարդիկ կեանքի բարձրագոյն մակարդակներուն վրայ
կ'ուզեն ապրիլ, բայց բոլոր ուրախութիւնները եւ
երջանկութիւնները այդ մակարդակին հասնելու
միջոցին է որ կը պատահին:

(Թարգմանութիւն) Էնտի Րունի (Andy Rooney)

ՍԷՐԸ ԵՒ ՆԱԽԱՆՁԸ

Աշխարհի վրայ՝ մարդուս ընթացքը որոշող երկու գործընկերս կայ, մին՝ «սէր»ը եւ միւսը՝ «նախանձ»ը:

Հաւատացէք, սիրելի ընթերցող բարեկամներ, խորհրդածութեան այս նախադասութեամբ սկսելու համար երկար ժամանակ խորհեցայ. արդեօք կը սխալի՞մ, միթէ՞ սահմանափակած կ'ըլլամ մարդկային ազատութիւնը, նեղ շրջանակի մը մէջ պահելով անոր գործունէութիւնը: Իրապէս մարդկային գործեր հաստատուած են այս երկու զգացումներո՞ւ վրայ: Չկա՞յ ուրիշ, երբորդ կամ չորբորդ ազդակ մը՝ որ ընթացք տայ, կանոնաւորէ մարդկային գործունէութիւնը, արտայայտութիւնները: Բայց երբ կը կարդայի Գրիգոր Օտեանը, համոզուեցայ, որ շատ ալ սխալ չէ մեր կարծիքը, թէ՛ սէրը եւ նախանձը ընթացք կու տան մարդկային գործերուն, մանաւանդ անոնց փոխադարձ յարաբերութիւններուն: Արդարեւ Օտեան կ'ըսէ, թէ՛ հրեշտակները մէկ անուն ունին՝ «Սէր». սատանաներն ալ մէկ՝ «Նախանձ»: Եւ չէ՞ որ մարդոց գործերը կա՞մ «հրեշտակային» է, եւ կամ «սատանայական»: Ուրիշ խօսքով անոնք կամ բարի են եւ կամ՝ չա՛ր...:

Ուրեմն շատ ալ չենք սխալիր երբ ըսենք, թէ մարդոց ընթացքը կ'որոշուի կամ սիրով եւ կամ նախանձով: Անշուշտ, որ կան ուրիշ զգացումներ, շարժառիթներ, որոնք ընթացք կու տան մարդուն շարժումներուն եւ փոխյարաբերութիւններու մշակման, բայց էականը իր շարժումները՝ կա՛մ բարի են եւ կամ չար, ուրիշ խօսքով կա՛մ «հրեշտակային» են եւ կամ «սատանայական»:

Սիրոյ մասին շատ խօսած ենք այս սիւնակներու մէջ, քանի որ ան մեր մարդկային կեանքին անբաժա-

նելի մեկ տրամաբանությունն է՝ կեանքին սկիզբը եւ անմահութեան շարժառիթը, յոյսի, ուրախութեան աղբիւրը: Մէրը նպատակը եւ իմաստն է կեանքին եւ մարդկային գործերուն:

Մէրը իբրեւ «պտուղ» կ'արտադրէ ուրախութիւնը, երջանկութիւնը, խաղաղութիւնն ու ողորմածութիւնը:

Մէրը կը պահանջէ բարեգործութիւնը եւ եղբայրական խրատը, ան բարեացակա՛մ է, առիթ կու տայ փոխադարձութեան, կը մնայ անշահախնդիր եւ առատաձեռն, ան բարեկամութիւն, հաւատարմութիւն, երկայնամտութիւն եւ հաղորդութիւն է: Սուրբ Օգոստինոս կ'ըսէ. «Մեր գործերուն լրումը, սիրոյ գուրգուրանքն է: Հո՛ն է վախճանը: Մենք կը վազենք զայն ընդունելու համար, մենք կը վազենք դէպի հոն. անգամ մը որ հասնինք, անոր մէջ պիտի հանգչինք»:

«Նախ Ի՛նք սիրեց մեզ» (Ա ՅՈՎՀ. Դ 19), կ'ըսէ Յովհաննէս առաքեալ: Ուրեմն սէրը կու գայ սիրոյ աղբիւրէն՝ Աստուծմէ, որ սէ՛րն իսկ է: Եւ շատ բնական է, որ սիրով կատարուած, սիրոյ մէջ կատարուած ամէն գործ հրեշտակային է ե՛ւ աստուածային: «Կա՛մ չարին թիկունք կը դարձնենք պատիժին վախով, այն ատեն ստրուկի տրամադրութեան տակ կ'ըլլանք: Կա՛մ կը տարուինք վարձատրութեան խայծէն եւ այն ատեն նման ենք վարձկաններուն: Եւ կա՛մ վերջապէս նոյն ինքն բարիին եւ հրամայողին սիրոյն համար կը հնազանդինք, եւ այն ատեն մենք որդիներուն տրամադրութեան մէջ կը գտնուինք», կ'ըսէ Սուրբ Բարսեղ Մեծ: Արդարեւ սիրով կատարուած ամէն գործ բարի է եւ աստուածահաճոյ:

Հապա ո՞րն է չարը: Ա՛յն որ սատանայական է:

Սատանայական է եւ չար ամէն գործ, որ նախանձի արդիւնք է: Արդարեւ մեղքերը բազմատեսակ են: Սուրբ Գիրքը այս մասին կու տայ բազմաթիւ ցանկեր:

Պօղոս առաքեալ, գաղատացիներու գրած նամակին մէջ կըսէ, թէ «Մարմինն գործերը կը հակադրէ Սուրբ Հոգիին պտուղին: Արդարեւ, մարմինն գործերը յայտնի են... Թշնամութիւն, հեռ, այսինքն՝ կոիւ, գժտութիւն, պառակտում, նախանձ, բարկութիւն, հակառակութիւն, երկպառակութիւն, հերձուածք, չարակնութիւն... եւ ի՛նչ որ ասոնց նման են: Արդ կը զգուշացնեմ ձեզ, ինչպէս որ նախապէս ալ ըսած էի, անոնք որ այսպիսի յանցանքներ կը գործեն, պիտի չժառանգեն Աստուծոյ Արքայութիւնը» (ԳԱՂՏ. Ե 19-21):

Նախանձի մասին ալ նախապէս խորհրդակցած էինք այս սինակներուն մէջ, սակայն նախանձն ալ, դժբախտաբար անբաժան զգացում մըն է մարդկային կեանքին մէջ: Ամէնուրեք, ամէն ժամանակ կարելի է դիմաւորուիլ նախանձի հետ...: Ուրեմն կ'արժէ յիշել, թէ՛ ի՛նչ է նախանձը՝ այս սատանայական զգացումը: Նախանձը գլխաւոր մոլութիւն մըն է: Ան կը մատնանըշէ ուրիշին բարիքին դիմաց մարդուն զգացած տրիւրութիւնը եւ ինչպէս նաեւ զայն նոյնիսկ անպատշաճ ու անիրաւ կերպով իւրացնելու անսանձ փափաքը:

Մախանքը, այսինքն նախանձը երբ մերձաւորին ծանր չարիք մը կը մաղթէ «մահացու մեղք» է:

Սուրբ Օգոստինոս, նախանձին մէջ կը տեսնէ գերազանցօրէն «սատանայական մեղք»ը: Արդարեւ նախանձը «մայր»ն է բազմաթիւ չարութիւններու եւ մեղքերու՝ շատ մը մեղքեր կը ծնին նախանձի զգացումէն, ինչպէս՝ զրպարտութիւն, չարախօսութիւն, ունայնա-

խօսութիւն, ատելութիւն: Նախանձը՝ մերձաւորին դժբախտութեան վրայ հրճուիլ, անոր բարութեան վրայ նեղուիլ է:

Նախանձը տխրութեան կերպերէն մէկն է, եւ ուրեմն՝ սիրոյ զլացումն է: Սիրով լեցուած մարդը պարտի պայքարիլ անոր դէմ իր բարեսրտութեա՛մբ:

Նախանձը յաճախ յառաջ կու գայ հպարտութենէն:

«Արդեօք պիտի չուզէի՞ք տեսնել Աստուած ձեր միջոցով փառաւորուած: Ուրախացէ՛ք ուրեմն ձեր եղբօր յառաջդիմութեան գործերով, Աստուած ձեզմով պիտի փառաւորուի: Ու այն ատեն մարդիկ պիտի ըսեն. օրհնեա՛լ ըլլայ Աստուած, քանի որ Անոր ծառան գիտցաւ յաղթել նախանձին՝ իր հրճուանքը դնելով ուրիշներուն արժանիքներուն վրայ», կըսէ Սուրբ Յովհան Ոսկեբերան:

Եւ դարձեալ Սուրբ Օգոստինոս կըսէ, թէ նախանձը կրնայ տանիլ յոռեգոյն չարագործութիւններուն...:

Սատանային նախանձով է, որ մահը մտաւ աշխարհ (ԻՄԱՍՏ. Բ 24): Ուստի Սուրբ Գրիգոր Մեծ կըսէ. «Մենք երբ իրարու դէմ կը կռուինք, մեր մեջ մախանքն է, որ մեզ իրարու դէմ կը լարէ: Եթէ բոլորս այսպէս շարունակենք խախտել Քրիստոսի մարմինը՝ ո՛ւր պիտի հասնինք: Մենք Քրիստոսին մարմինը տկարացնելու գործերու լծուած ենք: Մենք մեզ միեւնոյն մարմինին անդամներ կը յայտարարենք եւ զիրար կը յօշոտենք զազաններու պէս»: Իրապէս նախանձի ազդեցութեամբ ի՛նչ չարագործութիւններ կը կատարէ մարդ: Նախանձը սատանայական գո՛րծ է եղած միշտ եւ սէրը՝ հրեշտակայի՛ն...:

ՄԱՇՏՈՅ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

ԹԻԹԵՌՆԻԿԸ ԵՒ ՄԱՐԴԸ



Մարդ մը երբ ոտնուղիէ մը կ'անցնէր, թիթեռնիկի մը բժոժը տեսաւ, որուն վրայ փոքր բացուածք մը կար: Հասկցաւ, թէ բժոժը բացուելու պատրաստ էր: Նստաւ եւ ժամերով թիթեռնիկին փոքր ծակէն դուրս ելլելու մաքառումը դիտեց:


Հասկարձ թիթեռնիկին յառաջացումը դադրեցաւ: Մարդուն այնպէս թունցաւ, թէ այլեւս յառաջացում կարելի պիտի չըլլար:



Որով մարդը որոշեց թիթեռնիկին օգնել: Մկրատով մը բժոժին ծակը մեծցուց: Թիթեռնիկը դիրքաւ դուրս ելաւ, սակայն մարմինը չոր էր եւ շատ փոքր ու թելերը կծկուած:



Մարդը շարունակեց դիտել այն յոյսով, թէ թելերը պիտի մեծնան, պիտի բացուին, պիտի ընդարձակուին եւ պիտի կրկան թիթեռնիկին մարմինը կրել:



Այդպես չեղաւ: Թիթեռնիկը իր կեանքի տնողութեան փոքր մարմինով եւ չորցած թերերով սողաց: Թռչելու կարող չեղաւ:

Մարդը, իր բարեկամեցողութեամբ, չէր կորցած հասկնալ, թէ թիթեռնիկին բժոժին սեղմ ծակէն դուրս ելլելու համար մաքառումը բընութեան անոր մարմնոյն մեջ գտնուող հեղուկը դէպի թերեր դրկելու ձեւն էր, որպէսզի ան երբ բժոժէն դուրս ելլէ, կարենայ թռչիլ:



Երբեմն կեանքի ընթացքին մաքառումի պէտքը ունինք: Եթէ թոյլատրուինք առանց խոչնդոտի ապրիլ, ասիկա մեր տկարացման պատճառ պիտի ըլլայ: Պէտք եղածին չափ զօրաւոր պիտի չկարենանք ըլլալ ու երբեք պիտի չկարողանանք թռիչք առնել:

Ոյժ եւ կորով խնդրեցի, ինծի դժուարութիւններ տրուեցաւ, որպէսզի զօրաւոր ըլլամ:

**Իմաստության խնդրեցի,
ինձի կնճռոտ հարցեր
տրուեցաւ, որպէսզի լու-
ծեմ:**

**Բարեկեցության խնդրե-
ցի, ինձի խելք եւ ոյժ
տրուեցաւ, որպէսզի աշ-
խատիմ:**




**Քաջության խնդրե-
ցի, ինձի խոչնդոտ-
ներ տրուեցաւ, որպէս-
զի յաղթահարեմ:**

**Սեր խնդրեցի, ինձի
նեղութեան մէջ գըտ-
նուող մարդիկ տուիւն,
որպէսզի օգնեմ:**

**Պարգեւներ խնդրեցի, պա-
տեհութիւններ տրուեցաւ:**

**Այն ինչ որ խնդրեցի չըս-
տացայ, բայց ստացայ այն
ամէն ինչ, որուն պէտք
ունեի:**



**Առանց վախժու ապրե, դիմա-
գըրաւ բոլոր խոչնդոտները
եւ գիտցիր՝ թէ զանոնք կրնաս
յաղթահարել:**

Թարգմանութիւն



**Մեր դարաշրջանը այլեւս աւարեկօղակային
արարքների օղակաշրջանների դարաշրջան
դարձած է:**

**Պատճառներն ամենէն չին օրերէն ի վեր
աւարեկօղակային կոշտութեամբ կայ, բայց կան
այնպիսի աւարեկօղակայիններ, որոնք օղակ
կ'երթան ո՛ր թէ ուր, սնամ սարդ, այլ
չարիքաւորներ:**

**Ասիկա կը թուի ըլլալ մեր դարաշրջանի
ՏԽՈՒՐ ՄԷԿ ԵՐԵՒՈՅԹ:**



ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԱՄԷՆ ԻՆՉ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է ՆԵՐՇԱՉՈՒՄ

Նոսից մրցանակի արժանացած ամբողջական բնագիտութեան (Quantum physics) գիտնականները աներկբայորէն փաստած են, թէ աշխարհը հսկայ զօրութեան «ծով»՝ դաշտ մըն է, որ շարունակ կը ցայտայ, այսինքն կը գոյանայ եւ կ'անհետանայ: Աս կ'ըլլայ հազար անգամ ամէն մէկ երկվայրկեանի մէջ:

Ոչ մէկ բան հաստատուն նիւթ է: Ահա՛ աս է ամբողջական բնագիտութեան աշխարհը:

Անոնք փաստած են, թէ խորհուրդներն են որ այս անընդհատ փոփոխութեան մէջ եղող զօրութեան դաշտին կ'ազդեն, կը միացնեն եւ կը կաղապարեն այն բոլոր առարկաները, որոնք կը տեսնենք:

Հետեւաբար, ինչո՞ւ անհատ մը կը տեսնենք, քան թէ շարունակ ցայտող զօրութեան «ծրարներ»:

Նկատողութեան առնենք շարժանկարի մը

Ժապաւէնը, որ կը դիտենք: Ան մէկ երկվայրկեանի տեւողութեան մէջ 24 զատ նկարներու հաւաքականութիւնը եւ շարունակականութիւնն է: Իւրաքանչիւր նկար միւսէն անջատ է, իրարմէ պարապ միջոցով մը բաժնուած: Բայց, որովհետեւ պատկերները արագութեամբ կը փոխուին, մեր աչքերը կը խափուին: Կը կարծենք, թէ շարունակական շարժուն նկար մը կը դիտենք:

Նկատողութեան առնենք նաեւ հեռատեսիլը: Հեռատեսիլի պատկերներն ալ պարզապէս ելեկտրոններու հաւաքածոներ են, որոնք անընդհատ որոշ ուղղութեամբ ապակիին կը զարնեն եւ ձեւ ու շարժումի խաբէական երեւոյթ մը կը ստեղծեն:

Բոլոր առարկաներն ալ ասոր նման են: Մարդ հինգ զգացումներ ունի՝ տեսողութեան, լսողութեան, շոշափման, հոտոտման եւ համատեսման կարողութիւններ: Այս բոլոր զգայարանքները իրենց յատուկ սահմանափակումները ունին: Օրինակ, շուներուն լսողութեան սահմանները մարդոցմէն կը տարբերի: Օձերուն ալ տեսանելի լոյսի սահմանները մարդոց տեսողութեան սահմաններէն տարբեր են.....:

Հետեւաբար, մարդ իր զգայարանքներուն միջոցաւ զօրութեան «ծովի»՝ դաշտի փորձառութիւնը կ'ունենայ՝ սահմանափակ ձեւով եւ ամէն ինչ կ'ըմբռնէ միայն որոշ տեսանկիւնէ մը «դիտելով» ու այդ ստացած տեղեկութեամբ ալ կը կազմէ պատկեր մը:

Այդ պատկերը կատարեալ, ամբողջական եւ ճշգրիտ չէ, այլ միայն մէկ մեկնաբանութիւն մըն է:

Մեր բոլոր մեկնաբանութիւնները հիմնուած են իրողութեան նկատմամբ մեր ունեցած ներքին «Քարտէսի» մը համաձայն եւ ոչ ճշմարտութեան վրայ: Մեր ներքին քարտէսը, մեր անձնական կեանքի բոլոր փորձառութիւններու հաւաքականութեան արդիւնքն է:

Մեր խորհուրդները շղթայուած են անտեսանելի զօրութեան եւ կ'որոշեն այն ինչ որ զօրութիւնը պիտի յայտնաբերէ: Մարդուն խորհուրդները, տառականօրէն, տիեզերքը շարժման կ'ենթարկեն մասնիկ-առ-մասնիկ ստեղծելու համար մարդուն Ֆիզիքական կեանքը:

Դիտեցէք ձեր շրջակայքը: Այն ինչ որ կը տեսնէք մեր Ֆիզիքական աշխարհին մէջ, նախ ծագում առած են իբրեւ գաղափար: Գաղափար մը, որ տարածուելով եւ բազմանալով, ժամանակի ընթացքին որոշ հանգր-ւաններէ անցնելով, Ֆիզիքական առարկայ մը եղած է:

Մարդ, ժամանակի ընթացքին կ'ըլլայ ան, որուն մասին յաճախ կը խորհի: Անոր կեանքը կ'ըլլայ այն ինչ որ անընդհատ նախատեսած էր: Աշխարհը, տառականօրէն, մարդուն հայելիին ցոլացումն է եւ մարդուն Ֆիզիքական գետնի վրայ փորձառութիւնը ունենալու կարողութիւնը կու տայ այն բոլորին, որ ինք նկատած էր իբրեւ ճշմարտութիւն ... մինչեւ որ տեսակէտը կամ հաւատալիքները փոխէ:

Ամբողջական բնագիտութիւնը մեզի ցոյց կու տայ, թէ աշխարհը մեր կարծածին նման անփոփոխ եւ հաստատ բան մը չէ: Հակառակ այդ մակերեսային երեւոյթին, ան բացարձակ հեղուկի նման վայր մըն է, որ յաճախ կը կազմուի ըստ մեր անհատական ինչպէս նաեւ հաւաքական խորհուրդներուն:

Ան ինչ որ մենք կը կարծենք, թէ իրողութիւն մըն է, իսկութեան մէջ պատրանք մըն է: Բարեբաղդաբար սկսած ենք պատրանքը հասկնալ եւ աւելի կարեւորը՝ զայն փոխելու միջոցը:

Թարգ. Վ. Ս.





«Չարի յաղթանակին
համար միակ ան-
հրաժեշտ բանը այն է,
որ բարի մարդիկ ոչինչ
ընեն»:

Էդմընտ Բըրք (Edmund Burke 1729–1797)



Հետեւեալ գրութիւնը քաղուած է Համացանցային էջէ մը: Թէեւ գրուած է՝ թէ էյնշտէյնի նամակներէն մին է, սակայն վաւերականութիւնը ստուգել կարելի չէ: Հոս տեղադրուած է ներկայացուած գաղափարին հետաքրքրականութեան եւ յատկանշանակութեան պատճառով:

ԱԼՊԷՐԻՔ ԷԻՆՏՏԵԻՆ (Albert Einstein) ԻՐ ԴՈՒՍՏՐԻՆ ԳՐԱԾ ԱԷԿ ԱՆՄԱՅԿ

1980-ներուն վերջաւորութեան, հռչակաւոր հան-
ճարին դուստրը՝ Լիզէրլ (Lieserl), իր հօր գրած 1400
նամակները «Հրեաստանի Համալսարան»-ին նուիրած
է եւ հրահանգած որ անոնք իր հօր մահէն նուազագոյն
քսան տարի յետոյ հրատարակուին:

Հետեւեալը այդ նամակներէն մին է, ուղղուած
Լիզէրլ էյնշտէյնին:

«Երբ ներկայացուցի յարաբերականութեան տե-
սութիւնը (relativity theory), ըսածս շատ քիչեր հասկցան:
Ան որ հիմա մարդկութեան պիտի յայտնեմ, դարձեալ
բախում պիտի ունենայ անհասկացողութեան եւ
աշխարհի նախապաշարումներու հետ:

Քեզի կը յորդորեմ նամակները երկարօրէն պա-
հել, տարիներ, տասնամեակներ, մինչեւ որ ընկերու-
թիւնը (society) հասնի յառաջդիմութեան մակարդակի
մը, ուր ստորեւ տուած բացատրութիւններս
կարողանայ հասկնալ:

Անհուն զօրութեամբ ուժ մը կայ, որ գիտութիւնը տակաւին զայն չէ կրցած բացատրել: Ան զօրութիւն մըն է, որ թէ՛ կը պարունակէ եւ թէ՛ կը կառավարէ միւս բոլորը, եւ միանգամայն տիեզերքի բոլոր երեւոյթներու ետին կը գործէ, բայց տակաւին մեր կողմէ չէ նկարագրուած:

Այս տիեզերական զօրութիւնը «Սէր»-ն է:

Երբ գիտնականներ տիեզերքի բոլոր զօրութիւնները միացնող տեսութիւնը կը փնտռէին, մոռցան այս անտեսանելի եւ ամենազօրաւոր զօրութիւնը:

Սէրը Լոյս է, որ կը լուսաւորէ անոնք, որոնք զայն թէ՛ կու տան եւ թէ՛ կը ստանան: Սէրը ձգողական ուժն է, որովհետեւ անոր միջոցաւ անձեր իրար կը յարին: Սէրը ոյժ է, որովհետեւ ան կը բազմապատկէ այն բոլոր լաւ յատկութիւնները, զորս ունինք եւ չ'արտօնեք որ համայն մարդկութիւնը, իր խաւարամտութեան եւ անձնասիրութեան հետեւանք, փճանայ: Սէրը կը պարզէ եւ կը յայտնաբերէ:

Սիրոյ համար կ'ապրինք եւ սիրոյ համար ալ կը մեռնինք:

Սէրը Աստուած է եւ Աստուած ալ՝ Սէր:

Այս զօրութեամբ ամէն ինչ կը հասկցուի եւ Ան նաեւ կ'իմաստաւորէ կեանքը: Աս, այն հոլովականն է, որ երկարօրէն անտեսած ենք: Գուցէ Սէրէն կը վախնանք, որովհետեւ ան տիեզերքի մէջ միակ զօրութիւնն է, զորս մարդ չէ կրցած իր կամքին համաձայն օգտագործել:

Թարգ. Վ. Ս.



☺ ՊՈՒՏ ՄԸ ԺՊԻՏ ☺



ԱՍՏՈՒԾՈՅ ԴՐԱԾ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Կ'ըսեն թէ երբ Ադամ բոլոր կենդանիներուն անուններ կը դնէր, էշն ալ իր կարգին կու գայ, կ'անցնի Ադամի մօտէն:

Եւ Ադամ անոր անունը կը դնէ էշ:

Էշը կարգէն դուրս գալէն վերջը կը մոռնայ իր անունը եւ նորէն կարգի մէջ կը մտնէ, կը հասնի Ադամին մօտ:

Ադամ կը տեսնէ որ էշը նորէն եկաւ, կը հարցնէ.

- Ինչո՞ւ նորէն եկար:

Էշը ամէնալավ կ'ըսէ.

- Մոռցայ իմ անունս:

Ադամը կը բռնէ էշուն երկու ալանջներէն եւ ուժեղ մը կը քաշէ, կ'ըսէ.

- Աւանա՛կ, քու անունդ է՛շ է, հասկցա՞ր, եւ այդ օրէն էշուն ալանջները կ'երկարին եւ անունին վրայ ուրիշ անուն մըն ալ կ'աւելնայ՝ աւանակ:

ՏԷՐ ՀՈՎՈՒԵԱԾԷ ՁԻԱ, ԵՒ ԻՆՁ ԻՆՁ ՈՉ ՊԱԿԱՍԵԱԾԷ:



**ԹԷՊԷՏ ԵՒ ԳԱԱԾԻԾ ԵԱ Ի ՄԷՉ
ԱՏՈՒԵՐԱԾ ՄԱՀՈՒ, ՈՉ ԵՐԿԵԱՅԺ
Ի ՉԱՐԷ ՁԻ ԴՈՒ ՏԷՐ ԸՆԴ ԻԱ ԵԱ:**

